

**ՀՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԴԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԴԱՄԱԼԱՐԱՆ**

**Պ.Ս.Եֆենդյան Ա.Ս.Եզեկյան  
Ս.Զ.Թամոյան Ա.Մ.Վարդանյան**

# **ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԿԱՂԱՍՏՐ**

**ԵՐԵՎԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ  
2016**

ՀՏԴ 502/504:332(07)

ԳՄԴ 20.1

Բ 761

Հաստատված է Հայաստանի ազգային  
ագրարային համալսարանի գիտական խորհրդի կողմից

Գրախոսներ՝                  գ.գ.դ. Գ.Մ. Եղիազարյան  
    գ.գ.դ. Յ.Ղ. Ղազարյան  
    ա.գ.դ. Յ.Յ. Սայարյան

Խմբագիր՝                  Ա.Ա. Խուրդավերդյան

Բ 761        Բնական ռեսուրսների մոնիթորինգ և կադաստր: Ուսում-  
նական ձեռնարկ/ Պ.Եֆենդյան, Ա.Եզեկյան, Ս.Թամոյան,  
Ա.Վարդանյան.-Եր.: ՀԱԱՐ, 2016.- 192 էջ:

Դասագիրքը գրված է «Բնական ռեսուրսների մոնիթորինգ և կադաստր» առարկայի ուսուցման ժրագրերին համապատասխան և նախատեսված է բուհերի ու քոլեջների ուսանողների, մասնագետների, ասպիրանտների համար:

Այն կիետաքրքրի նաև բնական պաշարների արդյունավետ օգտագործման հարցերով զբաղվող մասնագետներին և ոլորտի ղեկավարներին:

ՀՏԴ 502/504:332(07)  
ԳՄԴ 20.1

ISBN 978-9939-54-927-9

© Պ.Մ. Եֆենդյան, 2016թ.

© Ա.Ա.Եզեկյան, 2016թ.

© Ս.Զ. Թամոյան, 2016թ.

© Ա.Ս. Վարդանյան, 2016թ.

© Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 2016թ.

## ՆԱԽԱԲԱՆ

Բնության վրա մարդու ներգործության հետևանքով ի հայտ եկած տարաբնույթ փոփոխությունները մարդկային հասարակությունից պահանջում են՝ մարդ - բնություն փոխհարաբերությունները կառուցել բնական գործընթացի խոր և բազմակողմանի վերլուծության հիման վրա: Ներկայումս արդեն նման վերլուծություններ կատարում են՝ ոչ միայն բնապահանության, այլև բնօգտագործման ոլորտներում: Որպես գիտական ուղղություն, բնօգտագործման հիմնական խնդիրը մարդ-բնություն փոխհարաբերություններում արդյունավետ ուղիների որոնումն է, որը նպատակ ունի ապահովելու շրջակա միջավայրի բնականոն զարգացման ընթացքը:

Դավասարակշռված բնօգտագործում նշանակում է տնտեսական արդյունք ստանալու նպատակով՝ օբյեկտների վրա ներգործման ուղղվածությունն ընտրել բնական երևույթներին համապատասխան: Արդյունավետ կառավարելու համար պետք է ունենալ բնական օբյեկտների և մարդածին ազդեցության հետևանքով դրանց կրած փոփոխությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն, կանխատեսելու՝ մարդու գործունեության հետևանքները բնական գործընթացների վրա: Իսկ մարդու միջամտությունն այդ գործընթացներին՝ պետք է հիմնավորված լինի բնական և բնօգտագործման համակարգերի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ վստահելի ու ստույգ տեղեկություններով:

Վերջին տասնամյակներին մեծաքանակ տեղեկություններ են հավաքվել բնության մեջ տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ, սակայն դրանք տվյալներ չեն պարունակում բնական գործընթացների փոփոխությունների ընթացքի մասին: Այդ նկատառումով՝ անհրաժեշտ է շրջակա բնական միջավայրի վիճակի վերաբերյալ պարբերաբար հիմնավոր դիտարկումներ կազմակերպել, գնահատելու՝ տեղի ունեցող փոփոխությունները, կանխատեսելու և ժամանակին նախագուշացնելու՝ հնարավոր անցանկալի զարգացումները: Դա նշանակում է ստեղծել մշտական գործող դիտարկումների՝ մոնիթորինգի համակարգ:

Շրջակա միջավայրի վիճակի մոնիթորինգի համակարգն իր մեջ ներառում է կենսուրութի մարդածին փոփոխությունների և միջավայրի աղտոտվածության աստիճանի վերաբերյալ դիտարկումներն ու հետազոտությունները, վիճակի գնահատումն ու կանխատեսումը, նպատակ ունենալով ապահովել բնական համակարգերի էկոլոգիական հավասարակշռությունը և զարգացման բնականոն ընթացքը:

Ներկայացվող ուսումնական ձեռնարկը հանդիսանում է այս ուղղությամբ մայրենի լեզվով առաջին փորձը: Դրա հրատարակման

անհրաժեշտությունն առաջացել է այն բանից հետո, երբ ՀՀ բուհերում, այդ թվում Հայաստանի ազգային ագրարային համալսարանուն հաստատվեց «Բնական ռեսուրսների մոնիթորինգ և կադաստր» առարկայի դասավանդման ծրագիրը: Սույն ձեռնարկը ստեղծելով՝ հեղինակները նպատակ են ունեցել ուսումնական ծրագրի սահման-ներում ներկայացնելու բնական ռեսուրսների մոնիթորինգ և կադաստր առարկայի՝ բնական ռեսուրսների պահպանության հիմնահարցերը, մոնիթորինգի սկզբունքները ու մեթոդները, դրա զարգացման ուղղությունները: Զեռնարկում առանձին գլուխներով լուսաբանվում են հիմնական բնական ռեսուրսների՝ հողի, ջրի, օդի բուսական ու կենդանական աշխարհի մոնիթորինգների բովանդակությունը, դրանց պահպանության, արդյունավետ օգտագործման, վիճակի գնահատման և վերահսկողության ցուցանիշները:

Նյութը շարադրված է «Բնական ռեսուրսների մոնիթորինգ և կադաստր» առարկայի ուսումնական ծրագրի համապատասխան: Հիմնական տեսական և գործնական դրույթները մատուցվում են թվային տվյալների և առյուսակների տեսքով, առանձին ներկայացված են յուրաքանչյուր բնական ռեսուրսի մոնիթորինգի ցուցանիշները:

Հաշվի առնելով, որ ներկայացրած մայրենի լեզվով առաջին աշխատանքն է, անշուշտ, այն չի կարող գերծ լինել թերություններից և բացքողումներից: Հեղինակները երախտագիտությամբ կընդունեն բոլոր օգտակար դիտողությունները և դրանք հաշվի կառնեն ձեռնարկը վերահրատարակելիս:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում՝ բնական ռեսուրսների օգտագործման, պահպաննան, բարելավման և մոնիթորինգի հարցերով զբաղվողներին, ՀՀ Բնապահպանության Նախարարության համապատասխան վարչությունների և բաժինների մասնագետներին սույն ձեռնարկի ստեղծման գործում օժանդակելու, անհրաժեշտ նյութեր տրամադրելու համար:

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ 1 ՍՊՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳ

### 1.1. Ընդհանուր տեղեկություններ մոնիթորինգի մասին

Մարդու գործունեության հետևանքով ի հայտ եկած կենսուլուտի վիճակի փոփոխությունների բացահայտման և գնահատման համար անհրաժեշտ է դիտարկումների համակարգ: Այս կրում է «մոնիթորինգի համակարգ» անունը, որի խնդիրն է ժամանակին բացահայտել բնական ռեսուրսների վիճակի փոփոխությունները, գնահատել, սպասվող բացահայտման զարգացումները կանխել և վերացնել դրանց հետևանքները:

«Մոնիթորինգ» հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 1971թ. ՅՈՒՆԵՊ-ի (Շրջակա միջավայրի հարցերով գիտական կոմիտե) հատուկ հանձնաժողովի կողմից, որով սկիզբ դրվեց շրջակա միջավայրի վիճակի մոնիթորինգի համակարգերին:

Շրջակա միջավայրի մոնիթորինգն իրենից նեկայացնում է բնական միջավայրի և բնական ռեսուրսների վիճակի դիտարկումների համակարգ, որի նպատակն է՝ տարրերակել բնական գործընթացների և մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացած դրանց փոփոխությունները: Մոնիթորինգի համակարգը ներառում է գործունեության հետևյալ հիմնական ուղղությունները՝

- դիտարկող օբյեկտի առանձնացում,
- առանձնացված օբյեկտի հետազոտում,
- օբյեկտի համար տեղեկատվական մոդելի կազմում,
- չափագրումների պլանավորում,
- օբյեկտի վիճակի գնահատում և տեղեկատվական մոդելի համաձայնեցում,

- օբյեկտի վիճակի փոփոխության կանխատեսում,
- մատչելի տեղեկատվության տրամադրում օգտագործողին:

Այսպիսով, մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի դիտարկումների, գնահատման և կանխատեսման համակարգ է, որն անհրաժեշտ տեղեկատվություն է ապահովում բնական միջավայրի օգտագործման, կառավարման և պահպանության միջոցառումների մշակման համար:

Արդյունավետ գնահատում և կանխատեսում ապահովելու նպատակով մոնիթորինգի համակարգում ներառում են շրջակա բնական միջավայրի աղտոտման, դրա հետևանքների և աղտոտող աղբյուրների վերաբերյալ դիտարկումները:

Շրջակա միջավայրի մարդածին փոփոխությունները գնահատելու ամենահարմար ձևը մոնիթորինգի համակարգում գործողությունների տարանջատումն է՝ դիտարկում, փաստացի վիճակի գնահատում, վիճակի կանխատեսում: Շրջակա միջավայրի վիճակի դիտարկումը և կանխատեսումը սերտորեն կապված են, քանի որ կանխատեսումը հնարավոր է միայն փաստացի վիճակի վերաբերյալ բավարար տեղեկատվության առկայությամբ: Կանխատեսման նախագծի մշակման ընթացքում հաշվի են առվճում մի կողմից՝ գոյություն ունեցող նախագծների և հաշվարկների հիման վրա շրջակա միջավայրի վիճակի փոփոխությունները, իսկ մյուս կողմից՝ բնական պաշարների գնահատման գործում մարդու գործունեության համար լավագույն պայմանների ընտրությամբ:

Բնական միջավայրի վիճակի բնութագրման նպատակով կատարված դիտարկումներից կամ կանխատեսումներից ստացված տվյալները գնահատվում են՝ մարդու գործունեության ընթացքում դրանց օգտագործման ոլորտին համապատասխան: Գնահատականը տրվում է մի կողմից գործունեության հասցրած ուղղակի վնասներով, իսկ մյուս կողմից՝ բնական պաշարների գնահատման գործում մարդու գործունեության համար լավագույն պայմանների ընտրությամբ:


Բնական միջավայրի երկրատեղեկատվական համակարգերը, ինչպես նաև մարդածին փոփոխությունների մոնիթորինգի տեղեկատվական համակարգերը հանդիսանում են հասարակության և բնական միջավայրի փոփոխությունների կառավարման համակարգի հիմնական բաղադրիչները, որոնք հաշվի են առնում տնտեսության զարգացումը պլանավորելիս և միջոցառումներ մշակելիս:

Կենսուլորտի գոյություն ունեցող և կանխատեսվող վիճակի գնահատման արդյունքներն իրենց հերթին հնարավորություն են տալիս ճշտելու դիտարկումների համար ենթակառույցներ ստեղծելու պահանջները, իմնավորելու դրանց կազմը, ցանցը և մշակելու դիտարկումների մերոդները:

Գծապատկեր 1-ում ներկայացված է բնական միջավայրի վիճակի կառավարման համակարգում մոնիթորինգի տեղը, պայմանականորեն տեղադրված են էներգիական և տեղեկատվական հոսքերը:

Մոնիթորինգի համակարգի օգնությամբ ստացվում է բնական միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների «լուսանկար» սկզբնական վիճակով, այդ տեղեկատվությունը փոխանցվում է կառավարման բաժին (Y) հետագա լուծում տալու համար: Կախված գիտարտարական (H) և տնտեսական հնարավորությունների (E) մակար-

դակից, հաշվի առնելով էկոլոգիական և տնտեսական գնահատականը, մշակվում են բնական միջավայրի վրա մարդաժին ազդեցությունը սահմանափակելու և կրծատելու միջոցառումներ:



Գծ. 1 Մոնիթորինգի տեղը բնական միջավայրի  
կառավարման համակարգում

**Բ** - կենսոլորտի տարրերի վիճակի մակարդակն է,  
**Ա** - այն ենթարկվում է ներգործության,

**Բ-Բ'** - փոխում է դրությունը (վիճակը),

**Մ** - մոնիթորինգի համակարգ,



**Ү** - կառավարման բաժին,

**Հ** - գիտաարտորհական մշակումների մակարդակ,

**Է** - տնտեսական հնարավորությունների մակարդակ:

Պետք է նշել, որ բնական միջավայրի փաստացի և կանխատեսվող գնահատականը հանդիսանում է մոնիթորինգի բաղադրիչ մասը: Այն պետք է նույնացնել բնական միջավայրի կառավարման տարրերի հետ:

Գծապատկեր 2-ն իրենից ներկայացնում է մոնիթորինգի դասակարգման ուրվագիծը:



Գծ. 2 Մոնիթորինգի դասակարգման ուրվագիծ

## **1.2. Մոնիթորինգի նպատակը և ինտիրները**

Բնական ռեսուրսների մոնիթորինգի համակարգի հիմնական նպատակը հանդիսանում է բնապահպանական գործընթացների կառավարման և էկոլոգիական անվտանգության համար հավաստի, ստույգ տեղեկատվության ապահովում, որի համար անհրաժեշտ է՝

- գնահատել էկոհամակարգերի և շրջակա միջավայրի ցուցանիշները,
- բացահայտել այդ ցուցանիշների փոփոխման պատճառները և գնահատել այդ փոփոխությունների հետևանքները,
- ստեղծել անցանկալի իրավիճակների վերացման համար միջոցառումների իրականացման նախադրյալներ և այլն:

Էկոլոգիական մոնիթորինգի հիմնական նպատակներն իրականացնում են՝ պահպանման, վերլուծման և կանխատեսման գործընթացներով։ Դրանցից բացի, այն կարող է հիմնվել բնապահպանական որոշակի ծրագրային միջոցառումների, նախագծերի և միջազգային համաձայնագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության վրա։

Էկոլոգիական մոնիթորինգի հիմնական խնդիրներն են՝

- մարդագիտական ներգործության աղբյուրների դիտարկում,
- մարդագիտական ներգործության գործոնների դիտարկում,
- մարդագիտական գործոնների ազդեցության հետևանքների դիտարկում՝ բնական միջավայրի վիճակի փոփոխությունների դիտարկում,
- բնական միջավայրի վիճակի գնահատում,
- մարդագիտական ներգործության հետևանքների բնական միջավայրի փոփոխության կանխատեսում և գնահատում։

Բնական միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի համակարգը կարող է մշակվել առանձին արդյունաբերական տարածքների, քաղաքների, լանդշաֆտների, մարզերի, ֆիզիկաաշխարհագրական շրջանների, ջրհավաք ավազանների և ամբողջ հանրապետության մասշտաբով։ Ըստ այդ հերթականության, էկոլոգիական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման բնույթը և մեխանիզմը որոշվում է դրանց վիճակի մասին տեղեկատվության գրաֆիկական գնահատման միջոցով, որն իրենից ներկայացնում է առանձին տեղամասերի ու օբյեկտների վիճակի բնութագրման քարտեզագրական և նկարահանման հիմքեր։ Այնուհետև մշակվում է պետական միասնական էկոլոգիական մոնիթորինգի նախագիծ, որի ընթացքում օգտագործում են ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական ծրագրեր։

## ԳԼՈՒԽ 2

### ԿԵՆՍՈՂՈՐԾ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

#### 2.1. Հասկացություն կենսողորտի մասին

Կենսողորտ - բիոսֆերա անվանումը ծագել է հունարեն «բիոս»՝ կյանք և «ֆերա»՝ ոլորտ բառերի միացումից և նշանակում է կյանքի ոլորտ: Վ.Ի. Վերնադսկու ձևակերպմանը, կենսողորտը երկրագնդի արտաքին քաղաքն է, որտեղ տարածված են կենդանի օրգանիզմները: Այն ընդգրկում է մթնողորտի և քարողորտի մի մասը, ջրուղորտ՝ ամբողջությամբ:

Կենսողորտն իր մեջ ընդգրկում է բոլոր կենդանի օրգանիզմները (բույսեր, կենդանիներ, սնկեր, մանրէներ) և անկենդան բնության տարրերը, որոնք միջավայր են ծառայում կենդանի օրգանիզմների գոյության համար: Այլ կերպ ասած, կենսողորտը կենդանի նյութն է՝ շրջակա միջավայրի հետ միասին:

Կենսողորտի բաղադրամասերը խմբավորվում են՝

1. կենդանի նյութ - բույսեր, կենդանիներ, սնկեր, մանրէներ,
2. կենսածին նյութ - օրգանիզմների մնացորդներից կամ դրանց արտադրանքից (դետրիտներ) գոյացած նյութեր (նավթ, քարածուխ, գազ, տորֆ, կավիճ և այլ),
3. հանքային նյութ - երկրի կեղևը կազմող անօրգանական ծագման լեռնային ապարներ, որոնք չեն ենթարկվել օրգանիզմների ազդեցությանը,
4. կենսահանքային նյութ - հանքային նյութի և օրգանիզմների ազդեցությամբ դրանց քայլայնան ու վերափոխման արդյունքում առաջած նյութերի խառնուրդ (հող, տիղմ, բնական ջրեր, որոշ նատվածքային ապարներ և այլն):

Կենդանի նյութը կենսողորտում, ներկա տեղեկություններով, ներկայացված է շուրջ 1,8 մլն տեսակներով, որոնցից բուսատեսակները մոտ 6 անգամ պակաս են կենդանատեսակներից, իսկ կենսազանգվածով գերազանցում են շուրջ 2,5 հազար անգամ: Բույսերի ընտրողական կլանողական հատկության շնորհիվ կենսաբանական կարևոր սմնդատարրերը կուտակվում են երկրի մակերևույթի կենսածին նստվածքային շերտերում, ինչպես նաև հողի հոլմուսային հորիզոններում: Բարձրակարգ քլորոֆիլակիր բույսերը սինթեզում և կուտակում են օրգանական նյութեր, իսկ ստորակարգ, կազմաքանդող մանրէները քայլայում են այդ նյութերը:

Կենսողորտում կենդանի նյութի մասնակցությամբ տեղի են ունենում բազմապիսի կենսաբիմիական, կենսաֆիզիկական և ֆիզիկաբիմիական երևույթներ, որոնց արդյունքում կենդանի նյութն իրակա-  
10

նացնում է միջավայր գոյացնող և կարգավորող բացառիկ գործառույթներ, որոնք իրենց կարևորության շնորհիվ վերագրվում են ողջ կենսոլորտին:

Երկրի վրա կյանքի ծագման պահից օրգանական աշխարհի և անօրգանական նյութերի միջև հաստատվել է անմիջական կապ, որի հիմքը հանդիսացել է անկենդան նյութերից՝ կենդանի օրգանիզմներին անհրաժեշտ սննդի յուրացումը: Միաժամանակ, կենդանի օրգանիզմներն ազդելով անկենդան միջավայրի վրա, անընդհատ ընդլայնել են իրենց կենսական տարածքները, որի դրսնորումներից է, օրինակ, հողի կուտակիչ հորիզոնների ավելացումը: Այսպիսով, կենսոլորտն իր առաջացումով և բազմակողմանի վերափոխումներով պարտական է ամենից առաջ կենդանի նյութի ներգործությանը:

Բույսերը, կենդանիները և մանրէները բնության մեջ հանդես են գալիս տեղախմբերով (պոպուլացիա), որոնց համատեղ կեցությունն անվանում են համակեցություն՝ ցենոգ: Այն գտնվում է շրջակա միջավայրի անկենդան բաղադրիչների հետ անմիջական շփման և մշտական փոխներգործության մեջ: Դանակեցությունները բնության անկենդան բաղադրիչների հետ կազմում է մեկ ամբողջություն, որը կոչվում է կենսաերկրահամակեցություն (բիոգեոցենոգ): Այն, ինչպես՝ էկոհամակարգը, միջավայր է, որտեղ իրականանում է կենսածին տարրերի կենսաբանական շրջապատճերը:

Էկոհամակարգերի գործունեության օրինաչափությունների ճանաչողությունը մարդու համար հսկայական գործնական նշանակություն ունի: Այն հնարավորություն է տալիս որոշակի միջոցառումներ մշակել բնության պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար:

Էկոհամակարգը գրադեցնում է աշխարհագրական որոշակի տարածք, որն ինչ-որ առումով նման է աշխարհագրական լանդշաֆտին: Այն հանդիսանում է կենսոլորտի կարևոր բաղադրիչ մասը: Լանդշաֆտը որոշակի տարածք է, ֆիզիկաաշխարհագրական եզակի տարր՝ իր ծագման ու զարգացման պատմությամբ: Այն ունի միատարր երկրաբանական իիմք, միատիպ ռելիեֆ, ընդհանուր կլիմա, երկրաբանական պայմաններ, կենսահամակեցությունների, հողերի միանման զարգացում և բաղադրիչների օրինաչափ կազմ՝ միատարր ֆիզիկաաշխարհագրական պայմաններով, ֆլորայով, ֆաունայով, տեղումներով և այլն:

Ուսումնասիրելով լանդշաֆտների բնական և մարդածին փոփոխությունները, մոնիթորինգային դիտարկումների միջոցով մարդը կարող է նպատակավալաց կերպով վերակառուցել բնությունը, բարելավել շրջակա միջավայրը և բարձրացնել կենսոլորտի կենսաբանական արտադրողականությունը:

## **2.2. ԿԵՆՍՈՒՐԻ ՄԱՐԴՈՒ ԼԵՆԱՎՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԼՎԱՅՐ: ԿԵՆՍՈՒՐԻ ԷԿՈՂՈԳԻԱՆ**

Մարդը թեև բնության վրա ներգործել է իր գոյության առաջին օրից, սակայն սկզբնական շրջանում ենթակա է մնացել բնական երևոյթների ազդեցությանը: Այդ պարագայում մարդու ազդեցությունը էկոհամակարգերի վրա եղել է միանգամայն աննկատ՝ շատ թույլ և դանդաղընթաց, ներգործության տեխնիկական միջոցների պարզունակության համապատասխան: Մարդու աշխատանքային գործունեությամբ բնությանը հասցրած վերթերը համեմատաբար շուտ ապարինվել են: Բնության կենսաբանական ռեսուրսները գրեթե ամբողջովին վերականգնվել են և հավասարակշռությունը պահպանվել է համապատասխան մակարդակի վրա:

Միջին դարերում, անգամ Եվրոպայում, արտադրողական ուժեղ զարգացել են բավականին դանդաղ և տասնյակ տարիների, նույնիսկ հարյուրամյակների ընթացքում մարդկությունը տեխնիկական զարգացման տեսակետից ըստ էության մնացել է գրեթե նույն մակարդակի վրա: Շրջակա միջավայրի վրա մարդածին ազդեցությունը ծավալվել է ոչ մեծ՝ սահմանափակ տարածքներում և լայն մասշտաբներ չի ընդգրկել:

Բնության մարդածին փոփոխությունների վրա մարդը գրեթե ուշադրություն չի դարձրել ոչ միայն այդ ուղղությամբ շատ քիչ գիտելիքներ ունենալու, այլև փոփոխությունների աննշանության պատճառով: Չափավոր է օգտագործել բնական հարստությունները՝ կենսառեսուրսները, ընդերքն ու երկրի նակերևույթի զանազան օգտակար հանածոնները ջուրը, օդը: Մարդն իրեն դրսևորել է որպես բնության հարազատ զավակ և հավատարին ծառա: Սակայն, դարերի ընթացքում, քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց մարդը սկսել է ազատվել բնական միջավայրի կախվածությունից, միաժամանակ, քայլ առ քայլ մեծացրել իր ներգործությունը բնության քաղադրիչների ու գործընթացների վրա:

Մարդն աստիճանաբար տարածվել և բնակություն է հաստատել գրեթե ամբողջ երկրագնդի վրա, հարմարվելով միջավայրի տարբեր պայմաններին, իսկ պահանջները բավարարելու համար ընդլայնել է մոլորակի կենսաբանական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները: Այսպիսով, մարդը սկսել է միջամտել բնական գործընթացներին, իշխող ազդեցություն ունենալ ամբողջ բուսական ու կենդանական աշխարհի վրա:

Մարդու տնտեսական ներգործության ակտիվացումը հնարավորություն է ստեղծել ավելի լայն չափերով օգտվել բնական ռեսուրսներից, հանքային հանածոններից, հողերից, ջրային ու ցամաքային

կենդանիներից, բուսական աշխարհից և այլն: Իսկ երկրագործության զարգացմանը լայնամասշտար գրոհ է սկսել անտառների, տափաստանների, ճահիճների, անգամ՝ անապատների ուղղությամբ:

Մարդու ակտիվ ներգործության շնորհիվ բնական լանդշաֆտները սկսեցին վերածվել վերափոխված՝ մարդածին (արդյունաբերական և գյուղատնտեսական) լանդշաֆտների: Արտադրական գործունեության զարգացմանը զուգընթաց, մարդը սկսեց ավելի ինտենսիվորեն ներգործել բնության վրա, ավելի շատ բնական ռեսուրսներ օգտագործել:

Բնության վրա մարդու առավել ակտիվ ներգործությունը սկսվել է 19-րդ դարի կեսերին, երբ արագ թափով սկսեց զարգանալ արդյունաբերությունը, ուժեղացավ բնական հարստությունների շահագործումը, հանքային հանածոնների՝ քարածիսի, նավթի, երկարի ու այլ հանքատնտեսակների օգտագործումը և դրա հետ կապված՝ հաղորդակցության ուղիների՝ ճանապարհների, երկարությների կառուցումը, փոխադրամիջոցների նոր ձևերի ստեղծումը և այլն: Բնության մեջ անախաղեափ փոփոխություններ առաջ բերեց ներքին այրման շարժիչների հայտնագործումը, որը հանգեցրեց հսկայաքանակ վառելիքալերգիական ռեսուրսների սպառման:

Քետագայում գիտատեխնիկական առաջընթացն էլ ավելի մեծացրեց բնական ռեսուրսների շահագործման ծավալներն ու ոլորտներն ընդլայնելու հնարավորությունները, որը դրսերպվեց՝ ուրանի և այլ ռադիոկտիվ տարրերի ատոմի միջուկի տրոհումից ստացված էներգիայի յուրացումով, տիեզերական տեխնիկայի զարգացումով, նոր արդյունաբերական համալիրների ստեղծումով և այլն:

Նման խոչոր, թռչքային փոփոխությունները նպաստեցին բնության վրա մարդածին ճնշման շարունակական մեծացմանը: Սակայն, գիտատեխնիկական այդ առաջընթացը փոխեց նաև մարդու և բնության փոխհարաբերությունների բնույթն ու ուղղվածությունը, ինչպես նաև բնական հարստությունների շահագործման եղանակներն ու տեխնպերը: Մարդու ներգործությունը շրջակա միջավայրի վրա սկսեց ավելի ակնառու դաշնալ, և մարդ-բնություն փոխհարաբերություններում սկսվեց միանգամայն նոր փուլ, նոր բովանդակությամբ: Սակայն, բնության օրենքները խորությամբ ընթառնելու պակասն իրեն երկար սպասել չտվեց և բնության ուժերին ու հարստություններին առավելագույնս տիրանալու մարդու ձգտումը ծնեց էկոլոգիական հիմնախնդիրներ, որնց սահմաններն ու տարածման մասշտաբները, խորությունը, շարունակում են մեծանալ, համամոլորակային ընդգրկում ստանալ:

Նոր էներգակիրների (միջուկային վառելիք) հայտնագործումը և ավանդականի (նավթ, գազ, տորֆ, քարածուխ և այլն) հետ դրանց

այրումը, ինչպես նաև քիմիական սինթեզի ճանապարհով ստացված արիեստական՝ հատկապես բարձրամոլեկոլային միացություններից առաջացած թափոններն ու դրանց այրումը մարդկության համար էկոլոգիական նոր խնդիրներ ծննդին: Կենսուղութում սկսեցին կուտակվել հսկայաքանակ թափոններ և դրանց այրման ընթացքում առաջացած մի շարք վնասակար նյութեր: Դարցի լրջությունը պարտադրում է՝ բնության բարիքներից օգտվող, բնությունն իր կարիքների համար շահագործող մարդուն անհապաղ քայլեր ծեռնարկել այն պահպանելու համար: Մարդն այսօր պարտավոր է դեկավարվել բնություն օրենքներով, ապրել մոլորակի վրա՝ խստագույն կերպով հաշվի առնելով բնության պահանջները:

Քաղաքակրթության ներկա փուլում մարդածին փոփոխությունների արագությունը խիստ մեծացել է, ինչը մոլորակի վրա, ամենուր՝ էկոհամակարգերում էկոլոգիական լարվածություններ է ստեղծվել: Դա, առանձնապես, առնչվում է բնական ռեսուրսների անխնա օգտագործմանը, մանավանդ, որ դրանց մի ստվար մասն անսպառ չէ: Որոշ գիտնականներ նույնիսկ այն կարծիքն են հայտնում, որ դրանք արագորեն սպառվում են, և մարդկությունը կանգնելու է խսկական աղետի առաջ: Սակայն պետք է նկատել, որ երկրագնդի տարբեր մասերուն կան հանքավայրերի ու էներգակիր ռեսուրսների չհայտնաբերված պաշարներ, երկրի խոր ընոերթի և տիեզերական էներգիայի պաշարներ, որոնք ներկայում աննատչելի են, իսկ ապագայում, անշուշտ, օգտագործման ենթակա կլինեն: Դրանց հետ միասին ջերմամիջուկային ռեակցիայի, արեգակի ճառագայթման, քամու և էներգիայի այլ աղբյուրների օգտագործումը մարդկության առջև նոր հնարավորություններ կբացեն, այնպես, որ անհիմն է ապագայում էներգիական ճգնաժամի մտավախությունը:

Անհիմն է նաև տագնապն այն մասին, որ մոլորակի բնակչությունն անհրաժեշտ սննդի բացակայության հետևանքով սովոր կմատնվի: Իրականում, մարդկությունն իր տրամադրության տակ ունի հսկայական ռեսուրսներ ու հնարավորություններ՝ ապագայում և իրեն լիարժեք սննդով ապահովելու համար:

Անշուշտ, մարդը կորոնի ու կգտնի ուղիներ և միջոցներ՝ իր գոյությունը մոլորակի վրա պահպանելու համար: Սակայն, այլ հարց է՝ բնության մարդածին փոփոխությունը, բնության համար խորթ, նոր էկոլոգիական պայմանների ստեղծումը, որի համար լրջորեն մտահոգվելու անհրաժեշտություն կա: Մի շարք զարգացած երկրներում արդյունաբերական ու տեխնիկական նպատակներով ծախսվում է ավելի շատ թթվածին, քան արտադրվում է բույսերի ֆոտոսինթեզի շնորհիվ: Շրջակա միջավայր են արտանետվում բիոտի համար վտանգավոր քանակի բազմաթիվ վնասակար նյութեր (ծանր մետաղներ,

ռադիոնուկլիոներ և այլն), սինթետիկ նյութեր, ինչպես օրինակ՝ պեստիցիդներ: Վերջինները սինթետիկ օրգանական բարդ միացություններ են, կենսոլորտի համար օտար նյութեր, որոնք կենսաբանական քայլայման չեն ենթարկվում՝ քայլայող մանրեներ բնության մեջ չկան: Դեռևսարար դրանք կայուն են և բափանցելով սննդային շղթա՝ կուտակվում են կենդանի օրգանիզմներում, պատճառ դառնալով ուռուցքածին ու նուտածին հիվանդությունների:

Վիճակագրության ժամանակակից տվյալներով՝ ներկայում տարեկան մթնոլորտ են նուտք գործում 14 մլդ տոննա ածխաթրու գազ, 0,5-1,0 մլդ տոննա գազային և աերոգոլային բնույթի զանազան միացություններ: Շրջակա միջավայր են արտանետվում շուրջ 3,5 մլդ տոննա զանազան բափուններ, ընդերքից արդյունահանվում է 100 մլդ տոննա հանքանյութ, ինու են մտցվում 300 մլն տոննա հանքային պարարտանյութեր, օգտագործվում են 4 մլն տոննա թունաքիմիկատներ, այրվում է 7 մլդ տոննա պայմանական վառելիք (քարածուխ, նավք, գազ) և այլն: Այդ ամենը կենսոլորտում ստեղծում է էկոլոգիական հավասարակշռության եական խախտումներ, որը և պահանջում է բնության ու մարդու փոխհարաբերության հարցում միանգամայն նոր նուտեցում, նոր ռազմավարություն:

Ներկայում առաջնահերթ նշանակություն են ստանում անթափոն՝ փակ շրջափուլային արտադրության կազմակերպումը, գյուղատնտեսության, արդյունաբերության, էներգետիկայի և տնտեսության այլ ճյուղերի զարգացումը՝ երկարամյա ու հեռանկարային կանխատեսումներով, անպայման հաշվի առնելով մարդու տնտեսական գործունեության էկոլոգիական հետևանքները: Անհրաժեշտ է բնության և հասարակության միջև հաստատել այնպիսի հարաբերություններ, որոնք չեն խախտում բնության բաղադրամասերի հավասարակշռային վիճակը:

Էկոլոգիական հիմնախնդիրների լուծման գործում վերին աստիճանի կարևոր է բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ համալիր մոտեցումը: Այդ ընթացքում պետք է անպայման հաշվի առնել կենսոլորտի, էկոհամակարգերի և դրանց առանձին բաղադրամասերի փոխադարձ կապն ու փոխպայմանավորվածությունը: Այս կամ այն բնական ռեսուրսը՝ ջուրը, անտառը, ընդերքը և այլն, օգտագործելիս անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսության բոլոր ճյուղերի պահանջներն ու շահերը: Օրինակ, ջուրը՝ սոսկ ջուր չէ, որը կարելի է օգտագործել էլեկտրակայանները աշխատացնելու համար կամ նավազնացության, փայտանյութի տեղափոխման ու այլ նպատակներով, որոնց դեպքում ջրի աղտոտվածությունը բացասական ազդեցություն չունի արտադրության վրա: Զուրը, միաժամանակ, միջավայր է ձկների ու ջրային այլ կենդանիների, ջրլող թրչունների համար, այն օգտագործ-

վում է խմելու և դաշտերը ոռոգելու նպատակով, կենսածին նյութերի կուտակման, տեղափոխման ու վերաբաշխման միջոց է և այլն:

Մեկ այլ օրինակ՝ անտառը միայն փայտանյութի ու քիմիական արտադրության համար հումքի աղբյուր չէ: Այն նաև թթվածնի աղբյուր է, միջավայր՝ պտուղների ու հատապտուղների ածման, մսի, ճարպի ու մորթու արտադրության, ապաստարաբն՝ կենդանիների համար և այլն: Այն ջրակարգավորիչ և հողապաշտպան կարևոր ֆունկցիա է կատարում, տեղական կլիմա է ձևավորում, ունի սանիտարական և առողջապահական նշանակություն և այլն:

Ընդերքի արդյունահանումը ամենահին էլ միայն հանքային հարստությունների, էներգառեսուլունների շահագործում չէ: Այն միջավայրում առաջացնում է բուսական ծածկոցի, ռելիեֆի ու այլ բաղադրիչների վիճակի էական փոփոխություններ, արտադրական թափոնների կուտակում, կենդանական և բուսական՝ բնականից տարբեր նոր համակեցությունների ստեղծում և այլն:

Այսպիսով, անտառի, ջրի, ընդերքի, կամ բուսակենդանական աշխարհի նշանակությունն ու դերը մարդու կյանքում բազմակողմանի ու բազմաբովանդակ է, որն անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել դրանց առնչվելիս:

Միաժամանակ, պետք է ասել նաև, որ բնապահպանության համամոլորակային հիմնախնդիրները կրում են ոչ միայն էկոլոգիական, այլև սոցիալական բնույթ, և ստեղծված էկոլոգիական բարդ խնդիրները հետևանք են նաև մարդու սոցիալական անապահով վիճակի:

## 2.3. Բնական միջավայրի ներկա վիճակը

Բնության մեջ կենդանի նյութի (բույսեր, կենդանիներ, սնկեր, մանրէներ) ձևավորման և շարժման երևույթներն ուղեկցվում են հսկայաքանակ նյութերի և էներգիայի շրջանառությամբ: Կենդանի նյութի մասնակցությամբ արտադրվող և շրջանառվող նյութերի կենսաբանական շրջանապտույտը, երկրաբանական երևույթների համեմատ, կատարվում է բարձր ինտենսիվությամբ: Դա զգալիորեն ավելացել է երկիր մոլորակի զարգացման պատճական փուլում, քաղաքակրթության առաջնաբացին համապատասխան: Վաղնջական ժամանակներից՝ երկրագործության նպատակով անտառների այրումը, վայրի կենդանիների անխնա որսը, պատերազմները և մարդածին այլ արհավիրքներ ամբողջական կենսահամակեցությունների և առանձին տեսակների ոչնչացնան, տարածաշրջանների անապատացնան պատճառ դարձան: Միջին դարերում, արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, մարդկությունը մեծացրել է միջավայրին իշխելու կարողությունը, իր

հարացյուն պահանջների բավարարման համար մեծ քանակությամբ կենդանի, օրգանական և հանքային նյութերի օգտագործումով:

Բնակչության թվի աճին հանապատասխան շարունակում են զարգանալ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, շինարարությունը, տրանսպորտը, պատճառ դառնալով անտառային հսկայական զանգվածների ոչնչացման, հողային ծածկույթի դեգրադացման և էրողայի զարգացման, կենսաբազմազանության կրծատման՝ Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայում:

Արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունն ու շահագործումը, օգտակար հանածնների արդյունահանումը լուրջ փոփոխություններ է առաջացրել շրջակա միջավայրում, խախտելով բնական լանդշաֆտների կառուցվածքը, տարաբնույթ նյութերով աղտոտելով՝ հողը, ջրային էկոհամակարգերը և մթնոլորտային օդը: Իսկ ենթագիայի և նյութական ռեսուրսների օգտագործման ինտենսիվությունն աճում է բնակչության թվին համեմատական, որոշ դեպքերում է՝ առաջ է անցնում:

Մարդու գործունեության հետևանքով կենսոլորտի աղտոտումը, բնական էկոհամակարգերի քայլայումը, երկրի մակերևույթի կառուցվածքային փոփոխությունները, կլիմայի մարդաժին փոփոխությունը հանգեցնում են բնության անսպառ ռեսուրսների որակի վատացման, վերականգնվող ռեսուրսների՝ աղքատացման: Որպես օրինակ՝ մթնոլորտում ածխաթթու գազի ( $\text{CO}_2$ ) բնական պաշարը կազմում է մոտ 50000 մլր տոննա, մինչդեռ դրա մարդաժին արտանետումները գերակշռում են բնական պաշարները: Ամեն տարի տարրեր վառելանյութերի այրումից մթնոլորտ է արտանետվում մոտ 14 մլր տոննա ածխաթթու գազ, կրծատելով թթվածնի համապատասխան քանակությունը: Ածխաթթվի խտության մեծացումն ուղեկցվում է աէրոզոլի (փոշու մասնիկներ, մուր և այլն) քանակի մեծացումով, որը հանգեցնում է կլիմայի փոփոխության, խախտելով կենսոլորտի հավասարակշռությունը:

## 2.4. Բնական միջավայրի աղտոտումը

Մարդու գործունեության հետևանքով, կամ բնական երևույթների ազդեցությամբ՝ միջավայրի նոր նյութերով, ենթագիայով համալրումը կոչվում է աղտոտում: Աղտոտիչները տվյալ տարածքում անհրաժեշտ էկոլոգիական գործառույթ չունեն, ընդհակառակը, հանդիս են գալիս որպես վնասակար գործոն, խանգարով էկոհամակարգերի գործունեությանը, վատացմելով միջավայրի որակը, ազդելով մարդու ապրելակերպի, կամ գործունեության վրա: Աղտոտիչ հասկացությամբ բնութագրվում են այն մարմինները, նյութերը, ենթագիան, երևույթները,

գործողությունները, որոնք տարածության մեջ, տվյալ ժամանակամիջոցում, իրենց քանակով ու բնույթով խորթ են այդ միջավայրին, և կարող են էկոհամակարգը դուրս բերել հավասարակշռության վիճակից:

Աղտոտող նյութերի էկոլոգիական ազդեցությունը կարող է տարբեր կերպ դրսակրվել: Այն կարող է ի հայտ գալ՝ ինչպես առանձին կենսահամակարգերի, այնպես էլ ամբողջ կենսոլորտի մակարդակով:

Օրգանիզմների մակարդակով կարող են տեղի ունենալ ֆիզիոլոգիական գործունեության և վիճակի փոփոխություններ՝ աճի ու զարգացման թուլացում, բնական միջավայրի անբարենպաստ պայմանների հանդեպ դիմադրողականության անկում և այլն:

Կենսաբանական առանձին տեսակների տեղախմբի (պոպուլյացիա) մակարդակով՝ աղտոտումը կարող է փոխել առանձնյակների թվաքանակը, խտությունը, ծնելիությունը և մահացությունը, տարածման արեալը և այլ ցուցանիշներ:

Կենսահամակեցության մակարդակով աղտոտումն ազդում է համակեցության կազմի և ֆունկցիայի վրա, ընդ որում, նույն աղտոտիչ նյութը տարբեր կերպ է ազդում տարբեր խմբակցություններին: Դրան համապատասխան փոխվում է կենսահամակեցությունում տեղախմբերի քանակական հարաբերակցությունը, որը կարող է հանգեցնել տեսակի ոչնչացման կամ էլ նոր տեսակի հայտնվելուն:

Տարբերում են բնական և մարդածին աղտոտումներ: Բնական աղտոտումը տեղի է ունենում բնական պատճառներով՝ քամիների, հրաբուխների, երկրաշարժերի, ջրահոսքերի, հրդեհների հետևանքով: Մարդածին աղտոտումն առաջանում է մարդու գործունեության հետևանքով: Ներկայում մարդածին աղտոտման ընդհանուր ազդեցությունը մի քանի անգամ գերազանցում է բնականին: Այսպես, բնական աղբյուրները մեկ տարում մննուրուտ են արտանետում 30 մլն տոննա ազոտի օքսիդներ, իսկ մարդածին աղբյուրները՝ 35-50 մլն տոննա, ծծմբի երկօքսիդը համապատասխանաբար՝ 30 մլն տոննա և 150 մլն տոննա: Մարդու գործունեության հետևանքով կենսուրուտ մուտք գործող կապարը 10 անգամ ավելին է բնական գործընթացների համեմատությամբ:

Բնական միջավայրում մարդու գործունեության հետևանքով հայտնված աղտոտիչ նյութերը և դրանց թողած ազդեցությունը բազմազան են: Այդպիսի աղտոտիչների թվին են դասվում ածխածնի, ծծմբի, ազոտի միացությունները, ծանր մետաղները, տարբեր օրգանական նյութերը, արհեստական սինթեզված նյութերը, ռադիոակտիվ տարրերը և այլն: Ընդ որում, աղտոտվում են ինչպես ցամաքային, այնպես էլ ջրային տարածքները: Օրինակ, ամեն տարի համաշխարհային օվկիանոս թափվող նավթի քանակը գնահատվում է 10 մլն տոննա, որը ջրի

մակերեսին ծևավորում է բարակ շերտ, արգելակելով ջրաէկոհամակարգի և մթնոլորտի միջև տեղի ունեցող գազափոխանակությունը: Ավելի ուշ՝ նավթը ներթափանցելով ջրի խորքային շերտեր, կուտակվում է հատակային նստվածքում, խաթարելով ջրային կենդանական և բուսական օրգանիզմների բնականոն վիճակն ու գործունեությունը:

Նավթից բացի օվկիանոս են թափվում մեծ քանակությամբ կենցաղային ու արդյունաբերական հոսքաջրեր, որոնք պարունակուն են բարձր հիվանդածին հատկություններով օժտված վտանգավոր աղտոտիչ նյութեր, ինչպիսիք են ծանր մետաղները՝ արծիճը, սնդիկը, մկնդեղը, կաղմիումը, ցինկը, պղինձը և այլն: Շատ դեպքում այդ նյութերի խտությունը թույլատրելի նորմերը գերազանցում են տասնապատիկ անգամ:

Յուրաքանչյուր աղտոտիչ նյութ որոշակիորեն է ազդում քնության այս կամ այն բաղադրիչի՝ այս կամ այն գործունեության վրա, և այդ նկատառումով՝ դրանց արտանետումը միջավայր խստորեն պետք է վերահսկել: Ընդ որում, աղտոտիչների սահմանային թույլատրելի արտանետման (ՍԹԱ) և սահմանային թույլատրելի խտության (ՍԹԽ) մակարդակը հաստատվում է օրենսդրորեն:

Սահմանային թույլատրելի արտանետումը (ՍԹԱ) միավոր ժամանակում առանձին աղբյուրից արտանետված աղտոտող նյութերի այն քանակությունն է, որից ավելին՝ շրջակա միջավայրում առաջանում է անցանկալի հետևանքներ կամ վտանգում մարդու առողջությունը:

Բնական միջավայրում վնասակար նյութերի հաստատագրված նորմերը վերահսկում և պարզաբանում են տարածքային կառավարման համակարգերում գործող մոնիթորինգի հատուկ ծառայությունները: Դրանց դեռը կարևոր է մեծ քաղաքներում, քիմիական ձեռնարկությունների, ատոմային էլեկտրակայանների և այլ արդյունաբերական օբյեկտների շրջակայքի համար: Եթե խախտվում են բնական միջավայրի պահպանության նորմերը, մոնիթորինգի ծառայություններին նախազգուշական միջոցառումներ կիրառելու իրավունք է վերապահվում, ընդհուպ այդպիսի ձեռնարկությունների գործունեության դադարեցումը:

Քաղաքակության զարգացման վաղ ժամանակներում մարդն իր պահանջների բավարարման համար օգտագործել է մոտ 20 քիմիական տարր, իսկ ներկայում օգտագործվում է 100-ից ավելի, համարյա՛ քիմիական տարրերի պարբերական աղյուսակի բոլոր տարրերը: Ամեն տարի ընդերքից արդյունահանվում է մոտ 100 մլրդ տոննա հանքանյութ, վառելանյութ, քիմիական պարարտանյութի հումք և այլն: Որոշ մասնագետների գնահատմամբ, օգտակար հանածոների արդյունահանման ժամանակակից տեսմանը պահպանման դեպքում

նավթի պաշարները կրավարարեն՝ 30, գազի՝ 50, քարածխի՝ 200, այումինի՝ 500-600, երկարի՝ 250, ցինկի՝ 25, արծիծը՝ 20 տարի և այլն:

Բնական ռեսուրսների անխնա օգտագործման և բնական միջավայրի էկոլոգիական վիճակի վատացման նման միտումներ նկատվում է մեր մոլորակի բոլոր տարածաշրջաններում: Եվ այս պարագայում բնապահանական ուղղվածության առանձին ձեռնարկումներ, չեն կարող նկատելիորեն փոխել քաղաքակրթության վնասակար ազդեցությունը կենսոլորտի վիճակի վրա:

## 2.5. Բնական միջավայրի որակի նորմավորումը

Հայաստանի Հանրապետության բնության պահպանության օրենսդրության համապատասխան, իրականացվում է շրջակա միջավայրի որակի նորմավորում, նպատակ ունենալով հաստատելու ներգործության սահմանային թույլատրելի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության էկոլոգիական անվտանգությունը, գենոֆոնի պահպանումը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և դրանց վերարտադրությունը մարդու գործունեության զարգացման պայմաններում:

Բնական միջավայրի վրա մարդածին ներգործություն ասելով՝ հասկանում են գործողություններ, որոնք իրականացվում են տնտեսական, վերականգնողական և մշակութային գործունեությամբ: Դրանք բնական միջավայրում առաջացնում են ֆիզիկական, քիմիական, կենսաբանական փոփոխություններ:

Շրջակա միջավայրի էկոլոգիական նորմավորումը նպատակ ունի ճշտելու էկոհամակարգերի ծանրաբեռնվածության թույլատրելի աստիճանը: Իսկ ծանրաբեռնվածությունը թույլատրելի է համարվում, եթե դրա ներգործությամբ բնական էկոհամակարգի նորմալ վիճակից դիտված շեղումները չեն գերազանցում բնական փոփոխություններին, հետևապես՝ կենրանի օրգանիզմների վրա չեն թողնում անցանկալի հետևանքներ, չեն վատացնում միջավայրի որակը:

Բնական միջավայրի, սննդի և կերի որակի նորմերը հաստատվում են վնասակար նյութերի «ներգործության շեմ» կոչված կոնցենտրացիայի հիման վրա: «Ներգործության շեմը» վնասակար նյութերի այն նվազագույն քանակն է, որից ավելինի ազդեցության հետևանքով օրգանիզմներում տեղի են ունենում անցանկալի փոփոխություններ և օրգանիզմը դուրս են գալիս ֆիզիոլոգիական ու հարմարվողականության ռեակցիայի սահմաններից, կամ էլ օրգանիզմում ի հայտ են գալիս հիվանդագին երևույթներ:

Վնասակար ներգործության նորմավորումը սահմանվում և հաստատվում է բնական միջավայրի պահպանման լիազորված հատուկ պետական մարմինների կողմից: Այն սահմանում է հիգիենիկ հսկողություն, որը բարելավվում է գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, հաշվի առնելով միջազգային չափանիշները:

Նորմավորման համակարգում առանցքային դեր ունի վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ): Դա համապատասխանում է նյութերի այն նորմին, որն հաստատագրվում է միավոր ծավալում (օդ և ջուր), զանգվածում (սննդամթերք, հող) կամ մակերեսում (աշխարհագրական տարածք):

# **ԳԼՈՒԽ 3**

## **ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ,**

### **ՄՈՆԻթՈՐԻՆԳ ԵՎ ԿԱՂԱՍՏՐ**

#### **3.1. ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ պահպանություն**

Մարդու շրջակա միջավայրին մշտապես վերաբերվել է, հիմնականում՝ որպես բնական ռեսուրսի աղբյուր: Չնայած դրան, հազարամյակներ շարունակ մարդու գործունեությունը գգալի բացասական ազդեցություն չի ունեցել կենսոլորտի վրա: Սակայն, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում մարդու տնտեսական գործունեության ազդեցության ներքո կենսոլորտում տեղի ունեցող բացասական փոփոխություններն այնքան են շատացել, որ դրանց ազդեցությունն ուղղակիորեն տարածվում է հենց իր՝ ճարդու վրա:

Մարդու իր կյանքի պայմանները լավացնելու ձգտումով, ավելացրել է նյութական արտադրության տենտերը, չնտածելով հետևանքների մասին: Յաճախ բնությունից վերցված ռեսուրսների մեծ մասը հետ է վերադարձել բնությանը՝ որպես թափոն, փչացնելով բնառեսուրսը, վտանգելով կենսոլորտի և մարդու հետագա գոյությունը: Այդպիսի իրադրությունից դուրս գալու միակ ելքը բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նոր համակարգի մշակումը և ներդրումն է, որտեղ արդեն մարդուց խելամիտ մոտեցումներ են պահանջվում:

Բնական ռեսուրսները շրջապատի այն նյութերն ու էներգիան են, որոնք ներգրավված են, կամ կարող են ներգրավվել արտադրության մեջ՝ հասարակության զարգացման տվյալ փուլում: Բնական ռեսուրսները՝ արդյունաբերական հոլմքը, նավթը, քարածուխը, անտառը և այլն մարդկային հասարակության համար կենսական անհրաժեշտ այն միջոցներն են, որոնք գոյություն ունեն բնության մեջ մարդուց անկախ, սակայն մարդու գործունեության հետևանքով կարող է փոխվել դրանց վիճակը:

Բնական ռեսուրսները բաժանվում են տարբեր նկատառումներով՝ ըստ ծագման, նշանակության, բնույթի և այլն: Սակայն, էկոլոգիական առումով կարևոր է մարդ - բնառեսուրս փոխհարաբերության հետևանքով վերջինիս կրած փոփոխությունը: Այս առումով բնական ռեսուրսները բաժանվում են՝ սպառվող և անսպառ խմբերի: Սպառվող ռեսուրսներն իրենց հերթին ստորաբաժանվում են երկու ենթախմբի՝ վերականգնվող և չվերականգնվող:


Չվերականգնվող բնական ռեսուրսների խմբին են դասվում այն նյութերը, որոնք մեկ անգամ օգտագործվելուց սպառվում և այլևս չեն վերականգնվում: Այդպիսիք են գրեթե բոլոր օգտակար հանածոները,

ինչպես՝ օրգանական ծագմամբ (քարածուխ, նավթ), այնպես էլ հանքային (անօրգանական) ծագմամբ լեռնային ապարներ:

Չվերականգնվող բնական ռեսուրսների պահպանությունը պահանջում է դրանց արդյունավետ և խնայողաբար օգտագործում, պայքարը հանույթի, մշակման, օգտագործման ժամանակ տեղի ունեցող կորուստների դեմ, ինչպես նաև դրանց լիարժեք փոխարինողների որոնում:

Վերականգնվող բնական ռեսուրսների խմբին են դասվում բուսականությունը, կենդանական աշխարհը, հողը, ինչպես նաև մի շարք հանածոներ (տորֆ, աղ, որոշ նստվածքային ապարներ): Այդ ռեսուրսները, օգտագործվելով հանդերձ, մշտապես վերականգնվում են: Սակայն, դրանց վերականգնման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, որոնց խախտումը դանդաղեցնում կամ դադարեցնում է ինքնավերականգնման գործընթացը:

Վերականգնվող բնական ռեսուրսները նարդու անխոհեն գործունեության հետևանքով կարող են վերածվել չվերականգնվողների, ինչպես օրինակ, եթե մարդը գիտակցաբար, թե անգիտակցաբար ոչնչացնում է կենդանիների և բույսերի այս կամ այն տեսակները, որոնք խսպառ վերանում են երկրի երեսից և այլս այդ տեսակները չեն կարող վերստին առաջանալ: Վերականգնվող բնական ռեսուրսների պահպանությունը պետք է իրականացվի վերջիններիս արդյունավետ օգտագործմամբ և ընդլայնված վերարտադրության ապահովմամբ, որը պահանջում և ապահովել բնառեսուրսի վարականգնման պայմանները և համաձայնեցնել սպառնան ու վերարտադրության արագությունները:



նկ. 3. Բնական ռեսուրսների խմբավորումը

Անսպառ բնական ռեսուրսների քանակը, ծավալը, ուժգնությունը մոլորակի վրա անփոփոխ է: Սակայն դրանք կարող են

լավագույնս չօգտագործվել մարդու կողմից, և որ առավել կարևոր է՝ կարող են աղտոտվել, որակազրկվել անպետքության աստիճանի:

Բնության բոլոր բաղադրամասերը, անկախ այն բանից, սպառվող են թե անսպառ, բնության ընդհանուր համակարգում ունեն իրենց կայուն, անփոխարինելի տեղը և փոխադարձաբար կապված են միմիանց հետ: Մթնոլորտային օդի աղտոտումը բացասաբար է անդրադառնում բուսական և կենդանական աշխարհի վրա, բուսածածկի դեգրադացումն ազդում է հողային ծածկույթի և ջրային ավագաների վիճակի վրա և այլն: Դետևաբար, բնության մեջ առաջնային և երկրորդային պահպանության օբյեկտներ, առաջնահերթություններ չկան: Բնության պահպանության խնդիրը պետք է լուծել համալիր ձևով: Եվ բնական ռեսուրսների օգտագործման ու բնության պահպանության հիմնախնդիրները ծատորեն լուծելի են այն գիտակցումով, որ բնության բոլոր երևույթներն իրար փոխադարձ կապված և միմիանցով փոխապայմանավորված են:

Բնության պահպանությունը միջոցառումների համակարգ է, որն ուղղված է մարդու և շրջակա բնական միջավայրի միջև փոխադարձ արդյունավետ հարաբերություններ հաստատելուն և պահպանելուն, բնական հարստությունները վերականգնելուն, բնական ռեսուրսները խելացի օգտագործելուն, մարդու տնտեսական գործունեության հետևանքով՝ բնության և մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունները վերացնելուն: Այդ միջոցառումները իրականացվում են ամենատարեր՝ միջազգային, պետական, գերատեսչական, արտադրական, հասարակական և անհատական մակարդակներով:

### **3.2. Բնական ռեսուրսների մոնիթորինգ եւ կադաստր, որանց կապը, խնդիրները եւ նշանակությունը**

Բնական ռեսուրսների կառավարման, արդյունավետ օգտագործման և պահպանման համար պահանջվում է ստեղծել տեղեկատվության հուսալի համակարգ: Նման խնդիր կա նաև մեր երկրում, որտեղ տեղեկատվական կարևոր համակարգ կարելի է դիտել բնական ռեսուրսների ճյուղային կադաստրն ըստ գերատեսչությունների:

Բնական ռեսուրսների կադաստրն իրավական, բնական, քանակական և որակական գնահատման ստույգ տվյալների տեղեկագիր է, որը տրվում է պետական գերատեսչական, մարզային, տեղական ինքնակառավարման մարմինների՝ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ճիշտ բնօգտագործման և սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Բնական ռեսուրսների կադաստրի վարման նպատակով իրականացվում է մոնիթորինգ՝ համակարգված պարբերական դիտարկում, որն ապահովում է արդյունավետ բնօգտագործման վերահսկողությունը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր համակարգում: Միաժամանակ, ստեղծվում է բնական ռեսուրսների մոնիթորինգի համակարգ:

Բնական ռեսուրսների մոնիթորինգն իրենից ներկայացնում է բնական ռեսուրսների վիճակի դիտարկումների համակարգ, որի խնդիրն է՝ ժամանակին ի հայտ բերել բնական ռեսուրսների վիճակի փոփոխությունները, տալ դրանց գնահատականը, կանխել և վերացնել բացասական երևոյթների հետևանքները: Ելեկտրոնային գրանցում, բնական ռեսուրսների կադաստրի վարման, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, բարելավման, վերականգնման, գյուղատնտեսության մեջ՝ մշակաբույսերի բերքատվության կանխատեսման և այլ խնդիրների լուծման համար:

Սոնիթորինգի բովանդակությունն այն է, որ դիտարկումների, չափումների, հետազոտությունների, ուսումնասիրությունների, հանույթների միջոցով բնութագրվում է մոնիթորինգի օբյեկտի վիճակն՝ ըստ առանձին ռեսուրսների բնութագրից ցուցանիշների:

Տարածական առումով մոնիթորինգը լինում է համապետական, կամ տարածքային, բայց բոլոր դեպքում իրականացվում է համապետական ծրագրերով:

Ժամանակային առումով փոփոխությունների դիտարկումները լինում են՝

- շրջափուլային (տարեկան, եղանակային և բնական այլ ժամանակային փոփոխությունների հետ կապված),
- աստիճանական (Էվոլյուցիոն, անհետադարձ՝ զարգացման գործընթացների հետ կապված),
- մարդածին (մարդու գործունեության հետ կապված),
- արտակարգ իրավիճակային (Երկրաշարժերի, ջրհեղեղների, տարրեր բնույթի վթարների և արհավիրքների հետ կապված):

Սոնիթորինգի արդյունքներն արտահայտվում են բնական ռեսուրսների բնութագրերի քանակական և դրականացներով, բացարձակ կամ հարաբերական տվյալներով՝ յուրաքանչյուր գործոնի ցուցանիշների բնութագրման համար նախօրոք մշակված սանդղակներին ու գործակիցներին համապատասխան: Հողերի մոնիթորինգի իրականացման ընթացքում պահպանվում են բնական պաշարների կադաստրի և մոնիթորինգի փոխադարձ համատեղության ու համադուլիության սկզբունքները: Այդ փոխադարձ կապն ապահովվում է

կողորդինատների միասնական համակարգով, իոդերի ընդհանուր դասակարգումով և այլն:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի առարկան անհնար է բնութագրել՝ չընդունելով շրջակա միջավայրը որպես դիտումների վիճակագրության առարկա: Շրջակա միջավայրը նեղ հասկացողությամբ՝ մարդուն շրջապատող բնական ռեսուրսներն ու էներգիան է: Իսկ բնական ռեսուրսներին ներկայումս միանում են մարդու կողմից ստեղծած արհեստական միջոցները (քաղաքային և գյուղական բնակավայրերը, փոխադրամիջոցների և հաղորդակցության մյուս ուղիները և այլն): Նետևաբար, բնական ռեսուրսների մոնիթորինգի առարկան ժամանակակից ընթանումով ավելի լայն հասկացություն է և ներառում է դրանց ընդհանրությունը:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի առարկան հանդիսանում է՝ բնության և հասարակության փոխներգործության ասպարեզում համընդգրկուն երևույթներն ու գործընթացները, որոնք հանդես են գալիս մարդկանց կենսագործունեության զարգացման որոշակի փուլում, որոշակի տեղում և ժամանակի ընթացքում: Մարդ-բնություն փոխհարաբերության երևույթներն ուսումնասիրելով, մոնիթորինգը բնութագրում է շրջակա միջավայրի քաղաքիչների վիճակը, բնության վրա դրական և բացասական ներգործության աստիճանը, արտադրական գործունեության ընթացքում բացասական ազդեցության չեզոքացման չափերը, իրականացվող միջոցառումների արդյունավետությունը:

Բնական ռեսուրսների մոնիթորինգի հիմնական խնդիրը հանդիսանում է դեկավարող, կառավարող մարմիններին ու գերատեսչություններին, գիտահետազոտական հիմնարկներին՝ բնության վրա մարդու ներգործության վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, մարդու գոյության և գործունեության, երկրի վրա կյանքի պահպանման համար անհրաժեշտ օպտիմալ պայմանների պահպանությանն ու վերականգնմանն ուղղված միջոցառումների մշակումը: Բնական ռեսուրսների մոնիթորինգը սերտորեն կապված է տնտեսական մոնիթորինգի, ճյուղային (արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտի և այլն), սոցիալ-ազգագրական մոնիթորինգի և այլնի հետ:

Բնական ռեսուրսների մոնիթորինգն ապահովում է բնօգտագործման արդյունավետությունը և շրջակա միջավայրի պահպանությունը: Մարդու գործունեությունը հնարավորություն է տալիս բնօգտագործման համար նոր նախագծեր կազմելու:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի տվյալները հնարավորություն են տալիս երկրի տարածքում տեղաբաշխել արտադրական տարբեր օբյեկտները, կատարել արտադրության մեջ ներդրվող տեխնոլոգիաների ընտրություն, որոշել բնապահպանական միջոցառումների հերթականությունը:

Մոնիթորինգի տվյալների հիման վրա որոշվում են բնապահպանական միջոցառումների կիրառման ծախսերը, դրանց արդյունավետությունը, տնտեսական կորուստները, որոնք առաջանում են շրջակա միջավայրի որակի վատացման հետևանքով:

### **3.3. Բնական ռեսուրսների մոնիթորինգի ցուցանիշների համակարգը**

Շրջակա միջավայրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգն իրենից ներկայացնում է բնական ռեսուրսների մոնիթորինգի տվյալների ընդհանրացում՝ մարդկային հասարակության և բնության փոխհարաբերությունների վերաբերյալ, արտահայտված՝ քանակական և որակական բնութագրերով:

Ցուցանիշների համակարգի ստեղծումը նպատակառուղղված է մեկ միասնական խնդրի լուծման՝ բնապահպանության ու շրջակա միջավայրի կառավարման և ծրագրավորման կատարելագործման: Այդ համակարգը ներառում է բազմաթիվ ցուցանիշներ և ըստ այդմ՝ կարող է ունենալ որոշակի կառուցվածք, որը բաժանվում է որոշակի առանձնահատկություններ ունեցող ենթախմբերի:

Մոնիթորինգային դիտարկումների համակարգի ստեղծումը պահանջում է մեծ նախապատրաստական աշխատանքներ: Դրանք են՝

- համակարգի նախագծի կազմում (ուսումնասիրության օբյեկտների ընտրություն, նպատակի, խնդիրների և կառուցվածքի ճշգրտում, ցուցանիշների մշակում),
- տվյալների հավաքում, մշակում և ընդհանրացում, նախագծի կազմում,
- շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, տեղանքի հետազոտությունների հիման վրա մշակված նախագծերի քննարկում, ճշգրտում,
- յուրաքանչյուր համակարգում ստացված քանակական ցուցանիշների վերլուծություն, պակաս և ավելորդ ցուցանիշների ուղղում, ինչպես նաև լրամշակման ենթակա ցուցանիշների ճշգրտում:
- ցուցանիշների համակարգի համապատասխան նախագծի վերամշակում և ընդհանրացում:

Բնական ռեսուրսների մոնիթորինգի իրականացման համար ստեղծվում են նաև նախագիտական հատուկ ստորաբաժանումներ և խմբեր:

Բնական ռեսուրսների մոնիթորինգի խնդիրն է՝ տալ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (առանց բացառության) բնութա-

գրերը, որոշել վիճակը, արդյունավետ օգտագործման և պահպանման նակարդակը և այլն:

Գոյություն ունի բնական ռեսուրսների բաղադրիչների վիճակի վերլուծության երկու ուղղություն՝

- տնտեսագիտական, որն առնչվում է տնտեսական շրջանառության ոլորտին,
- սոցիալ-առողջապահական, որն ուղղված է մարդու համար առողջ շրջակա միջավայրի պահպանը:

Այդ ուղղությունները սերտ կապված են միմյանց հետ, սակայն ներկա պայմաններում սոցիալ-առողջապահական ուղղությունն առաջնային նշանակություն է ստանում:

Բնական ռեսուրսների մոնիթորինգի և վիճակագրության բաղադրիչ տարրերը կառուցվածքային ամբողջականություն են կազմում: Այդ կառուցվածքում թեև տարրերը հստակորեն մեկը մյուսից առանձնացված են, սակայն բոլոր բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց հետ:

Մշակված համակարգը կազմված է ցուցանիշների 10 ենթահամակարգից՝

1. ջրային ռեսուրսների վիճակի, օգտագործման և պահպանման,
2. օդային ավագանի վիճակի և պահպանման,
3. հողային ռեսուրսների վիճակի, օգտագործման և պահպանման,
4. անտառային ռեսուրսների վիճակի, օգտագործման և պահպանման,
5. բնության հատուկ պահպանվող տարածքների վիճակի և պահպանման,
6. կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման,
7. ընդերքի պահպանության և հանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման,
8. արդյունաբերական թափոնների ձևավորման, հեռացման և օգտահանման,
9. կենցաղային թափոնների ձևավորման և դրանցից՝ շրջակա միջավայրի պահպանության,
10. շրջակա միջավայրի պահպանության հիմնական ֆոնդերի:

Բնական ռեսուրսների համակարգերը ներկայացնող բաղադրիչները սերտորեն կապված են. դրանց միջև տեղի է ունենում նյութերի և էներգիայի մշտական փոխանակություն: Դրա համար էլ բաղադրիչներից մեկի փոփոխությունն անպայման մեկ ուրիշի փոփոխության է բերում:

Բոլորը միասին որոշակի պայմաններ են ստեղծում մարդու աշխատանքային գործունեության, առողջության, հոգեկան վիճակի և երկարակեցության, ինչպես նաև կենդանական աշխարհի պահպանության և զարգացման համար:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ենթահամակարգ ունի իր յուրահատկությունը՝ օբյեկտների բնութագրման առումով։ Սակայն, անբողջ ենթահամակարգերի շարքը կապված է միասնական սկզբունքներով, որոնց հիմքում ընկած են հետևյալ հիմնական ցուցանիշների խմբերը՝

1. առկայության և կազմի,
2. մարդու գործունեության բնութագրման ցուցանիշների, որոնք շրջակա միջավայրի քանակական և որակական փոփոխություններ են առաջացնում,
3. շրջակա միջավայրի պահպանման և բարելավման միջոցառումների բնութագրման,
4. բնապահպանական միջոցառումների իրականացման ժախսերի,
5. որոշակի տարածքում միջավայրի բաղադրիչների որակական վիճակի բնութագրեր:

Ցուցանիշների համակարգի նշված խմբերը հնարավորություն են տալիս ամբողջ հանրապետության և առանձին տարածաշրջանների համար բնութագրել մարդ-բնություն փոխհարաբերությունները, բնապահպանական հարցերի արդյունավետ կառավարման համար ունենալ հավաստի տեղեկատվություն։

### **3.4. Բնական ռեսուրսների ճյուղային կադաստրների վարումը, դրանց միասնական համակարգի ստեղծումը**

Բնական ռեսուրսների ճյուղային կադաստրը տվյալ ճյուղի իրավական, բնական, էկոլոգիական, քանակական, որակական, տեխնոլոգիական, տնտեսական և օգտագործման վիճակի հավաստի և ստույգ տվյալների տեղեկագիր է։

Կադաստրային տվյալներն օգտագործվում են բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնապահպանական միջոցառումների իրագործման համար։ Բնական ռեսուրսների կառավարման համար անհրաժեշտ է կատարել դրանց պաշարների հաշվառում և օգտագործման արդյունավետության գնահատում։

Աշխարհում ընդունված երկու՝ ճյուղային և տարածքային կադաստրային համակարգերից Հայաստանի Հանրապետությունուն օրենսդրութեն նախատեսվում է անցկացնել միայն ճյուղայինը, այն է՝ հողային կադաստրը։

Եյուղային կադաստրն իրենից ներկայացնում է բնական մեկ ռեսուրսի վերաբերյալ տվյալների ամփոփագիր:

Տարածքային կադաստրը ամփոփում է որևէ տարածքի (ֆիզիկաշխարհագրական տարածք, ջրհավաք ավազան և այլն) կամ վարչատարածքային միավորի (մարզ, համայնք և այլն) ճյուղային կադաստրի վերաբերյալ տվյալները:

Այժմ ՀՀ-ում օրենսդրորեն վարվում է բնական ռեսուրսների երկու տիպի ճյուղային կադաստր:

Յայաստանի Յանրապետության հողային օրենսգրքի 33 հոդվածով (ընդունված 2001թ. մայիսի 2-ին) ամրագրված է, որ անշարժ գույքի պետական միասնական կադաստրն իրենից ներկայացնում է հողամասերի ու դրանց վրա ամրակայված անշարժ գույքի հաշվառման, բնական, տնտեսական և իրավական կարգավիճակի, տեղաբաշխման ու չափերի, դրանց որակական բնութագրի և սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի գնահատման հավաստի տեղեկությունների համակարգ:

**Յողային կադաստրը** հանրապետության հողային ֆոնդի, դրա վարչատարածքային միավորների (մարզ, համայնք) կադաստրային սկզբնական հաշվառման օբյեկտների և սուբյեկտների պետական միասնական բազմաստիճան դեկավարման և լրատվական համակարգ է, որը հանրիսանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման հիմնական մեխանիզմ՝ հիմնված հասարակության կողմից ընդունված տնտեսական, սոցիալ-բարոյական նորմերի վրա:

Յողային կադաստրի տվյալները կիրառվում են հողային ռեսուրսների օգտագործման տարբեր ոլորտների տնտեսավարման, հողային պաշարների արդյունավետ օգտագործման, հողային հարաբերությունների և հարկային քաղաքականության կարգավորման ու դեկավարման գործում:

**Անշարժ գույքի միասնական կադաստրի վարումը** իրականացվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միջոցով:

**Պետական ջրային կադաստրը** համաձայն հանրապետության ջրային օրենսգրքի (ընդունած 2003թ հունիսի 4-ին) մշտական գործող համակարգ է ջրային ռեսուրսների, ջրհավաք ավազանների հուներից և ափերից ստացվող նյութերի, ջերի քանակական և որակական հատկությունների և սպառման համար դրա պահանջարկի վերաբերյալ:

Համաձայն օրենսդրության 19, 74 և 75-րդ հոդվածների, ջրային կադաստրը ներառում է ջրային ռեսուրսների քանակական և որակական, արդյունավետ ջրօգտագործման և վերականգնման, մարդկային գործոնի ազդեցության, հոսող ջրերի վիճակի, դրանց միջև գոյություն ունեցող նյութերի մասին տվյալները: Ջրային կադաստրը

կանխատեսում է սելավների, սպասվող երաշտների, կլիմայական անբարենպաստ երևույթների կրկնությունները: Տվյալներ է պարունակում ազգային ջրային ծրագրերի, ջրօգտագործման և հիդրոտեխնիկական միջոցառումների մասին:

Պետական ջրային կադաստրը վարում են հանրապետության բնության պահպանության նախարարությունը և այդ համակարգում լիազորված մարմինները, որոնք իրագործում են ջրային ռեսուրսների մոնիթորինգ:

**Պետական անտառային կադաստրը** անտառի վերաբերյալ՝ իրավական վիճակի, քանակական ու որակական հարաբերակցությունների, անտառի դասակարգման ու գնահատման միասնական տեղեկատվական համակարգ է:

Պետական անտառային կադաստրը վարվում է հանրապետության բնության պահպանության, վերարտադրության և օգտագործման լիազորված մարմինների կողմից, անտառների մոնիթորինգի, դրանց պահպանության կազմակերպման, վերարտադրության և անտառների արդյունավետ օգտագործման նպատակներով:

Անտառաօգտագործման էկոլոգաիրավական և տնտեսական մեխանիզմների համակարգի կարևոր օլակներից է միասնական մեթոդով պետական անտառային կադաստրի վարումը: Այն պետք է պարունակի անտառային ֆոնդի վերաբերյալ տնտեսական էկոլոգիական և այլ քանակական ու որակական բնութագրման տեղեկություններ: Կադաստրն իր մեջ ներառում է տեսակային կազմի ցուցակը (հաճարենի, բուխի, հացենի, կաղնի, սոճի, թեղի և այլն), դրանց ծածկվածության աստիճանը, կարգավիճակը (հատուկ պահպանվող անտառները՝ առաջին, երկրորդ և երրորդ խմբի):

Անտառօգտագործման էկոլոգաիրավական վիճակի կարգավորման հիմնական գործառությն է՝

- անտառային ֆոնդի պետական հաշվառումը,
- անտառային կադաստրը,
- անտառային մոնիթորինգը,
- անտառների պետական պահպանումը,
- անտառաշինությունը,
- անտառների վերականգնումը և ընդարձակումը,
- անտառների օգտագործման, վերարտադրության, պահպանման պետական վերահսկողությունը,
- անտառօգտագործման վեճերի լուծումը և այլն:

Անտառային ռեսուրսների արդյունավետ օգտագործման էկոլոգիական մեխանիզմն իր մեջ ներառում է՝

- անտառային ռեսուրսների օգտագործման վճարումների համակարգը,

- անտառային ռեսուրսների և շրջակա միջավայրի օգտագործման վճարումները,
- անտառային ռեսուրսների հաշվառումը և գնահատումը,
- անտառօգտագործման արտոնագրումը,
- անտառների էկոլոգիական ապահովագրումը,
- անտառային էկոլոգիական ֆոնդի ձևավորումը,
- անտառային կադաստրի տեղեկատվությունը և այլն:

Անտառների պետական հաշվառման և պետական կադաստրի վարման կարևոր բաղադրիչ է հանդիսանում անտառների տնտեսական գնահատումը, որը հնարավորություն է տալիս համադրել առանձին անտառտնտեսությունների տնտեսական գործունեության արդյունքները, պլանավորել փայտանյութի ստացման հնարավորությունները և փաստացի օգտագործումը, ինչպես նաև հաստատել անտառօգտագործման վճարման կարգը՝ որպես բնական ռեսուրս:

Պետական անտառային կադաստրի տվյալները օգտագործվում են անտառային տնտեսության ղեկավարման գործում, այդ թվում, կազմակերպելու՝ արդյունավետ օգտագործան, վերարտադրության, պահպանման, դրանց քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ վերահսկողությունը, որոշելով՝ անտառային հողերի անցումը ոչ անտառայինի շարքը, անտառային ռեսուրսների օգտագործման վճարմանը, գնահատելով՝ անտառօգտագործողների տնտեսական գործունեությունը և այլն:

**Ընդերքի և օգտակար հանածոների** պետական կադաստրն իրականացնում է բնապահպանության նախարարությունը, որը պետք է ունենա յուրաքանչյուր տեղանքում հայտնաբերված կամ հայտնաբերվող օգտակար հանածոների և զուգորդող նյութերի քանակական ու որակական տվյալները, դրանց արդյունահանման լեռնարդյունաբերական, հիդրոտեխնիկական պայմանները, ինչպես նաև հանածոների տնտեսական գնահատման ցուցանիշները: Այդ տվյալներն օգտագործվում են՝ ընդերքի երկրաբանական հետազոտումը և օգտակար հանածոների արտահանումը կազմակերպելու, ինչպես նաև նյութական ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու համար:

**Բուսական աշխարհի կադաստրը**, համաձայն «Բուսական աշխարհի մասին» օրենսգործի (1999թ. նոյեմբերի 23), իրենից ներկայացնում է ոլորտի իրավական վիճակի, քանակական և որակական բնութագրի, էկոլոգիական, տնտեսական ու մշակույթային արժեքների, աշխարհագրական, տարածքային տեղաբաշխվածության և օգտագործման վերաբերյալ տվյալների ու փաստաթղթերի ամփոփագիր:


Բուսական աշխարհի կադաստրը հանրապետությունում վարում են բնության պահպանության նախարարության համակարգի՝ կա-

ռավարության կողմից լիազորված մարմինները, բուսական աշխարհի պահպանության, օգտագործման վերարտադրության նպատակներով:

**Կենդանական աշխարհի կադաստրը**, համաձայն «Կենդանական աշխարհի մասին» օրենսգրքի (2000թ ապրիլի 3), իրենից ներկայացնում է կենդանական աշխարհի իրավական ռեժիմի, քանակական և որակական բնութագրման, էկոլոգիական, մշակութային և տնտեսական արժեքների, աշխարհագրական և վարչական ընդգրկման, դրանց պաշարների և օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունների ու փաստաթղթերի ամփոփ տեղեկագիր:

Կենդանական աշխարհի կադաստրը վարում են հանրապետության բնապահպանության նախարարության լիազորված մարմինները, նպատակ ունենալով ի հայտ բերել կենդանատեսակների քանակական, որակական փոփոխությունները և դրանց տեղաբաշխվածության վերաբերյալ տեղեկությունները:

Չնայած այն բանին, որ այժմ ՀՀ-ում բնական ռեսուրսների միասնական կադաստրային համակարգի ստեղծման համար չկան բարենպաստ պայմաններ, այդուհանդեռձ, գործընթացն այլընտրանք չունի: Այդ նպատակներով անհրաժեշտ է կազմել բնական ռեսուրսները բնութագրող տվյալների ցանկ և ցուցանիշների համակարգ, մշակել տեղեկատվության հավաքագրման, մշակման, վերլուծման և փոխանակման միասնական կարգ՝ ճյուղային կադաստրների միջև, ստեղծել և կատարելագործել նորմատիվակրավական դաշտ, կազմել տարբեր մասշտաբների թվային քարտեզներ, տեղեկատվական տվյալներ ու բազաներ: Բնական ռեսուրսների կադաստրի բաղադրիչ մասերի ամփոփ տեղեկատվությունը բերված է ստորև՝ աղյուսակով:



Տարածքների հողօգտագործման համալիր կառավարման գործուն կադաստրային տեղեկատվությունն անհրաժեշտ է, որպեսզի հեռանկարային ճիշտ գնահատական տրվի ցանկացած վայրում գտնվող տնտեսական համալիրների ճյուղերի և ձեռնարկությունների գործունեության վերաբերյալ հետևյալ երեք խնբերով՝

առաջին ճյուղեր, որոնք իրենց բնառեսուրասային ներուժով և տնտեսական-էկոլոգիական հատկություններով համարվում են ոչ պրոֆիլային,

երկրորդ ճյուղեր, որոնց գարգացումն այս կամ այն պատճառներով պետք է դադարեցնել: Օրինակ՝ չվերականգնվող օգտակար հանածոների օգտագործման ընթացքում նախօրոք պետք է նախատեսել և պլանավորել արտադրության բնույթի վերափոխման հնարավորությունները դրանց սպառվելուց հետո,

երրորդ՝ շուկայական, մասնագիտացված ճյուղեր, որոնց գարգացումը սկզբունքորեն կարող է սահմանափակվել հաշվի առնելով հողային, բնական այլ ռեսուրսների տարածքի բնական ֆոնդը, կանխագուշակելով բնական միջավայրի ապագա գարգացման հնարավորությունները:

Կադաստրային տեղեկատվությունը կարևոր է ՀՀ տարածքի տարբեր մարզերի բնական ռեսուրսների օգտագործման և կառավարման համար: Դայտնի է, որ բնական ռեսուրսների համար բնութագրական է դրանց ցրվածությունը և սահմանափակությունը, միևնույն ժամանակ այն ռեսուրսները, որոնք կապված են կենսակլիմայական պայմանների հետ (բուսականություն, հող, ջուր և այլն) նույնպես անհավասարաչափ են բաշխված տարածքում:

## ԳԼՈՒԽ 4

# ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ՔԻՌՏԻ) ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՍԿՐԻՊՏՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Բնական ռեսուրսների մոնիթորինգի համար անհրաժեշտ է հավաքել, վերլուծել և խնբավորել տարբեր ռեսուրսների վերաբերյալ՝ բնական, քանակական և տնտեսական վիճակի տվյալները։ Առաջին հերթին դա վերաբերում է վերգետնյա, օդալուսագեղեղիական և տիեզերական հանույթներին, ինչպես նաև տարբեր ռեսուրսների՝ այլ բնույթի հետազոտություններին ու դիտարկումներին։

Բնական միջավայրի պետական մոնիթորինգի կազմակերպման հիմնական սկզբունքները բավարարում են հետևյալ պահանջներին։

- **Ժամանակային անընդհատությունը։** Բնական ռեսուրսներն օգտագործման ընթացքում նարդածին ծանրաբեռնվածության հետևանքով քանակապես և որակապես փոփոխվում են։ Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել մոնիթորինգի իրականացման անընդհատությունը՝ տեղեկատվության համընդհանուր կամ ընտրանքային, անընդմեջ կամ պարբերաբար թարմացման շնորհիվ։

- **Սիամանական քաղաքականության իրականացումը։** Այն ենթադրում է մեթոդների և տեխնոլոգիաների ամբողջականություն, մոնիթորինգի իրականացման, դրա տեղեկատվության ու փաստաթղթերի համակարգերի համաձայնեցվածություն՝ ՀՀ ամբողջ տարածքի կամ սուբյեկտների առումով։ Այդ սկզբունքը չի բացառում մոնիթորինգի անցկացման ընթացքում հաշվի առնել նաև տարածքային առանձնահատկությունները։

- **Դայաստանի Դանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը։**

- **Պետական մոնիթորինգի տեղեկատվության մատչելիությունը։** Մոնիթորինգի տվյալները շահագրգիռ իրավաբանական և ֆիզիկական բոլոր անձանց համար պետք է լինեն առավելագույն մատչելի։ Դրանք պատշաճ կերպով ներկայացնելու համար պետք է կիրառել նորագույն տեխնոլոգիաներ։

Բնական ռեսուրսների մոնիթորինգի տվյալների հավաստիությունն ու լիակատարությունը կախված են դրանց ստացման եղանակներից, որոնց թվում կարելի է առանձնացնել՝ գծագրական, վերգետնյա հանութային, առանձին մասնագիտական, ագրոտնտեսական, հողագիտական, երկրաբուսաբանական, լանդշաֆտային ուսումնասիրության և այլ մեթոդները։

## **4.1. ԿԵՆՍԱԳՈՒԱԾՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄԵԽԱԼՆԵՐԸ**

Միջավայրի բնական պայմանների փոփոխություն այս կամ այն չափով ազդում է կենդանի օրգանիզմների գոյության, վիճակի, վարքի և կենսագործունեության վրա: Օրգանիզմներն արձագանքում են այդ փոփոխություններին, և այդ արձագանքից ելնելով էլ հնարավոր է պատկերացում կազմել հենց միջավայրի մասին: Միջավայրի ուսումնասիրության այս մեթոդն էլ կոչվում է կենսագուածման (կենսայինդիկացում) մեթոդ:

Տարբեր օրգանիզմներ այդ փոփոխություններին տարբեր կերպ են արձագանքում, տարբեր զգայունությամբ: Էկոլոգիական տվյալ գործոնի կամ գործոնների համախմբության նկատմամբ առավել զգայուն և սուր արձագանքող օրգանիզմներն ընտրվում են որպես կենսագուցիչ տեսակներ:

Բնական միջավայրի վիճակի գնահատման նպատակով կենդանի օրգանիզմների վարքը դիտարկելու վերաբերյալ տեղեկություններ հայտնի են դեռևս Անտիկ ժամանակներից՝ Հին Չոռմից և Հունատանից: Դա օգտագործվել նաև Հայաստանում դեռևս Ք.Օ. շատ դարեր առաջ, երբ բույսերի վարքի ուսումնասիրությամբ կատարել են եղանակային կանխատեսումներ:

Բնական գործնթացմների հանդեպ օրգանիզմների ցուցաբերած արձագանքն անսխալ է, որի համար էլ կենսագուցիչներից միշտ էլ մարդն օգտվել է հողի հատկությունների, լեռնային ապարների հանքարանական կազմի, ստորգետնյա ջրերի մակարդակի փոփոխությունը և այլ երևույթներ ուսումնասիրելիս:

Օրգանիզմների և բնական միջավայրի վիճակի փոխադարձ կապն այնքան արտահայտիչ է, որ ներկայում բուսական և կենդանական համակեցությունների բնութագիրը տրվում է ոչ միայն դրանց առկայության քանակական կազմով, այլև բնական համակարգերի վրա դրանց ազդեցության աստիճանով: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կենսական այդ գործնների տարբեր ազդեցությունների մակարդակը սանդղակավորված է (բացակառություն, թույլ, միջին և ուժեղ): Այդպիսի սանդղակների առկայությունը հնարավորություն է տալիս ճիշտորեն գնահատել հետազոտվող տարածքների վիճակը: Այդ դեպքում անհրաժեշտ է խոսել ոչ թե տարածքի կենսագուածման, այլ բնական միջավայրի վրա էկոլոգիական գործոնների ներգործությունների քանակական գնահատման կենսագուածման աստիճանի մասին:

Մերօրյա պատկերացումներով կենսագուցիչ օրգանիզմների ներկայությունը, դրանց զարգացման քանակական և որակական բնութագիրը համարվում են բնական երևույթների մարդածին փոփոխության ցուցանիշները:

Կենսացուցման մեթոդը հնարավորություն է տալիս պատկերացուն կազմել շրջակա միջավայրի վիճակի մասին, կենսացուցիչ օրգանիզմների վիճակից, վարքագծից, փաստացի առկայությունից կամ բացակայությունից ելնելով:

Այս օբյեկտները, որոնց կրած փոփոխությունները որոշում են կենսացուցիչների միջոցով, կոչվում են կենսացուցման օբյեկտ: Դրանք կարող են լինել բնական միջավայրի առանձին բաղադրիչները (հող, ջուր, օդ) կամ դրանց առանձին հատկությունները (մեխանիկական, քիմիական և այլն) և բնական միջավայրում ընթացող որոշակի երևույթները (օրինակ՝ հողի էրոզիան, հողմանաշը, աղակալումը, ճահճացունը և այլն), այդ թվում նաև մարդու գործունեության հետևանքով առաջացած:

Կենսացուցման մեթոդով կատարվող հետազոտությունները բաժանում են երկու աստիճանի՝ տեսակային և կենսահամակեցության:

Տեսակային աստիճանն իր մեջ ներառում է՝ օրգանիզմների ներկայության հաստատագրումը, հանդիպման հաճախականության հաշվառումը, անատոմիա-մորֆոլոգիական և ֆիզիկակենսաքիմիական հատկությունների ուսումնասիրումը:

Կենսահամակեցության մոնիթորինգի ընթացքում հաշվի են առնում տեսակների բազմազանության տարբեր ցուցանշումը, տվյալ համակեցության կենսաբանական արտադրողականությունը:

Գոյություն ունեն կենսացուցման տարբեր տեսակներ: Եթե օրգանիզմը միատեսակ է արձագանքում տարբեր գործոնների ազդեցությանն, ապա այն համարվում է ոչ յուրահատուկ կենսացուցում: Եթե այս կամ այն փոփոխությունն ի հայտ է գալիս միայն մեկ գործոնի ազդեցությամբ, ապա խոսքը վերաբերում է յուրահատուկ կենսացուցման: Օրինակ, մամունները և փշատերև ծառերը բնութագրում են օդի մաքրությունը, կամ աղտոտվածության առկայությունը՝ դրանց աճման վայրերում:

Մեկ այլ օրինակ է հողում կենդանիների և ցածրակարգ բուսատեսակների առկայությունը, որոնք հանդիսանում են առանձին հողատեսակների և համալիրների առաջացման ցուցիչ գործոններ: Միաժամանակ, դրանց արձագանքը տեղեկություն է հաղորդում նաև քիմիական նյութերով միջավայրի աղտոտման մասին, որի հետևանքով հողի հատկություններն են փոփոխվում:

Տարբերում են կենսացուցման մեթոդների երկու խումբ՝ կենսացուցման գրանցման և կուտակման:

Կենսացուցման գրանցումը հնարավորություն է տալիս տեղեկություն ստանալ այն գործոնների ազդեցության մասին, որոնք առաջանում են հատուկ տեսակների և խմբերի միջոցով, իսկ կենսացուցման կուտակման ընթացքում օգտագործում են բույսերի և կենդանիների

համակեցությունները, որոնց ներգործությամբ ծևավորվում և զարգանում են որոշակի հատկություններով հողեր:

**Գրանցող կենսացուցիչները** շրջակա միջավայրի վիճակի փոփոխություններին արձագանքում են՝ կենսաբանական բնույթի, քանակական մակարդակի փոփոխություններով, աճի, զարգացման, հատունացնան փոփոխությամբ և այլ նկարագրող ցուցանիշներով: Արտահայտիչ օրինակներ են մամուլների և փշատերև ծառերի քլորոզը, գունափոխումը (նեկրոզ), գագաթնային չորացումը: Սակայն, կենսացուցիչների առկայությամբ՝ շրջակա բնական միջավայրերում առաջացող փոփոխությունները ոչ բոլոր դեպքերում է հնարավոր որոշել: Բան այն է, որ դիտարկումների արդյունքներով ոչ միշտ է հնարավոր տարբերել փոփոխությունների առանձին, կամ համալիր պատճառները:

**Կուտակող կենսացուցիչների** օրգանիզմի առանձին հյուսվածքներում, մարմնի որոշակի մասերում կուտակվում են միջավայրուն առկա ազդող նյութեր, որոնք հետագայում օգտագործվում են քիմիական անալիզների միջոցով աղտոտման բնույթն ու աստիճանը որոշելու համար:

**Ֆիզիկաքիմիական մեթոդների** խնդիրն է դասվում որակական անալիզը, որն ամենամատչելիներից մեկն է: Սակայն, քանի որ այն բոլոր դեպքում հաջորդում է քանակականին, ուրեմն հենց քանակական անալիզի մեթոդներից է կախված որակական անալիզի արդյունքները:

Ֆիզիկաքիմիական մեթոդներից հայտնի են՝ կատիոնների և անիոնների որակական ռեակցիաները:

Քանակական մեթոդներից երաշխավորվում է գրավիչափական, տիտրման կոլորիչափական մոթոդները: Գրավիչափական մեթոդով որոշվում են ննուշի մեջ որևէ տարրի տոկոսային բաղադրության, ինչպես օրինակ՝ բուսաբուծական չոր նյութի ննուշի մեջ որոշ ծանր մետաղների անիոնների բաղադրության, հողի ընդիհանուր և հիգրոսկոպական խոնավության որոշումը և այլն:

**Տիտրման (ծավալային) մեթոդը** հայտնի է իր պարզությամբ և կատարման արագությամբ, որի շնորհիվ այն լայն գործնական կիրառություն ունի լաբորատոր ուսումնասիրություններում: Մեթոդով անալիզ կատարելիս ուսումնահիրվող նյութի ծավալի չափումներին համապատասխան փոխվում է կշռաչափը:

Այդ մեթոդով կատարում են 4 խումբ տիտրում՝

1. թթվահիմքային
2. նստվածքային

3. օքսիդավերականգման
4. համակցված (կոմբինացված):

**Կոլորիչափական մեթոդ** իրենից ներկայացնում է՝ անալիզից ստացված լուծույթի գույնի տեսողական (աչքաչափով) համեմատումը հետազոտվող լուծույթի գույնին, կախված խտությունից:

## **4.2. Կենսաբանական օբյեկտների մոնիթորինգի մեթոդները**

Ընդհանուր անվամբ՝ բիոտներ են կոչում որևէ տարածքում բնակվող բոլոր կենդանի օրգանիզմներին (բույսեր, կենդանիներ, սնկեր և մանրէներ):

Բիոտների մոնիթորինգի կազմակերպման նպատակով ընտրում են՝ գերակշռող առանձին տեսակների առկայությամբ մշտական տեղամասեր: Այնուհետև կատարում են տարածքում բնակվող, առավել հաճախ հանդիպող և ծանոթ՝ թռչունների, բույսերի, միջատների ու կենդանիների կանոնակարգված դիտարկումներ (Ասսկուսիա Տ.Յ., 2006):

- Բիոտների վիճակի գնահատման հիմնական ցուցանիշներ են՝
- առատությունը (առանձնյակների թիվը միավոր տարածքում),
  - հաճախականությունը (մի տեսակի առանձնյակների թվաքանակի հարաբերությունը բոլոր տեսակների ընդհանուր թվին, արտահայտած տոկոսով),
  - ամենաբարձր արտադրողականությամբ գերակշռող տեսակը:

Բույսերի մոնիթորինգ կատարելիս հատուկ ուշադրություն են դարձնում փշատերև ծառատեսակների տերևների ձևաբանական հատկություններին, բնի հնարավոր գունափոխմանը, վերարտադրող և վեգետատիվ օրգանների տարբեր անոնալ փոփոխությունների առկայությանը, ինչպես նաև գագաթնային ճյուղերի փոփոխության և բողբոջների չորանալու դեպքերին:

Մեծ տարածքներում հատուկ սարքավորումների օգնությամբ բացահայտում են օրգանիզմների և արտաքին միջավայրի վիճակի բնութագրերը, ինչպես օրինակ՝ ֆոտոսինթեզի աստիճանը, ջլորոֆիլի պարունակությունը, պիզմենտավորումը, տուրգորը, ինչպես նաև ձևաբանական փոփոխությունները:

Կենդանիների դեպքում գրանցում են՝

- տեսակը ներկայացնող առանձնյակների թվաքանակը,
- համակեցության տեսակային կազմի հարաբերակցությունը,
- տեսակի հանդիպելու հաճախականությունը:

Տեսակների թվաքանակները և դրա տատանումների լայնույթը որոշում են սեզոնների հաշվով: Տարբեր տարիներին առանձին տեսակների թվաքանակը կարող է էական փոփոխություններ կրել, ինչը կարող է կապված լինել դրանց բազմացման կամ մահացության հետ և շրջափուլային բնույթ ունենալ (Ասսհմսինա Տ.Յ., 2006):

### **Անտառային բուսական համակեցության մոնիթորինգ**

Անտառային բուսական համակեցության բնութագրերն են՝ սաղարթը, թփային և խոտային բուսածածկը, մանուրների շարահարկը, ոչ հողային քարաքոսները, սնկերը: Յուրաքանչյուր հարկը բնութագրելու համար որոշում են՝ թվաքանակը, բարձրությունը, բնի տրամագիծը, խտությունը, առատությունը, սաղարթի համակցվածությունը, բնական վիճակը, մարդու գործունեության և կենդանիների կենսագործունեության հետևանքները:

### **Անտառի ընտրված տարածքում բույսերի նկարագրությունը**

Ուսումնասիրության ենթակա անտառի տարածքը պետք է ընդգրկի ընտրված համակեցության սահմանները, որտեղ համատարած առկա է գլխավոր և գերակշռող տեսակը: Սովորաբար, այդ նպատակով ընտրում են 400 - 600 մ<sup>2</sup> (20 x 30) մակերեսով տարածք, միջնամասում առանձնացնում՝ 100 մ<sup>2</sup> մակերեսով փորձադաշտ, որտեղ էլ հաշվառում են ծառերի, թփերի թվաքանակը և խոտածածկը:

Հետազոտությունների սկզբում կատարում են շարահարկերի նկարագրություն, առանձնացնելով՝

- 1.սաղարթը,
- 2.թփատեսակների հարկը,
- 3.խոտաբույսերի հարկը,
- 4.մանուրների և ոչ հողային քարաքոսների հարկը:

Ամբողջ համակեցության բնութագիրը կազելու համար՝

ա) որոշում են անտառում գոյություն ունեցող շարահարկերի թիվը, կազմում գերակշռող տեսակների ցուցակն ըստ հարկերի, կատարում անհրաժեշտ չափագրումներ,

բ) կազմում են շարահարկերի գծանկարը:

Ընտրատարածքում բույսերի տեսակային կազմի նկարագրումը սկսում են եզրից: Սկզբից գրանցում են այն բույսերը, որոնք ակնառու են, ավելի ցայտուն են արտահայտված, այնուհետև այն տեսակները, որոնք նկատելի են դառնում տարածքի մանրամասն ուսումնասիրման ընթացքում: Արդյունքները գրանցում են աղյուսակներում:

## **Ծառակազմի բանաձևի կազմումը**

Յուրաքանչյուր ընտրատարածքի համար կազմում են ծառակազմի բանաձև, որը ներկայացնում է տարբեր տեսակի ծառերի հարաբերական թիվը: Դա կատարելու համար տառերով նշում են առանձին տեսակները՝ օրինակ Յ-հաճարենի, Կ-կաղնի, Ս-սոճի և այլն, իսկ ցուցիչով նշում են տարածքում դրանցից յուրաքանչյուրի թվաքանակը: Օրինակ, այդ տարածքում ընդհանուր թվաքանակն ընդունենք 10, որից Յ<sub>6</sub>, Կ<sub>3</sub>, Ս<sub>1</sub> նշանակում է որ այդ բուսակազմում գերակշռում է հաճարենին՝ 6 առանձնյակով (Յ<sub>6</sub>), այնուհետև կաղնին՝ 3 առանձնյակով (Կ<sub>3</sub>) և այլն: Հստակ պատկերը ունենալու դեպքում բանաձևը կարելի է կազմել՝ 1 հարկ Յ<sub>6</sub>, II հարկ Կ<sub>3</sub>, III հարկ Ս<sub>1</sub>:

Նետազոտվող տարածքում յուրաքանչյուր ծառատեսակի ուսումնասիրումից հետո ընտրված ծառատեսակի հիման վրա որոշում են դրա հանդիպման հաճախականության և ծածկվածության աստիճանը: Այն կատարում են ինչպես փշտերն (Փ) և լայնատերն (Լ) ծառերի, այնպես էլ թփատեսակների (Թ) համար:

**Տարածքում բույսերի հանդիպման  
հաճախականության և ծածկվածության աստիճանը  
(5 բալանոց համակարգ, Ասսխուսիա Տ.Յ., 2006)**

Հանդիպման հաճախականությունը, %		Ծածկվածության աստիճանը, %		Գնահատման բալը
շատ հազվադեպ	< 5%	շատ ցածր	< 5%	1
հազվադեպ	5-20%	ցածր	5-20%	2
հազվադեպ	20-40%	միջին	20-40%	3
հաճախ	40-60%	բարձր	40-60%	4
շատ հաճախ	60-100%	շատ բարձր	60-100%	5

Այդ ցուցանիշներից ելնելով որոշում են նաև մթնոլորտային օդի հարաբերական մաքրության գործակիցը հետևյալ բանաձով՝

$$\text{ՄՐԳ} = \Phi + 2 \cdot L + 3 \cdot \theta / 30$$

Ըստ այդ բանաձևի, որքան ցուցանիշը բարձր է՝ 1-ին մոտ է, այնքան տարածքի շրջակա մթնոլորտը մաքուր է: Այդ գործակիցի արժեքի և մթնոլորտային օդում ծծմբի երկօրսիդի պարունակության միջև ուղիղ համեմատական կապ գոյություն ունի:

## **Բույսերի կենսունակության որոշումը**

Բուսական տեսակների կենսունակությունը՝ համակեցության գտնվելու միջավայրի նկատմամբ տեսակների արձագանքն է: Կենսունակությունը գնահատում են 3 բալանց սանդղակով՝

1. կենսունակությունը բաձր է, բույսերը համակեցությունում նորմալ ծաղկում և պտղաբերում են, հասուն առանձնյակներն ունենում են՝ տեսակին բնորոշ չափեր,
2. կենսունակությունը բավարար է, բույսերը ճնշված են, ինչն արտահայտվում է հասուն բույսերի փոքր չափերով և սերմերով բազմացման հազվադեպությամբ,
3. կենսունակությունն անբավարար է, բույսերը խիստ ճնշված են, նկատելի են ծևաչափական կտրուկ շեղումներ (ճյուղավորում, տերևների ծևախախտում և այլն), սերմերով բազմացումը արգելակված է պտղաբերող բողբջների բացակայության պատճառով:

Բույսատեսակների կենսունակության որոշման արդյունքները լրացնում են ընտրատարածքի էկոանձնագրում:

## **Առատության որոշումը**

Բնական բուսահամակեցության խոտարույսերի մեջ մասի համար բուսական առանձնյակների ուղղակի հաշվառումն անհնար է, կամ ցածր արդյունավետ: Այդ նկատառումով՝ գնահատում են բույսերի հարաբերական առատությունը, որի համար բավարար արդյուննավետ է աչքաչափական դիտարկումն ըստ պայմանական սանդղակի՝

- 1 բալ- տարածքում հանդիպում է տվյալ տեսակի մեկ առանձնյակ
- 2 բալ- տեսակը հանդիպում է հազվադեպ, տարածված անհավասարաչափ
- 3 բալ- տեսակը տարածքում հանդիպում է համաչափ ցրված
- 4 բալ- տեսակը հանդիպում է առատորեն
- 5 բալ- տեսակի առանձնայիները գերակշռում են, ծածկելով ողջ տարածքը:

Գլխավոր գերակշռող բուսատեսակները սովորաբար ունենում են առատության գնահատման 4 - 5 բալ, սակայն շատ խայտաբղետ համակեցության դեպքում գլխավոր տեսակը կարող է ունենալ 3 բալ: Առատության դիտարկման արդյունքներն ըստ տեսակների գրանցում են համապատասխան աղյուսակում:

## **Բուսակահամակեցության անվան որոշումը**

Համակեցության անվանումը որոշվում է հիմնական շարահարկի գերակշռող տիպով: Օրինակ, եթե ծառատեսակների շարահարկում

գերակշռում են կաղնին և բոխին, ապա այն կոչվում է կաղնուտարոխութային: Նույնը վերաբերում է խոտարույսերի շարահարկին՝ խոտարույսերի տեսակներով: Բազմաթիվ հարկերի մի քանի գերակշռող տեսակների դեպքում անվանումը համակցված է:

### **Անտառի վերարտադրության որոշումը**

Վերարտադրությունն անտառի կարևոր բնութագրերից է, որը հնարավորություն է տալիս կանխորոշել ապագա անտառային զանգվածը: Անտառի վերարտադրությունը որոշելու համար փորձադաշտուն ընտրում են  $1 \times 1$  և  $10 \times 10$  մ չափերով դիտատարածք, որտեղ էլ հաշվառում են առանձին ծառատեսակների սերմնաբույսերն ու կորդաշվային բույսերը: Առանձին-առանձին նշում են վերարտադրության ցուցանիշը՝ միամյաների, երկամյաների և այլնի թվաքանակը: Տվյալների հիման վրա կատարում են ուսումնասիրվող տարածքում վերարտադրություն վերաբերյալ եզրակացություն, նշելով՝

- մատղաշների գերակշռող տեսակները
- վերականգնման բնույթը (սերմներով, վեգետատիվ)
- բուսահամակեցության զարգացման կանխատեսումը:

### **Մարգագետնային բուսահամակեցության մոնիթորինգը**

Մարգագետինն իրենից ներկայացնում է բազմանյա խոտարույսերի համակեցություն: Դրանք լայն տարածում ունեցող բուսական համակեցություններից են, ընդ որում, հարթավայրային մարգագետինները բաժանվում են գետահովտային և լանջային, լեռնայինները՝ ենթալպիական և ալպյական:

**Գետահովտային մարգագետինները** ձևավորվում են ջրբաժաններում և հարթություններում, առանց գետային համակարգի ազդեցության, և խոնավությունը ստանում են մթնոլորտային տեղումներից: Տարանջատում են՝ բացարձակ, նորմալ և ստորին մարգագետիններ:

**Բացարձակ մարգագետինները**, սովորաբար, տեղակայված են լինում ռելիեֆի բարձրադիր մասերում, որոնց համար խոնավացման աղբյուր են հանդիսանում ձնիալքի ջրերը և մթնոլորտային տեղումները: Այստեղ աճում են համենատարար չորադիմացկուն տեսակները, իսկ հողածածկը համենատարար սակավագոր է, հումուսի սակավ պարունակությամբ: Այդ մարգագետինների բերքատվությունը բարձր չէ:

**Նորմալ կամ մեղմ խոնավացման մարգագետինները** տեղաբաշխված են ջրբաժանի հարթություններում, միջին և ստորին լանջերում: Դրանք խոնավանում են մթնոլորտային տեղումների, կամ էլ ստորգետնյա ջրերի հաշվին: Յողածածկը բավական հզոր է, հումուսով ապահովված, աճում են կերային տեսակետից արժեքավոր բույսեր:

**Ասորին մարգագետինները** գրավում են ռելիեֆի ցածրադիր մասերը, մշտական հոսող ստորգետնյա ջրերի առկայությամբ, որտեղ կուտակվում են առատ մթնոլորտային տեղումներ: Հողածածկը բավական հզոր է և հարուստ՝ սննդատարրերով: Բուսական կազմն առատ է ու հարուստ:

Մարգագետինների նկարագրման համար ընտրում են  $10 \times 10$  մ չափերով փորձադաշտ, որի կենտրոնական մասում քանակական հաշվառման համար ընտրում են  $1 \times 1$  մ չափերով 3 փոքր հարթակ:

Բուսական համակեցության վրա մարդածին գործոնների ազդեցության ուսումնասիրման նպատակով փորձնական և ստուգիչ տարածքներն ընտրում են միևնույն՝ հողային, խոնավապահովվածության և լուսավորության պայմաններում:

Մարգագետինների բուսակազմը բնութագրելիս հաշվի են առնում՝

- աշխարհագրական տեղադրությունը,
- մարգագետնի տիպը,
- ռելիեֆի ձևը,
- հողատիպը,
- խոնավապահովվածության պայմանները,
- ծառերի և թփերի առկայությունը,
- թփապատվածությունը,
- խոտածածկի առկայությունը,
- գերակշռող բուսական տիպը:

Լեռնային երկրներում, ինչպիսին Յայաստանն է, մարգագետինները բաժանվում են՝

- գետահովտային դարավանդածն,
- թեք լանջերի,
- ջրբաժանների,
- լեռնահովիտների:

### **Մարգագետինների ֆաունայի մոնիթորինզ**

Մարգագետնային միջատների ուսումնասիրության հիմնական մեթոդներից մեկը հանդիսանում է միջատահավաքը (հունձ), որով հնարավոր է գնահատել անողնաշարավոր կենդանիների թվաքանակը և տեսակային կազմը:

Միջատահավաքի համար օգտագործում են կոթավոր ցանց, որը պտտելով բուսածածկի մակերևույթին, հավաքում, ապա չորացնում և հաշվում են՝ մարգագետնի յուրաքանչյուր տեղամասի միջատները: Հունձը կատարում են չոր, տաք եղանակներին, առավոտյան և

Երեկոյան ժամերին, շարժվելով արևին ընդառաջ, հավաքողի ստվերով միջատներին չփախցնելու համար:

Միավոր տարածքում միջատների թվաքանակի հաշվառում կատարում են հետևյալ բանաձևով

$$P = N:(D \cdot L \cdot n)$$

որտեղ՝  $P$  - ն միջատների թիվն է  $1 \text{ m}^2$  մակերեսում,

$N$  - ը հավաքված միջատների ընդհանուր թիվն է,

$D$  - ցանցի տրամագիծն է, մ

$L$  - ցանցի մեկ պտույտի միջին երկարությունն է, մ

$n$  - ցանցի պտույտների թիվն է:

## ԳԼՈՒԽ 5

### ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱՇՄԱԿԵՐՊՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի աղտոտման վերահսկողությունն իրենց ներկայացնում է դիտարկումների համակարգ, որի միջոցով որոշում են աղտոտման մակարդակը և աղտոտիչների տարածում ու բաշխվածությունը ժամանակի ընթացքում:

Դիտարկումները կատարում են ինպես անընդհատ՝ ավտոմատ գրանցման, այնպես էլ կանոնավոր չափագրումներով, բնութագրելով ու գնահատելով շրջակա միջավայրի աղտոտման մակարդակը: Վերջինը կատարվում է միջավայրի այս կամ այն աղտոտիչների փաստացի խտությունը՝ դրա սահմանային թույլատրելի խտության (Սթե) հետ համեմատելով:

Սահմանային թույլատրելի խտությունը բնութագրում է մարդու առողջության վրա վնասակար նյութերի թողած ազդեցությունը: Սթե-ն շրջակա միջավայրում աղտոտիչների այն առավելագույն խտությունն է, որն առանձին մուտածին հետևանքներ չի առաջացնում:

Շրջակա միջավայրի որակի հսկողությունը իրականացնում են՝

ա) հիգիենիկ համաճարակաբանական ծառայությունները,

բ) հիդրոօդերևութարանական ծառայությունները,

դ) այլ ծառայություններ:

Շրջակա միջավայրի աղտոտման հսկողության յուրաքանչյուր ծառայություն իր գործումներության ընթացքում իրականացնում է յուրահատուկ խնդիրներ, առաջնորդվելով դրա համար մշակված հատուկ մեթոդականներով:

Աղտոտման հսկողությունը կազմակերպելիս, բոլոր օղակները գործում են աշխատանքի կատարման համաձայնեցված ծրագրերով և ժամկետներում, ելնելով հիդրոօդերևութարանական իրավիճակներից:

Շրջակա միջավայրի աղտոտման վերահսկողության պետական ծառայության համակարգը բաղկացած է հետևյալ ենթակայություններից՝

1. դիտակայաններ, որտեղ կատարում են դիտումներ, տվյալների նախնական մշակում և ընդհանրացում,

2. տարածքային և տեղամասային հենակետեր, որտեղ կատարում են նյութերի մշակում, տեղական կանխատեսումներ և գնահատում տվյալ տարածքի վիճակը,

3. հանրապետական հիդրոօդերևութարանական պետական ծառայություն, որը համակարգում է շրջակա միջավայրի աղտոտման հսկողության վերաբերյալ բոլոր ծառայությունների աշխատանքը:

Օդային ավագանի աղտոտումը հսկելու և դիտումներ կազմակերպելու համար հիմնում են՝ անշարժ, ուղերթային և շարժական կետեր:

Անշարժ դիտակետերը նախատեսված են անընդհատ դիտումների համար: Այդ կետերը կահավորված են ժամանակակից տաղավարներով, տեխնիկական միջոցներով, օդի նմուշառման, մշակման ու գնահատման սարքավորումներով:

Ուղերթային դիտակետերը նախատեսված են նախօրոք նշված կետերից կանոնավոր նմուշառման համար:

Շարժական դիտակետերը նախատեսված են առանձին դեպքերուն արդյունաբերական օբյեկտներից արտանետումների նմուշառման համար: Դրանց տեղերն ընտրում են վերադաս կազմակերպությունների կողմից հաստատված հատուկ հանձնաժողովները:

Բոլոր կետերից ստացված դիտումների ընդհանրական արդյունքները՝ հիմնավոր, հրատապ և հավաստի տեղեկություններ են հաղորդում, որի հիմնա վրա հնարավոր է մշակել միջոցառումներ՝ ուղղված օդային ավազանի մաքրության ապահովմանը: Ստացված տեղեկատվությամբ կանխատեսում են օդային զանգվածների բնութագրերի փոփոխությունները, սպասվող փոթորիկները, մրրիկները և այլն: Երկարատև դիտառների արդյունքներն օգտագործում են տարրեր նշանակության օբյեկտների կառուցման հոդիատկացումների համար:

Մակերևութային ջրերի աղտոտման նակարդակի դիտումները և վերահսկումը կատարում են մակերևութային ջրերի ջրաֆիզիկական, ջրակենսաբանական և ջրաքիմիական ցուցանիշներով՝

ա) անշարժ դիտակետերում,

բ) առանձին գիտահետազոտական դիտակետերում,

գ) արշավախճային ժամանակավոր դիտակետերում:

Մակերևութային ջրերի աղտոտման աստիճանի ուսումնասիրման չափորոշիչ են ընդունում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի խտության արժեքը:

Ջրային պաշարների աղտոտման նակարդակի դիտումների պատասխանատվությունը կրում է ջրային հիմնախնդիրների պետական կոմիտեն և բնության պահպանության նախարարության համապատասխան ձեռնարկությունը: Արհասարակ, շրջակա միջավայրի մոնիթորինգի նպատակով ստեղծում են հատուկ կազմակերպություններ, դիտակետեր, լաբորատորիաներ, տեխնիկական միջոցներ, պատրաստում՝ մասնագետներ:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի կազմակերպությունը վերահսկման և դիտարկման բոլոր կետերից ստացված տեղեկատվության ընդհանրացման հիման վրա մշակում է բնության պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, բնական ռեսուրսների վրա վնասակար ազդեցություն ունեցող գործոնների վերացման համապատասխան միջոցառումներ:

# **ԳԼՈՒԽ 6**

## **ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒԹՅԱԳՐՈՒՄԸ**

Եկոլոգիական մոնիթորինգի ծրագրով՝ մոնիթորինգի օբյեկտներ են համարվում ամբողջական էկոհամակարգերի տարածքները, առանձին մասերը և բաղադրիչները:

Մոնիթորինգի կազմակերպումը սկսվում է հետազոտվող օբյեկտի ընտրությամբ, որի համար սահմանազատում են յուրաքանչյուր տարածք, նշելով տեղային հետազոտման տիրույթները: Ամբողջ տարածքի էկոլոգիական վիճակը գնահատում են փորձնականորեն ստացված ցուցանիշներով՝ տվյալ շրջանին բնորոշ մի քանի հողակտորների, էկոհամակարգերի և բնական օբյեկտների ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

Հետազոտություններն իրականացնում են համալիր ծրագրով, ներկայացնելով տարածքի էկոանձնագիրը: Մոնիթորինգի աշխատանքները կատարում են առանձին բնական օբյեկտների աստիճանական ուսումնասիրմամբ, առկա հնարավորություններին համապատասխան: Տարեցտարի հետազոտությունների շրջանակները և ցուցանիշները ընդլայնվում են, և տարիներ անց աշխատանքները ամբողջացնում են՝ շրջանի համար նախատեսված ծրագրով:

### **6.1. Մոնիթորինգի օբյեկտների ֆիզիկաաշխարհագրական բնութագրիրը**

*Օբյեկտի աշխարհագրական դիրքի ելակետային ցուցանիշ են համրիսանում կոռորդինատները (աշխարհագրական լայնությունը և երկայնությունը՝ րոպեների ճշտությամբ): Տարածքի աշխարհագրական դիրքի երկրորդ բաղադրիչը պատկանելությունն է որոշակի բնատարածքային համալիրի, բնական գոտու, ենթագոտու, ֆիզիկաաշխարհագրական մարզի բնատնտեսական շրջանացման և այլն: Նման տվյալները հեշտությամբ հնարավոր է ձեռք բերել ֆոնդային գրականությունից:*

Աշխարհագրական դիրքի ցուցանիշների ճշտումից հետո կազմում են տարածքի քանիների վարդը, այն նկատառումով, որ դրանով է որոշվում տարածքի աղտոտման՝ օդային զանգվածների տեղաշարժերի ուղղությունը: Այդ նպատակով կարելի է օգտագործել մոտակա օդերևութաբանական կայանի տվյալները կամ հրատարակած տեղեկատվական նյութերը:

**Մակրոռելիեֆը՝** շրջանի տեղաբաշխումն ըստ բարձրության, ազդում է հոսոքաջրերի և հողածածկույթի վրա, միաժամանակ, հանդիսանում է աղտոտիչների միգրացիոն միջավայր: Մակրոռելիեֆի բնութագրական ձևերից են՝ ջրբաժանի բարձունքը, լանջային ջրբաժանները, բլրաթմբային ջրբաժանները, տարբեր ծագման իջվածքները, գետահովիտները, բարձրավանդակները, լեռները:

**Մեզոռելիեֆ** առանձնանում է մակրոռելիեֆ սահմաններում, որի ձևերը զգալի դեռ ունեն տարածքի միկրոռելիեֆի վրա: Գյուղական վայրերում մեզոռելիեֆի տարրերը շատ ցայտուն են արտահայտված: Մեզոռելիեֆի ամենատարածված ձևերից են՝ առուները, կիրճերը, գետերի դարավանդները, գետաբերվածքները, լեռնագագարները և լեռնալանջերը: Այդպիսի ձևերը նկարագրելիս նշում են դրանց ձևաբանական (մորֆոլոգիական) ցուցանիշները՝ բացարձակ բարձրությունը, լայնությունը, երկարությունը, լանջի ձևը, (հարթ, ուղղուցիկ, գոգավոր) և լանջի կողմնադրությունը:

Մեզոռելիեֆը մեծ դեր է խաղում միկրոշրջանի մակերևույթի ջերմության և խոնավության պահպանության գործում: Միկրոռելիեֆային, անգամ՝ սովորական աչքաչափական դիտարկումները հստակ արտահայտում են հյուսիսային և հարավային կողմնադրության լեռնալանջերի ջերմային ռեժիմը, որն իր հերթին ազդում է հողագոյացման գործընթացի և բույսերի վեգետացիայի ընթացքի վրա: Մեզոռելիեֆից է կախված գետնաջրերի և հոսքերի մակարդակը, հողերի ջրային ռեժիմը: Մեզոռելիեֆի ձևերից է կախված նաև հողատարման երևույթների զարգացման ուժգնությունը:

**Միկրոռելիեֆի** տարրերն առանձնանում են մեզոռելիեֆի սահմաններում: Սովորաբար դրանք նշում են միայն փորձադաշտերում հողային կտրվածքները նկարագրելիս: Միկրոռելիեֆի ձևերը ներկայացնում են թույլ նշանակություն ունեցող իջվածքները, ողողատները: Միկրոռելիեֆը նկարագրելիս ցանկալի է նշել միկրոձևերի չափերը և որոշակի տարածքում դրանց հանդիպելու հաճախությունը: Հողային կտրվածքները նկարագրելիս հաճախ միկրոռելիեֆը ներկայացնում են՝ հարթ, թույլ թեք և թեք ձևերով:

**Միկրոկլիման** ձևավորվում է միկրոշրջանի ամենափոքր տարածքի վրա, տեղական պայմանների (ռելիեֆի փոքր ձևեր, լանջի կողմնադրություն, հողի և բուսածածկույթի բնութագրեր) ազեցցության հետևանքով, որպես տեղանքի յուրահատուկ պայմանների ամբողջություն:

Միկրոկլիմայական դիտարկումներ իրականացնելու համար անհրաժեշտ է օդի ջերմաստիճամի և խոնավության կանոնավոր չափումներ, երկու բարձրություններում՝

- գետնի մակերևույթից 0 - 20սմ բարձր,

- գետնի մակերևույթից 150 - 200սմ բարձր:

Զերմաստիճանային չափումներ կատարելիս ջերմաչափը պահում են ստվերում:

Միկրոկլիմայի վրա բուսականությունը, անտառը և գյուղատնտեսական պայմանները, տարբեր կերպ են ազդում: Դատկապես, մեծ ազդեցություն է գործում անտառը, իշեցնելով՝ ողի ջերմաստիճանը, բարձրացնելով՝ խոնավությունը:

Բաց տարածքների միկրոկլիմայական պայմանները շատ են տարբերվում գյուղամերձ և քաղաքամերձ տարածքներից: Գուղական պայմաններում միկրոկլիմայական պայմանները դիտարկելիս հիմնական ուշադրությունը հատկացնում են բնական գործոնների ազդեցությանը: Քաղաքային պայմաններում մեծ է նարդածին գործոնների ազդեցությանը: Ինչպես՝ օրինակ, տարածքում քարե և բետոնե պատերը, ասֆալտապատվածությունը, փոխադրամիջոցների շարժը, ջերմահաղորդման խողովակաշարը, գործարանները, էլեկտրակայանները, ողի աերոգոլային աղտոտումը, ջերմային արտանետման աղբյուրները: Քաղաքամերձ տարածքների բարձր ջերմաստիճանին համապատասխան, ցածր է ճառագայթման մակարդակը, հաճախ նկատվում են նառախտուղներ:

Օղի գետնամերձ շերտի միկրոկլիմայական դիտումները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու կենսաերկրահամակեցության զարգացման պայմանների և հողային ծածկույթի ֆիզիկաքիմիական առանձնահատկությունների մասին:

Հողերը բնութագրելու և կարգաբանելու համար ելակետային է հողագոյացման գործոնների համակախումբը, այդ թվում՝

- մայրական ապարները, որից կախված է հողի՝ քիմիական, մասամբ էլ մեխանիկական կազմը,
- բուսականությունը, որն ապահովում է հողի հումուսի, օրգանական նյութերի պարունակությանը,
- կլիման, որից կախված են հողի ջրային և ջերմային ռեժիմները:

Հողագոյացման ընթացքում հիշյալ գործոնների ազդեցությամբ ձևավորվում է հողի պրոֆիլը, ուղղաձիգ դասավորված գենետիկական հրոհացումներավ (A, B, C), որի հզորությունը, կառուցվածքը, արտաքին տեսքը, բաղադրությունը, ֆիզիկաքիմիական բնութագիրը որոշում է տարբեր պայմաններում ձևավորված հողի տիպը, ենթատիպը, տեսակը և այլն: Վերջինները, հիմնակնում (բացի արտագոտիական դեպքերից) ունեն գոտիական բաշխվածություն:

## **6.2. Տարածքի Էկոլոգիական վիճակի գնահատումը**

Հետազոտվող տարածքի էկոլոգիական վիճակի վրա ազդող կարևոր գործոններից է մարդու տնտեսական գործունեությունը: Դրա համար էլ տարածքի վիճակը բնութագրելու համար ներկայացնում են մարդածին գործոնի ընդհանրական բնութագիրը: Այդ նպատակով ներկայացվող հիմնական ցուցանիշներն են՝ միավոր մակերեսին բաժին ընկնող բնակչության թիվը, ձեռնարկությունների, ջեռուցման, խմելու ջրի, ջրմուղի, ջրամբարների արդյունաբերական արտադրամասերի և այլ օբյեկտների առկայությունը, ծանապարհների, բարձր լարման հոսանքագծերի և այլնի առկայությունը: Բացի այդ, անհրաժեշտաբար գնահատում են օդի որակը, բացահայտում՝ աղտոտված տարածքները, որոշում՝ աղտոտվածության մակարդակը, ռադիոակտիվության աստիճանը:

Էկոլոգիական մոնիթորինգի խնդիր է հանդիսանում տարածքի վիճակի վերաբերյալ ամենամյա դիտումների իրականացումը: Ստացված տվյալների հիմնան վրա հնարավոր է ներկայացնել էկոհամակարգի խախտվածության աստիճանը:

Մոնիթորինգը հնարավորություն է ստեղծում տվյալներ հավաքել մի քանի տարիների համար, որոնց հիմնան վրա կարելի է պատկերացում կամել տարածքի փոփոխվածության մասին: Ըստ Բ.Վ. Վինոգրադովի կարելի է իրականացնել էկոհամակարգի և բնական միջավայրի խախտման ցուցանշում երկու հատկանիշով՝

1. անբարենպաստ պայմանների ցուցանշում (ցուցանշնան վիճակագրություն),

2. տարածքի անբարենպաստ փոփոխության ցուցանշում (հատկանիշների դինամիկա):

Մարդածին գործոնը ստեղծել է էկոհամակարգերի մարդածին ծանրաբեռնվածություն, որն արտահայտվում է՝ լանդշաֆտների վերափոփոխումով, բնակավայրերի և արդյունաբերական գոտիների առկայությամբ, անտառային տարածքների օգտագործումով, օգտակար հանածոների արդյունահանումով, փոխադրամիջոցների հաղորդակցության ուղիների (ավտոճանապարհ, երկարուղ, նավթամուղ, գազամուղ) առկայությամբ: Այն տարածքները, որտեղ հիշյալ ազդեցություններն այս կամ այն աստիճանի արտահայտված են, համարվում են անբարենպաստ:

Տարածքի անբարենպաստությունը գնահատում են տարբեր՝ բուսական, հողային, տարածքային-վիճակագրական և դինամիկական, բնական և մարդածին պայմանների փոփոխությամբ: Յուրաքանչյուր տարածքում այդ պայմանները սերտորեն կապված են միմյանց հետ, որի համար էլ այն կարող է արտահայտվել մեկ ընդհանրացված ցուցա-

նիշով՝ էկոլոգիական անբավարար գնահատականով: Այն արտահայտվում է հետևյալ տարածական բնութագրով՝

1. գոտիներ, որտեղ խախտված է անտառային կենսահամակեցությունը,
2. գոտիներ, որտեղ խախտված է մարգագետնային կենսահամակեցությունը,
3. տարածքներ, որոնք դուրս են մնացել հողօգտագործումից (ձորեր, ձորակներ, թափոնատեղեր, փլզում-սողանքային տարածքներ, աղբանոցներ և աղբավայրեր և այլ տարածքներ),
4. տարածքներ, որոնք հատկացված են բնակավայրերին, արտադրական ձեռնարկություններին, հաղորդակցության ուղիներին և այլն:

Տարածքի անբարենպաստությունը գնահատելու համար մշակված մեթոդի համաձայն, տեղանքի հատակագծի վրա նշում են խախտված, հողօգտագործումից դուրս մնացած տարածքի սահմանները, հաշվում՝ դրանց մակերեսները և կազմում տոկոսային հարաբերությունը: Նպատահարմարությունից ելնելով առանձնացնում են՝

1. ընդհանուր անտառային կենսահամակեցության մեջ՝ խախտված գոտին,
2. ընդհանուր մարգագետնային կենսահամակեցության մեջ՝ խախտված գոտին,
3. ընդհանուր հողօգտագործման սահմաններում՝ հողօգտագործումից դուրս մնացած տարածքները,
4. ընդհանուր հողօգտագործման սահմաններում՝ բնակելի տարածքները:

Տարածքի էկոլոգիական վիճակը գնահատում են վիճակագրական և դինամիկական ցուցանիշներով:

Խախտված տարածքների բաժնեմասը (տոկոսներով՝ արտահայտված) որպես վիճակագրական ցուցանիշ, հանդիսանում է տարածքի էկոլոգիական վիճակի ընդհանրացված գնահատականը:

Դողատարածքների էկոլոգիական անբավարար վիճակը գնահատում են չորս դասերով՝

- ա) էկոլոգիական բավարար վիճակ, եթե խախտված հողերի մակերեսն ընդհանուր տարածքի 5%-ից փոքր է,
- բ) էկոլոգիական լարված վիճակ, եթե խախտված հողերի մակերեսը կազմում է ընդհանուր տարածքի 5 - 20%-ը,
- գ) էկոլոգիական ճգնաժամային վիճակ, եթե խախտված հողերի մակերեսը կազմում է ընդհանուր տարածքի 20-50%-ը,
- դ) էկոլոգիական աղետյալ վիճակ, եթե խախտված հողերի մակերեսը ընդհանուր տարածքի 50%-ից մեծ է:

Տարվա ընթացքում հողտարածքների խախտված մասի փոփոխությունը (տոկոսներով արտահայտված) հանդիսանում է տարածք՝ դինամիկ ցուցանիշներով էկոլոգիական ընդհանրացված գնահատական:

Տարածքների էկոլոգիական գնահատումն ըստ անբարենպաստ գործընթացների զարգացման արագության, բաժանվում է չորս դասի՝

ա) էկոլոգիական բավարար վիճակ, երբ զարգացման արագությունը փոքր է 0,5%-ից,

բ) էկոլոգիական լարված վիճակ, երբ զարգացման արագությունը 0,5 - 2% է,

գ) էկոլոգիական ճգնաժամային վիճակ, երբ զարգացման արագությունը 2 - 4% է,

դ) էկոլոգիական աղետյալ վիճակ, երբ զարգացման արագությունը 4%-ից մեծ է:

Այդ ցուցանիշների հիման վրա կազմում են տարածքի էկոլոգիական անձնագիրը:

### **6.3. Բնական ռեսուրսների պահպանության – մոնիթորինգի գործնական աշխատանքների բովանդակությունը**

Բնապահպանությունը սուսկ գիտություն չեւ ուսումնասիրելու համար, այլև գործնական միջոցառումների համակարգ է, որի համար հիմք են հանդիսանում ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունները: Բնության վրա մարդու հասարակական գործունեության հետևանքով այս կամ այն երևույթների առաջացման պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանային (ռեգիոնային) և համամոլորակային (գլոբալ) երևույթները, հիմնականում, առաջանում են առանձին կամ մի քանի էական գործոնների համատեղ ներգործության հետևանքով: Նման ոչ մի փոփոխություն չի սկսվում միանգամից, չի ունենում ընդգրկման այդահիմք մասշտաբներ: Դրանք բոլորն էլ սկիզբ են առնում տեղային (լոկալ) բնույթի փոփոխություններից, որի համար էլ բնապահպանության գործը պետք է սկսել մասնավոր դեպքերից:

Բնապահպանությանը նպատակառողված՝ մարդու ակտիվ գործողությունների ընթացքում անհնարի է կանխատեսել բոլոր հնարավոր դեպքերը: Գործնականում, ըստ համակարգերի պետք է սկսել այն գործողություններից, որոնք արդեն կիրառվել են ու կիրառվում են բնության պահպանության գործում:

Բնապահպանական շատ միջոցառումներ աշխատատար են և իրականացման երկար ժամանակ են պահանջում: Այդ աշխատանք-

ների որևէ օղակում դիտումները, ուսումնասիրությունները, առանձին դեպքում որոշակի տեղանքի կամ երևույթի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և միջոցառումների մշակումը բնական ռեսուրսների մոնիթորինգի առարկայի ուսումնասիրման կարևոր խնդիրներից են հանդիսանում:

Գործնական պարապմունքների ընթացքում, ըստ բնական ռեսուրսների խնդերի, ընտրում են առանձին տեղանքներ, որտեղ կատարվել են բնապահպանական, առանձին բաղադրիչների բարելավման միջոցառումների նախագծեր և հաշվարկներ: Դրանց օրինակով ցույց են տալիս հանրապետությունում հողերի պահպանության, ջրային ռեսուրսների և մթնոլորտային օդի աղտոտման, ընդեղի արդյունավետ օգտագործման և այլ խնդիրներ:

Գործնական աշխատանքների ընթացքում ըստ բնական ռեսուրսների բաղադրիչների, ենթահանակարգերի ցուցանիշների, առկա գրականության, տեղեկագրերի, քարտեզների, ատլասների և այլ նյութերի հիման վրա առանձին բնական ռեսուրսների բնութագրման համար լրացնում են դիտարկումների համապատասխան տեղեկագրեր և կազմում նախագծեր, սխեմաներ ու քարտեզներ:

## ԳԼՈՒԽ 7

### ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԻՄԱԽԱՎԻՐՆԵՐԸ

Բնապահանության ոլորտում տարբերում են, հիմնականում, երկու խոշորամասշտար հիմնախնդիրներ, որոնց լուծումից կախված է հասարակության հետագա զարգացումը:

Առաջին հիմնախնդիրը բնության սպառվող ռեսուրսների պահպանումն է, դրանց վերականգնումը և վերարտադրությունը, որոնք անհրաժեշտ են մարդու գոյության և արտադրական գործունեության համար: Այդ գործում տնտեսական գործոնը որոշիչ է, քանի որ դրա լուծումից է կախված հասարակական արտադրության զարգացումը:


Երկրորդ հիմնախնդիրը շրջակա միջավայրի պահպանումն է՝ արտանետումներով և արդյունաբերական քափոններով աղոտումից, ապահովելով միջավայրի այնպիսի որակական ցուցանիշներ, որոնք նյութական պահանջներից բացի ապահովորմ են մարդու առողջությունը, հանգիստը, կենցաղը, ընդ որում, այստեղ արդեն տնտեսական շահը չի համարվում առաջնային:

Մարդուն անհրաժեշտ բնական ռեսուրսներն ըստ օգտագործման բնույթի բաժանվում են երեք հիմնական խմբի՝ (գծ. 5)

1. հումքային ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են մարդու արտադրական գործունեության համար,
2. էներգիական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են արտադրական, փոխադրամիջոցների և կենցաղային կարիքների համար,
3. սննդային ռեսուրսներ:

Քաղաքակրթության զարգացման ներկա փուլում հումքային և էներգիական ռեսուրսների պահանջարկն ավելանում է մեծ թափով: Օրինակ՝ նավթի պահանջարկը յուրաքանչյուր 5 տարում կրկնապատկվում է: Իսկ սննդային ռեսուրսների պահանջարկը համեմատաբար ցածր տեմպերով է աճում՝ երկի վրա բնակչության թվի մեծացման համապատասխան:

Յիշյալ երկու հիմնախնդիրների հետ է կապված հողատարածքների արդյունավետ օգտագործման հարցը: Մի կողմից երկիր մոլորակի վրա ցանքատարածությունները, խոտհարքների ու արոտների առկա տարածքները բավարար չեն, մյուս կողմից գյուղատնտեսական հողատեսքների հսկայական կտորներ խլում են՝ քաղաքաշինությունը, հատուկ պահպանվող տարածքները, հանգստյան գոտիները և այլն:



## 7.1. ՀՈԼՄՁԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունաբերությունը բաժանվում է երկու խմբի՝ արդյունահանող և վերամշակող: Արդյունաբերության ճյուղերից սննդի և թերևն արդյունաբերության համար հումքը մատակարարվում է գյուղատնտեսությունից, իսկ թաղանթամյութի, թղթի և փայտի համար հումք է հանդիսանում անտառանյութը: Նշված բոլոր ռեսուրսները վերականգնվող են, ենթակա՝ բնական և տնտեսական վերականգնման:

Սակայն, ծանր արդյունաբերությունը գերազանցապես հիմնված է ընդերքի օգտակար հանածոների հումքի վրա, որոնք հետազոտվում, արդյունահանվում և օգտագործվում են: Որպես սպառվող չվերականգնվող ռեսուրսներ, օգտագործումից դրանց քանակությունն անընդհատ պակասում է և, ի վերջո, սպառվում:

Մասնագետների հաշվարկներով դրանց պաշարները երկրի վրա տարբեր են, առանձին դեպքում (պինդ, կապար և այլն) գնահատվում են 20 - 30 տարվա պաշարներով: Առաջնահերթ արդյունահանում են պաշարների հարուստ տեղամասերը, իսկ համեմատաբար աղքատ

տեղամասերը թողնում են հետագայում արդյունահանելու համար: Սակայն հումքի անբավարար քանակության դեպքում արդյունահանվում են նաև սակավ պաշար ունեցող տեղամասերից, որտեղ արտադրանքի ինքնարժեքը բարձր է լինում:

Հումքային ռեսուրսների օգտագործման ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվում երկրորդային հումքի օգտագործմանը (մետաղի ջարդոն, թղթի թափոն, զանազան պլաստմասեր և այլն): Այս առումով՝ շատ կարևոր է անթափոն արտադրության կազմակերպումը, որի շնորհիվ նախ աղտոտումից գերծ կմնա միջավայրը, մյուս կողմից օգտահանված այդ թափոնները կծառայեն որպես երկրորդային հումք:

Օգտակար հանածոների արդյունահանման տեմպերը հասարակության տնտեսական զարգացման ցուցանիշների հիմքն են: Այդ առումով առանձնապես աչքի են ընկել անցյալ դարի վերջին տասնամյակները, որոնց «առժանիորեն» հաջորդում են ընթացիկ երկու տասնամյակները: Արդյունքում՝ բարձր տեմպերով օգտակար հանածոների արդյունահանումը հանգեցրել է դրանց պաշարների զգալի նվազմանը: Այսպես, ըստ վերջին տարիների գնահատման տվյալների, զարգացող երկրներում հանքային հումքի պաշարները պակասել են երկար՝ 130500 մլն տոննա, մանգամ՝ 2900 մլն տոննա, նիկել՝ 51015 հազար տոննա, կորբալտ՝ 3250 հազար տոննա, մոլիբդեն՝ 10450 հազար տոննա, այնձի՝ 541 մլն տոննա, ցինկ՝ 255 մլն տոննա և այլն: Այդ տվյալները վկայում են, որ երկարի, մանգամի, քրոմի հանքապաշարը կարող է բավարարել մինչև 200 տարի, իսկ բազմամետաղ հանքատեսակները, որոնք պարունակում են նիկել, կորբալտ, վոլֆրամ, մոլիբդեն, պղինձ, ցինկ և այլն, կրավարարեն 30 - 60 տարի:

Օգտակար հանածոների ինտենսիվ արդյունահանումն իր մասշտաբներով և տեխնածին ներգործությամբ ազդում է շրջակա միջավայրի վրա: Կենսոլորտում մեծ վնասակար ազդեցություն են թողնում, հատկապես, ծանր մետաղների արտանետումները, որոնք թթվեցնում են հողերը և ջրերը, լանդշաֆտային մեծ փոփոխություններ են առաջացնում, վատացնում բիոտի վիճակը:

Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում էներգիայի ավանդական դարձած ռեսուրսները՝ նավթը, քարածուխը, գազը, որոնց պաշարների աննախադեպ կրծատման պատճառով մարդը մոտ ապագայում կանգնելու է վառելիքաէներգիական ռեսուրսների ճգնաժամի առաջ:

**Նավթը** բարձր արդյունավետության էներգակիր է (այրումից ստացվում է 43,7 - 46,2 ՄՋ/կգ ջերմություն), որի այժմյան ծախսն աշխարհում կազմում է տարեկան 3000 մլն տոննա (նէ): Այն հանդիսանում է ածխաջրածնային բարդ միացություն, որից թրումից ստացվում է բենզին, կերոսին, մազութ, ռիզելային վառելիք և այլն: Նավթի համաշ-

խարիային պաշարները գնահատվում են 270 - 290 մլրդ տոննա (նէ), որը ներկա ծախսման ծավալներով կրավարարի 30 տարի:

Նավթի այրումից աղտոտվում է շրջակա միջավայրը, մթնոլորտ է արտանետվում ածխածնի օքսիդներ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, ծծմբի անհիդրիդ, մուր և այլն: Խոշոր քաղաքների շրջակա միջավայրի աղտոտման ամբողջ ծավալում ներքին այրման շարժիչներից աղտոտվածությունը կազմում է 70 - 80%:

**Բնական ածուխը** հաճախ օգտագործվող էներգակիր է և օգտագործվում է արդյունաբերության շատ ճյուղերում, որի տարեկան համաշխարհային արդյունահանման ծավալը երբեք հասել էր 4 մլրդ տոննա: Ածխի մնացած պաշարը ներկայումս բավական համեստ է, և դրա պոտենցիալը կարող է բավարարել մոտ 100 տարի:

Այրվող ածուխը հանդիսանում է շրջակա միջավայրի աղտոտման ամենաազդեցիկ աղբյուրներից մեկը: Դրա այրումից արտանետվում է ծծմբի անհիդրիդ, ածխածնի օքսիդներ, ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ, անգամ ռադիոակտիվ տարրեր և այլն: Չնայած ածխի այրման տեսակարար ջերմությունը բարձր է՝ 30 - 36 ՄԶ/կգ, սակայն այրումից հետո զանգվածի 1/3-ը մնում է որպես թափոն:

**Բնական գազն** արդյունավետ էներգակիր է, կազմված՝ մեթանից (մինչև 98%), ինչպես նաև էթանից, պրոպանից, բութանից և այլն: Այրման տեսակարար ջերմությունը կազմում է 32,7 ՄԶ/մ<sup>3</sup>: Չնայած խարիային պաշարը կազմում է մոտ 90 տրն մ<sup>3</sup>: Էներգետիկայի ծախսման վրա զագին բաժին է ընկնում 17%: Բնական գազը լայն օգտագործվում է էներգաարտադրության, ջերմության և կենցաղային նպատակների համար: Չամենատած մյուս էներգակիրների, բնական գազի կիրառումը ավելի մաքուր է:

## 7.2. Սննդային ռեսուլրսներ

Սննդամբերի արտադրությունն ամբողջ աշխարհում ուղիղ համենատական է բնակչության թվին: Այժմ երկրագնդի բնակչությունը կազմում է մոտ 6,7 մլրդ մարդ և այդ թիվն հարածուն է: Ամենամեծ ածի տեմպեր նկատվում են Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում, որտեղ բնակչության միջին տարեկան ածի շնորհիվ, վերջին 20 - 30 տարվա ընթացքում բնակչությունն ավելացել է 2 անգամ: Առանձին երկրներում՝ Մեքսիկա, Կոլումբիա, Վենեսուելա և այլն բնակչության թիվն ավելացել է տարեկան 3%-ով, Կոստա-Ռիկայում՝ 4%-ով, հարավային և հարավ-արևելյան Ասիայում՝ 2,6 - 2,7%-ով և այլն:

Մարդու նորմալ ապրելու և աշխատելու համար օրական պահանջվում է 2400 կկալ էներգիայից ոչ պակաս համարժեք սնունդ:

Մինչդեռ, Աերկայում երկրագնդի վրա մարդկության կեսն ունի սպիտակուցների քրոնիկական անբավարարություն: Դա չարիք է հատկապես Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի երկրների ժողովուրդների համար, որտեղ ապրում են երկրագնդի բնակչության 69%-ը, սակայն արտադրում են համաշխարհային մրերքի 43%-ը՝ այդ երկրների տնտեսական թույլ զարգացման պատճառով:

Մնացած արտադրության համար պիտանի հիմնական տարածքները համարվում են մշակովի հողերը, որոնք զբաղեցնելով ցանաքի ընդամենը 10,5%-ը, տալիս են սննդային էներգիայի 90%-ը:

Նյութական արտադրության ոլորտում տարածքների մեջ պահանջարկ ունի գյուղատնտեսությունը, սակայն զգալի տարածքներ անհրաժեշտ են նաև քաղաքաշինության, անտառտնտեսության, հանգստի և զբուաշղջության, արդյունաբերության, փոխադրամիջոցների, և այլ կարիքների համար:

Բնակչության պահանջները քավարարելու նպատակով անհրաժեշտ է քարձրացնել գյուղատնտեսական հողերի արտադրողականությունը՝ քարձր բերքատու սորտերի ներդրման, հանքային և օրգանական պարարտանյութերի օգտագործման, ոռոգման ցանցի ընդլայնման, հիդրոպոնիկ եղանակով մշակաբույսերի աճեցման միջոցով: Մննդամթերքի մնացած մասը լրացվում է համաշխարհային օվկիանոսից և անտառից ստացված մրերքով: Նշված միջոցառումների արդյունավետ կիրառման դեպքում երկրն ընդունակ է արտադրել այնպիսի քանակությամբ սննդամթերք, որը կարող է ապահովել միլիարդավոր մարդկանց պահանջարկը:

Այսպիսով, սննդի պոտենցիալ պաշարներն երկրի վրա շատ մեծ են և այս առումով գյուղություն ունեցող գերխնդիրն ավելի շուտ կապված է սննդի էկոլոգիական նաքրության հետ: Այստեղ մարդն, իսկապես, լուրջ անելիքներ ունի:

Սկզբունքորեն հնարավոր է գյուղատնտեսության մեջ կիրառել նաքրու տեխնոլոգիաներ՝ նարդու առողջության համար անվտանգ սննունդ ստանալու համար: Սակայն, նման միջոցառումները ծախսատար են, թանկարժեք և միշտ չեն, որ դրանք հասանելի են առանձին հողօգտագործողներին, ֆերմերներին ու պետություններին:

### 7.3. Էներգիական ռեսուրսներ

Էներգաարտադրության հիմնահարցը մարդկության համար միշտ ունեցել է առաջնակարգ նշանակություն: Քաղաքակրթության զարգացման ողջ ընթացքում էներգաարտադրության խնդիրն ուղղա-

կիորեն կապված է եղել կենսոլորտի վրա մարդու թողած ազդեցության և բնության պահպանության խնդիրներին:

Մեր հանրապետությունը թեև բնական վառելիքաեներգիական ռեսուրսներով աղքատ է, բայց հարուստ է էլեկտրաէներգիայով՝ գործող ջերմաէլեկտրակայաններով, ատոմային էլեկտրակայայանով, բազմաթիվ և տարբեր հզորության ջրաէլեկտրակայաններով, որոնց համար կա դեռևս չօգտագործված մեծ պոտենցիալ:

**Ածխաջրածնային և հանքային վառելանյութեր:** Ներկա պայմաններում ածխաջրածնային և հանքային վառելանյութերը հանդիսանում են էներգիայի ստացման գլխավոր աղբյուրը: Ածխաջրածնային վառելիքները՝ քարածուխը, նավթը, բնական գազը և հանքային ծագում ունեցող միջուկային վառելիքը միասին տալիս են էներգիայի 80%-ը:

Յուրաքանչյուր պետություն իր էներգիական պաշարն ապահովում է սեփական և ներմուծվող ռեսուրսների հաշվին: Սակայն, բոլոր դեպքում պետք է հիշել, որ վառելիքաեներգիական ռեսուրսները չերականգնվող են, հետևաբար պետք է խնայողաբար և արդյունավետ օգտագործել այդ ռեսուրսները:

**Ջրային էներգիա:** Էներգիայի ստացման համար ամենաէժան աղբյուրը ջրաէլեկտրակայաններն են: Լեռնային երկրներում, այդ թվում մեր հանրապետությունում, մեծ հնարավորություններ կան օգտագործելու ջրային ռեսուրսները էներգաարտադրության նպատակների համար: Հանրապետությունում այժմ գործում են Սևանի և Որոտանի կասկադը, Շամբի, Զորագետի և այլ ջրաէլեկտրակայանները: Նախագծվում են Դեբետ, Աղստև, Արաքս գետերի վրա նոր հիդրոէլեկտրակայաններ, իսկ Վերջին 1 - 2 տասնամյակներում ավելանում են փոքր և միջին հզորության կայաններ՝ հանրապետության տարածքում գրեթե ամենուր:

**Այլընտրանքային էներգիայի աղբյուրներ:** Այս խնդի մեջ են մտնում՝ քամու, արևի և ծովի մակընթացության էներգիան, որն այս կամ այն չափով նարդն օգտագործում է դեռևս անհիշելի ժամանակներից: Սակայն, գիտության և տեխնիկայի ներկա նվաճումները հնարավորություն են տալիս էներգիայի այդ աղբյուրներն օգտագործել առավել լայն մասշտաբներով, մանավանդ, որ դրանք հանդիսանում են անսպառ ռեսուրսներ: Չափազանց կարևոր է նաև այն հանգամանքը, որ էներգիայի այլընտրանքային աղբյուրները էկոլոգիապես մաքուր են և այս դեպքում շրջակա միջավայրի վրա թողած բացասական ազդեցությունը նվազագույնն է: Էներգիայի այլընտրանքային աղբյուրներն ապագայի «լուսատուներն» են և դրանց լիարժեք օգտագործման դեպքում նարդկությանը էներգիական ճգնաժամ չի սպառնա:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

### ԳԼՈՒԽ 8

#### ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԿԱՊԱՍՏՐ

##### 8.1. Հողային ռեսուրսները որպես մոնիթորինգի օբյեկտ

Վերափոխված էկոհամակարգերում մարդը և բնությունը մի ամբողջություն են կազմում: Քանի դեռ այդ համակարգն ինքնակարգավորման և հավասարակշռության պահպանման ընդունակ է՝ այն հասարակության հոգածության առաջնակարգ խնդիր չի ներկայացնում: Սակայն, վերջին տասնամյակներում մարդու գործունեությունը հողածածկույթի, ջրային օբյեկտների, անտառների և այլ բնական ռեսուրսների վրա աննախադեպ ծանրաբեռնվածություն է առաջացրել: Հողերի դեգրադացումն ու անապատացումը, աղտոտումը, հողատարումը և այլ բացասական երևույթները տարածման այնպիսի չափեր են ընդգրկել, որ էկոհամակարգերի վերականգնումն առանց բնապահպանական միջոցառումների իրականացման անհնար է դարձել:

Հասարակության գոյությունը և զարգացումը, անկախ նրա սոցիալ-տնտեսական կառուցվածքից, անքակտելիորեն կապված է հողի հետ: Բնական միջավայրի կարևոր այդ բաղադրիչը, որի դերը մարդու կյանքում բազմակողմանի է, համարվում է գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցը: Այդ միջավայրում արտադրվում են նյութական բարիքներ, որոնք անհրաժեշտ են մարդու նորմալ կենսագործունեությունն ապահովելու համար:

Հողային ռեսուրսները, միաժամանակ, հանդիսանում են նյութական միջոցների արտադրության տեղադրման տարածքային հիմքը: Այն մարդու ընդհանրական գործունեության հիմքն է, որի տակ հասկացվում է ոչ միայն հողը-հողային տարածությունը, այլև ջուրը, ընդերքը, բուսականությունը և այլն: Շուկայական տնտեսության պայմաններում հողը վերին (վերգետնյա) և ներքին (ստորգետնյա) բաղադրիչներով համարվում է անշարժ գույք և շուկայական հարաբերությունների առարկա:

Ներկա փուլում հողը հանդիսանում է մարդու գործունեության մշտական ներգործության առարկա, որի հետևանքով կրում է հսկայական փոփոխություններ: Սակայն, այդ փոփոխությունները ոչ բոլոր դեպքերում են դրական ազդեցություն ունենում հողային ռեսուրսների վրա: Գիտությանը հայտնի են շատ դեպքեր, երբ մարդու գործունեության հետևանքով առաջանում են բազմաթիվ բացասական երևույթներ, որոնք իրենց հերթին ազդում են արտադրության մյուս ճյուղերի վրա:

Այսպես, մասնագետների կարծիքով մեր հանրապետության հողային ֆոնդի շուրջ 60-80%-ը կարիք ունի ջրային էրոզիայի դեմ պայքարի միջոցառումների: Էրոզիայի հետևանքով վատացել են հողերի հատկությունները, ընկել բերրիությունը, իջել է բնական կերիանդակների արտադրողականությունը:

Հողային բարեփոփոխումների ընթացքում փոփոխվել է հողօգտագործման և հողասեփականության բնույթը: Հողի տնտեսավարման ներկա փուլում իջել է հողօգտագործման արդյունավետությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 30 - 35%-ը չեն օգտագործվում իրենց նպատակային նշանակությամբ: Իսկ ազգային հարստություն համարվող հումուսի պարունակությունը կրծատվել է շուրջ 1%-ով (Հայրապետյան Է.Ս., 2000):

Վերոհիշյալ փաստերն հաստատում են, որ հողերի պահպանման և դրանց արդյունավետ օգտագործման հարցերը համարվում են շրջակա միջավայրի պահպանության և մոնիթորինգի իրականացման կարևոր խնդիրներից, որոնք ամրագրված է ՀՀ սահմանադրության, ՀՀ հողային օրենսգրքում և այլ օրենսդրական ակտերում:

Մոնիթորինգի տեղեկատվության հիման վրա պետք է լուծվի հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման նպատականուղղված հետևյալ խնդիրները՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հողային պաշարների քանակական և որակական վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովումը,
- հողերի պահպանության և օգտագործման միջոցառումների արդյունավետության որոշումը,
- հողապահպանության միջոցառումների վերաբերյալ ծախսերի և դրանց արդյունավետության որոշումը,
- միջազգային մակարդակով հողային ռեսուրսների վիճակի պահպանության և օգտագործման վերաբերյալ համեմատական վերլուծությունը:

Հողային ռեսուրսների առկայության ցուցանիշները պետք է անդրադարձնան տնտեսական շրջանառության մեջ նոր հողերի ներգրավման հնարավորությունների, օգտագործումից դուրս մնացած հողերի վերակուլտիվացման, հողերի բերրիության բարձրացման վրա:

Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը վերահսկելու համար կարևոր նշանակություն ունի նպատակային տարրեր նշանակության հողերի փոփոխման ցուցանիշների բացահայտումը, հատկապես այն դեպքում, երբ բերդի, բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսական նշանակության հողերը տրմադրվում են ոչ գյուղատնտեսական նպատակների համար: Ինչ վերաբերում է հողերի բերրիության որակական ցուցանիշներին, ապա դրանք պետք է ամրագրեն հողերի որակական հատկությունների փոփոխությունները, ինչպես բնական, այնպես էլ մարդաժին գործոնների հետևաքով: Այդ առումով անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր բնակլիմայական գոտում ծևավորված հողերի բերրիությանը:

## 8.2. Հողի մոնիթորինգի մեթոդները

Հողն, ի տարբերություն մթնոլորտային օդի և ջրի, առավել քիչ շարժունակություն ունի և հակառակ դրան օժտված է ավելի մեծ բուժերականությամբ: Միաժամանակ, այն քիմիական տարրերի երկրաբանական և կենսաբանական շրջապույտի հիմնական կրող օղակն ու միջավայրն է, որտեղից կենսածին տարրերը թափանցում են սննդային շղթա: Հետևաբար, հողի մոնիթորինգը շրջակա բնական միջավայրի մոնիթորինգի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի:

Հողի մոնիթորինգի նպատակներից ու խնդիրներից ելնելով պայմանականորեն տարանջատում են՝ հողածածկույթի մոնիթորինգ, հողի վիճակի մոնիթորինգ և հողի աղտոտման մոնիթորինգ: Ընդ որում, դրանցից առաջին երկուսը նպատակառողված են հողի վերականգնման ուսակությունը թուլացնող բնական և մարդաժին գործընթացների՝ էրոզիայի, աղակալման, ծահճացման, արիդացման-անապատացման, բերրիության անկնան, նյութերի և էներգիայի շրջանառու ծավալների կրծատման ուսումնասիրությանը:

Աղտոտման մոնիթորինգը քաղաքակրթության ներկա փուլում մարդու առջև կանգնած է կոլոգիական գերխնդիրներից մեկն է, որն առնչվում է շրջակա միջավայրի աղտոտմանը, թափոններին, որոնք մահացու վտանգ են ներկայացնում բիոտի, այդ թվում մարդու համար: Հողային միջավայրը նույնպես ենթակա է այդ վնասակար ազդեցությանը, որտեղ թափանցող թունավոր նյութերից առավել մեծ վտանգ են ներկայացնում ծանր մետաղները և պեստիցիդները: Նման հողատարածքներից ստացված բուսական արտադրանքը հանդիսանում է էկոլոգիապես անմաքուր, վտանգավոր մարդու և կենդանիների համար, հետևաբար, նման հողերում անհրաժեշտ է իրականացնել թունագեհվման միջոցառումներ:

## **ԿԵՆՍԱԳՈՒՐՁՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ**

Հոդի կրած մարդածին ազդեցությունը բնութագրելու համար օգտագործելի են կենսացուցիչ հանդիսացող օրգանիզմներ՝ բուսական և կենդանական տեսակներ, որոնք կարող են տեղեկություն տալ հոդի ջրային ռեժիմի, թթվության, սննդատարրերով ապահովածության, բերրիության վերաբերյալ: Տարիների ընթացքում մշակովի հողատարածություններում բույսերի աճի ու բերքատվության, իսկ բնական համակեցություններում նաև տեսակային կազմի ու ձևաբանական փոփոխությունների ցուցանիշներով, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների տարածվածությամբ կարելի է որոշել հոդի մարդածին ծանրաբեռնվածության բնույթը և ուժգնությունը:

Հոդի շատ առանձնահատկություններ, այդ թվում՝ բերրիությունը, ջրային ռեժիմը, թթվությունը, աղիությունը, թունավորությունը և այլն կարելի է որոշել՝ ելնելով ցուցիչ բույսերի վիճակից:

**ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ** մասին վկայում են բույսերի տերևների չափերը, գույն և տեսքը: Բացի այդ, բերրիության ցուցիչ են հանդիսանում բուսատեսակները:

Բարձր բերրիության հողերում աճում են՝ ծիծեռնախոտ, ազնվամորի, մարգագետնային տափոլո, եղինջ, կատվախոտ, ասպիրակ և այլն:

Միջին բերրիության հողերում հանդիպում են մարգագետնային շյուղախոտ, երկարատերև բերենիկե, սրնգեղեգ, մարեմխոտ, անտառաշուշան, մեղրուկ և այլն:

Ցածր բերրիության հողում աճում են՝ կատվի թաթ, քարաքոսներ, հողային ճահճամամուռ, բուրավետ հասմիկ, հապալասենի, լոռամրգի և այլն:

Գոյություն ունեն նաև կենսացուցիչ բույսեր, որոնք վկայում են հողում հիմնական սննդատարրերի՝ ազոտի, ֆոսֆորի, կալիումի պարունակության մասին:

**Ջրային ռեժիմների** մասին վկայում են ջրի նկատմամբ տարրեր պահանջ ներկայացնող կենսացուցիչ բույսերը:

Խոնավակյաց բույսեր են հանդիսանում գերխոնավ, երբեմն էլ ճահճացած հողերին հարմարված բույսերը՝ փայծախախոտ, մռամոշ, անտառային ճլախոտ, ճահճային շամադաղ, դաշտային անանուխ, ճահճային եղնախոտ, օձի ավելուկ և այլն:

Խոնավասեր են հանդիսանում հոդի բաձր խոնավություն նախընտրող բույսերը՝ մարգագետնային աղվեսագի, ողնախոտ, տիմոֆեյսկա, երեքնուկ, սողացող սեզ, տափոլո, տերեփուկ:

Չորակայում են համարվում չոր վայրերում, հողի սակավ խոնավության պայմաններում ածող բույսերը՝ փետրախոտ, արջխաղ, հողի քարաքոսներ, կատվի թաթ, թելաննան ճուռակախոտ և այլն:

Հողում գետնաջրերի մակարդակի մասին նույնպես հնարավոր է մոտավոր պատկերացում ունենալ կենսացուցիչ բուսատեսակների առկայությամբ: Բանն այն է, որ գետնաջրերի մակարդակի քարձրացնան հետևանքով հաճախ հողերն աղակալվում են, դրան համապատասխան՝ բուսահամակեցության տեսակային կազմը փոփոխության է ենթարկվում: Դայատանում նման երևույթ հանդիպում է Արարատյան դաշտում, որի համար գոյություն ունեն առանձնացված 5 խումբ բուսատեսակներ:

**Հողի թթվայնությունը** դաշտային պայմաններում կարելի է գնահատել ցուցիչ բույսերով, համապատասխանաբար՝ թթու, չեղոք և հիմնային հողերին հարմարված տեսակներով: Առանձնացնելով այդ բուսական խմբերի ներկայացուցիչներին, կարելի է մոտավորապես պատկերացում կազմել հողի թթվայնության վերաբերյալ:

Հողերի, ինչպես և ամբողջ էկոհամակարգի մարդածին ազդեցության կարևոր ցուցիչներից մեկն էլ հանդիսանում են հողային անողնաշարավոր կենդանիները, որոնց քանակական ու տեսակային կազմի փոփոխությունները կարելի է ուսումնասիրել հողային կտրվածքներում, փորձահրապարակներում, դիտումների ուղերթներին: Հողային կենդանիների միջոցով կարելի է ուսումնասիրել նաև հողօգտագործման բնույթի ազդեցությունը, ինչպես նաև բնական միջավայրի տեղային աղտոտվածությունը և այլն:

Հողի կենդանիներով կենսացուցման նպատակով փորրում են 50x50սմ, կամ 25x25սմ չափերի հողափոսեր, դուրս բերված հողում ըստ շերտերի առանձնացնում են հայտնաբերված բոլոր կենդանիները՝ հետագա լաբորատոր ուսումնասիրությունների համար:

Գոյություն ունեն հողի վիճակը բնութագրող բազմաթիվ կենսացուցիչ օրգանիզմներ, որոնց միջոցով հնարավոր է պատկերացում կազմել հողային միջավայրի որոկական փոփոխությունների վերաբերյալ:

### **Ֆիզիկաքիմիական մեթոդներ**

Հողի մոնիթորինգի ֆիզիկաքիմիական մեթոդներով ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս քանակական պատկերացում կազմելու հողի վիճակի վերաբերյալ: Այդ նպատակով վերցրած հողանմուշներից պատրաստում են մանրահող, որից էլ ջրային, աղային և թթվային քաշվածքներ:

Զրային քաշվածքով որոշում են, հատկապես, հողի ջրալուծ միացությունները, արոի (ակտուալ) թթվությունը: Աղային քաշվածքն

օգտագործում են հողի փոխանակային թթվությունը որոշելու համար, իսկ հիդրոլիտիկ հիմնային աղով քաշվածքը՝ հիդրոլիտիկ թթվության համար:

Դաշտային պայմաններում հնարավոր է որոշել հողի մի շարք ֆիզիկական հատկանիշներ՝ կառուցվածքը (ստրոկուլուրա), գույնը, խտությունը, խոնավությունը, անգամ՝ մեխանիկական կազմը, ինչպես նաև հողի ջրակայուն կազմավորումները (ագրեգատները): Վերջինս կարևոր է ջրային հողատարման (էրոզիա) գործընթացները պարզելու նպատակով, հատկապես, ոռոգելի հողերում:

Ֆիզիկաքիմիական բնույթի ուսումնասիրությունների խմբին է դասվում հողի խոնավության, հողային լուծույթի ռեակցիայի (ρΗ), կենսաբանական ակտիվության և այլ ցուցանիշների որոշումը:

Հողի բերրիության որոշման ֆիզիկաքիմիական մեթոդները բազմաթիվ են, նպատակատրողված՝ հողի հումուսի, հիմնական սննդատարրերի (N,P,K) ընդհանուր և բույսերի համար մատչելի պարունակությունները որոշելուն:

Հողի մոնիթորինգի ֆիզիկաքիմիական մեթոդներով են որոշում նաև հողի աղտոտվածությունն այնպիսի նյութերով, ինչպիսիք են՝ ծանր մետաղները, ռադիոնուկլիդները, պեստիցիդները:

### **8.3. Հողերի բերրիության փոփոխության մոնիթորինգ**

Հողի բերրիությունը՝ բույսերի աճի ու զարգացման համար անհրաժեշտ սննդանյութերով, խոնավությամբ, օդով, ջերմությամբ ու ֆիզիկաքիմիական և այլ պայմաններով բույսերի պահանջը պահովելու հողի ունակությունն է: Այն փոփոխվող ցուցանիշ է, կախված է բուսածածկից, մշակության աստիճանից, սոցիալ-տնտեսական գործոններից և այլն:

Տարբեր հողակլիմայական գոտիներում ձևավորված յուրաքանչյուր հող ունի պոտենցիալ բերրիություն, որն արտահայտվում է դրա հնարավոր առավելագույն արտադրողականությամբ: Հողի պոտենցիալ բերրիությունը կախված է տվյալ պահին հողում առկա սննդանյութերի, ջրաֆիզիկական և բույսերի աճման ու զարգացման համար անհրաժեշտ այլ պայմաններից: Պոտենցիալ բերրիությունը ձևավորվում է հողի հետ միասին և զարգացման տվյալ աստիճանում անդրադարձում է դրա հատկությունների վրա: Հողի բերրիության բաքնված հնարավորությունները կարող են բացահայտվել հողի յուրացման և մշակության միջոցով, որն անվանում են արդյունավետ բերրիություն: Դրա առավելագույն արժեքը ձգտում է պոտենցիալ բերրիությանը, և այդ երկու բերրիությունների տարբերությունն աստիճանաբար փոքրանում է հողերի մշակության համապատասխան:

Հողի բերրիությունը մշտապես փոփոխվում է և աստիճանաբար բարձրանում՝ արդյունավետ օգտագործման ընթացքում, սակայն այն կարող է և ընկնել հողերի զարգացման որոշակի փուլում: Հողի արդյունավետ բերրիությունը փոխվում է կախված օգտագործման եղանակից, կլիմայական պայմաններից, մշակաբույսերի կազմից, պարարտանյութերի օգտագործումից և այլ պայմաններից:

Հողը և դրա բերրիությունը հանդիսանում են վերականգնվող բնական ռեսուրս: Սակայն, մշակաբույսերի բերքի միջոցով հողից սննդատարրերի ելի հաշվին հողն աղքատանում է: Սննդատարրերի այդ պակասորդը կարելի է վերականգնել՝ հողն անհրաժեշտ չափաբանակներով օրգանական և հանքային պարատացման միջոցով:

Բնակչության թվի ավելացման և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների մեծացման հետևանքով արագանում է սննդանյութերի ելք հողից: Որպես դրան հակալշիր, անհրաժեշտ է հող վերադարձնել նարու բնակության վայրերում գոյացող օրգանական թափոնների վերամշակումից ստացված նյութերը՝ որպես պարարտանյութ:

Հողերի բերրիության փոփոխության դիտարկումները հողային ռեսուրսների մոնիթորինգի հիմնական խնդիրներից է, որի իրականացման համար օգտագործում են ինչպես կենսացուցման, այնպես էլ ֆիզիկաքիմիական մեթոդները:

Բերրիության գլխավոր ցուցանիշների՝ հումուսի և հանքային սննդատարրերի պարունակության ծզգրիտ որոշման համար օգտվում են հողի քիմիական անալիզի հայտնի մեթոդներից: Ընդ որում, սննդատարրերի համար որոշում են՝ ինչպես դրանց ընդհանուր պարունակությունը, այնպես էլ բույսերին նատչելի ձևերը:

Հողում սննդանյութերի անբավարությունը և հաշվեկշռի խախտումը հյուծում է հողը: Այս առօտմով, պետք է ասել, որ նոր հողային հարաբերությունների հաստատումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում հողի համակողմանի պարարտացման համակարգը խիստ անբավարար է գործել, որի արդյունքում հողը նկատելի հյուծվել է, հումուսի պարունակությունը կրծատվել:

Հողի բերրիության կարևոր ցուցանիշ է հողի ֆերմենտային ակտիվությունը, որը նույզես որոշվում է քիմիական անալիզներով:

Մոնիթորինգի ծրագրով՝ պարբերաբար (3-5 տարին մեկ անգամ, կամ նույնիսկ ամեն տարի) կատարում են հողի ագրոքիմիական համալիր անալիզներ: Արդյունքների հիման վրա էլ կազմվում է հողի ագրոքիմիական վիճակի բնութագիրը, մշակվում ծրագիր՝ հողի բերրիության պահպաննան և բարձրացման անհրաժեշտ միջոցառումների ընտրության ու իրականացման համար:

## **8.4. Հողատարման (էրոզիա) մոնիթորինգ**

Հնագույն ժամանակներից ի վեր երկրագործության համար մեծ չարիք է համարվում հողատարման երևույթը՝ էրոզիան: Ժամանակակից գիտությանը հաջողվել է որոշ չափով պարզել այդ վտանգավոր երևույթի առաջացման պատճառները, զարգացման օրինաչափությունները և նշակել հողատարման դեմ պայքարելու միջոցառումների համակարգ:

Ըստ հողատարման գործոնի, տարբերում են հողատարման երկու ձև՝ ջրային և հողմնային: Լեռնային երկրներում գերակշռում է ջրային հողատարումը, որն իր հերթին լինում է մակերեսային և ձորակային:

Ջրային հողատարումն առաջանում է լեռնալանջերին՝ ծյան հալոցքի և անձրևաջրերի մակերևույթային արագ հոսքերի հետևանքով, որի ընթացքում հողի վերին շերտերից հեռանում է սննդանյութերով հարուստ նուրբ դիսպերսված հողաշերտը, կամ քայլայվում-տարվում է հողաշերտն ամբողջապես: Յողը կորցնում է բերրիությունը, իսկ կենտրոնացված հոսքերի առկայությանը լեռնալանջերում առաջանում են տարբեր խտությամբ ու չափերի ձորակներ:

Սոտավոր հաշվարկներով Յայատանի Յանրապետության տարածքում առաջանում են տարեկան 7 միլիմետր խորանարդ մետր ծավալով ջրային հոսանքներ, որոնք իրենց հետ դաշտերից հեռացնում են շուրջ 20 միլիմետր տոննա հողային զանգված՝ հումուսի, ազոտի, ֆոսֆորի, կալիումի և այլ սննդատարրերի հսկայաքանակ պարունակությամբ: Յողատարման ենթարկված հողատարածքներից ստացված բերքը 3 - 4 անգամ պակաս է նման վտանգից գերծ հողերի համենատ:

Մեր հանրապետության հողատարածքների շուրջ 75%-ը հողատարման վտանգի ենթակա է: Տարածքի խիստ մասնատվածությունը, լանջերի ոչ ճիշտ ու անկանոն օգտագործումը, հողապաշտպանական միջոցառումների բացակայությունն առաջացրել են հողածածկի ուժգին քայլայում: Ռ.Ա. Էղիյանի (Յայատանի հողերի կադաստրային գնահատումը, 1984) տվյալների համաձայն, հանրապետության 2657,6 հազար հեկտար ընդհանուր հողային տարածությունից 1186,8 հազար հեկտարը կամ 44,7%-ը ենթարկված է հողատարման, որից թույլ հողատարված՝ 21,8%-ը, միջակ հողատարված՝ 15,8%-ը, ուժեղ հողատարված՝ 7,1%-ը: Սակայն, հանրապետության հողերի հետ կատարված բացասական փոփոխությունները չեն ավարտվում հողատարումով: Վերջին 25 տարվա ընթացքում հանրապետության օգտագործելի հողատարածությունները կրճատվել են 21,3%-ով, այդ թվում վարելահողերը՝ 22,4%-ով, բնական արոտները՝ 33,4%-ով:

Յողն, անշուշտ, ջրի քայլայիշ գործունեությանը դիմակայելու ունակություն ունի, որի պայմանավորող գործոններից մեկը հողի

օրգանական նյութերի, մասնավորապես, հումուսի պարունակությունն է: Սակայն, ամեն տարի հումուսի պաշարների կորուստը հանրապետության հողերից կազմում է 0,6 տոննա՝ 1 հեկտարի հաշվով:

Ամբողջ աշխարհում հողատարման և անտառագրկման ժամանակակից միտումների պահպանման դեպքում 2030 թվականին երկրագնդի վրա բերի հողերի քանակը կարող է կրճատվել՝ 960 մլրդ, իսկ անտառները՝ 440 մլն հեկտարով: Եթե երկրագնդի յուրաքանչյուր բնակչին ներկայում միջին հաշվով բաժին է ընկնում 0,28 հա բերրի հող, ապա 2030թ. այդ տարածությունը կրճատվի է մինչև 0,19 հա:

Զրի և քամու հողատարման քայլայիշ ազդեցության հետևանքով մոլորակի վրա մշակության համար այս կամ այն չափով անայտան են դարձել երբեւ օգտագործված 2 մլրդ հեկտար բերրի հողեր, և այդ կորուստների զգալի մասը տեղի է ունեցել վերջին հարյուրամյակում:

Հողատարման դեմ պայքարի արդյունավետ միջոցառումներ մշակելու համար անհրաժեշտ է որոշել գործընթացների զարգացման ուժգնությունը: Դա կատարվում է որոշակի ժամանակամիջոցի՝ մեկ անձրևի, ձնհալի, մեկ ջրման, բույսերի վեգետացիայի և այլնի համար, մ<sup>3</sup>/հա, կամ տ/հա հաշվով:

Գոյություն ունեն տարված հողազանգվածի որոշման բազմաթիվ մեթոդներ (Հայրապետյան Է.Ս., 2000), որոնցից նշենք մի քանիսը:

**Պղղողատների ծավալի չափման մեթոդը**, կիրառվում է դաշտային հողատարման ուսումնասիրության, ինչպես նաև հակահողատարումային միջոցառումների արդյունավետության ստուգման փորձերում, հետևյալ բանաձևով՝

$$P = 10000 \cdot S \cdot a$$

որտեղ՝  $P$ - ն տարված հողի քանակն է,  $S$ -ը ողղողատի մակերեսը,  $a$ -ն ողղողատի երկարությունը:

**Ցցերի ու հերակալի մեթոդը** կիրառում են՝ որոշակի ժամանակահատվածում հողատարման ուժգնությունը պարզելու համար, պարբերաբար չափելով հողի հզորության նվազումը:

**Չուքահրապարակմերի անջատման մեթոդը** հողատարման ուժգնությունը գնահատելու առավել հավաստի մեթոդ է, որը կիրառում են որոշակի մակերեսի վրա հոսքի գործակիցը որոշելու համար: Այն արդյունավետ է տևական ուսումնասիրությունների դեպքում:

**Փոքր ջրհավաք ավազմերի անջատման մեթոդը** կարծի հոսքը հաշվում են ձորակամերձ տարածությունում կամ գետային ցանցի ավազանում: Այն միջինացված տեղեկություն է տալիս անբողջ ջրհավաքի վերաբերյալ:

Հողատարման ձորակամերի գոյացման շարժը (դիմամիկան) ուսումնասիրելու համար տեղադրում են մշտական հենանիշեր (ուեպեր-

ներ) և պարբերաբար կատարում չափումներ՝ ծորակների խորության և լայնության աճի վերաբերյալ:

Չորակների աճը որոշում են նաև խոշոր մասշտաբի օդալուսանկարահանման և տարածադիտման մեթոդով, համեմատելով նախորդ և հաջորդ նյութերը:

Յողատարման կանխատեսման և կանխարգելման նպատակով կատարվող ուսումնասիրությունները ներկայումս որակական նոր մակարդակի են հասել՝ երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ - GIS) կիրառման շնորհիվ։ Այդուհանդերձ, դաշտային ուսումնասիրությունների հիշյալ մեթոդներն արդիական են, որոնցով տեղեկություններ են հավաքվում նաև ԵՏՀ-ի համար։

Յողատարման ուժգնությունը կարելի է գնահատել Մ.Ն.Զասլավսկու (Յայրապետյան, 2000) առաջարկած սանդղակով՝ թույլ, միջակ, ուժեղ, շատ ուժեղ, չափազանց ուժեղ, ըստ տարեկան միավոր մակերեսից տարված հողազանգվածի։

Յողերի պոտենցիալ հողատարման վտանգը գնահատվում է մակերեսային հոսքի K գործակցի (ջրի հոսքի և տեղումների քանակի հարաբերություն) մեջությամբ՝

ա) թույլ -  $K = 0,05 - 0,1$  տարեկան կրկնվում է երեք անգամից ոչ ավելի,

բ) միջակ -  $K = 0,1 - 0,25$  տարեկան կրկնվում է երեք անգամից ոչ պակաս,

գ) ուժեղ -  $K = 0,25 - 0,5$  տարեկան երեք անգամից ոչ պակաս,

դ) շատ ուժեղ -  $K = 0,5\text{-}ից$  մեծ, տարեկան կրկնվում է երեք անգամից ոչ պակաս։

Յողատարման ուժգնության և հնարավոր վտանգի գնահատումը հողի մոնիթորինգի կարևորագույն խնդիրն է, որով հնարավոր է ստեղծել տեղեկատվական համակարգ, որպես գիտականորեն հիմնավորված հակահողատարումային պայքարի միջոցառումներ մշակման նախադրյալ։

## 8.5. Յողերի քիմիական աղտոտման մոնիթորինգ

Բնության մեջ նորմալ պայմաններում հողում ընթացող բոլոր գործընթացները հավասարակշռված են։ Սակայն, այդ հավասարակշռությունը խախտվում է մարդու տնտեսական գործունեության հետևանքով։ Յողն աղտոտվում է, բաղադրության փոփոխություն է կրում, նվազում է բերրիությունը և այլն։ Այժմ մոլորակի յուրաքանչյուր մեկ շնչին բաժին է ընկնում հեկտարից պակաս վարելահող, և այդ փոքր տարածությունը շարունակում է կրծատվել մարդու սիսալ գործու-

նեռլիքյան հետևանքով: Ի տարրերություն մնացած կենդանի օրգանիզմների, որոնք անընդհատ մեծացնում են իրենց կենսական տարածքները, փաստորեն, մարդ շարունակաբար կրծատում է դրանք:

Քաղաքաշինության, լեռնահանքային արդյունաբերության և մարդու այլ գործունեության ընթացքում հսկայական մակերեսով բերի հողեր դուրս են գալիս գյուղատնտեսական օգտագործումից և անցնում ոչ պիտանի տարածությունների շարքը: Այդ գործունեության հետևանքներից է հողի քիմիական աղտոտումը, այսինքն՝ հողային միջավայրի ոչ բնորոշ քանակությամբ առանձին քիմիական տարրերի, կամ միացությունների ավելցուկի, սինթետիկ նյութերի առկայությունը հողում: Յիմնական աղտոտիչներից են հանդիսանում ծանր մետաղները և դրանց միացությունները, ռադիոնուկլիդները, գյուղատնտեսության մեջ կիրառվող ագրոքիմիկատներից՝ պեստիցիդները, ինչպես նաև հաճաքային (ֆուֆորական, կալիումական) պարարտանյութերի բաղադրության մեջ մտնող բալաստային նյութերը:

Յողի ամենավտանգավոր աղտոտիչ ծանր մետաղներից է համարվում սնդիկը և դրա միացությունները: Սնդիկը շրջակա միջավայր է արտանետվում՝ մետաղական սնդիկ և դրա տարրեր միացություններ պարունակող թունաքիմիկատների, արդյունաբերական ձեռնարկությունների թափոնների հետ:

Ավելի զանգվածային տարածում և վտանգավոր բնույթ է կրում հողի աղտոտումը կապարով: Յայտնի է, որ մեկ տոննա կապար արդյունահալելու համար թափոնների հետ շրջակա միջավայր է արտանետվում մինչև 25 կգ կապար: Կապարի միացություններն օգտագործվում են բենզինի մեջ, որպես վառելիքի դետոնացումը փոխսող հավելում, դրա համար էլ բենզինային շարժիչները համարվում են հողի՝ կապարով աղտոտման իիմնական աղբյուրը, և հողերը կապար շատ են պարունակում, հատկապես, ավտոմայրուղիների շրջակայքում:

Սև և գունավոր մետաղաձուլության ու մշականան ձեռնարկությունների շրջակա միջավայրի հողերն աղտոտվում են՝ մանգանով, մոլիբդենով, ցինկով, նիկելով և այլ մետաղներով: Շատ տեղերում դրանց քանակը տասնապատիկ անգամ գերազանցում է Սթեն-ն:

Աշխարհի մասշտաբով մետաղաձուլական ու մշակման ձեռնարկություններից տարեկան շրջակա միջավայր են արտանետում 89 հազար տոննա կապար, 155 հազար տոննա պղինձ, 121 հազար տոննա ցինկ, 12 հազար տոննա նիկել և այլն, իսկ փոխադրամիջոցների արտանետած կապարը տարեկան կազմում է շուրջ 260 հազար տոննա:

Յողի քիմիական աղտոտման գործում զգալի ազդեցություն ունի ինտենսիվ գյուղատնտեսությունը, որտեղ լայնորեն կիրառվում են

քիմիական պարարտանյութեր և պեստիցիդներ, որոնց օգտագործման ժավալները յուրաքանչյուր տարի ավելանում են:

Առանձնահատուկ վտանգ են ներկայացնում բարդ օրգանական սինթետիկ միացությունները, որոնց հիմքի վրա ստեղծված են պեստիցիդներ՝ թունաքիմիկատները: Դրանք կուտակվում են հողում, ջրում, ջրանբարների հատակի նստվածքներում և այլն: Վճարակար այդ նյութերը հողից և ջրից անցնում են բույսերի մեջ, մտնում են սննդային շղթա և մարդու օրգանիզմ՝ հող-բույս-կենդանի-մարդ, կամ հող-բույս-մարդ ճանապարհներով:

Յողը քիմիապես աղտոտվում է նաև ռադիոակտիվ նյութերով, որոնք հողում հայտնվում և կուտակվում են միջուկային պայթյուններից հետո՝ տեղումների միջոցով կամ էլ ռադիոակտիվ նյութի արդյունահանման, հարստացման, պահեստավորման և օգտագործման ձեռնարկություններից՝ հեղուկ և պինդ թափոնների հեռացման ընթացքում: Ռադիոակտիվ նյութերը նույնպես հողից անցնում են բույսերի մեջ և թափանցում սննդային շղթա, կուտակվում կենդանիների և մարդու օրգանիզմներում:

Այսպիսով, հողերի քիմիական աղոտումը տեղի է ունենում ինչպես արդյունաբերության զարգացման, այնպես էլ գյուղատնտեսության քիմիացման հետևանքով: Իսկ առտոտման ուղիները բազմազան են՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ՝ ջրահոսքերի միջոցով, կամ մընլուրտային տեղումների միջոցով աղտոտիչներն անցնում են հող, և աղտոտում այն աստիճանի, որ հաճախ նման հողերում հնարավոր չէ բույսեր աճեցնել:

Մեր հանրապետությունում հողերի քիմիական աղոտումն առավել ուժեղ են արտահայտված Ալավերդու, Վանաձորի, Քաջագիտականի, Երևանի, Արարատի, Ջրազդանի, Սողմի և այլ արդյունաբերական ձեռնարկությունների շրջակա տարածքներում, որտեղ հողի մեջ հայտնաբերված է ծանր մետաղների՝ նիկելի, մանգանի, կորալտի, պղնձի, կադմիումի, սնդիկի, կապարի բավականին մեծ քանակություններ: Ընդհանուր առմամբ՝ հանրապետության տարածքում կան շուրջ 50 հազար հեկտար նման հողատարածքներ: Ներկայունս շատ տեղերում հողի այն հատկությունները, որ դիտվում են 50 - 100 տարի առաջ, մեր աչքի առջև անդառնալիորեն փոխվում են:

Յողի ծանր մետաղներով աղտոտման մոնիթորինգն իրականացնելու համար անհրաժեշտ է ծշտորեն որոշել առավել վտանգավոր տարրերի առկայությունը, կազմը և խտությունը, բացահայտել աղտոտման աղբյուրները, տարածման ուղիները, տեղաշարժի արագությունը: Սակայն, պետք է ասել, որ աղտոտվածության աստիճանի գնահատման հարցում ընդհանուր մոտեցում չկա, որն էլ որոշակի դժվարություններ է հարուցում աղտոտումը նվազեցնելու և աղտոտված հողերը վերակուլ-

տիվացնելու գործում: Բոլոր դեպքում հողերի ծանր մետաղներով աղտոտման աստիճանը քիչ թե շատ ճշտելու համար, որպես չափանիշ, պետք է ունենալ դրանց ֆոնային արժեքը և հողում՝ Սթիւ-ն:

Հողերի քիմիական աղտոտման մոնիթորինգն իրականացնելիս անհրաժեշտ է որոշել աղտոտիչների պարունակությունն ինչպես հողում, այպես էլ բույսերի, հարակից բնական ջրերի, անգամ, մթնոլորտային տեղումների մեջ:

Աղտոտման հանդեպ հողը ցուցաբերում է բուֆերականություն, մետաղների ջրալուծ ձևերը վերածելով դժվարալուծ միացությունների և ընդհակառակը, որի շնորհիվ դիտվում են հողի կազմին ու հատկություններին բնորոշ միացությունների առաջացման միտումներ: Սակայն, հողի բուֆերային կարողությունը անսահման չէ և աղտոտիչների անընդհատ ավելցուկի դեպքում տեղի է ունենում դրանց կուտակում՝ առանց փոխակերպվելու:

Ծանր մետաղներով հողերի աղտոտման հետևանքների վերացումը բավականին դժվար խնդիր է, անհրաժեշտ միջոցառումները բանկ են: Դրանց հեռացումը հողից՝ քիմիական «լվացման» ճանապարհով, երկրորդային աղտոտման վտանգ է պարունակում, իսկ ֆիտոմելիորացումը տնտեսապես ծեռնատու չէ: Քետևաբար, ամենահարմար մոտեցումը ծանր մետաղների վնասազերծումն է: Այդ նպատակով պետք է աղտոտված հող ներմուծել այնպիսի հողաբարելավվիճեր (մելիորանտներ) և օրգանական պարարտանյութեր, որոնք կլանում են ծանր մետաղները, կամ դրանց շարժուն ձևերը վերածում են բույսի համար դժվարամատչելի ձևերի, ապահովելով սննդի մաքրությունը, ինչպես նաև պահպանելով հողի բերրիությունը: Այդպիսի մելիորանտներ են համարվում ցեղլիտները, դացիտային տուֆը, օրգանական պարարտանյութերը:

Հողերի էկորունաբանական վիճակը ճշտելու նպատակով վերահսկում են նաև պեստիցիդների կիրառությունը, որոնք առավել վտանգավոր են ոռոգվող հողատարածքներում, ջրալուծումից շարժունակության բարձրանալու հաշվին:

## 8.6. Հողերի աղակալման և ճահճացման մոնիթորինգ

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով հողերի հետ կատարվող բացասական փոփոխություններից են հողի աղակալումը և ճահճացումը: Անշուշտ, այս երևույթները բնության մեջ տեղի են ունենում նաև բնական գործընթացների արդյունքում, որի հետևանքով էլ մթնորակի վրա ձևակությունը կատարվել են աղուտներն ու ճահիճները: Սակայն, դրանք ընթացել են հազարամյակների տևողությամբ, որի արդյունքում

ձևավորվել են ինքնատիպ էկոհամակարգեր, հավասարակշռված իրենց կառուցվածքով և գործառությով:

Այլ է խնդիրը հողերի մարդածին աղակալման և ճահճացման դեպքում: Նախ դրանք ունեն տասնամյակների և հարյուրամյակների պատմություն, որի ընթացքում էկոհամակարգերի կայունության մասին խոսք լինել չի կարող: Մյուս կողմից, նման երևույթներ օարգանում են հատկապես մշակովի հողատարածքներում, որը նշանակում է գյուղատնտեսական նշանակության հողերի կորուստ: Այս պատճառով էլ հողերի փչացման հիմնական պատճառներից են համարվում մարդածին ծագման՝ աղակալումը և ճահճացումը:

**Աղակալում** այն երևույթն է, երբ հողի վարին շերտում կուտակվում են բույսերի համար թունավոր քանակի աղեր, և նման տարածքներում կարող են աճել միայն խիստ սահմանափակ թվով աղադիմացկուն բուսատեսակներ: Հայաստանում՝ Արարատյան դաշտում բնական գործընթացների արդյունքում ձևավորվել են շուրջ 30 հազար հեկտար աղուտ-ալկալի հողատարածքներ:

Աղակալումը սկսվում է հանքայնացված գետնաջրերի մակարդակի բարձրացումով, որը մարդածին աղակալման դեպքում հետևանք է ռողջման ջրի քանակի, ջրումների թվի ու ջրի որակի խախտման, ցամքուրդային համակարգի անսարքության, ինչպես նաև հանքային պարարտանյութերի բաժնեչափերի չարաշահման:

**Ճահճացում** այն երևույթն է, երբ հողային միջավայրից օդն իսպառ դուրս է մղվում, իսկ ջրի մակարդակը բարձրանում է հողի մակերևույթից վեր: Նման պայմաններում հողամշակառությունն անհնար է, և այնտեղ աճում են միայն ջրա-ճահճային որոշ բույսեր: Հայաստանում կան շուրջ 25 հազար հեկտար ճահճային հողեր՝ Արարատյան դաշտում, Սևանի ավազանում, Լոռիում:

Հողերի մարդածին ճահճացումը նույնպես գետնաջրերի մակարդակի բարձրացումով է պայմանավորված, որը հետևանք է տեղանքի ջրաերկրաբանական ռեժիմի խախտման:

Հողի երկրորդային՝ մարդածին աղակալման և ճահճացման երևույթը գյուղատնտեսական նշանակության հողերի մեջ մակերեսների կորստի պատճառ կարող է լինել: Հետևաբար, բնապահպանության և գյուղատնտեսության տեսակետից՝ հողի աղակալումը և ճահճացումն անհրաժեշտաբար մոնիթորինգի ենթակա խնդիրներ են:

Թե աղակալումը, թե ճահճացումը կապաված են գետնաջրերի մակարդակի բարձրացման հետ: Հետևաբար, դրա փոփոխությունը բացահայտելու համար պետք է մոնիթորինգային՝ կանոնավոր դիտումներ և չափումներ կատարել, թույլ չտալու մակարդակի այնպիսի բարձրացում, որի դեպքում կսկսեն օարգանալ այդ գործընթացները:

Գետնաջրերի մակարդակի փոփոխությունը, ինչպես նշվեց, կարելի է արձանագրել կենսահնդիկացման մեթոդով՝ համապատասխան բույսերի միջոցով։ Սակայն, առավել ճշգրիտ ուսումնասիրությունների համար պետք է օգտվել ֆիզիկա-քիմիական մեթոդներից։ Գետնաջրերի մակարդակի որոշման համար գոյություն ունի հորատանքքում ջրի մակարդակաչափի մեթոդը, որը կարելի է կիրառել ամբողջ տարվա ընթացքում, կամ տարբեր եղանակներին։

Հողի գերխոնավացման և աղերի պարունակության ուսումնասիրության համար բացի դաշտային դիտումներից ու չափումներից, կատարվում են լաբորատոր ֆիզիկական և քիմիական անալիզներ՝ համապատասխան մեթոդով։

Մոնիթորինգի արդյունքների վերլուծության հիման վրա մշակվում է համապատասխան միջոցառումների ծրագիր, կանխելու անցանկալի երևույթների զարգացումը։ Օրինակ, Արարատյան դաշտում գետնաջրերի մակարդակը հողի մակերևույթից 310սն խորության վրա պահելու դեպքում ընդհատվում է հանքայնացած ջրի վերընթացը, դրանով իսկ՝ աղակալումը, բնականաբար, նաև ճահճացումը։ Այն իրականացնում են ցամաքուրդային ցանցի կառուցումով։

## 8.7. Հողերի վերակուլտիվացում

Արդյունաբերության, քաղաքաշինության և անգամ գյուղատնտեսության զարգացման հետևանքով արդի ժամանակաշրջանուն հողածածկի ոչնչացումն ու քայբայումը հսկայական մասշտաբներ է ընդունել։ Մասնավիրապես, հանքարդյունաբերության ոլորտում՝ քարհանքերի, ավազահանքերի և այլ օգտակար հանածոների անխնա ու ոչ խելացի շահագործման ընթացքում հսկայական պիտանի հողատարածություններ քայբայվում են, ծածկվում արտադրաական թափոններով և դաշնում գյուղատնտեսական օգտագործման համար ոչ պիտանի (արդյունաբերական անապատներ)։ Սովորաբար նման հողերը զուրկ են կայուն բուսածածկույթից, և այդտեղ աճում են միայն մոլախոտային բույսերի առանձին տեսակներ։

Այդ ճանապարհով հողերի դեգրադացումը տարեցտարի ավելի ու ավելի մեծ մակերեսներ է ընդգրկում աշխարհի բոլոր երկրներուն։ Զարգացած գրեթե բոլոր երկրներուն նման արդյունաբերական անապատների վերածված հսկայական տարածություններ կան, տարածքներ, որոնք անհապաղ վերակուլտիվացման կարիք ունեն։

Վերակուլտիվացման ենթակա հողատարածություններ կան նաև հանրապետությունում։ Տուֆի, պեմզայի, ավազահանքերի, մոլիբդենի, պղնձի և այլ հանքավայրերի շահագործման հետևանքով մեր հանրապետությունում շաքից դուրս են եկել մի քանի հազար

հեկտար բերրի հողեր: Պետք է նշել, որ այդ քայլայիշ երևույթների աշխարհագրական տարածումը մեծանում է, ինչպես՝ օրինակ, Թեղուտի պղնձի հանքավայրի, Զանգեզուրում աննախադեպ շատացած մետաղական հանքերի արդյունահանան դեպքում:

Քայլայիշ հողածածկ ունեցող տարածությունները կարելի են բաժանել երկու հիմնական խմբի՝

ա) հողատարածություններ, որոնք ծածկված են արդյունաբերական թափոններով, լեռնաքիմիական արտադրության լիցքերով,

բ) հողատարածություններ, որոնք վնասված են ընդերքի հանույթների հետևանքով (քարհանքեր, օգտակար հանածոների բաց հանքեր, ստորգետնյա հանքավայրերի փլվածքներ և այլն):

Վերակուլտիվացման ենթակա տարածությունների վերականգնումը կատարվում է տարբեր՝ գյուղատնտեսական (ցանքատարածություններ, այգիներ և այլն), բնապահպանական (անտառակարկներ), ձկնաբուծական (լճակներ, ջրամբարներ) և այլ նպատակներով:

Յողերի վերակուլտիվացումը կատարվում է երկու փուլով.

ա) լեռնատեխնիկական, որի դեպքում արտադրական թափոնները թաղում են փոսերում, տարածքը հաթեցնում և ըստ անհրաժեշտության ծածկում բերրի հողաշերտով,

բ) կենսաբանական, որի ընթացքում կատարվում են ծառատնկումներ, հիմնադրում պտղատու այգիներ, աճեցնում գյուղատնտեսական մշակաբույսեր:

Յողը վերակուլտիվացման ենթարկելիս պետք է հաշվի առնել բնահողի մեխանիկական ու քիմիական կազմը, սննդատարերի պարունակությունը, ջրաբրիացման հնարավորությունը, թունավոր նյութերի առկայությունը, լանջերի թեքության աստիճանը, լիցքերի ձևն ու բնույթը և այլն:

Մեր հանրապետությունում ներկայում կան վերակուլտիվացման ենթակա շուրջ 2500 հեկտար տարածություններ, որոնք գտնվուն են տարբեր բնահողային գոտիներում: Յողերի վերակուլտիվացումն արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ է լիարժեք տեղեկություն ունենալ այդ տարածքների մասին, այսինք, պետք է ունենալ հողերի մոնիթորինգային դիտարկումների արդյունքներ:

## 8.8. Յողերի մոնիթորինգի բովանդակությունը

Յողերի մոնիթորինգը հողային ֆոնի վիճակի վերաբերյալ դիտարկումների համակարգ է, որի խնդիրն է ժամանակին ի հայտ բերել հողերի վիճակի փոփոխությունները, տալ դրանց գնահատականը, կանխատեսել հետագա զարգացումները, կանխել և վերացնել

բացասական երևույթները: Ելնելով դրանից՝ հողերի մոնիթորինգն ապահովում է տեղեկատվություն՝ բնօգտագործման, հողերի պահպանման, պետական հողային կադաստրի վարման, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության կանխատեսման և այլ խնդիրների լուծման համար:

Հողերի մոնիթորինգը պետական տեղեկատվական համակարգ է և տարածվում է բոլոր կարգի հողերի վրա՝ անկախ օգտագործման բնույթից և սեփականության ձևից: Մոնիթորինգին ըստ էության իրենից ներկայացնում է դիտարկումների, հետազոտությունների, հանույթների միջոցով ուսումնասիրվող օբյեկտի վիճակի բնութագրում հետևյալ ցուցանիշներով՝

- հողերի հաշվառում ըստ կարգավիճակների, հողատեսքերի, հողօգտագործողների,
- հողերի վիճակի դիտարկումներ,
- շրջակա միջավայրի վրա ազդեցություն գործող արդյունաբերական օբյեկտների վիճակի դիտարկումներ,
- մաքրիչ կառույցների աշխատանքի վերահսկողություն,
- փոխադրամիջոցների աշխատանքի վերահսկողություն,
- ջրամբարների վիճակի, կոնպոստային հրապարակների, թափոնների և այլ օբյեկտների վերահսկողություն,
- մոնիթորինգի ենթարկվող հողերում տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության փոփոխությունների դիտարկումներ,
- հողերի տնտեսական գնահատման ցուցանիշների փոփոխությունների ուսումնասիրություն:

Կախված դիտարկումների նպատակներից և ներառված տարածքներից, հողերի մոնիթորինգը կարող է լինել համապետական կամ տարածքային: Այն իրականացվում է համապետական և տարածքային ծրագրերին համապատասխան:

Ըստ ժամանակի փոփոխությունների դիտարկումները լինում են՝

- ցիկլային - կապված՝ տարեկան, սեզոնային և բնական այլ փոփոխությունների հետ,
- աստիճանական - կապված զարգացման պատմական գործընթացների հետ՝ էվոլյուցիոն, անդաշնալի,
- մարդածին - կապված մարդու գործունեության հետ,
- արտակարգ իրավիճակային - կապված երկրաշարժերի, սուլանքների, ջրհեղեղների, տարբեր բնույթի վթարմերի և այլ բնական վտանգների հետ:

Հողերի մոնիթորինգի արդյունքներն արտահայտվում են հողային ֆոնդը բնութագրող քանակական և որակական ցուցանիշներով,

բացարձակ կամ հարաբերական տվյալներով, յուրաքանչյուր գործոնի ցուցանիշների բնութագրման համար նախօրոք մշակված սանդղակներով ու գործակիցներով: Յողերի մոնիթորինգի իրականացման ընթացքում պահպանվում են բնական պաշարների կադաստրի և մոնիթորինգի փոխադարձ համատեղելիության և համադրելիության սկզբունքները: Այդ փոխադարձ կապն ապահովվում է կոորդինատների միասնական համակարգով, հողերի համապետական դասակարգումով և այլ գործոններով:

Յողածածկի մարդածիմ՝ Էկոլոգիական ծանրաբեռնվածության ուժեղացումը, որի հետևանքով առաջանում է հողերի դեգրադացում, անապատացում, քիմիական աղտոտում՝ ծանր մետաղներով, ռադիո-նուկլիտներով, թունաքիմիկատներով և հանքային պարարտանյութերով, թելադրում է պահպանման և արդյունավետ օգտագործման անհրաժեշտ ուղղությունները և հանդիսանում է պետական քաղաքականության առաջնակարգ, ռազմավարական նպատակ: Արդյունավետ բնօգտագործման, հողօգտագործման գործում էկոլոգիական հավասարակշռության հասնելու համար հողերի տարածական օգտագործման ընթացքում պահանջվում է սկզբունքային նոր մոտեցում: Այդ խնդիրը լուծելու համար կատարում են հետազոտություններ, ուսումնասիրություններ ու դիտարկումներ՝ իրականացում՝ մոնիթորինգ:

ՀՀ հողային օրենսդրությամբ ամրագրված է, որ հողերի մոնիթորինգը հանդիսանում է հողային ֆոնդի վիճակի դիտարկումների համակարգ, ժամանակին ի հայտ բերելու փոփոխությունները, գնահատելու, կանխատեսելու և վերացնելու բացասական երևույթները: Յողը, համարվելով շրջակա միջավայրի բնական ռեսուրսների շարքում գլխավորը՝ գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոց, և այլ ճուղերի ու օբյեկտների տեղադրման տարածական հիմք, պահանջվում է դիտարկումների համալիր, միջգերատեսչական մոտեցում:

Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ստանալ հողերի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն՝ բարձրացնելու հողի որակական ցուցանիշները, իջեցնելով դիտարկումների համակարգի իրականացման ծախսերի մակարդակը:

Վերջին ժամանակներս հողօգտագործման բնագավառում խնդիր է առաջացել որոշելու շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչների, հատկապես, հողային ռեսուրսների պահպանման միջոցառումների իրականացման վերաբերյալ բոլոր ծախսերը: Այդ հարցի արդիականությունը կապված է այն բանի հետ, որ մի շարք բնական ռեսուրսների, այդ թվում հողային ռեսուրսների վերարտադրությունը հիմք է հանդիսանում է հասարակության վերարտադրության համար:

Յողապահտապանական միջոցառումների վերաբերյալ ծախսերի որոշումը կապված է մեթոդների ընտրության հետ, որոնց մշակումն իր

հերթին կապված է ցուցանիշների համակարգի հետ, ինչը հողային ռեսուրսների հաշվառման և մոնիթորինգի խնդիրն է:

Հողային ռեսուրսների մոնիթորինգի ցուցանիշների համակարգում կարևոր է որոշել այն տվյալները, որոնց հիման վրա կարելի է բնութագրել տարբեր նշանակությամբ հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Այդպիսի տվյալների հավաքումը և վերամշակումը հնարավորություն է տալիս որոշել հողօգտագործման լավագույն տարրերակները՝ ինչպես տնտեսական, այնպես էլ էկոլոգիական առումով: Հողային ռեսուրսների վիճակի և պահպանության վերաբերյալ ցուցանիշները համարվում են շրջակա միջավայրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգի բաղադրիչ մասը:

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը բնութագրվում է բնական պայմանների, տարածքների օգտագործման, տնտեսական պայմանների խայտարդետությամբ: Հաշվի առնելով այդ առանձնահատկությունները հողերի վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց հավաստիությունը պարբերաբար թարմացվում են և ժամանակի առումով արդիականացվում՝ երկրատեղեկատվական ավտոմատացված համակարգի կիրառման միջոցով: Հողերի մոնիթորինգը և հողային կադաստրը դիտվում են որպես երկրատեղեկատվական փոխադարձ կապի բաղադրիչներ:

Հողերի մոնիթորինգի խնդիրն է՝ կազմակերպել և ստեղծել հողային ֆոնդի դիտարկումների համակարգ, ժամանակին բացահայտել փոփոխությունները, տալ գնահատական, կանխատեսել և վերացնել բացասական երևույթները: Ըստ այդմ, հողերի մոնիթորինգը ծառայում է որպես տեղեկատվության ապահովման համակարգ հետևյալ կետերի համար՝

- հավասարակշռված բնօգտագործման և հողերի պահպանության,
- հողային կադաստրի վարման, որի շրջանակներում իրականացվում են հողօգտագործման գրանցումը, հողերի հաշվառումը և հողերի գնահատականը,
- հիմնական մշակաբույսերի բերքատվության կանխատեսման,
- այլ երկրատեղեկատվական համակարգերի և կադաստրների վարման:

Հողերի մոնիթորինգը, որպես դիտարկումների համակարգ իրենից ներկայացնում է գիտատեխնիկական գործունեություն՝ հողային հարաբերությունների, հողերի պահպանության և այլ բնական ռեսուրսների արդյունավետ բնօգտագործման բնագավառներում: Որպես պետական տեղեկատվական համակարգ տարածվում է բոլոր հողերի վրա, անկախ օգտագործման և սեփականության ձևերից:

Հողերի մոնիթորինգը կատարվում է վարչատարածքային հետևյալ հերթականությամբ ու ենթակայությամբ՝

- հանրապետական
- մարզային
- համայնքային:

Տարածքային տեսակետից հողերի մոնիթորինգն իրականացվում է ըստ՝

- վարչատարածքային միավորների, հողօգտագործման միավորների,
- տարբեր էկոլոգիական ռեսուրսների,
- լանդշաֆտակենոգիական համալիրների՝ գետերի, լճերի ջրհավաք ավագանների (ջրամբարներ, աղտոտված տարածքներ, երոզացված տարածք, էկոլոգիական աղետների ու արտակարգ իրավիճակների տարածք և այլն), որոնք չեն հանդիսանում վարչական տարածքների սահմաններին:

Մոնիթորինգի օբյեկտ են համարվում՝

- հողատարածքները,
- հողերի տարատեսակները,
- ռելիեֆի տարրերը,
- բուսականությունը,
- ջրագրական ցանցը և մելիորատիվ համակարգը,
- հողօգտագործման սահմանները, հողօգտագործման և վարչատարածքային միավորները,
- արդյունաբերական և այլ օբյեկտները, որոնք ազդում են էկոլոգիական վիճակի վրա:

## **8.9. Հողերի մոնիթորինգի կառուցվածքը**

Մոնիթորինգը կատարվում է պետական գիտատեխնիկական ծրագրերով և ուսումնասիրությունների տարածքային ընդգրկման տեսակետից լինում է՝ խոշորամասշտաբ, տարածաշրջանային, տեղային:

**Խոշորամասշտաբ** մոնիթորինգը վերաբերում է բնական միջավայրի և կլիմայի գլոբալ փոփոխություններին, որի ծրագրերը գործողության մեջ է դրվում պետական և գյուղատնտեսական մարմինների և գիտությունների ակադեմիայի կողմից:

**Տարածաշրջանային** մոնիթորինգը իրականացվում է սահմանափակ ֆիզիկաաշխարհագրական, մարզային, վարչատարածքային սահմաններով, որոնք ընդգրկում են մեծ տարածքներ (Ղերեդ, Ախուրյան գետերի ավագան, Տավուշի մարզ, Զանգեզուր և այլն):

**Տեղային** մասնակի մոնիթորինգը կատարվում է տարածքային մոնիթորինգից ցածր մակարդակներում:

Հողերի վիճակի փոփոխությունների բնույթի տեսակետից մոնիթորինգը լինում է՝ ֆոնային և իմփակտային, որոնցից ֆոնայինը կատարվում է այն հողերում, որտեղ մարդու գործունեության հետևանքով տեղի է ունեցել հողերի աղտոտում:

Փոփոխությունների ժամանակային բնութագրման տեսակետից մոնիթորինգը լինում է՝ ցիկլային, էվոլյուցիոն, մարդածին, արտակարգ իրավիճակային:

Կախված պարբերական դիտարկումների իրականացման ժամանակամիջոցից, հողերի մոնիթորինգը բաժանվում է 4 խմբի՝

- բազային՝ մոնիթորինգի սկսման պահից,
- օպերատիվ՝ մեկ տարուց պակաս ժամկետում,
- պարբերական՝ մեկ տարի և ավել ժամկետում,
- հետադարձ:

Հողերի մոնիթորինգից ստացված արդյունքներն արտահայտվում են հողային ֆոնդը բնութագրող քանակական և որակական ցուցանիշներով, բացարձակ կամ հարաբերական տվյալներով՝ որոշակի ժամկետի կամ ժամանակաշրջանի համար: Օրինակ, հողատարումը նկարագրվում է հողատարված տարածքի, տեղածկան, փոփոխության, հողահորիզոնի փոփոխման աստիճանի ցուցանիշներով՝

Հողերի մոնիթորինգն իրականացվում է հետևյալ հանույթների, հետախուզությունների և դիտարկումների միջոցով՝

- տեղագրական-գեոռեզիական, քարտեզագրական,
- հողային, ագրոքիմիական,
- երկրաբուսաբանական,
- ագրոնելիորատիվ,
- աղային,
- ռադիոակտիվ:

Հողերի մոնիթորինգի իրականացման եղանակներն են՝

- տիեզերական հանույթներ, մեծ և փոքր ավիացիայի միջոցներով,
- վերերկրյա հետազոտության, հանույթների միջոցով, գուղային տվյալների օգտագործման միջոցով:

Եթե հեռահար դիտարկման միջոցով անհրաժեշտ տվյալների ստացումն անհնար է, ապա կատարվում են դաշտային դիտարկումներ՝ փորձարարչութերում, չափանմուշային հողակտորներում, հենակետերում:

Հողերի մոնիթորինգն իրականացում են՝

- պետական (հողաշինարարական, ագրոքիմիական, հիդրոօդերևութաբանական և այլն) ծառայությունները,

- գիտահետազոտական, նախագծային և հետախուզական կազմակերպությունները, հիմնարկները, փորձարարական տնտեսությունները և կայանները:

## **8.10. Հողերի մոնիթորինգի վարումը**

Հողերի մոնիթորինգն իրականացվում է գիտականորեն մշակված և կառավարության կողմից հաստատված հայեցակարգով: Յայստանի Հանրապետության հողերի մոնիթորինգի հայեցակարգն իրենից ներկայացնում է հենակետային մի փաստաթուղթ, որի հիման վրա մշակվում կամ ճշտվում են մնացած ճյուղային, գիտական, նորմատիվատեխնիկական փաստաթղթերը:

Հողերի մոնիթորինգի ցուցանիշները պետք է համապատասխանեն լիարժեք տեղեկատվության, հավաստիության, համադրելիության և օպերատիվության պահանջներին: Հողերի մոնիթորինգի ելքային տեղեկատվությունը ծևավորվում է հետևյալ տեսքով՝

-քարտեզներ,

-դիագրամներ, քարտոգրամներ,

-աղյուսակներ,

-տեքստեր (Ըկարագրություններ, ակնարկներ, հաշվետվություններ տեղեկանքներ):

Հողերի մոնիթորինգի վարման կազմակերպումը դրվում է հանրապետական և մարզային համապատասխան իշխանությունների և կից հանձնաժողովների վրա:

Մարզերում հավաքագրվում են հողերի տեղային մոնիթորինգի տվյալները, որոնք ուրվագծորեն բնութագրում են համայնքների հողային ֆոնդի, հողատիրությունների և հողօգտագործումների, առանձին դաշտերի, հողակտորների, հողատեսքերի վիճակը:

Հանրապետական մակարդակով մոնիթորինգի ամփոփ տվյալները հավաքագրվում են ըստ մարզերի, ինչպես նաև տարածաշրջանների:

Քարտեզագրական, թվական և այլ նյութերն ու տվյալները, աստիճանաբար տեխնիկական միջոցներով նորացմանը համապատասխան, տարածաշրջանային կենտրոններում գրանցվում են տեղեկատվության կրիչների վրա, իսկ հետագայում իրականացվում է դրանց պարբերաբար թարմացում:

Մարզային մակարդակով հողերի վիճակի ընթացիկ փոփոխությունները գրանցվում և հողային ֆոնդի վիճակի մասին տեղեկատվությունը հրատարակվում են յուրաքանչյուր տարի:

Յինգ տարին մեկ հրատարակվում է հանրապետության, մարզի հողային ֆոնդի վիճակի մասին լրիվ տեղեկատվություն:

Յողերի մոնիթորինգը և դրա հետ կապված գիտահետազոտական, նախագծային աշխատանքներն իրականացվում են պետական բյուջեի հաշվին:

## 8.11. Շողային ռեսուլսների վիճակագրություն

Յողային ռեսուլսների վիճակագրությունը միշտ եղել և մնում է հողային կաղաստրի տեղեկատվական հիմքը: Յողային կաղաստրը հողերի վերաբերյալ իրավական, բնական և տնտեսական վիճակի ստույգ և հավաստի տվյալների անփոփ տեղեկագիր է: Յողային կաղաստրի կառուցվածքը որոշվում է այն անհրաժեշտ վիճակագրության տեղեկատվության բովանդակությամբ, որի հիման վրա լրացվում է հողային կաղաստրի կոնկրետ բովանդակությունը: Մինչև վերջին ժամանակները հողային կաղաստրը սահմանափակվում էր գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակագրության հաշվառմամբ, որը տարվում էր ազգային վիճակագրության վարչության և գյուղատնտեսության նախարարության կողմից:

Յիմնական վիճակագրական հաշվետվության ձև է հանդիսանում հողային հաշվեկշիռը (ձև № 22): Յաշվետվությունը կազմվում է որոշակի հատվածի համար, յուրաքանչյուրը տարին մեկ անգամ (ՅՅ-ում ընդունված է հուլիսի 1-ին): Ներառում է՝

- 1.հաշվետվություն հողային ֆոնդի առկայության և ըստ կարգերի բաշխվածության վերաբերյալ (Վիճակագրության այլուսակում հողերը ներկայացվում են ըստ նպատակային նշանակության, հողօգտագործողների, կարգերի),
- 2.հաշվետվություն՝ ոռոգվող հողերի առկայության, ըստ հողատեսքերի և հողօգտագործողների բաշխվածության մասին:

ՅՅ հողային օրենսգրքի հանաձայն, հանրապետության հողային կաղաստրը բնութագրում է հանրապետության միասնական հողային ֆոնդի իրավական, բնական, քանակական, որակական և տնտեսական վիճակը, որի համաձայն զգալիորեն ընդլայնվել և մեծացել են հողային ռեսուլսների բնութագրման վիճակագրության խնդիրները: Անհրաժեշտություն է առաջացել հողային ռեսուլսների հաշվետվության վիճակագրության վերաբերյալ համալիր մոտեցում ցուցաբերել, ստեղծել շրջակա միջավայրի բաղադրիչներից մեկի՝ հողային ռեսուլսների վիճակագրական ցուցանիշների համակարգ: Յողերի պահպանության և արդյունավետ օգտագործման ցուցանիշների համակարգի մշակման ռեպրում լուծվելիք կոնկրետ խնդիրների թվին են պատկանում՝

- 1.պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հողային ռեսուրսների քանակական և որակական վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովումը,
- 2.հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման միջոցառումների արդյունավետությունը,
- 3.հողապահպանության միջոցառումների վերաբերյալ ծախսերի որոշումը և դրանց արդյունավետությունը,
- 4.հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բնութագրումը,
- 5.միջազգային մակարդակով հողային ռեսուրսների վիճակի պահպանության և օգտագործման վերաբերյալ համեմատական վերլուծությունը:

Հողային ռեսուրսների առկայության ցուցանիշները պետք է անդրադառնան տնտեսական շրջանառության մեջ նոր հողերի ներգրավման, նոր իրացված հողերի փոխակերպման, դրանց վերակուլտիվացման շարժը: Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը վերահսկելու համար կարևոր նշանակություն ունեն հողերի փոխակերպման ցուցանիշները: Հատկապես այն ցուցանիշները, երբ բերդի բարձր արտադրողականության հողերը տրամադրվում են ոչ գյուղատնտեսական նպատակների համար: Ինչ վերաբերում է հողերի որակական ցուցանիշներին, ապա այն պետք է ամրագրի հողերի որակական հատկությունների փոփոխությունը՝ ինչպես բնական երևույթների, այնպես էլ մարդու գործունեության հետևանքով: Այդ տեսակետից կարևոր է բացահայտել արդյունաբերական և կենցաղային թափոններով հողերի աղոտումնան երևույթները:

Հողային ռեսուրսների սահմանափակությունը անհրաժեշտություն է ստեղծում մանրամասն ռւսումնասիրել այն հողերը, որոնք ենթարկվել են ջրային էրոզիայի, աղակալման, գերխոնավացման և այլն: Այդ բոլոր տվյալների հիման վրա կատարված վերլուծություններով և ընդհանրացումներով՝ մեկ միասնական համակարգում պետք է իրականացվի հողատարման միջոցառումների նախագծումը և միջոցառումների իրականացման վերահսկողությունը:

## **8.12. Հողային ֆոնոք եւ կազմը**

1. Հողային ֆոնդի ընդհանուր տարածությունը

1.1.Գյուղատնտեսական հողատեսքեր

- ա) Վարելահող, հա
- բ) Բազմամյա տնկարկներ, հա
- գ) Խոպան հողեր, հա
- դ) Խոտհարքեր, հա
- ե) Արոտներ, հա
- զ) Այլ հողեր

1.2.Բնակավայրերի հողեր

1.2.1. Բնակելի կառուցապատման՝ տնամերձ հողեր, հա, այգեգործական հողեր, հա

1.2.2. Հասարակական կառուցապատման՝ խառը կառուցապատման, հա, ընդհանուր օգտագործման, հա

1.3.Արդյունաբերական, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության

1.3.1. Արդյունաբերական, հա

1.3.2. Գյուղատնտեսական, արտադրության, հա

1.3.3. Պահեստարաններ, հա

1.3.4. Ընդերքի օգտագործման, հա

1.4.Եներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օգտագործման

1.4.1. Եներգետիկայի, հա

1.4.2. Կապի, հա

1.4.3. Տրանսպորտի, հա

1.4.4. Կոմունալ ենթակառուցվածքների, հա

1.5.Հատուկ պահպանվող տարածքներ

1.5.1. Բնապահպանական, այդ թվում՝

ա) արգելոցներ, հա

բ) արգելավայրեր, հա

զ) ազգային պարկեր, հա

1.5.2. Առողջարարական, հա

1.5.3. Հանգստի, հա

1.5.4. Պատմամշակութային, հա

1.6.Հատուկ նշանակության օգտագործման

1.7.Անտառային, այդ թվում՝

ա) անտառներ, հա

բ) թիուտներ, հա

զ) վարելահողեր, հա

դ) խոտհարքեր, հա

Ե) արոտներ, հա

զ) այլ հողեր, հա

1.8. Ձրային տարածքների օգտագործման, այդ թվում՝

ա) ջրանբարներ, հա

բ) լճեր, հա

գ) ջրանցքներ, հա

դ) ջրառտեխնիկական և ջրօգտագործման այլ օբյեկտներ, հա

1.9. Պահուստային հողեր, այդ թվում՝

ա) աղուտներ, հա

բ) ավագուտներ, հա

գ) ճահիճներ, հա

դ) այլ անօգտագործելի հողեր, հա

## 2. Հողերի փոխակերպում

2.1. Գյուղատնտեսական շրջանառությունից դուրս եկած հողատարածքներ

2.1.1. Բնակավայրի կառուցման նպատակով (գյուղական և քաղաքային), հա

2.1.2. Արդյունաբերական օգտագործման, հա

2.1.3. Օգտակար հանածոների և երկրաբանական հետազոտությունների օգտագործման, հա

2.1.4. Տրանսպորտային օգտագործման, հա

2.1.5. Անտառատնտեսության օգտագործման, հա

2.1.6. Զրատնտեսական օգտագործման, հա

2.1.7. Կոչտ քափոնների կուտակման և պահպանման համար, հա

2.1.8. Յեղուկ քափոնների հավաքման և վճասագերծման համար, հա

2.2. Գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավված տարածքներ

2.2.1. Խախտված՝ երկրաբանական հետազոտություններից, շինարարական աշխատանքներից հետո հողերի վերակուլտիվացումից, հա

2.2.2. ճահիճների յուրացումից, հա

2.2.3. Անտառային հողերի յուրացումից, հա

## 3. Բարելավում պահանջող գյուղատնտեսական հողեր

3.1. Հողատարված, հա

3.2. Հողատարման պոտենցիալ վտանգի ենթակա, հա

3.3. Քարքարոտ հողեր, հա

- 3.4.Թվիապատված հողեր, հա  
3.5.Երկրորդական աղակալած հողեր, հա  
3.6.ճահճացած հողեր, հա  
3.7.Աղտոտված հողեր, որտեղ աղտոտիչների քանակը գերազանցում է Մթև-ին, հա
- ա) ռադիոակտիվ նյութերով  
բ) ծանր մետաղներով  
գ) թունաքիմիկատներով  
դ) հոսքաջրերով  
ե) ստուգիչ կետերի քանակը
- 4.Գյուղատնտեսական հողերի բարելավման միջոցառումներ
- 4.1.Զրային մելիորացում
- 4.1.1. Զրային մելիորացման ենթարկված հողերի տարածությունը, հա, այդ թվում՝  
ա) ռոռզման  
բ) չորացման
- 4.2.Քիմիական մելիորացման ենթակա հողերի տարածությունը՝  
պարարտացում, այդ թվում՝  
ա) օրգանական  
բ) քիմիական
- 4.2.1. Մեկ հեկտարին ընկնող պարարտանյութի քանակը, կգ/հա  
4.2.2. Հողից լվացվող պարարտանյութերի քանակը՝  
ա) օրգանական  
բ) քիմիական
- 4.2.3. Թունաքիմիկատների օգտագործումը  
4.2.4. Թունաքիմիկատի միջին քանակը մեկ հեկտարի վրա, կգ/հա
- 4.3.Կենսաբանական մելիորացման ենթակա հողեր, հա  
ա) հողապաշտպան ցանքաշրջանառություն  
բ) սելեկցիոն մշակաբույսերի կիրառում
- 4.4.Ագրոտեխնիկական միջոցառումների ենթարկված տարածությունները, այդ թվում՝ հակաերողին, հակասելավային միջոցառումներ, որից՝  
ա) հողի մշակման հակաերողին մեթոդներով  
դարձավանդում  
բ) դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծում

4.4.1. Քարերից և թփերից մաքրված տարածքներ, հա

4.4.2. Վերակուլտիվացման ենթարկված տարածքներ, հա

այդ թվում՝

ա) վարելահողերի ստեղծման համար

բ) ջրամբարների ստեղծման համար

գ) շինարարական նպատակների համար

4.4.3. Հողի բերրի շերտի տեղափոխում, հա

4.4.4. Բերրի շերտի կուտակում, հա

4.4.5. Աղագերծում պահանջող հողերի տարածություն, հա

5. Հողային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման համար ծախսերը

5.1. Հակաէրոզիոն հիդրոտեխնիկական կառույցների շինարարության և շահագործման ծախսեր

5.2. Հակասելավային կառույցների շինարարության և շահագործման ծախսեր

5.3. Լանջերի դարավանդման ծախսեր

5.4. Դաշտապաշտպան անտառաշերտի ստեղծման և խնամքի ծախսեր

5.5. Հակաէրոզիոն անտառաշերտերի ստեղծման և խնամքի ծախսեր

5.6. Խախտված հողերի վերակուլտիվացման ծախսեր

5.7. Գիտահետազոտական աշխատանքների ծախսեր:

Բերված համակարգը պարունակում է հողային ֆոնդի հիմնական ցուցանիշները, որոնք այժմ օգտագործվում են գյուղատնտեսական վիճակագրության մեջ: Նախագծող մարմինների համար շատ կարևոր են այն տարածքները, որոնք օգտագործվում են թափոնները վնասազերծելու և պահելու համար, քանի որ արտադրության մասշտարային զարգացման պայմաններում կտրուկ մեծացել են թափոնների ծավալները:

Ցուցանիշների համակարգի 2-րդ բաժինը նվիրված է մարդու ներգործության հետևանքով հողային ռեսուրսների փոխակերպման բնութագրին:

Հողերի ցածր կենսաբանական արտադրողականության դեպքում պահանջվում է միջոցառումների համակարգ, որոնք բարձրացնում են հողերի բերրիությունը:

Հողային ֆոնդի այն տարածությունները, որոնք բարելավման պահանջ ունեն, բերված են ցուցանիշների 3-րդ բաժնում: Այստեղ

առանձնացնում են այն հողերը, որոնք կարիք ունեն ոռոգման, էրոզի-  
այի ենթակված են, աղտոտված են արդյունաբերական թափոններով:

Ցուցանիշների 4-րդ բաժնում ընդգրկված են այն տվյալները,  
որոնք բացահայտում են հողային ֆոնդի վրա մարդու բացասական  
ազդեցության չափերը: Խոսքը էրոզիայի, երկրորդային աղակալման,  
քիմիական աղտոտման և այլ բացասական գործընթացների տարած-  
ման չափերի մասին է:

Ցուցանիշների համակարգի 5-րդ բաժնում տրվում են հողա-  
պաշտպան, հողերի արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ  
ծախսերը:

Հողային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտա-  
գործման նպատակով մոնիթորինգի ցուցանիշների համակարգի  
բաժինները աշխատանքի ընթացքում լրացվում և ընդլայնվում են:

Ցուկայական հարաբերություններում հողը մյուս միջոցների  
հետ միասին դիտվում է որպես անշարժ գույք և շուկայական հարա-  
բերությունների առարկա: Ներկայումս լայն աշխատանքներ են տար-  
վում տարբեր կարգավիճակների հողերի գնահատման վերաբերյալ:

Գյուղատնտեսական հողատեսքների գնահատման հիմքում ըն-  
կած է տարբեր կլիմայական գոտիներում ձևավորված հողերի որակա-  
կան հատկություններով հաշվարկված հողային ռենտայի մեծությունը  
(հողի արտադրողականությունը) բանկային տոկոսային դրույթաչափի  
հարաբերությամբ: Այդպիսի գնահատման տվյալների հիման վրա  
որոշվում են հողի հարկը, վարձավճարի, գրավի, հիփոթեքի և այլ  
վճարումների չափերը:

Սակայն, ոչ գյուղատնտեսական հողատեսքների (բնակավայ-  
րերի, արդյունաբերության և այլն) կարգավիճակի հողերի գնահատման  
հիմքում ընկած են դրանց նպատակային նշանակությունը և բազմա-  
նպատակ օգտագործման հնարավորությունները:

Տարբեր կարգավիճակի հողերի գնահատման տվյալներ ունե-  
նալով՝ կարելի է որոշվել հողերի օգտագործման արդյունավետու-  
թյունը, հողերի պահպանության և վերարտադրության համար ծախ-  
սերը, միևնույն ժամանակ ստանալ հողապահտպան, բնապահպա-  
նական միջոցառումների իրականացման ծախսերը, դարանով իսկ՝  
որոշվել տարածքի հողօգտագործման արդյունավետությունը:

Հողերի արտադրողական ունակությունը, որպես արտադրու-  
թյան միջոց՝ դրա արժեքն արդյունաբերության, քաղաքաշինության,  
վերականգնողական, առողջարարական և այլ տեսանկյուններից, հա-  
մարվում է ոչ հաստատում և ժամանակի ընթացքում փոփոխության  
ենթակա կարգավիճակ:

Հողերի որակական ցուցանիշները կարող են՝ ինչպես բարե-  
լավվել մարդու ճիշտ գործունեության հետևանքով, այլև վատանալ

տարրեր աստիճանի աղտոտման և ոչ ճիշտ օգտագործման հետևանքով: Այդպիսի փոփոխությունները կարող են բացահայտվել հողերի տնտեսական գնահատման միջոցով, որը հանդիսանում է հողային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման կարևոր միջոցառում:

## **8.12.Հողերի աղտոտման վերահսկումը Եւ որակի նորմավորումը**

Մեծ նշանակություն ունի հողային ծածկոցի պահպանումը տարրեր բնույթի աղտոտումից: Գյուղատնտեսական հողատեսքերում վերահսկման են ենթակա տարատեսակ պեստիցիդների օգտագործումը՝ դրանց պարունակության և քայլայման արագության առումով: Իսկ քաղաքների և արդյունաբերական ձեռնարկությունների շրջակա տարածքների հողերում վերահսկվում են ծանր մետաղների, բենզապիրենի, դիօքսինների և այլ թունավոր նյութերի բարձր պարունակությունը:

Հայտնի է, որ հողերն աղտոտվում են նաև մթնոլորտային տեղումների միջոցով, որից ելնելով վերահսկման է ենթակա տեղումների մեջ աղտոտիչների առկայությունը: Կարևոր նշանակություն ունի ձնածածկոցի վիճակի վերահսկողությունը, քանի որ դրա հալվելուց հետո աղտոտիչ նյութերը հայտնվում են լանդշաֆտի մակերեսին, ապա՝ ներթափանցում հող: Այդ նպատակով առանձին տեղերում տեղակայվում են հսկիչ կետեր, որտեղից վերցնում են նմուշներ, որոշում սուլֆատի, ամոնիումի իոնը, նիտրատը, pH-ի արժեքը և այլ ցուցանիշներ:

Ամեն տարի թարմացնում են հողերի աղտոտման քարտեզը, որը արժեքավոր տեղեկատվական աղբյուր է հանդիսանում շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքարի միջոցառումներ մշակելու համար:

Հողի վիճակի փոփոխությունները և դրա գնահատումը կատարում են պարբերական դիտարկումների արդյունքների վերլուծման ճանապարհով, փոփոխությունների ուղղության և զարգացման արագության տվյալները նորմատիվների հետ համեմատելով: Հողերի վիճակի չափանիշներն որոշակի ժամանակահատվածում արտահայտվում են ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով: Վիճակի գնահատման ցուցանիշների հիման վրա կազմում են թեմատիկ քարտեզներ, գրաֆիկներ, այլուսակներ, տեղեկագրեր, գիտականորեն կանխատեսում փոփոխությունների զարգացման ուղղությունները, դրանից ելնելով առաջարկում օպերատիվ կառավարման ծրագիր՝ համապատասխան միջոցառումների իրականացնամբ:

Հայաստանի Հանրապետությունում հողերի մոնիթորինգը իրականացվում է ՀՀ Կառավարության առջևեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ գյուղատնտեսության, բնության պահպանության նախարարությունների և բնական ռեսուրսների օգտագործման հետ առնչվող այլ շահագրգիռ գերատեսչությունների միջոցով:

Ուսումնասիրությունների հիման վրա ներկայումս հաստաված է մեկ միասնական նորմատիվ՝ ՍթԽ, որի միջոցով որոշվում է հողատեսքերի, այդ թվում՝ վարելահողերի վնասակար քիմիական նյութերով աղտոտվածության թույլատրելի նակարդակը: Հողի վարելաշերտերում քիմիական միացությունների բաղադրության նորմավորման հիմքում այն գիտակցումն է, որ դրանց մուտքը թույսերի, կնդանիների և մարդու օրգանիզմ սկիզբ է առնում գլխավորապես հողային միջավայրի հետ շփման միջոցով: Հետևաբար, կարևոր խնդիր է՝ բացահայտել այդ շփման վրա ազդող գործոնները:

Հողի վարելաշերտում աղտոտիչների սահմանային թույլատրելի խտություն (ՍթԽ) է համարվում վնասակար նյութերի այն խտությունը, որն ուղղակի կամ անուղղակիորեն չպետք է բացասաբար ազդի մարդու առողջության, ինչպես նաև հողի ինքնամաքրման հատկության վրա:

Սահմանային թույլատրելի խտության նորմատիվները մշակված են այն նյութերի համար, որոնք մթնոլորտային օդի, մակերևույթային կամ ստորգետնյա ջրերի միջոցով անցնում են հող, այնտեղից էլ թափանցում թույսի մեջ, իշեցնելով գյուղատնտեսական մշակաբուժերի բերքատվությունը, վատացնելով ստացված մթերքի որակը:

Այստեղ շատ կարևոր խնդիր է՝ որոշել վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունը տվյալ հողակլիմայական գոտու և հողատիպի համար: Բանն այն է, որ տարբեր ցուցանիշներ ունեցող հողեր ծանր մետաղների և այլ աղտոտիչների վնասագերծման գործում տարրեր բուժքերականություն ունեն: Օրինակ, տարբեր երկրների սևահողերն այս առումով, իրարից միանգամայն տարբեր են: Ուրեմն, որևէ երկում հաստատված ՍթԽ-ն անընդունելի է մեկ այլ երկրի համար:

Բնակելի տարածքների և դրանց հարող հողերի քիմիական աղտոտման մակարդակի գնահատումը կատարվում է այն ցուցանիշներով, ինչ ցուցանիշներով անցկացվում են բնակավայրի շրջակա միջավայրի երկրաքիմիական և հիգիենիկ հետազոտությունները: Այդպիսի ցուցանիշներ են քիմիական տարրերի խտության գործակիցը՝  $K_c$  և աղտոտման գումարային ցուցանիշը՝  $Zc$ :

Հողում վնասակար տարրերի խտության գործակիցը որոշվում է յուրաքանչյուր տարրի փաստացի պարունակության՝  $C$ -ի և դրա ֆոնային՝  $C_f$ -ի ցուցանիշի հարաբերությամբ՝  $K_c = (C / C_f) \%$ :

Յողը և դրա բերրիությունը կազմում են երկրի հիմնական պետական հարստության հիմքը: Դրա համար էլ հողերի բերրիության բարձրացումը հանդիսանում է տնտեսական կարևոր խնդիր: Այդ խնդիրները լուծելու համար կարևոր է իրականացնել հողաբարելավում, որի բնույթը որոշվում է յուրաքանչյուր բնական գոտու հիմնական հողակլիմայական պայմաններով: Յողերի բարելավման մելիորատիվ միջոցառումները հնարավորություն են տալիս բացահայտելու այն ներքին, անհայտ արտադրական հնարավորությունները, որոնք գտնվում են հողում, որպես բաքրնված բերրիություն:

Տիեզերական և վերգետնյա գործոնների բարդ փոխհարաբերությունների ընթացքում զարգանում են տարրեր հողեր: Այդ գործընթացում միաժամանակ տեղի են ունենում հողի բերրի շերտի ձևավորում և քայլքայում: Ամենուր, որտեղ գոյություն ունի կանաչ բուսականություն, տեղի է ունենում նյութերի կուտակում, իսկ ջրի ու քանու ազդեցության ներքո հողի քայլքայում: Սովորաբար կուտակման արագությունը գերազանցում է քայլքայմանը, սակայն վերջինիս գերակայության դեպքում փոքրանում է հողի հզորությունը: Այդ երկու երևոյթների հակադրությունների համատեղ ազդեցությամբ ձևավորվում են հողերը: Դրա համար էլ անհրաժեշտ է տեղային, տարածաշրջանային և համալիր մոնիթորինգ, որի ընթացքում պետք է ուսումնասիրել, հետազոտել ու գնահատել հողի հատկությունների, և առհասարակ, էկոհամակարգերի փոփոխման միտումները:

Յողածածկույթը և ողջ էկոլոգիական հանակարգը տարբեր բնական գոտիներում ու տարածաշրջաններում տարբեր են, սակայն միանման բնակլիմայական պայմաններում՝ ռելիեֆի, բուսական ծածկոցի, բնապատմական պայմանների առումով, նկատվում է հողային ծածկոցի ննանություն: Այդ երևոյթները ցայտուն արտահայտվում են, երբ պարբերաբար կատարվում են տարածքների հողագիտական հետազոտություններ և կազմվում են հողային ծածկոցի քարտեզներ: Յողերի վերաբերյալ բավարար գիտելիքներ ունենալով, հնարավոր է մշակել բարելավման համակարգ, հողերի մշակման և ցանքաշրջանառության արդյունավետ կիրառման և այլ միջոցառումներ: Այս բոլորը հնարավոր է հողերի մոնիթորինգի իրականացման դեպքում:

# ԳԼՈՒԽ 9

## ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԿԵՆԱՅՄՈՒԹՅՈՒՆ

### 9.1. Զրի դերը կենայրութում եւ մարդու կյանքում

Զուրը մեր մոլորակի ամենատարածված անօրգանական միացությունն է: Այն հանդիսանում է բոլոր կենսական գործընթացների հիմքը, թթվածնի հիմնական աղբյուրը ֆոտոսինթեզի գործընթացում: Զուրը կենայրութում ամենուր է՝ օվկիանոսում և ծովերում, ջրամբարներում և գետերում, հողի մեջ և օդում, բոլոր կենդանի օրգանիզմներում, որոնց կենսազանգվածի 80 - 90%-ը չուր է:

Զուրը բնական միջավայրում ամենատարածված էկոլոգիական տարրն է և երկրագնդի բնական հարստության մեջ հատուկ տեղ է գործում: Այն համարվում է անփոխարինելի ռեսուրս և երկրային կյանքի հիմքը: Զուրը փոխարինել կամ արիեստականորեն ստանա՝ հնարավոր չէ:

Բնական պայմաններում ջրային զանգվածը հանդես է գալիս խառնուրդների ձևով: Այն պարունակում է բազմաթիվ լուծված նյութեր՝ աղեր, թթուներ, հիմքեր, գազեր (ածխաթթու գազ, ազոտ, թթվածին, ծծմբաջրածին), հանքային և օրգանական ծագմանը չլուծվող մասնիկներ, ինչպես նաև կենցաղային, գյուղատնտեսական և արդյունաբերական թափոններ:

Զրի որակը կախված է նրանում առկա նյութերի կազմից և խտությունից: Ամենամաքուր բնական ջուրը համարվում է մաքուր տարածի անձևաչորսը, որը նույնպես պարունակում է լուծվող նյութերի որոշակի խառնուրդներ (մինչև 50 մգ/լ): Այն ջրերը, որոնց քաղադրության մեջ առկա են 0,1% լուծվող նյութեր ընդունված է անվանել քաղցրահամ, 0,1 - 0,5%-ը՝ հանքայնացված, 0, 5%-ից քարձրը՝ աղի:

Ցանքի վրա կենդանի օրգանիզմների համար պիտանի է միայն քաղցրահամ ջուրը, որը մոլորակի ջրային պաշարների շուրջ 2,8%-ն է կազմում, ընդ որում, մարդու համար մատչելի ջուրը կազմում է ընդհամենը 0,003 - 0,016%: Այնպես, որ քաղցրահամ ջրի խնդիրը ներկայումս մոլորակի վրա ամենահայտնի էկոլոգիական գլոբալ հիմնախնդիրից մեկն է: Աշխարհում 1 մլրդ մարդ գրկված է մաքուր ջուր օգտագործելու հնարավիրությունից, իսկ բնակչության 20%-ը զգում է դրա անբավարարվածությունը (Յայրապետյան Է.Ս. և ուրիշներ, 2005): Եթե նկատի ունենաք, որ յուրաքանչյուր տարի քաղցրահամ ջրի մի զգալի քանակություն աղտոտվում է ցամաքային տարածքում, կամ

բուսածածկի կրծատման պատճառով դուրս է մնում կենսաբանական շրջապտույտից, ապա պարզ է դառնում, որ անսպառ համարվող ջրային ռեսուրսների քաղցրահամ մասը սպառվող ռեսուրսի է վերածվում:

Քաղցրահամ ջրերի վերականգնումը տեղի է ունենում ջրի շրջապտույտի միջոցով, որը կենսոլորտում իրականանում է՝ գոլորշիացում - մթնոլորտային տեղաշարժ - խտացում - տեղումներ - մակերևութային և ներհողային հոսքեր շղթայով: Զրի մի մասը ներծծվում է հող, արմատներով անցնում է բույսի մեջ և գոլորշիանում տերևային մակերեսից, որն էլ անվանում են կենսաբանական գոլորշիացում կամ տրանսպիրացում:

Տրանսպիրացված ջրի քանակը կախված է բուսական համակեցության տիպից, կենսազանգվածից, կլիմայական գործոններից, տարվա եղանակից և այլ պայմաններից: Տրանսպիրացման մեջ գործակից ունեն անտառները և ճահիճները, ինչը համեմատելի է բաց օվկիանոսից կատարվող գոլորշիացման հետ:

Զուրը համարվում է արդյունաբերության և գյուղատնտեսության ունիվերսալ տնտեսական ռեսուրս, էներգետիկայի և տրանսպորտի, կենցաղային սպասարկման օբյեկտների և առողջապահական-հիգիենիայի հզորագույն միջոց:

Սարդն իր կարիքների համար մեծ քանակությամբ քաղցրահամ ջուր է օգտագործում: Սակայն, ջրի հիմնական սպառողը արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն է: Ամենաշատ ջուր օգտագործող է արդյունաբերությունը՝ լեռնարդյունաբերությունը, մետաղամշակումը, քիմիական, նավթաքիմիական, ցելյուլոզ-թղթի և սննդի արտադրության ճյուղերը: Արդյունաբերությունը ներկայուն բնությունից վերցնում է՝ կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի համեմատ 5 անգամ ավելի շատ մաքուր ջուր, այն բնությանը վերադարձնելով աղտոտված վիճակում: Սակայն, քաղցրահամ ջրի գլխավոր սպառողը հանդիսանում է գյուղատնտեսությունը, որի կարիքների համար ծախսվում է ամբողջ քաղցրահամ ջրերի 60 - 80%:

Ժամանակակից պայմաններում ավելանում է մարդու կենցաղային սպասարկման կարիքների համար պահանջվող ջրի քանակը: Այդ ջրի ծավալները կախված են առանձին տարածաշրջաններից, կյանքի կենսամակարդակից և կազմում է 300 - 700 լ/օր մեկ մարդու համար: Դաշվարկները ցույց են տալիս, որ ապագայում ջրի օգտագործման այդպիսի տեմպերի դեպքում մարդկությունը կարող է կորցնել քաղցրահամ ջրերի ամբողջ պաշարները:

Մեր հանրապետությունում մեկ մարդը օրական ծախսում է 160 լիտր ջուր, իսկ հետագայում այն կկազմի 400 լիտր:

Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը նախատեսում է առանձին ջրային աղբյուրների (Վերգետնյա և ստորգետնյա) ջրե-

ոի օգտագործում՝ սահմանված չափով, չխախտելով վերականգնման գործընթացը, չփոխելով ջրի մակարդակը, ջրամբարների տարածական չափերը, գետերի և լճերի ջրային ու աղային ռեժիմը, ինչպես նաև խնայողաբար օգտագործել ջրերը կենցաղում և արդյունաբերության մեջ:

Զրապաշտապան միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ է ունենալ բազմակողմանի և հավաստի տեղեկատվություն ջրային ռեսուրսների վիճակի վերաբերյալ: Այդպիսի տեղեկատվությունը հնարավոր է ստանալ ջրային ռեսուրսների մոնիթորինգի միջոցով, և դրա հիման վրա կարելի է ստեղծել հավաքված ու մշակված տեղեկատվությունների համակարգ՝ վերգետնյա և ստորգետնյա ջրային պաշարի, որակի ու կարգավիճակի մասին:

Զրային ռեսուրսների մոնիթորինգի ցուցանիշները

Զրային ռեսուրսների մոնիթորինգի միջոցով հնարավոր է ապահովել հանրապետական, տեղական ինքնակառավարման և այլ պատկան մարմիններին անհրաժեշտ տեղեկություններով, հանրապետության առանձին շրջանների ջրաապահովածության, ջրի պահանջարկի, ջրօգտագործման, հոսող ջրերի բնութագրի, հոսող ջրերի աղտոտման աստիճանի, ինչպես նաև աղտոտումից ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումների և այդ միջոցառումների արդյունավետության մասին:

## 9.2. Զրային ռեսուրսների մոնիթորինգի ցուցանիշները

Ստորև բերվում են ջրային ռեսուրսների վիճակի օգտագործման և պահպանման վերաբերյալ ցուցանիշների ցուցակը, որոնք մտնում են ջրային ռեսուրսների մոնիթորինգի և այդ ցուցանիշների գնահատման մեջ:

Անվանումը	Չափի միավորը
1. Զրային պաշարները և ջրի որակը	
1.1. Զրային պաշարները, ընդամենը	հազ.մ <sup>3</sup>
ա) մակերեսային հոսք գետեր (և ջրանցքներ)	հազ.մ <sup>3</sup> /տարի
բ) ջրամբարներ՝	
լոիվ ծավալը	հազ.մ <sup>3</sup>
օգտակար ծավալը	հազ.մ <sup>3</sup>
գ) լճեր և այլ ներքին ջրամբարներ	
լոիվ ծավալը	հազ.մ <sup>3</sup>
օգտակար ծավալը	հազ.մ <sup>3</sup>

դ) գետնաջրեր, ընդամենը փափուկ ջրեր	հազ.մ <sup>3</sup> ,%
իանքային ջրեր	գետնաջրերի ընդհանուր ծավալի մեջ հազ.մ <sup>3</sup> ,%
1.2. Զրային պաշարները 1 մարդու հաշվով այդ թվում՝ խմելու որակով	գետնաջրերի ընդհանուր ծավալի մեջ մ <sup>3</sup> /մարդ
1.3. Զրային պաշարները 1կմ <sup>2</sup> տարածքում	մ <sup>3</sup> /կմ <sup>2</sup>
1.4. Գետերի և ջրանցքների երկարությունը այդ թվում	կմ
ա) I կարգի (մաքուր)	կմ,% 1.04
բ) II կարգի (թույլ աղտոտված)	կմ,% 1.04
գ) III կարգի (աղտոտված)	կմ,% 1.04
դ) IV կարգի (խիստ աղտոտված)	կմ,% 1.04
2. Զրապահանջարկ	
2.1. Զրի ընդհանուր պահանջը այդ թվում՝	հազ.մ <sup>3</sup>
ա) բնական աղբյուրներից	հազ.մ <sup>3</sup>
բ) քաղաքային ջրացանցից	հազ.մ <sup>3</sup>
2.2. Զրի օգտագործումը, ընդամենը այդ թվում՝	հազ.մ <sup>3</sup>
ըստ պահանջի	
ա) տնտեսական նպատակներով	հազ.մ <sup>3</sup>
բ) արտադրական	հազ.մ <sup>3</sup>
այդ թվում՝	
սննդային որակի	հազ.մ <sup>3</sup>
հետևողական օգտագործվող	հազ.մ <sup>3</sup>
շղանաձև	հազ.մ <sup>3</sup>
գ) գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման	հազ.մ <sup>3</sup>
կանոնավոր	հազ.մ <sup>3</sup>

դ) ջրաղբիացում	հազ.մ <sup>3</sup>
Եգյուղատնտեսական ջրամատակարարում	հազ.մ <sup>3</sup>
2.3. Այլ օգտագործողներին ջրի մատակարարում	հազ.մ <sup>3</sup>
այդ թվում՝	
առանց օգտագործման	հազ.մ <sup>3</sup>
օգտագործումից հետո	հազ.մ <sup>3</sup>
	հազ.մ <sup>3</sup>
	հազ.մ <sup>3</sup>
2.4. Ջրի կորուստը փոխադրման ժամանակ	հազ.մ <sup>3</sup>
2.5. Հանքային ջրերի օգտագործում, ընդամենը	հազ.մ <sup>3</sup>
այդ թվում՝	
սննդային բուժման	հազ.մ <sup>3</sup>
բժշկական բուժման	հազ.մ <sup>3</sup>
արդյունաբերական-կենցաղային	
նպատակներով	հազ.մ <sup>3</sup>
2.6. Ստորգետնյա ջրերի օգտագործումը քիմիական տարրերի ստացման համար	հազ.մ <sup>3</sup>
3. Թափվող ջրերի ծավալը, դրանց աղտոտումը և մաքրումը	
3.1. Բնական օբյեկտներ թափվող ջրեր, ընդամենը	հազ.մ <sup>3</sup>
այդ թվում՝	
ա) աղտոտված	հազ.մ <sup>3</sup>
որից՝	
առանց մաքրելու	հազ.մ <sup>3</sup>
անբավարար մաքրված	հազ.մ <sup>3</sup>
բ) նորմատիվային-մաքուր (առանց մաքրման)	հազ.մ <sup>3</sup>
գ) նորմատիվային-մաքրված	հազ.մ <sup>3</sup>
կենսաբանական	հազ.մ <sup>3</sup>
ֆիզիկաքիմիական	հազ.մ <sup>3</sup>
մեխանիկական	հազ.մ <sup>3</sup>
3.2. Աղտոտման քանակը աղտոտումով թափվող ջրերի մեջ	
3.3. Առանձին գետերի ծանրաբեռնվածությունը և այլն:	
4. Ջրային ռեսուրսների պահպանության համար կապիտալ ծախսերը	

4.1.	արդյունաբերական հոսող ջրերի մաքրման կառույցներ	հազ.մ <sup>3</sup>
այդ թվում՝		
	մեխանիկական մաքրման համար	հազ. դր.
	ֆիզիկաքիմիական	հազ. դր.
	կենսաբանական	հազ. դր.
4.2.	կենցաղային հոսող ջրերի մաքրման կառույցներ	
այդ թվում՝		
	մեխանիկական մաքրման համար	հազ. դր.
	ֆիզիկաքիմիական	հազ. դր.
4.3.	Շրջապտուտային ջրամատակարարման համակարգ	հազ. դր.
4.4.	Ջրապաշտպան գոտիներ	հազ. դր.
4.5.	Փոքր գետերի հուների մաքրում	
5.	Ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման ընթացիկ ծախսեր	
5.1.	Արդյունաբերական ձեռնարկությունների ծախսերը ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման համար	
5.2.	Կենցաղային հոսող ջրերի մաքրման կառույցների պահպանման և շահագործման ծախսեր	
5.3.	Ջրային ռեսուրսների պահպանության վերահսկիչ ծառայության ծախսեր	
5.4.	Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և դրանց պահպանության համար գիտահետազոտական աշխատանքների ծախսեր:	
	Ներկա պայմաններում բոլոր մակերեսային ջրերը նախատես- վում է բաժանել 4 կարգավիճակ՝	
1.	Մաքրու ջրեր	
	Պիտանի են բոլոր տեսակի ջրօգտագործման՝ կենցաղային, սննդարդյունաբերության և արդյունաբերության այլ ճյուղերի, առանձին ձկնատեսակների աճեցման համար և այլն:	
2.	Քիչ աղտոտված ջրեր	
	Չեն համապատասխանում կենցաղային ջրամատակարարման պայմաններին, ինչպես նաև մի շարք արդյունաբերական օգտագործման համար, սակայն պիտանի են որոշակի	

նախապատրաստումից հետո: Պիտանի են ձկնաբուծության, բնակչության հանգստի, կենդանիների ջրանատակարարման համար:

**3. Աղոտութված ջրեր**

Օգտագործումը արդյունաբերական նպատակով պահանջուն են պարտադիր վերամշակում: Զկնաբուծության համար այդ ջրերի օգտագործման դեպքում պետք է ուսումնասիրել, արդյոք չեն պարունակում ֆենոլ, յուղեր և այլն:

**4. Խիստ աղոտութված ջրեր**

Այս կարգի ջրերը գործնականորեն պիտանի չեն կենդանիների ջրանատակարարման, բնակչության հանգստի և արդյունաբերության համար:

Ջրային ռեսուրսների մոնիթորինգի ընթացքում մշակվում են վիճակագրական տվյալներ բոլոր կարգավիճակների ջրերի հաշվառման համար՝ ինչպես տարածքային, այնպես էլ գերատեսչական կտրվածքով: Այդ եղանակով վերամշակված ընդհանրացված տվյալները հնարավորություն են տալիս մանրակրկիտ բնութագրել ջրային ռեսուրսները և դրանց օգտագործումը:

Ժամանակակից պայմաններում ջրանատակարարման հիմնական աղբյուր են հանդիսանում ջրամբարները: Ջրամբարների բնութագիրը ըստ տարածաշրջանների ներկայացվում է այսուսակի տեսքով (աղ. 1):

**Աղյուսակ 1**

Ջրամբարի անվանումը	1-10 մլն մ <sup>3</sup> ծավալով			10 մլն մ <sup>3</sup> ծավալից ավելին				
	Ջրամբարների քանակը	Զրի հայելու ընդիանուր մակերեսը, կմ <sup>2</sup>	Զրի ծավալը, մ³	Օգտակար ծավալը, մ³ մ <sup>3</sup>	Ջրամբարների քանակը	Զրի հայելու ընդիանուր մակերեսը, կմ <sup>2</sup>	Զրի ծավալը, մ³	Օգտակար ծավալը, մ³ մ <sup>3</sup>

Զգալի քանակով ջուր է հոսում ջրօգտագործողների ստորգետնյա աղբյուրներից: Այդպիսի ջրաղբյուրների բնութագիրը մոնիթորինգի ընթացքում տրվում է այսուսակ 2-ով:

### Այսուսակ 2

Տարածաշրջան	Տարածաշրջանի տարածքը, կմ <sup>2</sup>	Գնահատվող տարածքը, հազ.կմ <sup>2</sup>	Բնակչության քանակը, հազ.մարդ	Ստորգետնյա ջրերի ընդհանուր շահագործումը	Զրի ընդհանուր ծավալը	Ստորգետնյա ջրերի ժամանակակից օգտագործումը
				մ <sup>3</sup> / տարի	մլն մ <sup>3</sup> / տարի	մլն մ <sup>3</sup> /տարի

Առանձին մարզերի և տարածաշրջանների ջրամատակարարման պահանջը և բնութագիրը տրվում է այսուսակ 3-ով:

### Այսուսակ 3

Տարածաշրջանը	Զրի պահանջը, մլն մ <sup>3</sup> /տարի				
	Ընդամենը	այդ թվում			
		արդյունաբերական	գյուղատնտեսական	ուղարկում	բնակչությունը
		արդյունաբերական կամաց կարգը	տնտեսական կարգը	ընդամենը	բնակչությունը

Քաղաքների և քաղաքատիպ ավանների ջրամատակարարման վերաբերյալ դիտարկումները և բնութագրերը տրվում են աղյուսակ 4-ով:

#### Աղյուսակ 4

Մարզը, տարա- ծաշրջա- նը	Քաղաքների թիվը, բնակավայրի անկանումը	Նաշվառվող օբյեկտների քանակը	Ջրամատակարարումը, հազ. մ <sup>3</sup> /օր			
	Ընդա- մենը	այդ թվում քաղաք- ներ	Քաղաք	Ընդա- մենը	արդյու- նաբերու- թյուն	գյուղական բնակա- վայր

Ներկայում համապատասխան տեղեկատվություն է հավաքվում հոստքաջրերի, արդյունաբերության ոլորտից բաց թողնված ջրերի աղտոտման, գտող-մաքրող կառույցների և այլ օբյեկտների վերաբերյալ, որոնց քանակը կախված է ջրօգտագործումից: Ներկա փուլում դրանց վերաբերյալ տեղեկատվությունը հասարակության լայն շրջանակների կողմից օգտագործվում է ոչ բավարար չափով: Զրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերամշակման ավտոմատացված համակարգի կիրառումով ստեղծվում են տեղեկատվական բանկ և շտենարան, որոնք հնարավորություն են տալիս ջրօգտագործող և ջրամատակարարող սուբյեկտներին լայնորեն իրազեկված լինելու:

Ջրատնտեսական շրջանացման համաձայն մեր հանրապետությունը բաժանվում է 5 «ջրատնտեսական» հանգույցի:

Երևանյան - Քասախ, Ակջուր, Յրազդան, Ազատ և Վեդի գետերի ջրահավաք ավագանների սահմանները,

Գյումրիի - Ախուրյան գետի ավագանը,

Սևանի - Սևանա լճի ջրահավաք ավագանը,

Յարավային - Արփա, Որստան, Ողջի, Մեղրի և այլ փոքր գետեր, որոնք լցվում են Արաքս գետի ավագանը,

Կանաձորի - Դեբեդ, Աղստև, Յախում, Տավուշ և Զուռ գետը թափվող այլ փոքր գետերի ավագանները:

Անբողջ հանրապետության առումով 75 - 95%-ով ջրամատակարարման պայմաններում տարեկան ջրի պակասը կազմում է 800 - 900 մլն մ<sup>3</sup>: Այն լրացնելու համար կառուցվում և կառուցվելու են ջրակարգավորիչ ջրամբարներ և ջրերի տեղափոխումը մեկ ջրավազանից մյուսը:

ճյուղերը	Զրամատակարարումը մլն մ³/տարի	%
Գյուղատնտեսություն	2700	77,0
Արդյունաբերություն	445	12,7
Կենցաղային և տնտեսական սպասարկում	30	10,3

Զրամբարների կառուցումը հանրապետությունում կարևոր և անհրաժեշտ միջոցառում է՝ ջրօգտագործման կարգավորման գործում: Դրանց միջոցով լուծվում են տարածաշրջաններային ջրատնտեսական հիմնախնդիրները, սակայն ջրային հաշվեկշիռը հանրապետությունում մնում է լարված: Ինչպես երևում է այդուսակի տվյալներից, հանրապետությունում խոշոր ջրօգտագործումը գյուղատնտեսության մեջ է, որը ընդհանուր ջրի 77%-ն է կազմում և կանխատեսումների համաձայն այդ ցուցանիշը ապագայում կբարձրանա:

Յայաստանը հայտնի երկրագործական հնագույն շրջաններից մեկն է: Դեռ այժմ էլ պահպանվել են նախառարարութական և ուրարտուական ժամանակաշրջանի ջրատնտեսական կառույցները: Գյուղատնտեսության մեջ ջրատնտեսական շինարարության տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ կապիտալ ներդրումների ծախսահատուցումը մեծ է: Ծախսերի հատուցման ժամանակաշրջանը՝ ոռոգման վրա կատարված կապիտալ ծախսերի մեջ կազմում է 3 տարի, իսկ ջրարբիացման համար՝ 4 - 5 տարի:

Մեծ քանակի ջուր է օգտագործվում արդյունաբերության մեջ, չնայած որ այնտեղ 3 անգամ քիչ ջուր է պահանջվում, քան գյուղատնտեսության մեջ, սակայն այդ նպատակների համար ջրի հաշվեկշիռը և նրա լավացման բնութագիրը պետք է բարձր լինի:

Բարձր ջրօգտագործման գործակից ունի Երևանը: Քաղաքին շուրջօրյա մատուցվում է մեկ րոպեում 10 հազար լիտր մաքուր ջուր: Այդ ջրերից 110 լիտրը մնում է մերձաղաքային օգտագործման, 2300 լիտրը ծախսվում է արդյունաբերության մեջ, իսկ 870 լիտրը կազմում են սպասվող կորուստները: Շատ ջրօգտագործողներ խախտում են ջրի օգտագործման նորմերը, վաստ վիճակում են գտնվում ջրագծերը, ցածր է տեխնիկական հագեցվածությունը: Սակայն ջրի պակասի պատճառներից հիմնականը հանդիսանում է հոսքաջրերի միջոցով մաքուր ջրային աղբյուրների աղտոտումը:

### **9.3. Բնական ջրերի աղտոտման վերահսկումը և որակի նորմավորումը**

Զրային օբյեկտների և ջրամբարների ջրի աղտոտում ասելով հասկանում են դրանց մեջ վնասակար և թունավոր նյութերի նույտք գործելու հետևանքով կենսաբանական և տնտեսական արժեքի անկումը:

Զրային միջավայրի և կենդանի օրգանիզմների վրա ուժեղ բացասական ներգործություն են թողնում թունավոր սինթետիկ նյութերը, որոնք լայնորեն օգտագործվում են արդյունաբերության, տրանսպորտի և կենցաղային սպասարկման ոլորտներում: Այդ միացությունների խտությունը հոսող ջրերում, որպես կանոն, կազմում է 5 - 15 մգ/լ, այն դեպքում, եթե ՍԹԽ 0,1 մգ/լ է:

Ջրերի աղտոտման տարատեսակ է ջերմային աղտոտումը: Ելեկտրակայաններից, արդյունաբերական ձեռնարկություններից հաճախակի արտահոսում է տաք ջուր, որը բարձրացնում է ջրի ջերմաստիճանը, և որի հետևանքով պակասում է թթվածնի քանակը, քազմանում և զարգանում են հիվանդածին մանրէները, ստեղծելով համաճարակային վտանգ:

Զրային միջավայրն աղտոտվում է նաև գյուղատնտեսության ոլորտից, եթե ջրամբար են քափանցում թունաքիմիկատները: Դրանցից բացի հոսքաջրերի միջոցով գյուղատնտեսական հողատեսքերով ջրային էկոհամակարգեր են արտահոսում զգալի քանակությամբ պարարտանյութերի մնացորդներ (ազոտ, ֆոսֆոր, կալիում), ինչպես նաև մեծ քանակով սննդատարրեր պարունակող օրգանական միացություններ՝ անասնապահական ֆերմաներից և ջրահեռացման ցանցերից: Բացի հողում սննդատարրերի պարունակության հարաբերակցության անցանկալի փոփոխությունից, այդ սննդատարրերն ու օրգանական նյութերն առաջացնում են ջրերի կենսածին աղտոտում, ջրամբարների կենսաբանական հավասարակշռության խախտում: Սկզբում կենսածին աղտոտված ջրաէկոհամակարգերում ավելանում է ցածրակարգ բույսերի և ջրիմուների քանակությունը: Զուրը «ծաղկում» է, ջրամբարը ենթարկվում է էվլորֆացման: Սննդանյութերի ավելացմանը այդպիսի ջրամբարների կենսաբանական արտադրողականությունը բարձրանում է, ավելանում են խեցգետնակերպերի, ձկների և ջրային այլ օրգանիզմների տեսակային կազմը և թվաքանակը: Ջրամբարում, միաժամանակ, կուտակվում են մեծ քանակությանը հեշտ քայլայվող օրգանական նյութեր՝ դետրիտ, որի քայլայման գործընթացում մանրէները օգտագործում են ջրի մեջ եղած անբողջ թթվածնը, կուտակվում է ծծմբաջրածին: Զրային միջավայրի վիճակը փոխվում է այն աստիճան, որ դառնում է անօգտագործելի բոլոր տեսակի օրգանիզմների համար: Սկզբում է օրգանիզմների զանգվածային ոչնչացումը: Անգամ բույլ էվլորֆացած ջրերը պիտանի չեն կենցաղային ջրօգտագործման

համար, իսկ ավելի ուժեղ էվտրոֆացված ջուրը նույնիսկ ոռոգման համար պիտանի չէ: Այնպես, որ էվտրոֆացված ջրամբարն աստիճանաբար մահանում է:

Զրերի կենսածին աղտոտման մարդածին աղբյուրների ազդեցությունը և ջրային էկոհամակարգերի էվտրոֆացումը գնալով ահագնացող մասշտաբներ է ստանում ամբողջ աշխարհում, անցյալ դարի 60-70-ական թվականներից սկսած:

**Բնական ջրերի աղտոտման վերահսկումը** մարդկության առջև ծառացած էկոլոգիական ճգնաժամածին բնույթի հիմնախնդիրներից մեկն է: Ջրային ռեսուրսների աղտոտման մասշտաբների անընդհատ մեծացումը, աղտոտման աղբյուրների, բնույթի և քանակի ավելացումը՝ ջրային ռեսուրսների աղտոտման և վիճակի վերահսկողության սուր պահանջ են ներկայացնում, ինչն իրականանալի է միայն ջրային ռեսուրսների մոնիթորինգի արդյունքների հիման վրա:

Ինչեւ նշվեց, անցյալ դարի 60-70-ական թվականներից սկսած մոլորակի վրա ահագնանում է ջրերի կենսածին և օրգանական նյութերով աղտոտումը, որը մեծ վտանգ է ներկայացնում քաղցրահամ ջրային էկոհամակարգերի համար: Օրգանական նյութերով աղտոտված ջրաէկոհամակարգերը կոչվում են սապրոբային (հունարեն՝ հոտած): Ըստ աղտոտվածության աստիճանի, դրանք դասակարգվում են այլիսապրոբային, մեզոսապրոբային (α -մեզոսապրոբային և β - մեզոսապրոբային) և օլիգոսապրոբային:

**Պոլիսապրոբային** ջրաէկոհամակարգերում օրգանական աղտոտիչները մեծ քանակություն են կազմում, թթվածինը՝ անբավարար, իսկ սպիտակուցներն ու ածխաջրերը տրոհվում են:

**Մեզոսապրոբային** ջրերում ածխաթթվի, մեթանի, թթվածնի առկայությանք օրգանական նյութերը հանքայնանում են, բայց սպիտակուցները չեն քայլայվում: Այստեղ առանձնացնում են α - մեզոսապրոբային և β - մեզոսապրոբային գոտիներ:

**Օլիգոսապրոբային** ջրերում գործնականում չկան լուծված օրգանական նյութեր, թթվածնի պարունակությունը բարձր է, ջուրը մաքուր:

Աղտոտումից ջրային ռեսուրսների պահպանումը կատարվում է ջրաէկոհամակարգերի սանհիտարական պաշտպանության պահանջներին համապատասխան: Ջրային էկոհամակարգերի սանհիտարական պաշտպանությունն իրենից ներկայացնում է կազմակերպչական, սանհիտարատեխնիկական և տեխնիկական, իրավաբանական և այլ միջոցառումների համալիր, որի կիրառումը կանխում է ջրամբարների արդյունաբերական, կենցաղային, գյուղատնտեսական և այլ աղտոտումը:

Զրակորհամակարգի սանիտարական պաշտպանության հիմքում դրված է ջրում վնասակար նյութերի հիգիենիկ նորմավորումը և Սթեն-ի հաստատումը: Որպես գործնական միջոցառում պահանջվում է արտադրության տեխնոլոգիաների կատարելագործում, աղտոտված ջրերի նախնական մաքրում և արտահոսքերի կրճատում:

Զրային էկոհամակարգերն օժտված են ինքնամաքրման հատկությամբ: Չափազանց կարևոր այդ հատկության շնորհիվ և արեգակի ճառագայթման ազդեցությամբ էլ տեղի է ունենում ջրի վերարտադրությունը: Ինքնամաքրումը կատարվում է բակտերիաների, սնկերի և ջրիմուռների միջոցով, ինչպես նաև ջրի ամբողջ ծավալով մեկ աղտոտիչ նյութերի քայլայման և նստեցման շնորհիվ: Սակայն այդ ընթացքում բակտերիաները ոչնչանում են և ջրի ուժեղ աղտոտման դեպքուն ինքնամաքրումը դադարում է: Այդ դեպքում ջրի որակը բարելավելու համար անհրաժեշտ է մարդու միջամտությունը, որը կատարվում է տարբեր մեթոդների կիրառումով:

Խնձելու և տնտեսական օգտագործման ջրի որակի բարելավումը կատարվում է՝ պարզեցման, գունազրկման և վարակագերծման միջոցով:

**Զրի պարզեցումը** մեխանիկական գործընթաց է, որը կատարվում է մաղերով անցկացման և կախութային նյութերի նստեցման միջոցով:

**Զրի գունազրկումը** կատարվում է մակարդման, օքսիդացման (քլոր, կալիումի պերմանգանատ, օգոն) և կլանիչների (ակտիվ ածուխ) միջոցով, որի արդյունքում ջուրը մաքրվում է տարբեր գունավորուն ունեցող կոլորիտներից կամ բնական լուծված նյութերից:

**Զրի վարակագերծումը** կատարվում է քլորացման, բակտերիոցիդների, ճառագայթման, օգոնացման և այլ եղանակներով, ջրուն առկա հիվանդածին հարուցիչների և բակտերիաների ոչնչացման նպատակով:

**Զրի որակի նորմավորումը** կատարվում է միջազգային սանիտարական կանոնների և նորմերի համաձայն, ըստ որի խնձելու ջուրը համաճարակաբանական, ճառագայթային և քիմիական տեսակետից պետք է լինի անվտանգ, անվնաս և օրգանիզմի զգացողության համար բարենպաստ բարդադրության:

Զրի որակ ասելով հասկանում են դրա բաղադրության և հատկության բնութագիրը, որը որոշում է պիտանելության աստիճանն ըստ օգտագործման: Զրի որակական ցուցանիշները բնութագրվում են քիմիական վնասակար բաղադրիչների պարունակությամբ, որոնց քանակությունը չպետք է գերազանցի հաստատված նորմերը: Ի վերջո, ջրի որակի որոշման համար հաշվի են առնում օրգանիզմի զգացողությունը

(համ ու հոտ), ջրի ջերմաստիճանը, պարզությունը, գույնը, կոշտությունը, որոնք հաստատագրվում են նորմատիվներով:

Խմելու և կենցաղային օգտագործման ջրի մեջ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունը (Մթխ) աղտոտիչների այն խտությունն է, որն ուղղակի և անուղղակի չպետք է ազդի մարդու օրգանիզմի վրա իր կյանքի անբողջ ընթացքում և հաջորդ սերնդի առողջության վրա, չպետք է վատացնի ջրօգտագործման հիգիենիկ պայմանները:

Ըստ վտանգավորության աստիճանի խմելու և ձկնարդյունաբերական նշանակության ջրերի աղտոտիչները բաժանվում են 4 դասի՝

1. **արտակարգ վտանգավոր՝** բացառապես քսենոբիոտներ են, որոնց Մթխ-ն 0,00001 մգ/լ-ից ցածր է,

2. **բարձր վտանգավորության՝** բացառապես քսենոբիոտներ են, որոնց Մթխ-ն կազմում է 0,0001 - 0,00001 մգ/լ:

3. **վտանգավոր՝** ինչպես քսենոբիոտներ, այնպես էլ բնական ծագման նյութեր են, որոնց Մթխ-ն կազմում է 0,01 - 0,0001 մգ/լ:

4. **չափավոր վտանգավոր՝** հիմնականում բնական ծագման նյութեր են, մասամբ՝ քսենոբիոտներ, որոնց Մթխ-ն բարձր է 0,01 մգ/լ-ից:

Ջրի և ջրային օրգանիզմների համար մեծ վտանգ ներկայացնող աղտոտիչներից են ծանր մետաղները: Չնայած դրանք քսենոբիոտներ չեն, սակայն օրգանիզմներում կուտակվելու մեջ հակում ունեն:

Ընդհանրապես, ջրաէկոհամակարգերում ջրի որակի ցուցանիշները ներկայացվում են հետևյալ խմբերով.

1. համուհոտային (օրգանալեպտիկական)՝ համ, հոտ, կողմնակի համ, գունավորություն, պղտորություն, փրփրոտություն, փառակալում,

2. ջրաքիմիական՝ pH, լուծված թթվածնի պարունակություն, հանքայնացում, կենսածին տարրերի պարունակություն, ֆոտոիդներ, ընդհանուր երկար:

3. ջիմիական թունագորու նյութերի պարունակություն,  
4. մանրէակենսաբանական ցուցանիշներ:

#### **9.4. Ջրային ռեսուրսների մոնիթորինգի մեթոդները**

Ջրապաշտպան միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ է ունենալ բազմակողմանի և հավաստի տեղեկատվություն ջրային ռեսուրսների վերաբերյալ: Այդպիսի տեղեկատվությունը հնարավոր է ստանալ ջրային ռեսուրսների մոնիթորինգի միջոցով:

Զրային էկոհամակարգերի մոնիթորինգը պարբերական դիտարկումների, չափումների և ուսումնասիրությունների համակարգ է, նպատակառուղղված՝ յուրաքանչյուր օբյեկտի ջրերի աղտոտման պատճառները և աղտոտում առաջացնող գործոնները բացահայտելուն, աղտոտման աստիճանը գնահատելուն և ջրերի աղտոտման դեմ պայքարի միջոցառումների մշակման համար տեղեկատվություն տրամադրելուն:

Զրային ռեսուրսների մոնիթորինգի միջոցով հնարավոր է կառավարման մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և նախագծող կազմակերպություններին՝ հանրապետության առանձին շրջանների ջրապահովվածության, ջրի պահանջարկի, ջրօգտագործման, հոսքաջրերի բնութագրի և աղտոտման աստիճանի, ինչպես նաև աղտոտումից ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումների և այդ միջոցառումների արդյունավետության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններով ապահովել:

Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը նախատեսում է առանձին ջրային աղբյուրների (վերգետնյա և ստորգետնյա) ջրերի օգտագործումը սահմանված չափերով, չխախտելով վերականգնման գործընթացները, չփոխելով գետերի և լճերի ջրի մակարդակը, ջրամբարների տարածական չափերը, ջրային և օդային ռեժիմը, ինչպես նաև ջրերի խնայողաբար օգտագործումը կենցաղում և արդյունաբերության մեջ:

Զրային ռեսուրսների մոնիթորինգը կատարվում է կենսահինդկացման և ֆիզիկաքիմիական մեթոդներով, որոնիցից յուրաքանչյուրը նախընտրելի է տվյալ խնդրը լուծելիս, իսկ առավել ամբողջական տեղեկություններ ունենալու համար անհրաժեշտ է կիրառել այդ երկու խումբ մեթոդները միաժամանակ:

Զրային ռեսուրսների մոնիթորինգի ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել ջրի կազմը և որակը, որը կախված է ջրի պարունակած նյութերի կազմից և խտությունից: Պետք է որոշել ջրի պարզությունը, գույնը, համը, հոտը, կախված նյութերի պարունակությունը, pH-ը, կարբոնատների քանակը, ամոնիակի իոնը, նիտրատները, քլորիդները, սուլֆատները և այլն:

## **ԿԵՆԱՍԱՀԻՆԴԻԿԱԳԾՄԱՆ ՄԵԹՈՂՄԵՐՈ**

Զրային ավագանների մոնիթորինգի հիմնական միջոցներից մեկը կենսադիկացման մեթոդն է, որի կիրառման համար հիմնական ինժիկատորներ են հիդրոբիոնտները, այդ թվում՝ ջրիմուռները, որոնք զարգանում են ջրի ամբողջ խորությամբ, հատակին և ընկղղված առարկաների մակերևույթին:

Զրամբարներում բնակվող օրգանիզմների տեսակային կազմը և թվաքանակը կախված է ջրի որակից: Կենսահինդիկացման մեթոդով մոնիթորինգի գլխավոր նպատակն է՝ ուսումնասիրել ջրային միջավայրի կենսապայմանները, որոնք ազդում են այդ միջավայրի կենդանական և բուսական օրգանիզմների գոյության, զարգացման և բազմացման վրա: Այդ պայմանները կարող են մի տեսակի օրգանիզմների համար անբարենպաստ լինել, որի դեպքում դրանք ոչնչացնում են, փոխարենն ի հայտ են գալիս նոր տեսակները:

**Կենսահինդիկացում ջրիմուռներով:** Օրգանական նյութերով աղտոտված ջրային էկոհամակարգի աղտոտման քանակական ու որակական ցուցանիշների որոշման կարևոր ցուցիչ են համարվում ջրիմուռները, որոնց օգնությամբ բնական ջրերի մոնիթորինգն իրականացվում է 4 փուլով:

Առաջին փուլում կատարվում են տեղական դիտարկումներ, արձանագրելով ջրի հոսքը, ափերին կամ ջրում բարձրակարգ բույսերը, ջրիմուռները, ջրի մակերևույթի բուսածածկը, ջրի գույնը (ծաղկումը): Վերջինիս առկայությամբ ջուրը դաշնում է վառ կանաչ գույի, եթե գերիշխում են կանաչ ջրիմուռները և մուգ կանաչ՝ կապտականաչ ջրիմուռների դեպքում:

Երկրորդ փուլում կատարում են ջրիմուռների հավաք երեք բնակատեղերից՝ ջրաշերտից (ֆիտոպլանկտոն), հատակից (բենթոս), ջրում ընկղղված առարկաների մակերևույթից (պերիֆիտոն):

Երրորդ փուլում կատարում են հավաքված նմուշների ուսումնասիրում և գնահատում՝ ըստ ջրիմուռների տեսակի, առանձին տեսակների առատության, ինդիկատոր տեսակների:

Չորրորդ փուլում վերլուծում են արդյունքները, մշակված հատուկ սանդղակով գնահատում օրգանական աղտոտման աստիճանը, գերակայող տեսակներով որոշում սապորության մակարդակը:

**Աղտոտման մակարդակի որոշումը Գուլպաթի և Ուոթլեյի ցուցիչով:** Լճերում և ջրավազաններում ջրի որակի ցուցանիշներն արտահայտվում են ջրում առկա կենսածին տարրերի (ազոտ, ֆոսֆոր, կալիում) հաշվին, ֆոտոսինթեզի ընթացքում ջրային բույսերի սինթեզած օրգանական նյութերի քանակով:

Զրային ավագաններում կենդանական աշխարհի տեսակային կազմը և թվաքանակը պայմանավորված է օրգանական նյութերի

քանակով՝ սննդով ապահովվածությամբ: Կենդանիների և բույսերի մահանալուց հետո, դրանց մարմնի քայլայման հետևանքով փոխվում է ջրի գազային բաղադրկազմը: Զրավագանում այդ փոփոխության հետևանքով սկիզբ է առնում էվտրոֆացման գործընթացը, որի ամենացայտուն արտահայտությունը ջրերի աճառային «ծաղկումն» է: Այն կարելի է հայտնաբերել կենսացուցիչների վարքի ուսումնասիրությամբ: Կենսացուցիչներ կարող են հանդիսանալ մոժակների թրթուրները, սակավախողան որդերը և այլ ցածրակարգ օրգանիզմներ, որոնք բնակվում են օրգանական նյութերով հարուստ տղմային միջավայրում:

Այդ միջավայրի հիդրոբիոնտների տեսակային կազմը և քանակը որոշելու համար ջրավագանի հատակից վերցրած տիղմի նմուշներում հայտնաբերված անողնաշարավորների՝ մոժակի թրթուրների և սակավախողան որդերի քանակով էլ որոշում են էվտրոֆացման աստիճանը՝ թույլ, միջին, ուժեղ:

Թույլ էվտրոֆացման դեպքում այդ նշանները բացակայում են:

Միջին էվտրոֆացման դեպքում նկատվում է միջատների հարսնյակների թվաքանակի ավելացում է, իսկ սակավախողանները հատուկենու են:

Ուժեղ էվտրոֆացման դեպքում հատակային տիղմի մեջ առատ են սակավախողանները, ամուն ընթացքում դիտվում են համատարած կանաչ ջրիմուներ, իսկ ձմռանը՝ ձկների հյուծվածություն և նաև:

Եկոլոգիական առումով խնդիրներ է հարուցում ուժեղ էվտրոֆացումը, որին ենթարկված ջրավագանների առողջացման համար անհրաժեշտ է ջրից հավաքել - հանել բուսագանգվածը, իսկ հատակից՝ տիղմը: Ընդ որում, այդ նյութերը թարմ վիճակում կարելի է մտցնել հող որպես բարձրարժեք օրգանական պարարտանյութ:

Էվտրոֆացման ցուցանիշ կարող է ծառայել նաև Գուղնաթի և Ուտքելի ցուցիչը: Այն որոշելու համար ջրավագանի հատակի որոշակի տարածքներից՝ տիղմի հետ միասին վերցրած նմուշից հավաքում են օրգանիզմները և առանձնացնում երկու խմբի՝ սակավախողանները մի խմբում, մնացածը տեսակներ՝ մյուս: Խմբերում օրգանիզմներն առանձնացնելուց հետո, հաշվում են ցուցիչը հետևյալ բանաձևով՝

$$a = \frac{M}{B} \cdot 100 \%,$$

որտեղ՝

*M* - ը սակավախողան որդերի թվաքանակն է,

*B* - ն բոլոր տեսակի օրգանիզմների թվաքանակն է:

Ցուցիչի որոշումից հետո գնահատում են ջրավագանի աղտոտման աստիճանն ըստ ներկայացված այուսակի:

Զրավագանի վիճակը	Ցուցիչը		
	> 80	60 - 80	< 60
Աղտոտված	#		
Պայմանական աղտոտված		#	
Չաղտոտված			#

Մոնիթորինգի արդյունքների հիման վրա ջրաէկոհամակարգերն ըստ աղտոտվածության աստիճանի դասակարգում են՝

- մաքուր,
- չափավոր աղտոտված,
- չափից ավելի աղտոտված:

### **Ֆիզիկաքիմիական մեթոդները**

Զրի ֆիզիկաքիմիական անալիզները կատարելու համար ջրի նմուշառումը կատարում են ափից 5 - 10մ հեռավորության վրա՝ 0,5մ խորությունից, ապակյա կամ պլատիկ շներով:

Գետային ջրաէկոհամակարգի աղտոտման աղբյուրի (անասնապահական ֆերմա, արդյունաբերական ձեռնարկություն) առկայության դեպքում, զրի նմուշը վերցնում են աղտոտման կետից 500-ական մետր ներքև և վերև:

Արժանահավատ արդյունքներ ստանալու համար ջրի անալիզները պետք է կատարել հնարավորին արագ՝ նմուշառումից հետո, քանի դեռ մանրէների գործունեության հետևանքով ջրի մեջ ֆիզիկաքիմիական և կենսաբանական գործընթացներ տեղի չեն ունեցել: Պղտորության առկայության դեպքում նմուշը ֆիլտրում, նստեցնում են կատարում, կամ մակարդում են:

Բնական և խմելու ջրերի մեջ աղտոտիչ նյութերը շատ փոքր խստություն ունեն, որի համար անալիզներ կատարելիս, ըստ անհրաժեշտության, խտացնում են, մեծացնելով որանց հարաբերական պարունակությունը:

Եկոլոգիական տեսակետից ամենախիստ պահանջները ներկայացվում են խմելու ջրին, որի մեջ աղերի գումարային քանակը չպետք է գերազանցի 1 գ/լ-ը, կողմնակի համ ու հոտ չունենա: Դանքայնացման տեսակետից նույն չափանիշին պետք է բավարարի նաև ոռոգման ջուրը: Դրանց վիճակի վերահսկման նպատակով մոնիթորինգ են իրականացնում գորեք բոլոր՝ ջրաֆիզիկական, ջրաքիմիական, ջրակենսաբանական ուղղություններով: Անալիզները կատարվում են զրի կողշտության, թթվության-հիմնայնության, ծանր մետաղների, պեստիցիդների, թթվածնի և այլ գազերի պարունակության, կարբոնատների,

ֆտորիդների, սուլֆատների, նստվածքների, գույնի, համի, հոտի բացահայտման նպատակով:

Զրի մոնիթորինգի ֆիզիկաքիմիական մեթոդների միջոցով բացահայտվում են ջրի որակական հատկանիշները, նախատեսված նշանակության համար դրանց պիտանիությունը, աղտոտվածության բնույթ ու աստիճանը, մաքրման հնարավոր միջոցներն ու եղանակները:

## **9.5. Զրային ռեսուրսների կադաստրի և մոնիթորինգի Էռլթյունը, Խնդիրները, Նպատակները**

Մեր հանրապետությունում անցնելով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կառավարման և կանխատեսման համակարգին, պահանջվում է ստեղծել դրանց վերաբերյալ բնական, քանակական և տնտեսական ցուցանիշների հուսալի տեղեկատվական բազա: Այդ գործընթացի կարևոր տեղեկատվական համակարգ է համարվում ըստ գերատեսչությունների և առանձին ռեսուրսների ճյուղային կադաստրը:

Զրային ռեսուրսների կադաստրն իրավական, բնական, քանակական, որակական և տնտեսական ցուցանիշների ստույգ և հավաստի տվյալների տեղեկագիր է, որը տրվում է պետական գերատեսչական, մարզային, տեղական ինքնակառավարման մարմիններին ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ճշշտ բնօգտագործման և դրանց զարգացման համար: Զրային ռեսուրսների կադաստրի վարման նպատակով իրականացվում է մոնիթորինգ (պարբերական դիտարկում), որն ապահովում է արդյունավետ բնօգտագործման վերահսկողությունը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր համակարգում, ինչի համար էլ ստեղծվում է բնական ռեսուրսների մոնիթորինգի համակարգ:

Զրային ռեսուրսների մոնիթորինգն իրենից ներկայացնում է ջրային պաշարների վիճակի դիտարկումների համակարգ, որի խնդիրն է ժամանակին ի հայտ բերել այդ բնառեսուրսի վիճակի փոփոխությունները, գնահատել կանխել բացասական երևոյթները և վերացնել հետևանքները:

Ելնելով դրանից ջրային ռեսուրսների մոնիթորինգը ապահովում է տեղեկատվություն՝ ջրօգտագործման, ջրային պաշարների պահպանության, բարելավման, վերականգնման համար:

# ԳԼՈՒԽ 10

## ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

### 10.1. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մթնոլորտային օդը հանդիսանում է կենսոլորտի բաղադրիչներից մեկը: Այն իրենից ներկայացնում է երկրագնդի գազային թաղանթի մի մասը, որը մոլորակի հետ պտտվում է որպես մեկ ամբողջություն: Մթնոլորտը բաղկացած է առանձին շերտերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը և ֆիզիկաքիմիական հատկությունների ուրույն բնութագիրը: Պայմանականորեն ընդունված է մթնոլորտը բաժանել երկու մեծ բաղադրիչ մասերի՝ վերնոլորտի և ներքնոլորտի: Վերջինս նպարու համար առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այնտեղ են ընթանում հիմնական օդերևութաբանական գործընթացները, որոնք զգալի ազդություն ունեն մթնոլորտային օդի աղտոտման գործում:

Ներքնոլորտում է գտնվում տիեզերական և մարդածին փոշու, ջրային գոլորշու, ազոտի, թթվածինի և հներտ գազերի մեծ մասը: Գործնականում այն շատ բափանցիկ է, որի միջով անցնում են արևի կարճալիք ճառագայթները: Միաժամանակ, այնտեղ առկա ջրային գոլորշիները, ածխաքրուն, օգոնը բավական ուժեղ կլանում են արևի երկարալիք՝ ջերմային ճառագայթումը, որի հետևանքով ներքնոլորտը տաքանում է: Այդ տաքացումը պատճառ է հանդիսանում օդի ջերմաստիճանի ուղղաձիգ փոփոխությանը, ջրային գոլորշիների խտացմանը, ամպերի ձևավորմանը և տեղումնի առաջացմանը:

Ներքնոլորտում՝ վերընթաց յուրաքանչյուր 100մ բարձրության վրա ջերմաստիճանն իջնում է  $0,5 - 0,6^{\circ}\text{C}$ -ով: Մթնոլորտի գետնամերձ շերտում ջերմաստիճանային ննան վարքը կլիմայի և դրա բնութագրերի ձևավորման պատճառ է հանդիսանում:

Բնական բոլոր գործնթացներում մթնոլորտի դերը չափազանց մեծ է: Երկրագնդի շուրջը մթնոլորտային շերտի առկայությունը որոշում է երկրի մակերևույթի և ողջ մոլորակի ջերմային ռեժիմը, պաշտպանում է երկիրը տիեզերական կարճալիք ճառագայթումից, երկնաքարերի «հեղեղից»: Մթնոլորտի շրջապտույտը ազդեցություն է գործում տեղանքի կլիմայական պայմանների վրա, իսկ դրանց միջոցով՝ գետերի ռեժիմի, բռնական և հողային ծածկույթների, կենդանական աշխարհի, ինչպես նաև ռելիեֆ առաջացնող արտածին գործնթացների վրա:

Մթնոլորտային օդը դասվում է բնության անսպառ ռեսուրսների շարքին: Սակայն, դրա բաղադրակազմն առանձին շրջաններում կարող է այն աստիճան խորը փոփոխվել, որ օդն անպետքանա, որակապես

սպառվի: Այդ պատճառով մթնոլորտային օդը համարվում է այնպիսի բնական ռեսուրս, որի ինքնամաքրման համար մշտապես անհրաժեշտ է հոգ տանել:

Մթնոլորտի ներքին շերտերի գազերի բաղադրությունը անփոփոխ է, և հենց այդ բարդ գազախառնուրդն է կոչվում օդ: Չոր մթնոլորտային օդի կազմությունը բերված է աղյուսակ 7-ում:

#### Աղյուսակ 7

##### Մթնոլորտային օդի բաղադրությունը

Դիմնական գազերի անվանումը	Բաղադրությունն ըստ ծավալի, %	Դարարերական գանգվածը, կգ/մոլ
Ազոտ	78,09	28
Թթվածին	20,95	32
Արգոն	0,93	39
Ածխաթթու գազ	0,03	44
Նետոն	$1,8 \cdot 10^{-3}$	20
Ռելիում	$5,2 \cdot 10^{-4}$	4
Կրիպտոն	$1,0 \cdot 10^{-4}$	83
Քսենոն	$8,0 \cdot 10^{-6}$	131
Զրածին	$5,0 \cdot 10^{-5}$	2
Օզոն	$1,0 \cdot 10^{-6}$	48

Մթնոլորտի աղտոտումը, հիմնականում, մարդածին բնույթ ունի: Արդյունաբերության և տրանսպորտի գարգացմանը զուգընթաց մթնոլորտ են թափանցում նոր տիպի աղտոտող նյութեր՝ զանազան գազեր, մուր, փոշի, ծուխ և այլն: Այդ երևույթը մթնոլորտի տեխնածին աղտոտում է, որը հսկայական մասշտաբների է հասել:

Մթնոլորտի տեխնածին աղտոտում ասելով հասկանում ենք մարդու գործունեության տարբեր ոլորտներից (արդյունաբերություն, տրանսպորտ, գյուղատնտեսություն, ռազմական տեխնիկա, ավիահեռթիությին տեխնիկա և այլն) զանազան պինդ և հեղուկ նյութերի, գազերի, գոլորշիների ներթափանցումը մթնոլորտ, որոնք նեծացնում են դրա խսության բնական ֆոնը և անբարենպաստ, հաճախ աղետալի ազդեցություն են ունենում կենդանի օրգանիզմների վրա, վատթարացնելով կյանքի պայմանները:

Մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները բնական, արտադրական և կենցաղային գործընթացներն են: Այս տեսակետից էլ աղտոտման ուղիները բաժանվում են հետևյալ խմբերի՝

1. բնական ծագման աղտոտում՝ հրաբուխներից, քամիներից, անտառային հրդեհներից, տարբեր (հանքային, բուսական,

կենդանական, մանրէակենսաբանական) ծագման աղտոտիչներով,

2. աղտոտում, որն առաջանում է օրգանական վարելիքի այրման օջախներից՝ արդյունաբերության ու ջեռուցման համակարգերից, փոխադրամիջոցների (առանձնապես՝ ներքին այրման շարժիչով) աշխատանքից,
3. աղտոտում, որն առաջանում է արդյունաբերական թափոնների քայլայման և մթնոլորտ արտանետման հետևանքով,
4. աղտոտում, որն առաջանում է թափոնների այրումից և էկոլոգիապես աննաբռուր տեխնոլոգիաներով վերամշակումից:

Համեմատաբար փոքր տարածքի վրա մեծ քանակությամբ արդյունաբերական ձեռնարկությունների առկայությունը, փոխադրամիջոցների առատության հետ միասին զգալիորեն վատթարացել է մեր հանրապետության, հատկապես, խոշոր քաղաքների օդային ավազանների վիճակը: Մթնոլորտը աղտոտող հզոր ձեռնարկություններ կան Երևանում, Արարատ և Յրազդան քաղաքներում՝ ցեմենտի գործարանները, Ալավերդու և Քաջարանի լեռնամետալուրգիական ձեռնարկությունները, Վանաձորի քիմիական կոմբինատը և այլն:

Օդային միջավայրն արդյունաբերական արտանետումներից գերծ պահելու ամենաիրական և հեռանկարային միջոցառումը հանդիսանում է արտադրության տեխնոլոգիաների բարելավումը՝ սակավ թափոններով, առանց թափոնների և փակ տեխնոլոգիական գործընթացների իրականացումը: Արդյունավետ միջոցառումներից է աստիճանական անցումը անթափոն արտադրության, որը կապված է մեծ ծախսերի հետ: Գազային և փոշեկերպ արտանետումները հավաքող սարքավորումների տեղադրումը նույնպես մեծ ծախսերի հետ է կապված, որոնք կազմում են ձեռնարկությունների ներդրման ամբողջ արտադրական ֆոնդերի 40-50%-ը:

Մթնոլորտային օդի ամենատարածված աղտոտողները համարվում են ներքին այրման շարժիչները: Վերջին ժամանակներս լուրջ միջոցառումներ են ձեռնարկում մթնոլորտի աղտոտման գործուն ներքին այրման շարժիչներով աշխատող ավտոմոբիլային տրանսպորտի ներգործությունը նվազեցնելու ուղղությամբ: Դրանք ուղղված են արտանետումների պակասեցմանը, բանուկ գագերի վնասակար ազդեցության չեղոքացնանք: Իսկ էլեկտրաշարժիչներով ավտոտրանսպորտի ներդրումը համարվում է լավագույն միջոցներից մեկը:

Անշուշտ, բնական ճանապարհով նույնպես մթնոլորտն աղտոտվում է, սակայն մարդածին արտանետումներն ոչ միայն անհամեմատ շատ են, այլև համարվում են ամենավտանգավորները: Ներկայուն բնական ճանապարհով մթնոլորտ արտանետված նյութերի հետ միասին օդի բաղադրիչ մաս են կազմում նաև այնպիսիք, որոնք

նախկինում չեն եղել, ի թիվս դրանց՝ հազարավոր տեսակի սինթետիկ նյութեր:

Մթնոլորտը, բացի գազերից, պարունակում է պինդ մասնիկներ, որոնք օդային միջավայր են ներթափանցել երկրի մակերևույթից (այրված նյութեր, հրաբխային փոշի, հողի մասնիկներ, տիեզերական փոշի, բուսական ու կենդանական ծագում ունեցող տարրեր նյութեր և այլն): Բացի այդ, օդը պարունակում է ջրային գոլորշիներ, որոնք մթնոլորտում կարևոր դեր են խաղում: Տարբեր կենսահամակարգերի համար մեծ նշանակություն ունեն մթնոլորտի մեջ մտնող երեք հիմնական գազերը՝ թթվածինը, ածխաթթու գազը և ազոտը, որոնք մասնակցում են նյութերի կենսաբանական շրջանապույտին:

*Թթվածինն* առանձնահատուկ կարևոր դեր ունի մեր մոլորակի կենդանի օրգանիզմների կյանքում, շնչառության համար: Թթվածինը մթնոլորտ է առարվում ֆոտոսինթեզ կատարող օրգանիզմների՝ կանաչ բույսերի կենսագործունեության շնորհիվ:

Անդրմանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ թթվածնի հաշվին առաջանում է օգոն, որը կուտակվելով ձևավորվում է մթնոլորտի օգոնային շերտը: Այն՝ որպես գերկարճալիք ճառագայթներ կլանող, նվազեցնում է երկրի մակերևույթ հասնող ճառագայթնան մակարդակը, երկիրն ու կենդանի օրգանիզմները հուսալիորեն պաշտպանելով անդրմանուշակագույն ճառագայթնան մահացու չափարաժիններից:

Թթվածնի հիմնական պաշարները կենտրոնացված են կրաքարի, օրգանական նյութի, երկարի օքսիդի մեջ, մի մասն էլ լուծված է ջրում: Մթնոլորտում ֆոտոսինթեզի հետևանքով արտադրված և օրգանիզմների կողմից օգտագործվող թթվածնի քանակների միջև մոտավորապես հաստատված է հավասարակշռություն: Սակայն, վերջին ժամանակներում, մարդու գործունեության հետևանքով մթնոլորտում թթվածնի պակաս է զգացվում, վտանգ է ներկայացնում օգոնային շերտի քայլայման երևույթը:

*Ածխաթթու գազը* (ածխածնի երկօքսիդ) ֆոտոսինթեզի ընթացքում մասնակցում է օրգանական նյութի ստեղծմանը: Ինչպես թթվածինն, այնպես էլ ածխաթթու գազը մտնում են հողի, բույսերի կենդանիների կազմի մեջ, մասնակցում է բնության մեջ նյութերի շրջապույտին: Ածխաթթվի բաղադրությունը օդի մեջ երկրագնդի բոլոր հատվածներում, գրեթե նույնն է: Բացառություն են կազմում խոշոր քաղաքները, որտեղ այդ գազերի բաղադրությունն օդում լինում է միջին ցուցանիշից բարձր: Ածխաթթվի քանակությունն օդում շատ է տատանվում օրվա ընթացքում, տարվա սեզոններին, որը կախված է ինչպես բուսականության կենսագործունեությունից, այնպես էլ մարդու գործունեությունից:

**Ազոտը** հանդիսանում է կենսածին անփոխարինելի տարր, քանի որ այն մտնում է սպիտակուցների և նուկլեինային թթուների կազմի մեջ: Մթնոլորտն ազոտի հիմնական մատակարարողն է բնության մեջ, սակայն կենդանի օրգանիզմների գերակշիռ մասն անմիջականորեն չի կարող օգտագործել այդ ազոտը, այն պետք է նախապես կապված լինի քիմիական միացությունների ձևով: Ազոտի հիմնական մասը հողի և ջրի մեջ ներթափանցում է կենսաբանական կլանճան միջոցով: Գոյություն ունեն հսկայաբանակ բակտերիաներ և կապտականաչ ջրինուներ, որոնք ընդունակ են կլանել մթնոլորտային ազոտը: Դրանց գործունեության հետևանքով և օրգանական նյութերի քայլայումից հողի մեջ կուտակված ազոտի հաշվին ինքնասում օրգանիզմները հնարավորություն են ստանում յուրացնել իրենց անհրաժեշտ ազոտը: Ազոտի շրջանառությունը սերտորեն կապված է ածխաթթվի շրջանառության հետ: Օդի այլ բաղադրիչները չեն մասնակցում կենսաքիմիական շրջանառությանը, սակայն մեծ քանակությամբ աղտոտիչների ներկայությունը մթնոլորտում հանգեցրել է այդ շրջանառության խանգարմանը:

Մթնոլորտային օդը պահպանելու և աղտոտումը վերահսկելու համար անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվություն, որը հնարավոր է ծեռք բերել վիճակագրության և օդի մոնիթորինգի միջոցով: Այդ տեղեկատվությունը լրացվում է ստուգիչ ու վերստուգիչ կետերի և մարմինների կողմից կատարված չափումների ու դիտարկումների տվյալներով: Կազմում են համապատասխան հաշվետվություններ՝ առանձին տարածքների օդային ավազանների պահպանության արդյունավետության համար, որոշում են մթնոլորտի պահպանության վերաբերյալ նախատեսվող ծախսերի հերթականությունը և կազմում միջոցառումների նախագծեր՝ տարբեր տարածաշրջանների համար:

## 10.2. Մթնոլորտային օդի մոնիթորինգի մեթոդները

Մթնոլորտային օդի վիճակի գնահատումը կարելի է դիտել թե՝ որպես կլիմայական, թե՝ աղտոտման մոնիթորինգ: Ընդ որում, առաջին դեպքում հետազոտվում է օդերևույթաբանական հիմնական մեծությունները, երևույթները, կանխանշանները (օդի ջերմաստիճանն ու խոնավությունը, քամիները, ամպերի տեսակները, տեղումները, բուսածածկի առկայությունը, հողի վիճակը):

Մթնոլորտային օդի վիճակի գնահատումն իրականացվում է մոնիթորինգի՝ քիմիական, ֆիզիկական և կենսացուցման մեթոդներով:

Կենսացուցման մեթոդներից մեծ կիրառություն ունի ծառերի, քարաքոսերի և մամուռների վիճակի ուսումնասիրությունը: Իսկ քիմիա-

կան մեթոդներից օգտվում են օդի մաքրությունը, փոշոտվածությունը և թթվությունը գնահատելիս՝ ձնածածկի և տեղումների ուսումնասիրության միջոցով:

### **ԿԵՆՍԱՀԱԻՂԻԿԱԳԾԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Բուսականության վրա մարդածին ազդեցությունն արտահայտվում է մթնոլորտն աղտոտող նյութերի քանակով, որոնցից են ծծմբի երկօքսիդը, ազոտաթթուն, ածխաջրածինը և այլն: Դրանցից ամենաբնորոշը համարվում է ծծմբի երկօքսիդը, որն առաջանում է ծծումբ պարունակող վառելանյութերի այրումից, (ջերմաէներգետիկա, ջեռուցման համակարգեր, տրանսպորտ և այլն):

Տարբեր բույսերի դիմադրողականությունը ծծմբի երկօքսիդի հանդեպ տարբեր է: Օդում դրա աննշան քանակությունը լավ արձանագրում են քարաքոսերը, մամուռները: Ավելի ուժեղ ազդեցությունից բույսերը ոչնչանում են. ծառա-թփատեսակներից՝ սկզբում թփատեսակները, ապա՝ լայնատերև ծառերը, հետագայում՝ ամբողջ բուսականությունը:

Ծծմբի երկօքսիդի հանդեպ բարձր զգայունություն ունեն փշատերև ծառերը՝ եղևնի, սոճի, գիհի և այլն, որոնք ել կարող են ծառայել որպես կեսացուցիչ: Ծծմբի երկօքսիդով օդի աղտոտելու դեպքում նկատվում է սոճու փշատերևների անժամանակ տերևաթափ, մաքուր տարածքի համեմատ 30-60%-ով:

Աղտոտված մթնոլորտը տերևային վնասվածքներից բացի ազդում է նաև բույսի վերարտադրողականության վրա: Նվազում են ծառերի ելունդների և դրանցում սերմերի թիվը, ծառերի ամենամյա աճը և այլն:

Բարձր արդյունավետություն ունի քարաքոսերով կենսահաղիկացումը: Բանս այն է, որ քարաքոսներն ավելի շատ հանքային նյութեր կլանում են օդից՝ փոշու և անձրևաջրերի մեջ լուծված վիճակում: Դրանց կենսազանգվածի քիմիական անալիզների արդյունքներով ել կարելի է պատկերացում կազմել օդի աղտոտվածության (օրինակ՝ ծանր մետաղներով) մասին:

Արդյունավետ է նաև կենսահաղիկացումն՝ ըստ քարաքոսերի հանդիպելու հաճախականության:

Մի շարք բույսերի համար հաստատված են մթնոլորտում ծծմբի երկօքսիդի այն քանակները, որոնք թույլատրելի են նորմալ կենսագործունեության համար: Սահմանված Սթեն-ն (մգ/մ<sup>3</sup>) մարգագետնային տիմոֆեսկայի և յասամանի համար կազմում է 0,2, կծոխուրի համար՝ 0,5, վարսակի համար՝ 1,0: Մթնոլորտային օդի մեջ այլ աղտոտիչ գազերի (քլորաջրածնի, ֆլորաջրածնի) հանդեպ զգայուն են՝ ցորենը,

Եզիապտացորենը, հատապտուղներից՝ Ելակը, ծառերից՝ Եղևնին, ակացիան և այլն:

Օդի մեջ ֆոտորաջրածնի հանդեպ դիմացկուն են բամբակենին, կարտոֆիլը, վարդը, ծխախոտը, լոլիկը, խաղողը, իսկ քլորաջրածնի հանդեպ դիմացկուն են խաչածաղկավորները, հովանոցավորները, մեխակազգիները, բարդածաղկավորները և այլն:

### **Ֆիզիկաքիմիական մեթոդները**

Չնածածկն իր մեջ կուտակում է այն բոլոր նյութերը, որոնք առկա են մթնոլորտում: Այդ տեսակետից ձյունը հանդիսանում է օդի մաքրության յուրահատուկ ցուցիչ:

Կախված աղտոտման աղբյուրներից, ձյան բաղադրությունը փոխվում է: Իսկ մարդածին աղտոտող աղբյուրներն (փոխադրամիջոցները, ջերմաէներգետիկան, արդյունաբերական ձեռնարկությունները) ու աղտոտիչ նյութերը բազմազան են: Յուրաքանչյուր աղբյուրի համար գոյություն ունեն բնութագրիչ աղտոտիչներ: Օրինակ, ջեռուցման համակարգերից, երկարգծի ցանցից, ջերմահանգույցներից և աղտոտման այլ աղբյուրներից մթնոլորտում կուտակվում է ծծմբի միացությունների մեջ քանակություն:

Տեղեկատվական լավ ցուցանիշ է ձնիալի ջրի թՀ-ի մեջությունը: Սովորական, չաղտոտված ձյան ջրի թՀ-ը լինում է 5,5 - 5,8: Մինչդեռ, օրինակ, մետաղամշակման ձեռնարկությունների, ՁԲԿ-ի մոտ տարածությունների թՀ-ը լինում է հիմնային և թույլ հիմնային ռեակցիավ, ինչը կապված է օդից թափվող մոխրի մասնիկների հետ, որոնք պարունակում են հիդրոկարբոնատներ, կալցիում, մագնեզիում:

Ածխածնի, ազոտի, ծծմբի օքսիդներ պարունակող արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումներով աղտոտված տարածքներում, մայրուղիների երկայնքով ձնածածկի թՀ-ն իջնում է թթվայինի ռեակցիայի կողմը:

Չնածածկի նմուշի անալիզները կատարում են տարեկան մեկ անգամ, ձմռան վերջում: Նմուշը վերցնում են ձյան ամբողջ հաստությունից, առանձին անանների մեջ: Չյունը հալվելուց հետո, սենյակային ջերմաստիճանում, կատարում են անալիզ, որոշում՝ ձյան թՀ-ը և թիմիական բաղադրությունը:

### **Օդի աղտոտման գնահատումը փոխադրամիջոցների բեռնվածությամբ**

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր են համարվում ջերմային էներգետիկան, ջեռուցման համակարգերը, արդյունաբերական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտը:

Ներքին այրման շարժիչավոր փոխադրամիջոցներից արտա-նետված գազերը պարունակում են 200-ից ավելի քիմիական միացու-թյուններ և տարրեր, որոնց մեջ գերակշռողը հանդիսանում են ածխածնի և ազոտի օքսիդները, ածխաջրածնները, ծծմբի միացու-թյունները (աղ. 8):

#### Աղյուսակ 8

**Փոխադրամիջոցների մթնոլորտ արտանետած վնասակար նյութերի բաշխվածությունն ըստ տեսակների, 2000-2005 թթ.**

Վնասակար նյութեր	Ըստ տարիների աղտոտիչ նյութերը, տոննա					
	2000	2001	2002	2003	2004	2005
Ազոտի օքսիդներ	6070	9160	9232	12002	12819	12291
Ցնորող օրգանական նյութեր	15460	28210	25562	27782	30966	27219
Ածխածնի օքսիդներ	103790	98040	93341	107346	119775	106632
Ծծմբի երկօքսիդ					360	247
Ընդամենը	125320	135410	128135	147610	164378	146873

Փոխադրամիջոցների արտանետած գազերի քանակությունն ըստ տարածքների և ժամանակի տարրեր են: Բնակելի տարածքներում, ըստ նորմերի, փոխադրամիջոցների բողարկումը ընդունված է գնահատել մեթենա/Ժամ միավորով:

Փոխադրամիջոցների բեռնվածությունը որոշելու համար բնու-թագրական վայրերում (ցանկալի է խաչմերուկներից ու կուտա-կումներից հեռու) ընտրում են ուժգին, միջին և ցածր բեռնվածությամբ երթևեկելի փողոցներ, ապա երթևեկության երկու ուղղություններով կատարում մեթենաների հաշվում՝ ըստ տեսակների: Հաշվառման նույն կետում հնարավոր է միաժամանկ կատարել տարաբնույթ դիտարկումներ՝

- օրվա տարրեր ժամերին՝ օրական փոփոխություններ,
- շաբաթվա տարրեր օրերին՝ շաբաթական փոփոխություններ,
- տարվա տարրեր եղանակներին՝ սեզոնային փոփոխություն:

Դիտարկումների հիման վրա կազմում են հաճապատասխան աղյուսակներ և գրաֆիկներ: Դրանց միջոցով կարելի է համեմատական վերլուծություն կատարել և գնահատել փոխադրամիջոցներով տա-րածքի ծանրաբեռնվածության աստիճանը:

## **Օղի փոշոտվածությամ որոշումը**

Այդ նպատակների համար ճանապարհների մոտակայքում ընտրում են նույն տեսակի 5 ծառ: Յուրաքանչյուր ծառի 1 - 1,5մ բարձրությունից վերցնում են 10-ական տերևները և տեղադրում ամանների մեջ: Առանձին ամաններում տեղադրում են ճանապարհից հեռու տարածություններից վերցրած ստուգիչ տերևներ: Դրանց վրա լցնում են բորած ջուր, խնամքով խառնելուց հետո յուրաքանչյուր տերևները լվանում են և անբողջ ջրի զանգվածը ֆիլտրում, կշռում և հաշվարկում այն փոշու քանակը, որը նստած է տերևների վրա:

### **10.3. Մթնոլորտի վիճակի, աղտոտման և պահպանման մոնիթորինգի ցուցանիշները**

#### **1. Մթնոլորտի աղտոտումը**

##### **Ա - Արդյունաբերական ծեռնարկություններից**

###### **1.1. Մթնոլորտի աղտոտման աղբյուրների թիվը - ընդամենը,**

այդ թվում՝

ա) չունեն մաքրող կառույցներ,

բ) ունեն մաքրող կառույցների կարիք ունեն

բ) ունեն մաքրող կառույցներ,

որից՝ անբավարար են մաքրող կառույցները

###### **1.2. Մթնոլորտի աղտոտման բոլոր աղբյուրներից արտանետվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի**

այդ թվում՝

ա) մթնոլորտ է արտանետվում առանց մաքրման

բ) մթնոլորտ է արտանետվում մաքրող կառույցներից

որից՝

կուտակվում են

արտանետվում են մթնոլորտի մաքրող կառույցներից

###### **1.3. Վրարային թափոններ**

ա) քանակը, մլն տ

բ) ընդհանուր շարունակությունը, ժամ

գ) արտանետված վնասակար նյութերի ընդհանուր քանակը, տ

##### **Բ - Ավտոմոբիլային տրանսպորտից**

###### **1.4. Ներքին այրման շարժիչներով ավտոմոբիլների քանակը, միավոր**

այդ թվում՝

ա) թերևներ

բ) բեռնատար

որից՝  
ավտոբուսներ  
հատուկ նշանակության

- 1.5. Ներքին այրման շարժիչներով ավտոմեքենաների վագրը, կմ
- 1.6. Ներքին այրման շարժիչներով ավտոմեքենաների կողմից պահանջվող վառելանյութի քանակը, լիտր
  - այդ թվում՝
  - ա) բենզին
  - բ) դիզելային
- 1.7. Ավտոտրամասպորտի կողմից բաց թողնված ընդհանուր քանակությունը, տ

#### Գ - Բնակելի ֆոնդի ջեռուցման համակարգից

- 1.8. Անհատական ջեռուցումով բնակարանների քանակը, միավոր
    - ա) գազով
    - բ) վառելափայտով
    - գ) նավթով
    - դ) տորֆով
    - ե) այլ նյութերով
  - 1.9. Անհատական բնակելի ֆոնդից արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակությունը, տոննա
2. Մթնոլորտի պաշտպանության միջոցառումները
    - 2.1. Գազ և փոշի կլանող սարքավորումների քանակը, միավոր
    - 2.2. Գազ և փոշի որսող սարքավորումների աշխատանքի արդյունավետությունը, %
  - 2.3. Մթնոլորտ արտանետվող նյութերի քանակի պակասեցման միջոցառումների խմբերը, միավոր
    - ա) տեխնոլոգիական գործընթացների կատարելագործում, միավոր
    - բ) նոր մաքրող կառույցների շինարարություն, միավոր
    - գ) առկա մաքրող կառույցների արդյունավետության և հզորության բարձրացում
  - 2.4. Միջոցառումների իրականացման արդյունքում վնասակար արտանետումների կրճատում, տ/օր
    - ըստ միջոցառումների խմբերի՝
    - ա) տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործում
    - բ) նոր մաքրող կառույցների շինարարության
    - գ) առկա մաքրող կառույցների արդյունավետության և հզորության բարձրացում

- 2.5. Ավտոմեքենաներից արտազատվող թունավոր գազերի ստուգման և պակասեցնող ստուգիչ-կարգավորիչ կետերի քանակը, միավոր
  - 2.6. Ստուգված ավտոմեքենայի քանակը, միավոր  
որից՝ բաց թողնված գազերի չեզոքացման և վարակագերծման համար հարմարանքներով հագեցված են
  - 2.7. Մթնոլորտը չաղտոտող ավտոմեքենաների քանակը, միավոր  
ա) էլեկտրաշարժիչներով  
բ) գազաբալոններով ավտոմեքենաներ  
գ) այլ ավտոմեքենաներ
  - 2.8. Քաղաքների թիվը, որտեղ ձեռնարկությունները հագեցված են մթնոլորտ արտանետվող նյութերի քանակը կրճատող սարքավորումներով, միավոր
3. Մթնոլորտի պահպանության ծախսերը
- 3.1. Գազ և փոշի որսող սարքավորումների տեղադրման համար կապիտալ ներդրումներ, հազ. դրամ
  - 3.2. Օդային ավազանի պահպանության համար ընթացիկ ծախսեր, հազ. դրամ
  - 3.3. Օդային ավազանների պահպանության համար տեսակարար ծախսեր, հազ. դրամ
  - 3.4. Ավտոմեքենաներից արտազատվող գազերի աղտոտման և թունավորման աստիճանը իջեցնելու նպատակով ստուգիչ-կարգավորիչ կետերի համար կապիտալ ներդրումներ, հազ. դրամ
4. Մթնոլորտի վիճակը և հսկողության կազմակերպումը, միավոր
- 4.1. Մթնոլորտի վիճակի հսկողություն կազմակերպող քաղաքների թիվը
  - 4.2. 1000 բնակչի հաշվով՝ աղտոտման երևույթները չափագրելու կետերի թիվը
  - 4.3. Մթնոլորտի աղտոտման աստիճանով քաղաքների թիվը
  - 4.4. Ձեռնարկությունների սանիտարահիգիենիկ գոտում ապրող բնակչների թիվը:

Այլուսակ 9

Մթնոլորտային տեսակարար արտանետումներն հանրապետության մի շարք քաղաքներում (2005թ.)

Քաղաքներ	Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը, տոննա	Մթնոլորտային տեսակարար արտանետումները	
		մեկ բնակչի հաշվով, կգ	տարածքի հաշվով, կգ/կմ <sup>2</sup>
Երևան	2805,8	2,5	12360,4
Արարատ	19302,3	937,0	6434100,0
Ալավերդի	24448,2	1499,9	2037350,0
Դրազդան	1996,9	37,7	99845,0
Վանաձոր	61,7	0,6	2468,0
Գյումրի	44,2	0,3	884,0

Այլուսակ 10

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան  
խտությունները (մգ/կգ) և Մթև Երևան քաղաքի օդում (2005թ.)

Աղտոտիչներ	Խտություններ		Մթև	
	առավելա- գույն	միջին տարեկան	միամված առավելա- գույն	միջին տարեկան
Փոշի	-	0,3	0,5	0,15
Ծծմբի երկօրսիդ	0,49	0,12	0,50	0,05
Ազոտի երկօրսիդ	0,42	0,11	0,085	0,04
Ազոտի օքսիդ	0,27	0,06	0,40	0,06
Գետնամերձ օզոն	0,351	0,065	0,16	0,03
Բենզոլ	1,928	0,138	1.5	0,2
Տոլուոլ	1,694	0,382	0,6	0,6
Զսիլոլ	-	-	0,2	0,2
Էթիլ բենզոլ	-	-	0,02	0,02
Զլորոպիրեն	-	-	0,1	-

## **10.4. Մթնոլորտային օդի որակի նորմավորումը**

Մթնոլորտային օդի որակը բնութագրվում է մարդու, բուսականության, կենդանական աշխարհի, շրջակա միջավայրի վրա մթնոլորտի գումարային հատկությունների թողած ֆիզիկական, քիմիական, կենսաբանական ազդեցությամբ, և գնահատվում է հետևանքներով:

Օդը համարվում է նաքուր, եթե այն չի պարունակում մարդու, կենդանիներին, բուսականությանը հաճար վնասակար վնասակար բաղադրամասեր, շրջակա միջավայրում չի ստեղծում հիվանդագին պայմաններ:

Մթնոլորտի որակի նորմատիվները որոշում են բնակավայրերի, արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի գոտիների օդում վնասակար նյութերի թույլատրելի բաղադրությամբ: Աշխատանքային գոտիների օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունը (թիվ՝ 4) այն չափաքանակն է, որն ամբողջ աշխատաժամանակի ընթացքում չի առաջացնում հիվանդագին երևույթներ կամ էլ առողջական վիճակի շեղումներ:

Մթնոլորտային օդի աղտոտման հիգիենիկ նորմավորման հիմքում ընկած են հետևյալ դրույթները՝

- օդում թույլատրելի է համարվում աղտոտիչ նյութերի այն խտությունը, որը մարդու վրա չի թողնում ուղղակի կամ անուղղակի ազդեցություն, բացասաբար չի ազդում ինքնազգացողության և աշխատունակության վրա,
- օդում առկա վնասակար նյութերի նկատմամբ օրգանիզմի հարմարվողականությունը դիտել որպես անբարեհաջող երևույթ,
- մթնոլորտում աղտոտիչ նյութերի այն խտությունը, որն անբարենպաստ է ազդում օրգանիզմների, տեղական կլիմայի, մթնոլորտի թափանցիկության և բնակչության կյանքի պայմանների վրա, հաճարվում է անթույլատրելի:

Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտություն է համարվում այն քանակությունը, որի ներգործությունը ժամանակի որոշակի հատվածում էականորեն չի ազդում մարդու առողջության և բարեհաջող սերնդատվության վրա:

Թունավորության աստիճանն ընդունված է բնութագրել թունավոր նյութերի այն քանակություններով, որոնք հարուցում են որոշակի թունազդու երևույթներ:

Ըստ թունավոր նյութերի բաժնեչափի և մահացության աստիճանի տարբերում են՝

- բացարձակ մահացու 100 ՄԲ (մահացու բաժնեչափ),
- միջին մահացու 50 ՄԲ,
- նվազագույն մահացու մինչև 10 ՄԲ:

Մթնոլորտային օդի աղտոտիչներն ըստ թունավորության աստիճանի բաժանում են 4 խմբի՝

- արտակարգ թունավոր,
- բարձր թունավոր,
- չափավոր թունավոր,
- քիչ թունավոր:

Դրանցից առաջին երկու խմբին դասվող նյութերի Սթիւ-ն շատ ցածր է, ավելի թույլ ազդեցություն ունեցողների համար՝ ավելի բարձր:

Մթնոլորտայի օդում ընդհանուր թունավորություն կամ անսովոր ազդեցություն առաջացնող վնասակար նյութերի համար սահմանվում է օրական միջին Սթիւ, որը նախատեսված է օդի աղտոտիչների քրոնիկական ազդեցությունը կանխելու համար: Նորմավորման այդ մակարդակը բացառում է մարդու օրգանիզմում թունավոր, ուռուցքածին և մուտածին ազդեցությունները:

Առավել խիստ է պահանջը վնասակար նյութերի միանվագ առավելագույն Սթիւ-ի հանդեպ: Այն պետք է սահմանել այնպես, որ մարդու օրգանիզմում բացառվեն անցանկալի պայմանական ռեակցիաները (հարբուխ, հազ, հոտի զգացողություն և այլն):

#### Այսուսակ 11

Օդի աղտոտիչների առավելագույն միանվագ (20-30 րոպե տևողությամբ) Սթիւ-ն օրգանիզմների համար

Աղտոտիչներ	Աղտոտիչների առավելագույն միանվագ Սթիւ, մգ/ն <sup>3</sup>		
	մարդու	բույսի	կենդանու
Ծծնբային գազ	0,5	0,02	0,02
Ամոնիակ	0,2	0,05	0,05
Ազոտի դիօքսիդ	0,085	0,02	0,02
Քլոր	0,1	0,025	0,025
Ծծնբաջրածին	0,008	0,02	0,008
Մեթանոլ	1,0	0,2	0,2
Բենզոլ	1,5	0,1	0,1
Ֆորմալդեհիդ	0,035	0,02	0,02
Ցիլլոհեկսան	1,4	0,2	0,2
Ծծնբական թթվի գոլորշիներ	0,3	0,1	0,1
Ածխածնի օքսիդ	3,0	4000,0	3,0

# Գլուխ 11

## ԲՆԱԿԱՆ ԼԱՆԴԱՌՏՆԵՐԻ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՍՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ԲՀՊՏ) ՎԻՃԱԿԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻթՈՐԻՆԳ

### 11.1. Լանդշաֆտների, ԲՀՊՏ-ների մոնիթորինգ

Լանդշաֆտը (բնասահմանավայր) միատարր տարածք է, որի ռելիեֆը, դրա սահմաններում՝ հողային ծածկոցը, ջրային պաշարները, կլիման, լեռնային ապարները, կենդանական և բուսական աշխարհը սերտ կապված են և մարդու հետ միասին կազմում են մի ամբողջություն, բնության առանձին մի օղակ: Հետևաբար, պարզ է, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի բնական լանդշաֆտների պահպանությունը և դրա առանձին բաղադրիչների խելացի ու գիտականորեն հիմնավորված օգտագործումը:

Լանդշաֆտների պահպանության խնդիրը նոր չէ, այն սկիզբ է առել աշխարհագրական թաղանթի մարդածին փոփոխության հետևանքով, որը հազարամյակների պատմություն ունի: Արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացման հետևանքով բնական լանդշաֆտներն աստիճանաբար խախտվում են, փոխվում են բնության դեմքը: Հենց այստեղ էլ ի հայտ է գալիս յուրաքանչյուր աշխարհագրական գոտուն բնորոշ չափանմուշային (էտալոն) տարածքների պահպանությունը:

Համալիր ուսումնասիրությունների և դիտարկումների հիման վրա կարելի է ճանաչել բնության օրինաչափությունները, հասկանալ երևոյթների զարգացման ընթացքը, դրանից ելնելով կանխատեսել, թե ինչ փոփոխություններ կրերի մարդու հետագա ազդեցությունը բնական լանդշաֆտների ամբողջականության վրա:

Յուրաքանչյուր լանդշաֆտային գոտում բնապահպանական հսկայական նշանակություն ունի բնության հատուկ պահպանվող տարածքների կազմակերպումը: Դրանք բնապահպանության գործուն լանդշաֆտի չափանմուշի դեր են կատարում, իրենցից ներկայացնում են յուրահատուկ լաբորատորիա՝ բնության մեջ:

Սակայն, ԲՀՊՏ-ներն իրենց հիմնական նշանակությունից բացի այլ էկոլոգիական գործառույթներ էլ են իրականացնում. կրծատում են օդի աղտոտումը, բարձրացնում գյուղատնտեսական հողատեսքների արժեքը և պահպանում են ջրային պաշարների որակը:

ԲՀՊՏ-ներից՝ հատկապես արգելոցային տարածքներում բնական երևոյթների բազմակողմանի համալիր հետազոտությունները, վայրի կենդանիների ու բուսականության ուսումնասիրությունները արժեքավոր տեղեկատվական նյութեր են տալիս կենսուրությ զարգաց-

ման և բնական ռեսուրսների պահպանության ու արդյունավետ օգտագործման միջոցառումների մշակման համար:

Համաձայն IUCN ուղեցույցների, բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են՝

**IA. STRICT NATURE RESERVE** - Խիստ պահպանության ռեժիմով բնական արգելոց (անխարար էկոհամակարգ), օգտագործվում է գիտական նպատակներով: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ արգելոցները:

**IB. WILDERNESS AREA** - Խիստ պահպանության ռեժիմով տարածք (բնության տեղամաս), օգտագործվում է հիմնականում վայրի բնության պահպանության նպատակով:

**II. NATURAL PARK** - Ազգային պարկ - Էկոհամակարգերի պահպանություն, տուրիզմ: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ ազգային պարկերը:

**III. NATURAL MONUMENT** - Բնության հուշարձան - բնության տեսարժան օբյեկտների (համալիրների) պահպանություն: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ բնության հուշարձանները, որոնց հաշվառումը և ցանկի հաստատումը ընթացքի մեջ է:

**IV. HABITAT/SPECIES MANAGEMENT AREA** - Արգելավայր - տեսակների և դրանց ապելավայրերի պահպանություն ակտիվ կառավարման միջոցով: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ տարածքի արգելավայրերը:

**V. PROTECTED LANDSCAPE/SEASCAPE** - Ցամաքային և ջրային լանդշաֆտների պահպանություն, ռեկրեացիա:

**VI. MANAGED RESOURCE PROTECTED AREA** - Կառավարվող ռեսուրսներով պահպանվող տարածքներ - ռեսուրսների խնայողական օգտագործում:

Հյայատանում գործող ԲՀՊՏ-ները երեք կարգավիճակի են՝ արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր, դրանցից բացի գույքագրվում ու ճշգրտվում են նաև բնության հյուշարձանները (Գալստյան Մ.Դ., Մկրտչյան Ա.Լ., Թամոյան Ս.Զ., 2009).:

Արգելոցում լանդշաֆտին բնորոշ կենսաբանական երևույթները զարգանում են բնական միջավայրի պահպանության պայմաններում: Այդ տարածքները հանդիսանում են վայրի կենդանիների և բույսերի գոյության, զարգացման և բազմացման բնական միջավայրը:

Արգելոցներում անժամկետ պահպանվում են տվյալ աշխարհագորական գոտու լանդշաֆտային համալիրների բոլոր բաղադրիչները միասին, բնական վիճակում: Դրանք ենթակա չեն տնտեսական օգտագործման և մարդու գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական հետազոտություններով և ճանաչողական գրուաշրջությամբ:

Ըստ 1994թ. IUCN-ի միջազգային դասակարգման՝ ՀՀ պետական արգելոցները «IA» կարգի պահպանվող տարածքներ են:

Հայաստանում գործում են «Խոսրովի անտառ», «Շիկահող», «Երեբունի» արգելոցները, որոնց ընդհանուր տարածքը 35321,8 հա է (ՀՀ տարածքի 1,2% -ը):

**1. «Խոսրովի անտառ» արգելոց:** Ստեղծվել է 1958թ., 23095,5 հա տարածքով, Արարատի մարզում՝ Գեղամա լեռնաշղթայի հարավային, ՈՒրծ և Երանոս լեռնաշղթաների հյուսիս-արևմտյան լանջերին, Ազատ և Վեդի գետերի ավազաններում, ծովի մակերևույթից 700-2800մ բարձրության վրա:

Արգելոցում պահպանվում են չոր նոսրանտառային, կիսաանապատային և ֆրիզանային լանդշաֆտները՝ բուսակենդանական եզակի համակեցություններով: Արգելոցում գրանցված է բարձրակարգ բույսերի մոտ 1849 տեսակ, որոնցից 146-ը՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում, ընդ որում 24-ը՝ Էնդեմներ: Արգելոցում պահպանվում են նաև գիհու և կաղնու նոսրանտառները, տարածված են սովորական հացենին, արռուենին, կովկասյան ցախակեռասը, բռնչին, դժնիկը, ասպիրակը, թխու և տաճճենու տարրեր տեսակներ:

«Խոսրովի անտառ»-ում գրանցված են 283 ողնաշարավոր կենդանիների տեսակներ, ներառյալ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված ավելի քան 50 և ԲՊՄՍ Կարմիր գրքում գրանցված 11 տեսակ: Դրանց են հազվագյուտ և անհետացման վտանգի ենթարկված՝ հայկական մոլֆլոնը, առաջավորասիական հովազը, բեզոարյան այծը, սև և սպիտակագլուխ անգղները, մորութափոր արծիկը, անդրկովկասյան գորշ արջը, ինչպես նաև լուսանը, վայրի խոզը, այծյամը, գայլը, աղվեսը և այլն: Կաթնասունները ներկայացված են 55 տեսակով, թռչունները՝ 142, որոնցից 66-ը գրանցված են ՀՀ կարմիր գրքում, սողունները՝ 30, երկկենցաղները՝ 4 և ձկները՝ 9 տեսակով:

**«Շիկահող» արգելոց:** Ստեղծվել է 1958թ., Սյունիքի մարզում՝ Ծավ և Շիկահող գետերի ավազանում, 12137,075 հա տարածքով, ծ.մ.700-2400մ բարձրություններում:

Այստեղ պահպանվում են կաղնու, բոխու անտառները, ինչպես նաև վայրի բնության հարուստ կենդանական և բուսական համակեցությունները (կենու, սոսու, արևելյան հաճարի, ընկույզնու պուրակները):

Բուսական աշխարհը ներկայացված է բարձրակարգ բույսերի 1074 տեսակով, որոնցից 70-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: «Շիկահող»-ում աճում են ՀՀ ֆլորայի էնդեմ տեսակներից՝ Զանգեզուրի տաճճենին, Զանգեզուրի զանգակածաղիկը, Զանգեզուրի շնկոտեմը և այլն:

Կենդանական աշխարհը նույնական բազմազան է՝ 208 տեսակ ողնաշարավորներ, որոնցից ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանց-

ված 31 և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ 8 տեսակ: Արգելոցում կա բեզոարյան այժ, գորշ արջ, մացառախող, գայլ, աղվես, կզաքիս, անտառային կատու, հազվադեպ՝ հիվագ, գյուրզա, հայկական իժ, վայրի հնդկահավ, գառնանգդ, սև անգդ և այլն:

**«Երեբունի» արգելոց:** Հիմնադրվել է 1981թ, Կոտայքի մարզում, Մուշաբույր և Գեղադիր գյուղերի միջև, 89 հա տարածքով, ծ.մ. 1300-1400մ բարձրություններում, լեռնային քսերոֆիտ, էնդեմ և եզակի բնական համալիրների պահպանության համար: Տարածքով՝ Հայաստանի ամենափոքր արգելոցն է, սակայն իր նշանակությամբ ամենակարևորներից է, քանի որ արգելոցում պահպանում է վայրի հացագոհների եզակի բնական գենոֆոնորը:

Արգելոցում կան 293 տեսակ անոթավոր բույսեր, որոնցից 7-ը գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում, նույնքան էլ՝ նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Բուսական համակեցությունները հիմնականում կազմված են միամյա հացազգիներից՝ աշորա վավիլովի, այծակն գլանածե, գարու մի քանի տեսակներ, անքստ բբաթեփուկը և այլն: Տարածքում հանդիպում են 100-ից ավելի վայրի հացազգիների տարատեսակներ, այդ թվում՝ աշխարհում հայտնի վայրի ցորենի 4 տեսակից երեքը՝ արարատյան կամ Երկիատիկ, ուրարտու և վայրի միահատիկ:

Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 72 տեսակով: Տարածված են Երկկենցաղներից՝ կանաչ դոդոշ, լճագորտ, սիրիական սխտորագորտ, սողունների 9 տեսակ՝ անդրկովկասյան գյուրզա և օձերի տարրեր տեսակներ, միջերկրածովյան կրիա, 50 տեսակի թրչուն, կաթնասուններ՝ աղվես, աքիս, կզաքիս, գայլ, գորշուկ, բազմաթիվ կրծողներ և այլն:

**Արգելավայրերը** գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներ են, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունն ու բնական վերարտադրությունը:

Այս տարածքում արգելվում է մարդու ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ հոգածության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությունը:

Արգելավայրային ռեժիմը վերաբերում է միայն պահպանության ենթակա կենդանական կամ բուսական տեսակին, համակեցություններին, ջրային օբյեկտներին, իսկ մյուս բնական ռեսուրսները կարող են օգտագործել:

Հայաստանի արգելավայրերը IUCN-ի դասակարգման համաձայն համապատասխանում են «IV» կարգի պահպանվող տարածքներին:

### Աղյուսակ 12

#### Հայաստանի հանրապետությունում գրանցված արգելավայրերը

№	Արգելավայրի անվանումը	Նիմնադրման թիվը, տեղադրությունը (մարզ), տարածքը	Պահպանության օբյեկտը
1.	Ախնաբաղի կենու պուրակ	1959 Տավուշ, 25հա	մնացորդային կենու պուրակը
2.	Սոսու պուրակ	1958, Սյունիք, 64,2հա	արևելյան սոսու բնական պուրակը
3.	Արջատիլենու	1958 Տավուշ, 40հա	արջատիլենու և կենու պուրակները
4.	Սևանի գիհու նոսրանտառ	1958 Գեղարքունիք, 3312հա	գիհու և կաղնու նոսրանտառները, բնորոշ բուսակենդանական համակեցությունները
5.	Կովկասյան մրտավարդի	1959 Լոռի, 1000հա	մնացորդային կովկասյան մրտավարդենի
6.	Արագածի ալպյան	1959 Արագածոտն, 300հա	թարե լիճը և հարակից ալպյան մարգագետինները
7.	Մարգահովտի	1971 Լոռի, 3368հա	անտառային կենդանիներ
8.	Գյուլագարակի	1958 Լոռի, 2576հա	մնացորդային սոճու անտառները
9.	Գոռավանի ավազուտներ	1959 Արարատ, 95,99հա	մնացորդային սորուն ավազների բուսական և կենդանական տեսակները
10.	Բանքսի սոճու	1959 Կոտայք, 4հա	բանքսի սոճու պուրակը
11.	Ջեր-Ջերի նոսրուտային	1958 Վայոց ձոր, 6139հա	գիհու նոսր անտառները և տրագականտային գագերը
12.	Զերմուկի անտառային	1958 Վայոց ձոր, 3865հա	հազվագյուտ կենդանիները և լեռնային անտառները
13.	Զերմուկի ջրաբանական	1981 Վայոց ձոր, 18000հա	«Զերմուկ» հանքային ջուրը
14.	Արգականի-Սեղրաձորի	1971 Կոտայք, 13.532հա	հազվագյուտ անտառային կենդանատեսակները
15.	Իջևանի	1971 Տավուշ, 5908հա	հազվագյուտ անտառային կենդանիները

16.	Գանձաքարի-Վերին Աղդամի	1971 Տավուշ, 6813հա	հազվագյուտ կենդանիները և լեռնային անտառները
17.	Գետիկի	1971 Գեղարքունիք, 5728հա	հազվագյուտ կենդանիներ և լեռնային անտառները
18.	Եղեգիսի	1971 Վայոց ձոր, 4200հա	հազվագյուտ կենդանիները և վայրի ցորենի մեծ բազմազանությունը
19.	Հանքավանի ջրաբանական	1981 Կոտայք, 9350հա	«Հանքավան» հանքային ջուր
20.	Արարատի որդան կարմրի	1987 Արմավիր, 219,85հա	Արարատյան որդան կարմրիը և բնորոշ անապատային բուսականությունը
21.	Բողաքարի	1989 Սյունիք, 2728հա	հայկական ֆլորայի և ֆաունայի տիպիկ տեսակները
22.	Գորիսի	1972 Սյունիք, 1850հա	անտառային էկոհամակարգեր, անհետացող բույսեր և կենդանիներ
23.	Սև լիճ	2001 Սյունիք, 240հա	բարձրլեռնային ջրավազանը և հարակից բնատարածքների համակեցությունները
24.	Խոր Վիրապ	2007 Արարատ, 50,28հա	ջրաճահճային էկոհամակարգեր և բնորոշ կենդանիների և բույսերի տեսակները
25.	Գիլանի	2007 Արարատ, 118հա	լեռնային էկոհամակարգերը
26.	Զանգեզուրի	2009 Սյունիք, 17368,77հա	Զանգեզուրի և Բարգուշատի բարձր լեռնային էկոհամակարգերը

Արգելոցային, արգելավայրային և ազգային պարկերի տարածքները լավագույնս պահպանելու համար խնդիր է առաջանում ստեղծել այդ տարածքների վիճակի և պահպանության դիտարկումների՝ մոնիթորինգի համակարգ: Այդ համակարգը ներառում է հետևյալ ցուցանիշները:

Արգելոցների, արգելավայրերի և ազգային պարկերի գործունեության հիմնական ցուցանիշները (2010թ.)

	Ցուցանիշները	Ընդամենը
1	Ազգային պատկերի թիվը, միավոր	4
2	Պետական արգելոցների թիվը, միավոր	3
3	Պետական արգելավայրերի թիվը, միավոր	26
4	Ազգային պարկերի և արգելոցների ընդհանուր մակերեսը, հազ. հա	275944,4
	այդ թվում՝ անտառածածկ տարածք	53.1
	մարգագետիններ	28.4
	խոտածածկ տարածքներ	125.6
	այլ տարածքներ	11.1
5	Պետական արգելավայրերի ընդհանուր մակերեսը, հազ. հա	93374,5
6	Առկա բուսատեսակների թիվը, հատ	1853
	որից՝ հազվագյուտ	150
	էնդեմիկ	107
	անհետացող	106
7	Առկա վայրի կենդանատեսակների թիվը, հատ	216
	որից՝ հազվադեպ	6
	անհետացող	3
8	Առկա թփուտների տեսակների թիվը, հատ	159
	որից՝ հազվադեպ	66
	էնդեմիկ	2
	անհետացող	20
9	Առկա ձկնատեսակների թիվը, հատ	6

Ազգային պարկերը (ներառյալ ջրային տարածները) բնապահանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածքներ են, որոնք բնական լանդշաֆտների և մշակութային արժեքների գուգորդման շնորհիվ կարող են

օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

Հայաստանի ազգային պարկերը IUCN-ի միջազգային դասակարգման համաձայն «II» կարգի պահպանվող տարածքներ են:

«Սևան» ազգային պարկ: Կազմավորվել է 1978թ., Գեղարքունիքի մարզում, 2000մ բարձրություններում: Ներառում է Սևանա լճի ջրային հայելին և դրան հարող ափամերձ տարածքի ջրից ազատված հատակային գրունտները՝ մինչև շուրջընյա ավտոճանապարհը: Տարածքը կազմում է 147456 հազ. հա, առանց Սևանա լճի հայելու՝ 22697 հա:

«Սևան» ազգային պարկի և պահպանման գոտու բուսաշխարհն ընդգրկում է բարձրակարգ բույսերի շուրջ 1145 տեսակ, այդ թվում Հայաստանի 3 և Սևանա լճի 5 էնդեմ և 3ԿԳ-ում գրանցված 17 տեսակ: Լճի մակարդակի իջեցման հետևանքով ջրից ազատված ափամերձ հողագրունտների գգալի մասը (մոտ 20000 հա) ծածկված է սոճու, բարդու, փշատենու, չիչխանի և այլ ծառաթփային տեսակների արհեստական անտառներով:

Ազգային պարկում կա ողնաշարավոր կենդանիների 336, ներառյալ Հայաստանի Կարմիր Գրքում գրանցված 49 տեսակ:

Սևանի ավագանում հանդիպում են ձկան՝ 9, երկվենցաղների՝ 3, սողունների՝ 17, թռչունների՝ 267 և կարնասունների՝ 34 տեսակ: Զկներից արժեքավոր են Սևանի էնդեմ ձկնատեսակները, թռչուններից հանդիպում են վարդագույն և գանգրափետուր հավալուսները, մեծ և փոքր ձկնուլները, տուրպանը, ճչան կարապը, հայկական որորը, կարնասուններից՝ գայլ, աղվես, տարբեր կրծողներ և այլն:

«Դիլիջան» ազգային պարկ: Ստեղծվել է 2002թ. «Դիլիջան» պետական արգելոցի (1958թ.) հիման վրա, Տավուշի մարզում: Գտնվում է Փամբակ, Արեգունի, Միափոր, Գուգարաց լեռնաշղթաների վրա, Ալսու և Գետիկ գետերի ավագաններում: Ծովի մակերևույթից բարձր է 1070-2400մ, գրաղեցնում է 33,765 հա տարածք: Բնորոշ է լայնասաղարթ անտառային ծառատեսակներով:

«Դիլիջան» ազգային պարկի բուսական աշխարհը կազմված է ավելի քան 900 տեսակ անորթավոր բույսեց, որոնցից 27-ը գրանցված են՝ Հայաստանի և 4-ը՝ ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում: Հանդիպում է ռելիկտային և 5 էնդեմ տեսակ: Ռելիկտային են փոշնու, գիհու, դրախտածարի անտառականները, ընկուզենու վայրի տնկարկները: Անտառում հանդիպում են լորենի, բոխի, թեղի, կեչի: Իջևանի լեռնաշղթայի լանջերում տարածված են վայրի պտղատունները՝ հոնենին, տիվենին, սզնին, զկեռենին, մամխին:

Կենդանական աշխարհը ներկայացված է շուրջ 220 տեսակ ողնաշարավոր կենդանիներով, որոնցից 23-ը գրանցված են ՀԿԳ-ում: Զկներից կա կարմրախայտ, թոփ բեղլու, թռչուններից՝ կովկասյան մարեհավ, վայրի հնդկահավ, կարնասուններից՝ այծյամ, ազնվացեղ եղջերու, լուսան, անտառային կատու, կզաքիս, ջրասամույր և այլն:

«Արփի լիճ» ազգային պարկ: Ստեղծվել է 2009թ., ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Զավախիքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Ազգային պարկի տարածքը կազմում է մոտ 25000 հա, պահպանման գոտին՝ մոտ 24000 հա:

Տարածքում հայտնաբերված են մոտ 670 տեսակի բույսեր, որոնցից մոտ 25-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 22-ը էնդեմ տեսակներ են: Տարածքն առավել գրավիչ է զարնանը և ամռանը բազմաթիվ գեղազարդ բույսերի՝ խոլորձի, թրաշուշանի, հիրիկի, կակաչի և շուշանի առատության շնորհիվ:

Կաթնասունները ներկայացված են ընդամենը 30 տեսակով, սակայն դրանց շարքում կան հազվագյուտ տեսակներ, որոնցից են եվրոպական ջրասամույրը և խայտաքիսը: Տարածքում բավականին շատ են գայլերը, որոնք խնդիրներ են ստեղծում տեղի գյուղական տնտեսությունների համար:

Ազգային պարկում հայտնաբերվել է թռչունների մոտ 200 տեսակ, որոնցից 40-ը գրանցված են Հայաստանի Կարմիր Գրքում, ինչպես՝ օրինակ, համաշխարհային առումով Վտանգված զանգրափետուր հավալուսնը: Խոնավ տարածքները կարևոր են չափազանց հազվագյուտ տեսակների բնադրման համար, որոնցից են մոխրագույն կոռունկը, մարգահավը և մարգագետնային մկնածուռակը:

Այստեղ են գտնվում նաև Հայաստանի էնդեմ տեսակ, ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) Կարմիր ցուցակում գրանցված Դարևսկի իժի (Vipera darevskii) ապրելավայրերը:

«Արևիկ» ազգային պարկ: Ստեղծվել է 2009թ., Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջին, ինչպես նաև Մեղրի, Շվանիձոր և Նյուվադի գետերի ջրահավաք ավազանում: Ազգային պարկի ընդհանուր տարածքը կազմում է 34401,8 հա, որի մեջ մտնում է նաև «Բողաքար» արգելավայրը:

«Արևիկ» ազգային պարկի տարածքում առկա են ուղղաձիգ բնական գոտիներ և լանդշաֆտների տարբեր տիպեր՝ ալպյան մարգագետիններ, լեռնային տափաստաններ, անտառային զանգվածներ, կիսանապատեր և այլն: Այս ունի հարուստ կենսաբազմազանություն և բնակատեղի է հազվագյուտ և անհետացող այնպիսի կենդանական տեսակների համար, ինչպիսիք են առաջավորասիական ընձառյուծը, բեղոարյան այծը, հայկական մոլֆլոնը, միջերկրածովային

կրիան, հայկական իժը, կովկասյան ջրասամույրը, կասպիական հնդկահավը, կովկասյան մայրենիավը և այլն:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնաբերվել են տեսակներ, որոնք աճում են միայն Մեղրու ֆլորիստական շրջանում՝ չորապտեր արծվապտերային, հիւայածառ Գրիֆիթի, գիրգենսոնիա հակադրածաղիկ, ձմերուկ վայրի, անդրախնե, անմեռուկ կլորատերև, տափոլոր խաղողաննան, թրաշուշան աղասեր, կատվադաղձ լերդախոտատերև, սագաստխուկ ցողունավոր, եղբորոսին կծկոնկածն, կծկոնկ դանձլամերատերև, սարդակիր կովկասյան, սարդակիր բռօակիր, խոլորձ Շելկովնիկովի, էննեապոգոն պարսկական, գևմնածաղիկ ռավենյան: Մի շարք բուսատեսակներ գտնվում են ոչնչացման վտանգի տակ և հայտնվել են Կարմիր գրքում:

## **11.2. Հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի ցուցանիշներ**

1. Արգելոցների, արգելավայրերի, որսորդական տնտեսության և ազգային պարկերի ընդհանուր տարածությունը, ընդամենը, հայդ թվում՝
  - 1.1. անտառային տարածքներ
    - 1.1.1. դրանց հատուկ պահպանվող տեսակներ որոնցից՝
      - ա) էնդեմիկ (տեղաբնիկ)
      - բ) հազվագյուտ
      - գ) անհետացող
2. Բուսաբանական այգիների և պուրակային տնտեսությունների տարածքը, հա
3. Բնակավայրերի կանաչ տնկարկների ընդհանուր տարածությունը այդ թվում՝
  - ա) անտառներ
  - բ) կանաչ և պաշտպանիչ շերտեր
  - գ) անտառտնկարկներ
  - դ) այլ կանաչ տնկարկներ (պուրակներ, զբոսայգիներ և այլն)
4. Արգելոցային, արգելավայրային, որսորդական տնտեսությունների ստեղծման համար կապիտալ և ընթացիկ ծախսեր, հազ. դրամ
5. օժանդակ տարածքների, կառույցների ստեղծման կապիտալ և ընթացիկ ծախսեր, հազ. դրամ

Արգելոցային տարածքների մասին տվյալներ կարելի է ձեռքբերել արգելոցների վերաբերյալ հաշվետվություններից (ձև № 1)

արգելոց) և անտառային ֆոնդի վերաբերյալ գրագրություններից ու տեղեկագրերից: Բնակավայրերի կանաչ տարածությունների վերաբերյալ տեղեկությունները ձեռք են բերվում բնակարանա-կենցաղային տարածքների մասին նախարարության ընթացիկ հաշվետվություններից (ձև № 9 ԲՇՏ):

Արգելոցային տարածքների պահպանության միջոցառումների իրականացման ծախսերի գումարն իր մեջ ներառում է նախարարության և գերատեսչության կապիտալ ներդրումները և ընթացիկ ծախսերը: Այդ ծախսերն արտահայտվում են հատուկ հաշվետվություններում (ձև № 35 կապիտալ ծախսեր): Կապիտալ ծախսերի հաշվին իրականացվում է գիտահետազոտական, փորձարարական բազաների լարորատորիաների և այլնի համար շինությունների կառուցումը, վերակառուցումը և ընդլայնումը (ճանապարհ, արհեստանոցներ, վանդակներ և այլն):

Ընթացիկ ծախսերը ուղղված են լինում արգելանոցների պահպանության նպատակով՝ տրանսպորտի, այլ տարածքների հետազոտության, որսորդական տնտեսության (կենդանիների նշակալում, կենդանիների բացքողում և այլն) հազվագյուտ և անհետացող բույսերի տեսակների, կենդանիների քանակի հաշվառում, կերի հայթայթում և այլն:

Արգելոցների վիճակի և պահպանության վերաբերյալ ցուցանիշների համակարգը կատարելագործվում է, այն ուղղված է արգելանոցների ազդեցության հաշվառմանը, դրանց հարակից շրջակա միջավայրի վրա:

## ԳԼՈՒԽ 12

### ԱՆՏՈՎԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՇՊԱՆՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

#### 12.1. ԱՆՏՈՎԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՇՊԱՆՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Անտառը կենսոլորտի և շրջակա միջավայրի կարևոր բաղադրիչ մասերից է, որի նշանակությունը մեծ է ու բազմակողմանի: Այն բարելավում է կլիմայական պայմանները, օդը նաքրում և հարստացնում է թթվածնով: Անտառը մարդուն տալիս է հսկայաքանակ փայտանյութ, սնունդ, դեղանյութ, խեժ, ներկանյութ, զանազան արտադրական հումք և այլն:

Անտառում աճում են մարդու համար օգտակար բազմաթիվ բույսեր՝ պտղատուներ, հատապտուղներ, սնկեր, սուրճի, կակաոյի, խինինի ծառեր, արմավենիներ: Անտառը նաև ապաստարան է հանդիսանում մի շարք վայրի կենդանիների համար: Անտառը պաշտպանում է ջրային էկոհամակարգերը քիմիական, օրգանական և չերմային աղտոտումից:

Անտառային ծածկոցը կանխում է ջրային և հողմնային հողատարումը, ձնուանը պահում է ջյունը, անօանը դիմակայում են չոր քամիներին և փոշեմրրիկներին, դրանով իսկ պաշտպանում գյուղատնտեսական ցանքատարածությունները, դաշտերը, բարձրացնելով նշակարույսերի բերքատվությունը:

Անտառի սաղարթը ոչ միայն պահում է փոշեննան մասնիկները, այլև վնասազերծում տարբեր գազաննան բաղադրամասերը: Արյունաբերական կենտրոնների շրջակայրում գտնվող անտառների օդի մեջ ծծմբային գազերի խտությունը մի քանի անգամ ցածր է, անտառազուրկ տարածությունների համեմատ:

Անտառն ունի մեծ առողջապահական հիգիենիկ նշանակություն, որն էլ ավելի է բարձրանում արդյունաբերության զարգացման, բաղաքաշինության և բնակչության թվի ավելացնանը զուգընթաց: Անտառային շատ ծառաթփատեսակներ արտածում են հատուկ նյութեր (ֆիտոնցիդներ), որոնք մեծ ազդեցություն են գործում օդի միկրոֆլորայի վրա, ոչնչացնում են շատ հիվանդածին մանրէներ, սնկեր:

Քաշվի առնելով անտառների կարևոր դերը կենսամիջավայրի ընդհանուր համակարգում, մարդը դեռ հնուց ի վեր հոգ է տարել դրանց պահպանման և ընդարձակման մասին: Դեռևս մի քանի հազարամյակ սրանից առաջ արիեստական անտառներ են հիմնադրվել Չինաստանում, Պարսկաստանում, Միջագետքում, Կենտրոնական Եվրոպայում և

այլն: Մ.թ. 335-342թթ. Հայաստանում հիմնադրվել է հոչակավոր Խոսրովի անտառը, որի մի հատվածը մինչև այսօր էլ գոյություն ունի:

Այսօր էլ աշխարհի տարբեր երկրներում տարեկան մի քանի միլիոն հեկտար նոր անտառներ են տնկվում: Սակայն արհեստական անտառը դեռևս անտառ չէ: Բնական անտառում հազարամյակների ընթացքում ձևավորված է բնորոշ անտառային միջավայր՝ կենսահանակեցություն, որը հնարավոր չէ ստեղծել արհեստական եղանակով: Արհեստական անտառում իշխում է մարդը, իսկ բնական անտառում բնությունը:

Անտառային կենսահամակեցությունը միատարր է տեսակային կազմով, կառուցվածքով, կազմի մեջ նտնող բաղադրամասերի հատկանիշներով և փոխհարաբերությամբ: Անտառն ունի իրեն բնորոշ բուսածածկոց՝ ֆիտոցենոզ, կենդանական աշխարհ՝ զոոցենոզ, միկրոաշխարհ՝ միկրոբոցենոզ, ինչպես նաև մակերեսային և լեռնային ապարներ՝ էղաֆոտոպ, ջրագրական, միկրոկլիմայական, մթնոլորտային (կլիմայական) պայմաններ:

Անտառը հանդես է գալիս որպես մի միասնական օրգանիզմ, որտեղ յուրաքանչյուր բույս, կենդանի մանրէ, բնության երևույթ, անօրգանական աշխարհի մասնիկ իր մշտական և կայուն տեղն ունի:

Հայաստանի Հանրապետության տարածքի անտառապատվածությունը չնչին է՝ ընդհանուր տարածքի 9,8%-ը, այն դեպքում, եթե աշխարհի միջին ցուցանիշը կազմում է 29,7%: Բնակչության մեկ շնչին ընկնող անտառապատ տարածությամբ՝ երկրների շարքում Հայաստանը գրավում է ամենավերջին տեղերից մեկը՝ 0,12 հա: ՀՀ-ում եղած 325 հազ. հա անտառները հանրապետության տարածքում անհավասար են բաշխված: Կյուսիս-արևելյան շրջաններում այդ ցուցանիշը կազմում է 28,9%, Զանգեզուրում՝ 13,2%, կենտրոնական շրջաններում 2%, իսկ Երևանի մերձակա վայրերում՝ 0,8% (Հայրապետյան Է.Մ. և ուրիշներ, 2005):

Անտառային տարածքները անարգել և արդյունավետ ծառայում են մարդկությանը, սակայն դրանք պահպանության կարիք ունեն: Շինարարական աշխատանքների, հաղորդակցության ուղիների՝ նավթի և գազի խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի շինարարության պատճառով հաճախակի անտառահատվում են հսկայական տարածքներ, որի հետևանքով կրծատվում են գետերի ջրերի հոսքերը, պակասում է ներկողային ջրերի քանակը:

Հայաստանում ևս ոչնչացվել են անտառային տարածքներ, որոնք վաղ անցյալում կազմել են 630 հազ. հեկտար: Հանրապետության լեռնային տարածքի սակավ անտառային ծածկոցի հետևանքով զարգացել է հողատարումը, ընկել՝ բերրիությունը: Այդ տեսակետից անտառների վերարականգնումը, պահպանումը և արդյունավետ օգ-

տագործումը հանդիսանում է մեր երկրի ամենակարևոր խնդիրներից մեկը շրջակա միջավայրի պահպանության համակարգում:

Անտառային տնկարկներին մեծ վտանգ են ներկայացնում մքնոլորտի, ջրի և հողի աղտոտումն արդյունաբերական թափոններով և պեստիցիդներով: Ծառատեսակները հիվանդանում և չորանում են զագերի, փոշու վտանգավոր խառնուրդներից, վարակվում են վնասատուներով ու հիվանդություններով:

Անտառային տնտեսության գերատեսչությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական օրենսդրական և գործադիր մարմինները և հասարակական կազմակերպությունները պարտավոր են իրականացնել պետական անտառային տարածքների պահպանության, ընդլայնման և վերարտադրության աշխատանքներ, իիմքում ունենալով անտառի մոնիթորինգային հետազոտությունների արդյունքները:

## 12.2. Անտառային ռեսուրսների խմբերը

Կախված անտառի տնտեսական նշանակությունից, անտառները բաժանվում են 3 խմբի:

*Առաջին խմբի* անտառներ են համարվում այն անտառները, որոնք ունեն բնապահպանական, մասնավորապես, ջրապահպան նշանակության (ջրային էկոհամակարգերի՝ գետերի, լճերի շրջակայրի պաշտպանական անտառաշերտերը): Այդպիսի անտառներում կատարվում են միայն խնամքի կարգի հատումներ:

*Երրորդ խմբի* անտառներ են դասվում այն անտառները, որտեղ գարգացած է տրանսպորտային ցանցը, խիտ է բնակչությունը և այլն: Այդ խմբի անտառների շահագործական նշանակությունը սահմանափակվում է և ընդունվում է անտառօգտագործման խիստ կարգավիճակ:

*Երրորդ խմբի* անտառներ են համարվում անտառախիտ տարածքներով շրջանները, որոնք ունեն հիմնականում շահագործական նշանակության:

Յայաստանի անտառները պատկանում են առաջին խմբին, այսինքն ունեն առանձնահատուկ պաշտպանական նշանակություն, այդ իսկ պատճառով դրանցում արգելված է շահագործական նպատակներով անտառահատումները: Բնական ռեսուրսների դիտարկումների համակարգում անտառների և անտառային տարածքների պահպանության նպատակով վիճակագրական բոլոր տվյալների հավաքումը, մշակումը և խմբավորումը կատարվում է ըստ վերոհիշյալ խմբերի: Դիտարկումների ընթացքում որքան ամբողջական և մանրամասն է տրվում յուրաքանչյուր անտառային տարածքի քանակական ու

որակական բնութագիրը, այնքան արդյունավետ են գործում անտառների պահպանության պլանավորող միջոցառումները:

Անտառային ռեսուրսների վիճակի, օգտագործման ու պահպանման վերաբերյալ ցուցանիշների դիտարկումները կատարվում են գոյություն ունեցող ընթացիկ հաշվետվությունների մի քանի ձևերով, որտեղ հաշվի են առնվում այն միջոցառումները, որոնք ուղղված են անտառային տարածքների վերականգնմանը, բարելավմանը: Այդ ձևերը նեռառում են հետևյալ ցուցանիշները՝

- անտառի սանիտարական վիճակի բարելավման հատումներ,
- ընտրողական հատումներ,
- անտառային մշակաբույսերի տնկում,
- բնական վերականգնմանը նպաստող աշխատանքներ,
- հրդեհների ենթարկված տարածքներ և այլն:

Անտառային ռեսուրսների վերաբերյալ դիտարկումների աշխատանքները նախատեսվում են անտառային ֆոնդը օգտագործող ու պահպանող գերատեսչության կողմից և կատարվում այդ խնդիրների նպատակով՝ կազմակերպված նախագծահետազոտական խմբերի, արշավախմբերի ու լաբորատորիաների միջոցով: Կատարված դիտարկումների և հետազոտությունների արդյունքները ամփոփվում են այդ նպատակներով՝ ստեղծված տեղեկագրերում և ձևերում, աշխատանքների ընթացքում կիրառելով համակարգչային տեխնիկա, օգտագործելով ժամանակակից գործիքներ:

### **12.3. Անտառային ռեսուրսների առկայության, օգտագործման և պահպանության մոնիթորինգի հիմնական ցուցանիշների համակարգը**

#### **1. Անտառային ռեսուրսների առկայությունը և վիճակը**

##### **1.1. Անտառային ֆոնդը, հա**

այդ թվում՝ անբողջ անտառային տարածությունը, հա, որից անտառածածկ, հա

անտառային մշակաբույսերով չծածկված, հա

1.2. Անբողջ անտառապատ տարածքի բաշխումն ըստ անտառային տեսակների, հա

1.3. Անտառածածկ տարածքի փայտանյութի պաշարը, հազ. մ<sup>3</sup>/ հազ. հա

այդ թվում՝ ըստ տարիքի և հասունացման կարգավիճակների, հա

1.4. Անտառազուրկ տարածքի բաշխումն ըստ կարգավիճակների (հրդեհված, նոսրուտներ), հազ. հա

- 1.5. Հատուկ պահպանվող անտառներ, հազ. հա  
այդ թվում պաշտպանական նշանակության (ջրապաշտպան,  
հողապաշտպան, բնակավայրերի կանաչ գոտիներ, քաղաքա-  
յին անտառներ), հազ. հա

1.6. Չորացնան վտանգի ենթակա անտառներ, ընդամենը,  
հազ. հա  
այդ թվում՝ հրդեհների, աղտոտման, ճահճացման, գետնաջրի  
մակարդակի բարձրացնան և այլ պատճառներով վնասված,  
հազ. հա

2. Անտառային ռեսուրսների շարժը

2.1. Գլխավոր օգտագործման հատումներ, հազ. մ<sup>3</sup>/ հա  
այդ թվում՝ գերակշռող տեսակի խմբով, հազ. մ<sup>3</sup>/ հա

2.2. Անտարի խնամքի հատում, հազ. մ<sup>3</sup>/ հա

2.3. Սանիտարական հատում, հազ. մ<sup>3</sup>/ հա

2.4. Այլ հատումներ, ընդամենը, հազ. մ<sup>3</sup>/ հա  
այդ թվում՝ ճանապարհների, երկարգեցների, էլեկտրագեների և  
այլ հաղորդակցության ուղիների կառուցման նպատակով, հազ.  
մ<sup>3</sup>/ հա

2.5. Հատուկ պահպանվող անտառների հատում, ընդամենը,  
այդ թվում՝ ջրապաշտպան և այլ պաշտպանական նշանակու-  
թյան անտառներ, հազ. մ<sup>3</sup>/հազ. հա

2.6. Ոչնչացած անտառ, ընդամենը  
այդ թվում՝ արդյունաբերական թափոններով, օդի, ջրի, հողի  
աղտոտումից, հրդեհների և այլ անբարենպաստ գործոնների  
պատճառով, հազ. մ<sup>3</sup>/ հա

2.7. Անտառահատված և ոչնչացած անտառային տարածք-  
ներն ամբողջ անտառապատ տարածքի համեմատությամբ, %

3. Անտառային ռեսուրսների պահպանման, վնասատուների և հի-  
վանդությունների դեմ պայքարի միջոցառումները

3.1. Քիմիական պայքար օդանավերի միջոցով, հա/ հազ.  
դրամ

3.2. Քիմիական միջոցառումներ, հա/ հազ. դրամ

այդ թվում՝ նախազգուշական, հա/ հազ. դրամ

3.3. Կենսաբանական միջոցառումներ, հա/ հազ. դրամ

3.4. Հակահրդեհային միջոցառումներ,  
այդ թվում՝ օդանավերի միջոցով, հա/ հազ. դրամ

3.5. Հիդրոնելիորատիվ միջոցառումներ, հա/ հազ. դրամ

3.6. Անտառային ռեսուրսների պահպանության և միջոցա-  
ռումների կիրառման համար շինարարական օբյեկտների կա-  
ռուցում և շահագործում (մեքենաների ու սարքավորումների

- ծեռք բերում, օդանավերի համար հրապարակների կառուցում և այլն), հազ. դրամ
4. Անտառային ռեսուրսների վերականգնումը,
- 4.1. Անտառվերականգնման ենթակա ամենամյա տարածությունը, ընդամենը, հազ. հա  
այդ թվում՝ ըստ տեսակների, հազ. հա  
Ամենամյա տարածությունից ենթակա է վերականգնման.  
ա) բնական վերականգնման, հազ. հա  
բ) արհեստական վերականգնման, հազ. հա  
այդ թվում՝ ոչ անտառապատ տարածքներում (ավագուտներ, ձորակներ և այլն), հազ. հա
- 4.2. Փաստացի վերականգնված անտառային տարածք, ընդամենը, հազ. հա  
այդ թվում ըստ խմբերի, հազ. հա
- 4.3. Փաստացի վերականգնված անտառային տարածքներից հատուկ պահպանվող տարածքներ, հազ. հա
- 4.4. Փաստացի վերականգնված տարածքների հարաբերությունը հատված և ոչնչացած անտառների տարածությանը, %
5. Անտառապատ տարածքը տարածաշրջանում, %
- 5.1. Անտառային տարածքը 1 մարդու հաշվով, հա/ մարդ
- 5.2. Տարեկան անտառի աճի ավելացումը, մ<sup>3</sup>
- 5.3. Միջին աճը 1 հա անտառածածկ տարածքի համար, մ<sup>3</sup>/ հա
6. Անտառապահական միջոցառումների իրականացման համար ծախսեր
- 6.1. Անտառտնտեսական աշխատանքներ
- 6.2. Անտառպաշտպան աշխատանքներ
- 6.3. Հիդրոտեխնիկական և անտառչորացման աշխատանքներ
- 6.4. Անտառ-մշակութային աշխատանքներ
- 6.5. Հակարողեհային միջոցառումներ
- 6.6. Անտառային սերմերի հավաքման և պահպանման աշխատանքներ
- 6.7. Նախագծահետազոտական աշխատանքներ:

## **12.4. Պետական անտառային կարգադրություն**

Անտառօգտագործման էկոլոգաիրավական վիճակի կարգավորման հիմնական ֆունկցիան հանդիսանում է՝

- անտառային ֆոնդի պետական հաշվառումը,

- անտառային կաղաստորը,

- անտառային մոնիթորինգը,

- անտառի պետական պահպանումը,

- անտառաշինությունը,

- անտառների վերականգնումը և ընդարձակումը,

- անտառների օգտագործման, վերարտադրության, պահպանման պետական վերահսկողությունը,

- անտառօգտագործման վեճերի լուծումը և այլն:

Անտառային ռեսուրսների արդյունավետ օգտագործման էկոլոգիական մեխանիզմն իր մեջ ընդգրկում է՝

- անտառային ռեսուրսների օգտագործման համար վճարումների համակարգը,

- անտառային ռեսուրսների և շրջակա միջավայրի օգտագործման համար վճարումները,

- անտառային ռեսուրսների հաշվառումը և գնահատումը,

- անտառօգտագործման արտոնագրումը, էկոլոգիական ապահովումը, էկոլոգիական ֆոնդի ապահովումը,

- անտառային կաղաստորի տեղեկատվությունը և այլն:

Անտառօգտագործման էկոլոգաիրավական և տնտեսական մեխանիզմների համակարգի կարևոր օլակներից է միասնական մեթոդով պետական անտառային կաղաստորի վարումը: Պետական անտառային կաղաստորը պետք է պարունակի անտառային ֆոնդի վերաբերյալ տնտեսական էկոլոգիական և այլ քանակական ու որակական բնութագրիչ տեղեկություններ:

Կաղաստորն իր մեջ ներառում է՝

- տեսակային կազմի ցուցակը (հաճարենի, բոխի, կաղնի, սոճի և այլն),

- անտառի կարգավիճակը (հատուկ պահպանվող, առաջին, երկրորդ և երրորդ խմբի),

- անտառօգտագործման տեսակը (առաջնային՝ անտառանյութի մատակարարող, երկրորդային՝ սնկի և հատապտուղների, դեղաբույսերի հավաքատեղ, խոտիաթը և արոտավայր և այլն),

- անտառվերարտադրությունը:

Անտառների պետական հաշվառման և պետական կաղաստորի վարման կարևոր բաղադրիչ մասը անտառի տնտեսական գնահատումն է, որը հնարավորություն է տալիս համարել առանձին անտառտնտե-

սությունների տնտեսական գործունեության արդյունքները, պլանավորել փայտանյութի ստացման հնարավորությունները և փաստացի օգտագործումը, ինչպես նաև հաստատել անտառօգտագործման վճարման կարգը, որպես բնական ռեսուրս:

Պետական անտառային կադաստրի տվյալները օգտագործվում են անտառային տնտեսության ղեկավարման գործում, այդ թվում, անտառների արդյունավետ օգտագործման, վերարտադրության, պահպանման կազմակերպումը, դրանց քանակական և որակական փոփոխությունների՝ անտառային հողերի ոչ անտառայինի անցնան վերաբերյալ վերահսկողությունը, անտառային ռեսուրսների օգտագործման վճարների որոշումը, անտառօգտագործողների տնտեսական գործունեության գնահատումը և այլն:

# **ԳԼՈՒԽ 13**

## **ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԻ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՇՊԱՆՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՕՐԵՆԵԿԸ**

### **13.1. Բուսականությունը որպես մոնիթորինգի օբյեկտ**

Կանաչ բույսերը երկիր մոլորակի վրա տարածված այն օրգանզմներն են, որոնք հանքային նյութերից օրգանական նյութ են սինթեզում: Մնացած բոլոր օրգանիզմներն օգտագործում են այդ պատրաստի արտադրանքը, այնպես, որ օրգանական ծագման ամեն ինչ իր գոյությամբ պարտական է բուսական ծածկոցին:

Ֆուտոսինթեզի գործընթացում բույսերը բացի օրգանական նյութի սինթեզից արտադրում են ազատ թթվածին և լրացնում մթնոլորտային օդի թթվածնի պաշարը: Ամբողջ մոլորակի բուսականությունը տարեկան արտադրում է շուրջ 375 մլր տոննա օրգանական նյութ, այդ գործընթացում մթնոլորտ առաքելով շուրջ 40 մլր տոննա թթվածին, յուրացնելով 4-5 մլր տոննա ածխաթթու գազ (Յայրապետյան Է.Ս. և ուրիշներ, 2005):

Բուսական ծածկոցը իրականացնում է քաղցրահամ ջրի շրջապտույտի մի կարևոր օղակը՝ գոլորշիացումը տերևային մակերեսով (տրանսպիրացում):

Բույսերը կենդանիների հետ միասին ձևավորում են բարդ սննդային շղթաներ, դրանով իսկ ապահովում կենսածին տարրերի կենսաբանական շրջապտույտը կենսոլորտում, ինդի հետ միասին կանխում այդ սննդատարերի լվացումն ու տեղատարումը դեպի օվկիանոս:

Բուսական մնացորդների հաշվին երկրաբանական ժամանակներում երկրակեղենում կուտակվում է հսկայաքանակ էներգիա՝ վառելիքաներգիական ռեսուրսների տեսքով (քարածուխ, նավթ, գազ, տորֆ և այլն):

Բույսերը պաշտպանում են հողը էրոզիայից, բարելավում են բնակավայրերի սանիտարակիցինիկ պայմանները, մասնակցում են մթնոլորտի աղտոտման դեմ պայքարին, պակասեցնում են աղմուկը քաղաքներում:

Չափազանց մեծ է բույսերի դերը մարդու կյանքում: Մարդու այն օգտագործում է կյանքի և տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, ամենատարբեր նպատակներով՝ ուտելի-համեմունքային, դեղագործական, դեկորատիվ, տեխնիկական և այլն:

Չամաշխարհային ֆլորայի գենոֆոնի պահպանման խնդիրը ներկայում համամոլորակային նշանակություն է ստացել: Մեզ շրջա-

պատող բուսական աշխարհի հազարավոր տեսակներ, անհիշելի ժամանակներից ի վեր օգտագործվել են մարդու կողմից, ներկայումս գիտության և տեխնիկայի զարգացման հզոր վերելքի պայմաններում ոչնչանում են:

Բուսական աշխարհի պահպանության խնդիրներն առավել հրատապ են մեր հանրապետության համար, որտեղ բուսատեսակների խտությունը հազվադեպ մեծ է՝ 30000 կմ<sup>2</sup> տարածքի վրա հանդիպուն են շուրջ 9000 տեսակ, որոնցից բարձրակարգ բույսերը մոտ 4000 (3960): Ավելին, Հայաստանի ֆլորայի շուրջ 400 տեսակներ համարվուն են հազվագյուտ, շուրջ 180 տեսակներ տարածաշրջանի՝ Այսրկովկասի էնդեմներ, իսկ 125-ը տեղական՝ Հայաստանի էնդեմներ (Գալստյան Ս.Ռ., Մկրտչյան Ա.Լ., Թամոյան Ս.Զ., 2009):

Մյուս կողմից, պետք է նշել, որ շատ տեսակներ ել վտանգված են՝ անհետացած, անհետացող, հազվագյուտ, կրծատվող և անորոշ կարգավիճակներով, գրանցված են ՀՀ ֆլորայի «Կարմիր գրքում»:

Հայաստանի բուսական ծածկոցի պահպանության խնդիրն ավելի պարզորոշ պատկերացնելու համար պետք է իմանալ դրա հիմնական տիպերի վիճակը և պահպանության ուղիները:

### **13.2. ՀՀ Բուսական ծածկույթի տիպերը եւ դրանց պահպանության խնդիրները**

Երկրի վրա հազվադեպ է հանդիպում այնպիսի տարածք, որտեղ դիտվի բուսական տեսակների այնպիսի մեծ բազմազանություն, ինչպիսին առկա է Հայաստանի տարածքում:

Ակադեմիկոս Ա. Լ. Թախտաջյանը դա բացատրում է Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով, որտեղ միակցվում են բնույթով միանգամայն տարբեր բուսաբանական երեք մարզեր՝ Կովկասյան, Հայ-իրանական և Հիրկանյան: Բացի այդ, լեռնաշխարհում միանում են Ցիրկումբրուեայան և Իրան-Թուրանական բուսաբանական մարզերի սահմանները, որոնց ազդեցությամբ ձևավորվել են խիստ տարբեր և բազմազան բուսականություն: Ցիրկումբրուեայան մարզի սահմաններում բուսականությունն աչքի է ընկնում բորեալ և մեզոֆիլ տեսակների գերակշռությամբ, իսկ Իրան-Թուրանական մարզի ներկայացուցիչները մեծավանական քսերոֆիլ են, անապատային և կիսաանապատային տեսակների գերակշռությամբ: Բուսական մարզերի ազդեցությունը, հողակլիմայական պայմանների և ռելիեֆի բազմաձևությունները, խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությունն առաջացրել է բուսական ծածկոցի յուրօինակ բազմազանություն: Աղյունքում, ՀՀ տարածքում հանդիպում են երկրագնդի

բուսական ծածկոցի համարյա բոլոր հիմնական տիպերի ներկայացուցիչները, բացառությամբ արևադարձայիններից:

Սակայն, յուրաքանչյուր երկրի բուսական բազմազանության չափանիշը ոչ այնքան ֆլորայի ներկայացուցիչների բացարձակ թվաքանակն է, որքան հազվագյուտ և հնագույն ծագում ունեցող՝ էնդեմ և ռելիկտային տեսակների առկայությունը: Հայաստանի Հանրապետությունն աչքի է ընկնում ոչ միայն տեսակային կազմի հարստությամբ և էնդեմ տեսակների առատությամբ, այլև առանձին տեսակների սահմանափակ տարածմամբ:

Որոշ տեսակների տարածման արեալն ընդգրկում է միայն մի քանի քառակուսի կիլոմետր, և բնակչության մեջ խսության ու մարդու տնտեսական գործունեության հետևանքով դրանցից շատերը կարող են խսպառ վերանալ: Հետևաբար, բուսական ծածկոցի պահպանության խնդիրները Հայաստանի նման տարածքում առավել հրատապ ու կարենու են:

Մեր հանրապետության՝ տեսակային կազմով հարուստ բուսածածկի պահպանության հարցերը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է լավ ճանաչել բուսական տարբեր տիպերը, համակեցությունը, դրանց բաղադրիչ տարրերը, պահպանության վիճակը, հեռանկարները: Դա իր հերթին պահանջում է իրականացնել բուսածածկույթի մոնիթորինգ՝ տիպային, տեսակային և քանակական կազմը ճշգրտելու, էկոլոգիական վիճակը գնահատելու, սպասվող բացասական փոփոխությունները կանխատեսելու համար:

**Անապատային բուսականություն:** Անապատային տարածքներն ունեն խիստ չոր ու ցանաքային կլիմա՝ ջերմաստիճանների մեջ տատանումներով, մբնոլորտային տեղումները սակավ են, արեգակնային ճառագայթման ինտենսիվությունը բարձր և այլն: Անապատային բուսականությունը Հայաստանի տարածքում չնչին՝ 30 հազար հեկտար տարածություն է զբաղեցնում: Այն հիմնականում հանդիպում է Արարատյան դաշտում և այն երիգող նախալեռներում: Անապատային բուսականության համար բնորոշ առանձնահատկություն է համարվում ճիմ առաջացնող բուսատեսակների լրիվ բացակայությունը, հողի մակերեսի սահմանափակ (մինչև 30%) բուսապատումը:

Հողի նկատմամբ ունեցած պահանջն համապատասխան, դրանք լինում են՝ աղասեր (օշան, շորան, կարմրանները, կոնաձև աղապատուկ և այլն, 217 տեսակ), գիպսասեր՝ (սապնարմատ, զուգատերև, կաթնուկ, ոզնաթուփ և այլն), ավազասեր (գեղածնկիկ, սպիտակ հազարատերևուկ, թամամշյանի օշան, տարօրինակ և Շովիցի գազեր և այլն):

Չնայած բուսական ծածկոցի ոչ մեջ խսությանն ու տեսակային կազմի համեմատական աղբատությանը, անապատային բուսակա-

նության մեջ կան որոշ հազվագյուտ տեսակներ, որոնք գիտական մեջ արժեք են ներկայացնում:

**Կիսաանապատային բուսականություն:** Այն սովորաբար կազմավորվում է բարձր ջերմային ռեժիմ և անբավարար խոնավություն ունեցող գոտիներում: Հայաստանում նման լանդշաֆտներ են հանդիպում այն տարածություններում, որոնք գտնվում են իրանական խիստ ցանքաքային կլիմայի մշտական ազդեցության տակ: Կիսաանապատային ամենաբնորոշ լանդշաֆտն Արարատյան գոգավորությունն է, ինչպես նաև Զանգեզուրի, Մեղրի և Վայքի լեռնաշղթաների 600-1500մ բարձրություններում: Կիսաանապատների ամենամեծ զանգվածներն Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում են:

Բուսականության այս տիպը գորշ և անհրապույր է: Ծառատեսակները լիովին բացակայում են, իսկ բիերից հանդիպում են ամենաչորհիմացկուն և սակավապահանջ տեսակները:

Ի տարբերություն անապատների, այստեղ բուսական համակեցություններում զգալի տոկոս են կազմում կարճակյաց-վաղանցիկ (էֆեմեր) տեսակները, ճիմ առաջացնող հացազգիները (անապատասեզ, ցորնուկ, այժակն): Բուսականության հիմնական բաղադրիչը հոտավետ օշինդրն է կամ բարձմենակը, գերակշռում են նաև կապարը, դժնիկը, փշանաղիկը:

ՀՀ կիսաանապատների հսկայական տարածություններ վերածվել են ագրոլանդշաֆտների, միաժամանակ մեծ մակերեսներ, հատկապես՝ Թալինի և Արովյանի տարածաշրջաններում, դեռևս օգտագործված չեն և ծառայում են որպես ծմեռային արոտներ:

Կիսաանապատային բուսականության կազմում բավականին շատ են ուտելի (սիրեխ, թրենջուկ, կապար, խատուտիկ, դանդուռ և այլն), համեմունքային (ուրց և այլն) դեղատու (առյուծագի, լոշտակ, սրոհունդ, հազարատերևուկ, անթառամ, մարյամախոտ և այլն) բույսերը: Ընդհանրապես, այս բուսական ֆորմացիան պարունակում է մեծ թվով օգտակար բույսեր: Հատկապես ուշադրության են արժանի Արովյանի, Գեղարիդի, Գառնիի, Շորբուլարի, Աղավնաձորի կիսաանապատները, որտեղ հանդիպում են վայրի ցորենի, գարու և աշորայի բուսուտներ: Ըստ Ս.Գ. Թումանյանի, վայրի ցորենի համաշխարհային ֆոնդի 650 այլատեսակներից 230-ը աճում է Հայաստանում, և դրանց հիմնական մասը՝ կիսաանապատներում:

Բուսատեսակները բնության մեջ հանդես են գալիս միմիանց և կենդանիների հետ խիստ փոխկապված: Այնպես, որ առանձին բուսատեսակների պահպանման միակ և հուսալի ձևը բուսական ֆորմացիաների պահպանումն է: Բուսական ֆորմացիան մի բարդ օրգանիզմ է, որտեղ յուրաքանչյուր բույս կամ բույսերի խմբակցության որոշակի գործառույթ է կատարում: Պատկերավոր ասած, համակեցության

յուրաքանչյուր բաղադրիչն այդ միասնական օրգանիզմում՝ մեկ օրգանի դեր է կատարում, ինչպես արմատները կամ տերևները բույսի համար: Բավական է համակեցության որևէ տիրապետող տեսակ ոչնչանա (գերարածեցում, անկանոն հավաք և այլն), որպեսզի այն կորցնի հազարամյակների ընթացքում ձեռք բերած յուրահատկությունը, ենթարկվի անցանկալի հետընթաց փոփոխությունների, կազմալուծվի և վերանա՝ տեղը զիջելով ցածրարժեք կամ մոլախոտային բուսական խմբավորումների:

Կիսաանապատային գոտու բուսատեսակների շարքում հանդիպում են այնպիսիները, որոնք դարեր շարունակ օգտագործվելով բնակչության կողմից, աստիճանաբար անհետանում են բնական համակեցություններից: Այսպես, օրինակ, շնամեռուկը (հնդկական կանեփ, ապոցինում, քենդիր), որը բնակչության կողմից օգտագործվում էր որպես դեղամիջոց՝ սրտի, երիկանների և միզապարկի մի շարք հիվանդությունների բուժման նպատակով, իսպառ ոչնչացել և անհետացել է մեր հանրապետության բուսածածկից:

Զափազանց անբավարար է անապատակիսաանապատային բուսածածկույթի ներկա վիճակը, որոնք ծառայում են որպես արտավայրեր: Դրանք քայրայված են, արժեքավոր բուսատեսակներից աղքատացած, փոխարենը՝ վնասակար և թունավոր բույսերով առատ: Բանն այն է, որ ամկանոն արածեցման և անբավարար խնամքի հետևանքով արժեքավոր կերային բույսերն արագ կրծատվում են, իրենց տեղը զիջելով ցածրարժեք, վնասակար, երբեմն էլ՝ թունավոր բույսերին:

Երբեմն, անգամ խիստ սահմանափակ ագրոտեխնիկական միջոցառումների (քարհավաք, պարարտացում) կիրառմամբ հնարավիր է բարեշրջել անցանկալի երևույթների ընթացքը, իսկ ջրարբիացման հնարավորության դեպքում այս գոտու արոտավայրերի էկոլոգիական վիճական արմատապես կարող է բարելավվել: Նման դեպքուն զգալիորեն կարող է փոխվել նաև բուսականության տեսակային կազմը:

Արոտավայրերը միշտ բարվոք վիճակում պահելու և վաղ գարնանային արածեցման ազդեցությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել արոտաշրջանառություն, արոտների հերթափոխային օգտագործմամբ:

**Տափաստանային բուսականություն:** Լեռնային տափաստանը Հայաստանի բուսական ծածկոցի ամենատարածված և բնորոշ լանդշաֆտային տիպերից մեկն է: Տափաստանները գրավում են միջին լեռնային գոտին՝ ծովի մակերևույթից 1300 - 2200մ, իսկ առանձին դեպքերում՝ 400 - 2700մ բարձրությունները, զբաղեցնելով հանրապետության տարածքի գրեթե կեսը (Հայաստանի բնաշխարհ, 2006թ.): Տափաստանային բուսականությամբ են ծածկված ՀՀ բոլոր խոշոր

լեռնային զանգվածների միջին գոտիները, գետահովիտները, սարավանդերը և այլն:

Հայաստանի լեռնային տափաստանները խիստ խայտաբղետ են և աչքի են ընկնում բուսական ֆորմացիաների մեջ բազմազանությամբ: Այստեղ կարելի է առանձնացնել տափաստանների շուրջ 20 ենթատիպեր, որոնցից ամենաբնորոշներն են՝ կծմախոտային, շյուղախոտային, փետրախոտային, սեզային, բոշխային, օշինդրային, տարախոտային, դաշտավլուկտարախոտային, կելերային և տրագականտային տափաստանները:

Հայաստանի տարածքում ամենաբնորոշ տափաստանային լանդշաֆտները հանդիպում են Շիրակում ու Սևանի ավազանում և աչքի են ընկնում խիստ ցանաքային կլիմայական պայմաններով: Այստեղ հիմնականում հանդիպում են մարգագետնատափաստանային ֆորմացիաները, որտեղ վերին շարահարկում գերակշռում են տափաստանային հացազգի բույսերը, ներքին շարահարկում՝ մարգագետիններին բնորոշ տարախոտայինները:

Լեռնատափաստանային բուսականության մեջ ուրույն տեղ են գրավում տրագականտային տափաստանները, որտեղ գերակշռում են բարձիկանման բույսեր՝ փշաբարձ, փշամանդիկ, սապնարմատ, եղջերատերևավոր կորնգան, գազ և այլն: Եղջերատերևավոր կորնգանի առանձին բարձիկներն ունենում են միչև 25 տրամագիծ, իսկ արեցանման սապնարմատի բարձիկը կարող է ունենալ մինչև 150 կգ զանգված:

Հայաստանի տափաստանային բուսականությունը, մյուս տիպերի համեմատ, առավել շատ է տուժել մարդածին գործոնների ազդեցությունից: Տափաստանները մեր լանդշաֆտային ոսկե ֆոնդն են կազմում, սակայն դրանց մակերեսները տարեցտարի կրծատվում են, քանի որ վերածվում են մշակովի լանդշաֆտների:

Այսուամենայիկ, տափաստանները դեռևս հանդիպում են Վայքում, Սյունիքում, Աշոցքում, Շիրակում, Կոտայքում: Առանձնապես մեծ տարածություններ են գրավում տրագականտային տափաստանները, որոնք հատկապես վերջին տասնամյակներում ընդարձակել են իրենց արեալն ի հաշիվ հացազգի տափաստանների, կաղնուտների և նոսրանտառատների: Իհարկե, այս գործում մեծ է եղել մարդածին գործոնը, հատկապես կաղնուտների, գիհու նոսրուտների ոչնչացումը, բուսականության կազմալուծումը:

Լեռնային տափաստանների ազդեցությունը բուսականության մյուս ֆորմացիաների վրա այնքան ուժեղ է արտահայտվում, որ դրանց խոտածածկում հաճախ կարելի է հայտնաբերել տիպիկ տափաստանային տարրեր:

Ինտենսիվ արտահայտված մարդածին ճնշման պայմաններում տափաստանային ֆորմացիաների մի քանի բնորոշ տեսակներ արդեն

անհետացել են մեր հանրապետության բուսածածկից, բազմաթիվ տեսակներ էլ գտնվում են անհետացնան եզրին: Հանրապետության լեռնային տափաստաններում աճում են մարդկության համար բացարիկ կարևոր նշանակություն ունեցող և միայն Հայաստանին բնորոշ վայրի ցորենների տարբեր տեսակներ:

**Մարգագետնային բուսականություն:** Մարգագետինները գրադարձնում են հանրապետության տարածքի 25%-ը: Դրանք բաժանվում են 2 մեծ խնբի ենթալպյան և ալպյան:

Ենթալպյան մարգագետիններն ունեն մոտ 400 հազ. հեկտար տարածում՝ 2000 - 2800մ բարձրություններում: Լեռնազանգվածների մեջ մասի վրա այն բավականին լավ արտահայտված գոտի է կազմում՝ Արագածի, Գեղամա, Չանգեզուրի, Մեղրի, Գուգարաց լեռներում: Ենթալպիյան մարգագետիններն աչքի են ընկնում հարուստ տեսակային կազմով, տեսակների թիվն անցնում է 160-ից: ճիմ առաջացնող հիմնական բուսատեսակները դաշտավլուկազգիններն են, բոշխերը և լորբազգինները: Մեծ տոկոս են կազմում նաև տարախոտերը՝ վարդակակաչ, անմոռուկ, երեբուկ, ողլաղեղ, օշինդր, հրանունկ, թթվիծ, կղմուխ, քոսքուկ և այլն: Առանձին լեռնաշղթաների խոր կիրճերում և ձորերում, լեռնային գետերի ափերին հանդիպում են ենթալպյան որոշ խմբավորումներ՝ բարձրախոտեր (արևելյան ընձախոտ, ողլախոտ, զիվան, այծախոտ, ոզնախոտ և այլն), որոնց բարձրությունը հասնում է մինչև 2,5 մ: ճնապատումը թույլ է արտահայտված:

Հյուսիսային Հայաստանի անտառային գոտու վերին սահմաններում, որտեղ հողաշերտը հզոր ու խոնավ է, հանդիպում են ենթալպյան մարգագետինների արտակարգ փարթամ բուսազանգվածներ, որոնք «քարձրախոտը» անվանում են ստացել: Տիրապետող տեսակներն են՝ ընձախոտը, ողլախոտը, հալկորիկը, շուշանը, ժախը և այլն, որոնց բարձրությունը անցնում է 1,5-2,0 մետրից:

Ալպյան մարգագետիններն սկսվում են լեռնազանգվածների վերին գոտու 2700 - 2800մ բարձրություններից: Բուսագոյացման պայմաններն այստեղ չափազանց ինքնատիպ են, վեգետացիոն ժամանակաշրջանը խիստ կարծ (60 - 70 օր), նկատվում է գիշերվա և ցերեկվա ջերմաստիճանների մեջ տարբերություն, մթնոլորտի նոսրություն, ուժեղ քամիների և անդրմանուշակագույն ճառագայթման առատություն:

Հանրապետությունում անասնապահության բուրն զարգացման ներկա փուլում մարգագետինների արդյունավետ օգտագործման ու պահպանության հարցը խիստ արդիական է: Միլիոնավոր գլուխ անասունները այստեղ ամեն տարի ստանում են սպիտակուցներով, վիտամիններով հարուստ էժան արոտային կեր, կոփիվում են բարձր լեռնային պայմաններում, գիրանում են, ապահովում բարձր մթերա-

տվություն: Ալպյան գորգերի անկանոն արածեցումը բացասաբար է անդրադառնում բուսածածկի որակի վրա: Առավել օգտակար բուսատեսակների քանակը տարեցտարի պակասում է, իր տեղը զիջելով փշոտ, բունավոր և ցածրարժեք բույսերի՝ տատասկներ, հրանունկներ, ոչլախոտ, գայլաբար և այլն:

Նախկինում լեռնային արոտավայրերը կազմում էին ավելի քան մեկ միլիոն, ներկայումս՝ մոտ 500 հազար հեկտար:

Տարբեր չափով էրոզացված արոտավայրերում բուսածածկի խտությունը բարձրացնող և հողի լվացումը կանխող ամենաարդյունավետ միջոցառումներն են արածեցման արգելումը (մարգագետիններին հանգիստ տալու համար), պարարտացման միջոցով մարգագետինների սննդային ռեժիմի բարելավումը, պայքարը մոլախոտային բուսականության դեմ, ջրաբիացման ցանցի բարելավումը, խոտախառնուրդների ցանքը և այլն:

Վերջին տարիներին նկատվում է ալպյան գորգերի անխնառչացում՝ կանաչապատման նպատակով ճիմեր կտրատելու հետևանքով: Կանաչապատող շատ կազմակերպություններ, հաշվի չառնելով բնության պահպանության արմատական շահերը, պարբերաբար ալպյան գոտուց հսկայական քանակությամբ ճնաշերտ են կտրուն բնակավայրերի կանաչ թմբերն ընդարձակելու նպատակով: Չպետք է մոռանալ, որ նման գործունեության հետևանքով հողատարման նորանոր օջախներ են առաջանում՝ մեծ և փոքր ծորակների սկիզբ դնելով: Մինչդեռ այլ քաղաքների օրինակով կարելի է կազմակերպել ճնաշերտի արտադրություն և բնությանը վնաս չպատճառել:

Ինչպես ցույց են տվել «Անասնապահության և անասնաբուծության գիտահետազոտական ինստիտուտի» ուսումնամիջությունները, կերային տարածությունների պահպաննան լավագույն միջոցը արդյունավետ խոտհունձն է և անասունների արդյունավետ արածեցումը: Դարձավոր է արածեցնել միայն մեկ անգամ, որից հետո թողնել, որ արոտների խոտածածկը վերականգնվի: Որոշ ժամանակ անց (շուրջ 20 օր հետո) կարելի է արածեցնել երկրորդ անգամ. ապա նույն կարգով երրորդ անգամ և այլն: Հերթափոխային արածեցման այնպիսի համակարգում պետք է կիրառել, այսպես կոչված, բաժնային արածեցումը, այսինքն՝ ամեն օր արոտամասում որոշ բաժին առանձնացնել անասուններին բավարար չափով կերակրելու համար:

Խոտհարքներն ամեն տարի միևնույն ժամկետներում հնձելու պատճառով հաճախ արժեքավոր խոտաբույսերը շարքից դուրս են գալիս և նրանց տեղը գրավում են ցածրարժեք մոլախոտերը, որոնք տարեցտարի գցում են խոտհարքների արտադրողականությունը և վատացնում դրանց արժեքը: Այդ բացասական երևույթի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է ամենուրեք իրագործել խոտհարքների

շրջանառություն, խոտիարքներն օգտագործելով ըստ տարիների, առանձին տեղամասերով և տարբեր ռեժիմներով: Որոշ, դեռևս վերջնականապես շարքից դուրս չեկած արոտավայրերում, խիստ տրորված բուսածածկը վերականգնելու համար անհրաժեշտ է 2-ից մինչև 5 տարի արգելել անասունների արածեցումը:

Համալիր միջոցառումների շնորհիվ (պարարտացում, ենթացանք և այլն), խոտի բերքի բարձրացնան հետ միասին, բարելավվում է նաև խոտածածկի բուսական և քիմիական կազմը, բարձրանում է խոտի սննդարժեքը, պակասում են ցածրարժեք և մոլախոտային բույսերը, արոտավայրերի մերկացած տարածությունները ծածկվում են բուսականությամբ և երկարածզվում է արոտային շրջանը:

Ալպյան արոտների գերբեռնվածությունը իջեցնում է բույսերի ոչ միայն որակական արժեքը, այլ նաև քանակական ցուցանիշները: Ըստ Յ.Կ. Մադարյանի, Արագածի լեռնային արոտներում մեկ հեկտարից ստացվում էր միջին հաշվով 10-12 ցենտներ խոտ: Նույն վայրերում, որտեղ արոտները տրոհված ու էրոզացված են, ներկայումս միջին բերքատվությունը 4-7 ցենտներից չի անցնում: Դա նշանակում է, որ վերջին տասնամյակների ընթացքում շատ տեղերում ալպյան արոտների բերքատվությունը գրեթե կխսով չափ նվազել է:

Նկատի ունենալով, որ ալպյան գոտին որոշ բույսերի պահպանության հուսալի վայր է, անհրաժեշտ է հաստուկ ուշադրություն դարձնել այդ գոտու հազվագյուտ բուսատեսակների պահպանության հարցին:

**Զրային բուսականություն:** Տեղանքի խիստ կտրտվածության հետևանքով լեռնային երկրներում ջրային բուսականությունն ընդհանուր առնամբ թույլ զարգացում ունի: Մեր հանրապետությունն այդ տեսակետից բացառություն է կազմում, քանի որ ջրային ռեսուրսներն այստեղ չափազանց բազմազան են: Յայաստանի ոչ մեծ տարածքում հանդիպում են 215 գետեր ու գետակներ, 100-ից ավելի լճեր, լճակներ ու ջրամբարներ, 7500 քաղցրահամ ու 1000 հանքային աղբյուրներ, չհաշված բազմաթիվ ձորերն ու ձորակները:

Զրային բուսականության զարգացման գործում վճռական նշանակություն ունեն ջրային ավազանի բացարձակ բարձրությունը, մեծությունը, խորությունը, օդաբափանցելիությունը, հասակը, մաքրությունը և այլն: Ա.Ս. Բարսեղյանի վկայությամբ, Յայաստանի ջրային ավազաններում աճում են ջրային բույսերի 60-ից ավելի տեսակներ: Դրանցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում սահիտակ և դեղին ջրաշուշանները, շերեփուկախոտը, ջրոսպերը, ծովսապը, ջրապուկը, ջրաստղիկը, ջրահարսը (նայաս), բյուրատերևուկը և այլն:

Կենսաբանական ռեժիմի կարգավորման տեսակետից ջրային բույսերը ջրաէկոհամակարգերում հսկայական դեր են խաղում՝ որպես

յուրահատուկ կենդանի ֆիլտր, մաքրում են ավագաները զանազան աղտեղություններից, ջուրը հարստացնում թթվածնով, կեր են հանդիսանում զանազան փափկամորթ կենդանիների հանար, որոնք իրանց հերթին նպաստում են ձկնային ռեսուրսների հարստացմանը:

Մեծ է ջրային բույսերի դերն ընտանի և վայրի ջրլող թռչունների կերակրման գործում: Օրինակ, ծովոսայր որպես կեր ոչ միայն չի զիջում հատիկային կերերին, այլև մեծ քանակությամբ վիտամիններ պարունակելու շնորհիվ նույնիսկ գերազանցում է: Եթե Լոռու նախալեռնային շրջանները, ինչպես նաև Արարատյան դաշտը (Մեծամոր, Սև ջուր) հարուստ չլինեին ջրային բույսերով, ապա հավանաբար, լողացող ջրային թռչունների այդախի բազմազանությունը չէր լինի այդ վայրերում: Դենց դրանց հաշվին են պահպանվում ջրային և ճահճային արժեքավոր թռչունները: Օրինակ, Գիլի լճի չորացման և ջրային բույսերի ոչնչացման հետևանքով Սևանի ավագանի շրջակայքից իսպառ վերացել են տասնյակ ջրային և ճահճային թռչուններ, որոնք մեծ արժեք էին ներկայացնում:

**Ճահճային բուսականություն:** ճահճճը նույնքան կարևոր էկոհամակարգ է, որքան՝ մարգագետինը, անտառը, անապատը և այլն: Բնության ընդհանուր համակարգում ճահճճներն ունեն իրենց որոշակի դեր՝ տարածքի ջրային ռեժիմի կարգավորման գործում: Դրանք սպունգի նման տարվա խոնավ եղանակին իրենց մեջ ներծծում, ամբարում են խոնավությունը, չոր եղանակին սնելով աղբյուրները, գետերը: Բացի այդ, ճահճճները ապաստան են ծառայում մի շարք թռչունների ու կենդանիների համար, որոնք բնադրում են այնտեղ և սնվում ճահճային բույսերով: Այս բոլորին պետք է ավելացնել ճահճճներին բնորոշ բուսականությունը, որը այլ ֆիտոցենոզներում չի հանդիպում և, հետևաբար, ճահճճների չորացման հետևանքով իսպառ վերացնում է:

Գիտական ուսումնասիրություններով հաստատված է, որ ճահճճների գոյությունը Յայաստանում մոտ մեկ միլիոն տարվա պատմություն ունի: Այդ մասին է վկայում Յրազդան գետի ավագանում մերձարևադարձային ճահճային բույսերի բրածո մնացորդների հայտնաբերումը:

Ճահճային բուսականությունը մեր հանրապետությունում լանդշաֆտային բնույթ չի կրում, այլ փոքրիկ զանգվածներով հանդիպում է բոլոր գոտիներում, հատկապես գետերի ու լճերի մերձափնյա մասերում, ծորերում և գետնաջրերով հարուստ լեռնային ու ցածրադիր հարբություններում, զբաղեցնելով շուրջ 20 հազար հեկտար տարածություն: Յանրապետության ճահճճներն աչքի են ընկնում բուսական խմբավորումների ու ֆլորիստիկ կազմի մեծ բազմազանությամբ: Այստեղ հայտնաբերված են 417 ջրաճահճային բույսեր, որոնցից

լայնորեն տարածված են՝ բոշխեր (40 տեսակ), որձախոտեր, կնյուններ, ճլախոտեր, ապուզան, կիզախոտ, եղեգ, շամբ, կեռոն, պալարեղեգ, մացարեղեգ, մակարդախոտ և այլն: Դրանց թվում կան մի շարք օգտակար բույսեր, դեղատու (խնկեղեգ, տուղտ, կարապածաղիկ, քաղցրարմատ), կերային (որդանախոտ, դաշտավլուկ սեղ), եթերայուղատու (դաղձ, խորդենի), դաբաղանյութեր պարունակող, ներկատու, ուտելի և այլն:

Հայաստանի լեռնային շրջաններում գտնվող ճահիճները բացի բուսական հումքից նաև բարձրորակ տորֆի հսկայական պաշարներ են պարունակում: Մեր հանրապետությունում հանդիպում են շուրջ 100 մեծ ու փոքր տորֆային զանգվածներ ծովի մակերևույթից 1400 - 2800 մետր բարձրության վրա: Միայն Վարդենիսի շրջանի «Գիլիի» տորֆային զանգվածը գրավում է 1500 հեկտար տարածք, որտեղ տորֆաշերտի հաստությունը հաճախ կազմում է նույնիսկ 6 - 8մ:

ճահիճների չորացման և մարդածին այլ գործունեության հետևանքով ճահճային ֆիտոցենոզների որոշ ներկայացուցիչներ այժմ գտնվում են անհետացման եզրին: Գիլի լծի ճահիճների չորացման հետևանքով ՀՀ տարածքից անհետացել է ավելի քան 30 արժեքավոր ջրաճահճային թռչուն, ոչնչացել՝ 40-ից ավելի ջրային և ճահճային բուսատեսակներ:

# ԳԼՈՒԽ 14

## ԸՆԴԵՐՁԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՇԱՆՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Երկրակեղևը պարունակում է օգտակար հանածոների հսկայական պաշարներ: Դրանց մի մասը տեղավորված է կեղևի ամենավերին շերտերում, մյուսներո՞ւ մակերեսին: Յանքային հանածոները կազմում են մեր երկրի հանքային ու էներգետիկ ռեսուրսների հիմքը:

Յանքային հանածոները դասվում են սպառվող, չվերականգնվող ռեսուրսների շարքին: Դրանք առաջացել են երկրագնդի կազմավորման շրջանում և օգտագործման հետ դրանց պաշարներն աստիճանաբար նվազում են: Բայց «չվերականգնվող» հասկացությունը հարաբերական է, քանի որ երկրակեղևում միշտ տեղի են ունենում երկրաքիմիական բարդ գործընթացներ, որոնց արդյունքում կազմավորվում են նոր միացություններ, հանքային հանածոներ:

Բոլորին քաջ հայտնի է, թե որքան կարևոր նշանակություն ունեն հանքային հանածոները նարոկության համար: Առանց դրանց քաղաքակիրք աշխարհը գոյություն ունենալ չէր կարող, մարդկության առաջընթացը կանգ կառներ: Յանքային ռեսուրսներն էներգիայի առատ աղբյուր են, իումք են արդյունաբերության, շինարարության համար: Ընդերքը տալիս է քիմիական արդյունաբերության հումքի 75%-ը և օգտակար հանածոներից ստացվող էներգիայի 83%-ը:

Սակայն, խնդիր է կապված հանքային հանածոների սպառնան տեմպերին. Երկրագնդի մասշտաբով՝ դրանք բնակչության աճի տեմպերից ավելի արագ են սպառվում: Դա հատկապես նկատելի դարձավ բնության համար ճակատագրական 20-րդ դարում: Դարակեսին երկարահանքի օգտագործման ծավալները համարյա կրկնապատկվել են դարասկզբի համեմատ, իսկ նավթի պահանջարկը ավելացել է 3,3 անգամ: Այն դեպքում, եթե երկրագնդի բնակչության թիվը այդ նույն ժամանակաշրջանում ավելացել էր ընդամենը 38%-ով: Տեխնիկայի և գիտության զարգացման, մարդկանց բարեկեցության աճի հետ միասին ավելանում են օգտակար հանածոների հանույթի և վերամշակման տեմպերը: Այդ գործընթացը պահանջում է խնամքով վերաբերվել ընդերքի հարստությանը:

Գոյություն ունեն ընդերքի պահպանության դրույթներ, օրենսդրական իիմունքներ, կանոններ: Օգտակար հանածոների արտահանման համար ձեռնարկություններին հատկացվում են հողատարածքներ, որոնց ընդերքը միայն մի մասն է: Յատկացված տարածքներից արդյունահանող ձեռնարկությունները պետք է օգտակար հանածոներն արդյունահանեն նախագծային փաստաթղթերին համապատասխան,

իրականացնելով լեռնարդյունաբերական աշխատանքների վճասակար ազդեցությունից բնական օբյեկտների պահպանության միջոցառումներ՝ կանխարգելել տարածքների ու ջրային ավազանների աղտոտումը, միջոցառումներ ձեռնարկել բուսական և կենդանական աշխարհի պահպանության համար: Իսկ լեռնարդյունաբերության ձեռնարկությունների լուծարման դեպքում հողային մակերեսը պետք է բերել այցախի վիճակի, որ օգտագործվի այլ ճյուղերի գործունեության համար:

Համաձայն որոշումների և օրենսդրության, օգտագործողները պարտավոր են ապահովել ընդերքի արդյունավետ և համալիր օգտագործումը, պահպանելով՝ մթնոլորտային օդը, հողը, անտառները, ջուրը, շրջակա միջավայրի այլ օբյեկտները, ինչպես նաև շենքերը և շինությունները վճասակար ազդեցությունից, պահպանել բնության հատուկ պահպանվող տարածքները՝ արգելոցները, արգելավայրերը, ազգային պարկերը, բնության և մշակութային հուշարձանները:

Ընդերքի պահպանության հիմնական պահանջներն են համարվում երկրաբանական հետազոտությունների լրիվ և համալիր ուսումնասիրությունների ապահովումը, օգտակար հանածոների լրիվ արդյունահանումը և օգտակար հանածոների պաշարների արդյունավետ օգտագործումը՝ պահպանելով հաստատագրված կանոնները, ընդերքի ինքնակամ օգտագործման կանխում և այլն:

Ընդերքի օգտագործման օրենսդրությամբ սահմանված ընդիանուր պահանջներից բացի նախատեսվում է ընդերքի պահպանություն՝ հետազոտման և արդյունահանման տարբեր փուլերում:

Երկրաբանական հետազոտությունների փուլում առաջ են քաշվում օգտակար հանածոների պաշարների քանակական և որակական հավաստիությունը որոշելու պահանջներ, տրվելու է դրանց երկրաբանական - տնտեսական գնահատական:

Արդյունահանման փուլում պահանջվում է իրականացնել ամենաարդյունավետ մեթոդները, չփականացնելով օգտակար հանածոների արդյունահանման հարակից տարածքները և այդ տեղանքում ժամանակավոր չօգտագործվող, պահեստավորվող այլ օգտակար հանածոներն ու օգտակար բաղադրիչներ պարունակող արտադրական թափոնները:

Ընդերքում բացահայտված օգտակար հանածոների բոլոր պաշարներն, ըստ հաստատված կարգի, ենթակա են դիտարկման ու հաշվառման: Օգտակար հանածոների դիտարկման և հաշվառման հիմնական խնդիրն է՝ յուրաքանչյուր տարվա սկզբին ստանալ լրիվ և հավաստի տեղեկություններ ձեռնարկությունների ճյուղերի և հանրապետության հանքահունքային բազայի, դրանց գործողության և նախապատրաստման պաշարների վերաբերյալ:

Օգտակար հանածոներն, ըստ տնտեսական նշանակության, բաժանվում են երկու խմբի՝ հաշվեկշռային և արտահաշվեկշռային:

**Դաշվեկշռային** են համարվում այն պաշարները, որոնք տնտեսապես նպատակահարման են և բավարարում են ընդեղքի պաշարների հաշվառման համար սահմանված չափանիշներին:

**Արտահաշվարկային** պաշարների խմբին են դասվում այն պաշարները, որոնց օգտագործումը տեխնիկայի տվյալ զարգացվածության մակարդակում տնտեսապես նպատակահարմար չէ՝ պաշարների սակավության, հումքի պակաս քանակության, արժեքավոր բաղադրիչների քչության, շահագործման բարդության և այլ պատճառներով, սակայն դրանք հանդիսանում են հետագա արդյունաբերական յուրացման օբյեկտներ:

Օգտակար հանածոների պաշարները՝ կախված տեղաբաշխվածությունից, հումքի որակի ուսումնասիրվածությունից և հանածոների արդյունահանման լեռնատեխնիկական պայմաններից, բաժանվում են 4 խմբի:

**1-ին խմբի օգտակար հանածոների պաշարների** մշակման և մանրակրկիտ ուսումնասիրման, տեղաբաշխվածության, հանքային մարմնի ձևի և կառուցվածքի, հումքի արդյունաբերական տեսակի, որակի և արդյունահանման բնական գործոնների և այլ պայմանների վերաբերյալ գոյություն ունեն լիարժեք տեղեկություններ:

**2-րդ խմբի օգտակար հանածոների պաշարների** արդյունահանման նպատակով ուսումնասիրությունները տրվում են այն մանրամասնություններով, որոնք ապահովում են դրանց գտնվելու հիմնական առանձնահատկությունները, ձևերը, կառուցվածքը, բացահայտելու դրանց բնական և արտադրական տեսակները, տեխնոլոգիական կազմությունը և լեռնարդյունաբերական աշխատանքների շահագործման պայմանները որոշող հիմնական բնական գործոնները:

**3-րդ խմբի օգտակար հանածոների պաշարների** արդյունահանման համար ուսումնասիրությունները տրվում են ընդիանուր գծերով, որոնք ապահովում են դրանց գտնվելու վայրի, որակական կազմի, արդյունաբերական կառուցվածքի, տեխնոլոգիական կազմի վերաբերյալ տեղեկությունները:

**4-րդ խմբի օգտակար հանածոների պաշարների** նախնական գնահատում է կատարվում: Դրանց տեղաբաշխվածության պայմանները, հանքանյութի ձևերը, տեղադրվածությունը որոշվում է առանձին կետեր բացելու կամ նմանատիպ տարածքների ուսումնասիրությունների հիման վրա:

Օգտակար հանածոների պաշարների առկայության և փոփոխությունների վերաբերյալ դիտարկումների արդյունքները արտահայտվում են հաշվեկշռությում:

Դիտարկման հաշվեկշռում արտացոլվում են պաշարների առկայությունը տարվա սկզբում, որոնք ստորաբաժանվում են՝ արդյունահաննան, արդյունաբերական օգտագործման և փաստացի օգտագործման: Ցույց են տրվում արտահաննան ժամանակ տեղի ունեցող կորուստները, գոյություն ունեցող ծեռնարկությունների քանակը, կառուցվող և նախագծվող օբյեկտների քանակը:

Օգտակար հանածոների արդյունահաննան ընթացքում կարևոր է դիտարկել կորուստները: Նախկինում, երբ հանքանյութերի պահանջարկը փոքր էր, կորուստների վրա ուշադրություն չին դարձնում, այժմ երբ արդյունահանումը հսկայական ծավալների է հասնում, կորուստներին մեծ ուշադրություն են հատկացնում: Այն տնտեսապես վճասակար է և պետք է դիտարկումներ կատարել: Դրանց արդյունավետ և համալիր օգտագործումն առանց լրացուցիչ ներդրումների ու կառուցների համազոր է նոր հանքավայրերի բացմանը:

Օգտակար հանածոների արդյունահաննան ընթացքում կորուստների դիտարկումը և հաշվարկումը կատարվում է «Օգտակար հանածոների կորուստների վերաբերյալ հաշվետվության» ձևերում հետևյալ ցուցանիշներով:

- հանքավայրից չարդյունահանված հանածոյի մասը,
- կողմնակի խառնուրդների մասը,
- բեռնավորման և տեղափոխման ընթացքում կատարված կորուստները և այլն:

Օգտակար հանածոներն արդյունահանելիս մեծ ուշադրություն են դարձնում հիմնական և կողմնակի (երկրորդական) հանքատեսակների քանակի, որակի, բաղադրության և այլ ցուցանիշների վրա, դրանց վերաբերյալ կատարում են համապատասխան դիտարկումներ:

Դայտնի է, որ բնության մեջ մաքուր նյութի, օրինակ՝ պղինձ կամ մոլիբդենի հանքատեսակ չի հանդիպում, դրանք միշտ հանդես են գալիս բազմաթիվ ու բազմազան խառնուրդներով: Դրանց մեջ բացի հիմնական մետաղից, կան նաև մի շարք այլ ոչ պակաս արժեք ներկայացնող օգտակար բաղադրիչ նյութեր: Ընդերքի հարստությունների օգտագործման վիճակն այժմ այնպէս է, որ այդ երկրորդական կամ ոչ հիմնական նյութերի արժեքը որոշ դեպքերում ավելի բարձր կարող է լինել, քան հիմնական մետաղը կամ այլ հանածոները: Դրա հետ միասին, հաճախ ցածր տոկոս կազմող հանքաքարը լրիվ չի օգտագործվում: Օրինակ, մեր հանքապետությունում պղնձի արդյունահաննան ժամանակ մինչև վերջին տարիներն օգտագործում էին միայն այն հանքերը, որոնց մեջ պղինձը բարձր տոկոս է կազմում, իսկ մինչև 2 - 3% պղինձ պարունակող հանքաքարը չի օգտագործվել: Բացի այդ, շատ մեծ են այդ բանկարժեք հանքանյութերի մշակման կորուստները: Օրինակ, պղնձի արտադրության կորուստը հասնում է 40%, մոլիբդենինը՝

60%, իսկ արժաթինը՝ ավելի շատ: Իսկ հանքային հանույթի վերամշակման ընթացքում արտադրանքը նորմալ է համարվում մոտ 25 - 40% կորուստի դեպքում:

Հայաստանի Հանրապետության պայմաններում տուֆի արդյունահանման ժամանակ օգտակար շինանյութը՝ բակոններին համեմատական երեմն շատ քիչ է լինում: Առանձնապես մեծ է լինում կորուստը, եթե շինանյութն արդունահանում են պայթեցման միջոցով:

Ընդերքի հարստություններն անհրաժեշտ է օգտագործել բացառիկ տնտեսվարությամբ, արդյունավետ և անկորուստ: Դրա համար էլ պետք է կատարել բոլոր գործընթացների դիտարկումներ, իրականացնել մոնիթորինգ:

Առանձնապես մեծ հոգատարության, ուշադրության և դիտարկումների կարիք են զգում հանքային ջրերի և կորստի ենթակա այլ ռեսուրսների պահպանության ու արդյունավետ օգտագործման հարցերը: Հանքային ջրերով հարուստ է մեր հանրապետությունը. Զերմուկի, Արզնու, Բջնիի, Սևանի, Հանքավանի, Լիճքի և բազմաթիվ այլ հանքային աղբյուրների քանակը 700-ից ավել է: Այդպիսի աղբյուրների առկայությունը մեծ հնարավորություն է տալիս զարգացնելու առողջարարական և հանգստյան գործը: Սակայն, Զերմուկի նման հանքային ջուրը ճնշող մեծամասնությամբ լցվում է Արփա գետը, անօգուտ կորչում:

# **ԳԼՈՒԽ 15**

## **ԹԱՓՈՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ, ԱՐԿԱՅՈՒԹՅԱՆ, ՀԵՌԱՇՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՈԽԱՅԻՆԴ ԵՎ ՑՈՒցԱՆԻՉՆԵՐԻ ԻԱՄԱԿԱՐԾ**

### **15.1. Արդյունաբերական թափոնների մոխիթորինգ եւ ցուցանիշների համակարգ**

Թափոնների հիմնախնդիրն ամբողջ մոլորակի մասշտաբով մարդկության համար աստիճանաբար վերածվում է էկոլոգիական սպառնալիքի, որի վտանգը գնալով մեծանում է, առանց բացառության, բոլոր երկրների համար:

Թափոն են համարվում այն նութերը, որոնք որևէ ոլորտում առաջանալով՝ չեն օգտագործվում տվյալ ոլորտում, չնայած, կարող են օգտագործվել մեկ այլ տեղ: Թափոնները կարող են պոտենցիալ մեծ վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի, կենդանի օրգանիզմների, այդ թվում՝ մարդու առողջության համար: Այդուհանդերձ, շատ երկրներում դեռևս բացակայում են թափոնների նկատմամբ էկոլոգիական և գիտական մոտեցումները: Մի կողմից թափոնները պարունակում են հսկայական քանակությամբ արժեքավոր նյութեր, լրացուցիչ հանույթ, որոնց տնտեսական նշանակությունը չափազանց մեծ է, մյուս կողմից դրանք աղտոտում են ու թունավորում շրջապատող միջավայրը՝ օդն ու ջուրը, հողն ու ստորերկրյա ջրերը, զբաղեցնում հսկայական հողային տարածություններ:

ԱՄՆ-ում տարեկան շրջակա միջավայր են արտանետվում 80 միլիարդ պահածոների տուփեր ու ջարդված շաքեր, 4 մլրդ պլաստման տարածեր, 165 միլիոն տոննա տարբեր նյութեր: Մթնոլորտի արտանետվող մոխրի ու փոշու մեջ կան 700 հազար տոննա մանգան, 30 միլիոն դոլարի արժողությամբ պղինձ, 200 միլիոն տոննայից ավելի գունանյութեր, որոնց վնասը հասնում է 12 մլրդ դոլլարի:

ճապոնիայի մայրաքաղաք՝ Տոկիոն, յուրաքանչյուր տարի «արտադրում է» 4,5 միլիարդ տոննա աղբ, իսկ մեկ քառակուսի կիլոմետրի վրա «նստեցնում է» մոտ 400 տոննա ածխափոշի: Ֆրանսիայի միայն Փարիզի ավտոտրանսպորտը օդային ավազան է արտանետում 18-20 միլիարդ մ<sup>3</sup> ածխաթթու գազ և այլն:

Միջազգային նավագնացության ընթացքում տարեկան ծովերն ու օվկիանոսներն են թափվում 10 միլիոն տոննա նավք: Յաճախակի տեղի ունեցող վթարների ժամանակ այդ թափոնները մի քանի անգամ ավելանում են, իսկ նավթամթերքների կորուստի արժեքը միլիոնավոր դոլլարի է հասնում:

Անընդհատ աճում են ուռուցքածին և թունավոր թափոնների ծավալները: Օրինակ, Ռուսաստանում կուտակված են մոտ 80 մլրդ տթափոններ, որոնց 10%-ը համարվում են վտանգավոր և ամեն տարի կուտակումներն ավելանում են: Տարեկան մեկ շնչին բաժին ընկնող համախառն թափոնների քանակն աշխարհում կազմում է 10-15 տոննա, որի 5-10%-ը վտանգավոր են:

Մեր հանրապետությունում մեծ քանակությամբ թափոններ են արտադրում Ալավերդու, Կապանի, Քաջարանի, Թեղուտի և այլ լեռնարդյունաբերական ձեռնարկությունները, շինանյութ արտադրող հանքերը (մասնավորապես՝ տուֆի, առանձնապես՝ Արթիկի), Վանաձորի քիմիական կոմբինատը, Երևանի գործարանները և այլն:

Տարերում են թափոնների երեք խմբեր՝ կենցաղային, արդյունաբերական և վտանգավոր (թունավոր և ռադիոակտիվ): Թափոնների մի առանձին խումբ են ներկայացնում անօգտագործելի առարկաները, գործիքները, սարքերը, մեքենաները, նյութերը:

Թափոնները կարող են լինել վերստին օգտագործելի և անօգտագործելի: Վերստին օգտագործելի թափոնները տարբեր տեխնոլոգիաներով վերամշակում և տնտեսական շրջանառության մեջ են դնում:

Արդյունաբերական թափոնները միատարր չեն, դրանք իրենցից ներկայացնում են քիմիապես անհամասեռ, բարդ բաղադրակազմով խառնուրդներ, օժտված՝ տարբեր ֆիզիկաքիմիական հատկություններով: Դրանով էլ պայմանավորված է շրջակա միջավայրի վրա այդ նյութերի քիմիական, կենսաբանական, թունավոր, քայլայիշ, հրդեհապայթյունավտանգ ազդեցությունները:

Ըստ ֆիզիկական վիճակի՝ թափոնները լինում են պինդ (մետաղներ, փայտ, պլաստմաս, փոշիներ, արդյունաբերական աղբ) և հեղուկ (տեխնոլոգիական հոսքաջրերի նստվածք, գագերի թացմաքրման փոշեշաղախ):

Գոյություն ունեն մի շարք նոտեցումներ՝ թափոնների կրծատում, երկրորդային օգտագործում և վերամշակում, ջերմային քայլայում, թաղում, ինչպես նաև թունավոր ու վտանգավոր թափոնների փոխակերպումը՝ պակաս թունավոր և քիչ վտանգավոր թափոնների:

Շրջակա միջավայրի վրա թողած ազդեցության առումով թափոններն ըստ վտանգավորության աստիճանի դասակարգում են չորս դասի:

**Արտակարգ վտանգավոր՝** սնդիկը և դրա միացությունները, անտիմոնի միացությունները, կալիումի ցիանիդը, կալիումի քրոնաղը, անտիմոնի միացությունները, բենզապիրենը, դիօքսինը և այլն:

**Բարձր վտանգավորության՝** պղնձի քլորիդը, պղնձի սուլֆատը, թրթնջկաթթվային պղինձը, անտիմոնի երկօքսիդը, կապարի միացությունները:

**Չափավոր վտանգավոր՝** կապարի օքսիդները, նիկելի քլորիդը, տետրաքլոր ածխածինը:

**Թից վտանգավոր՝** մագնեզիումի սուլֆատը, ֆոսֆատները, ցհնկի միացությունները, ամիններով հարստացվող օգտակար հանածոնների թափոնները:

Թափոնների վերաբերյալ ունեցած գիտելիքներով հնարավոր է նշակել միջոցառումներ դրանց քանակը կրճատելու և քիմիական բնույթը փոխելու, թուլացնելով շրջակա միջավայրի վրա դրանց թողած ազդեցությունը: Սակայն նարդու պահանջների աճին համապատասխան ավելանում են վտանգավոր թափոնները, որը տեղի է ունենուն ինչպես արդյունաբերական թափոնների, այնպես էլ օյուղատնտեսության մեջ օգտագործվող պեստիցիդների հաշվին:

Վերջին երկու տասնամյակներին եվրոպական բոլոր երկրներուն պիտի թափոնների այրումն արգելված է, դրանք օգտահանվուն են՝ վերամշակվում և օգտագործվում, մասնավորապես, կենսագագի ու օրգանական պարարտանյութի տեսքով: Շինարարական և արդյունաբերական թափոնների զգալի մասն օգտագործվում է խախտված հողատարածքների վերակուլտիվացման նպատակով:

Մարդկության դժվարին խնդիրը կապված է վտանգավոր թափոնների հեռացման ու վնասազերծնան հետ: Հատ երկրներ այդ նպատակով օգտագործում են աղքատ ու թույլ զարգացած երկրների տարածքները, ինչպես նաև համաշխարհային օվկիանոսը: Այդ նպատակով 1989 թվականին ընդունվեց Բազելի կոնվենցիան «Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և հեռացման վերահսկողության մասին», սակայն շատ երկրներ դեռևս շարունակում են այդ բարբարոս գործելակերպը: Օրինակ, Յայաստան են ներկրվուն ժամկետանց դեղորայք և պեստիցիդներ, օգտագործված անվաղողեր: Վերջինների քանակն աշխարհում տարեկան կազմում է 10 մլն տոննա: Չնայած թափոնների հիմնախնդիրը համաշխարհային ընդգրկում ունի, այդուհանդերձ՝ յուրաքանչյուր երկիր պարտավոր է իր տարածքում լուծել սեփական թափոնների խնդիրը:

Բնապահպանության կառավարման կատարելագործումը և թափոնների օգտագործնան մակարդակի բարձրացումը պահանջում է տեղեկատվական համակարգի ստեղծում և ապահովում: Արդյունաբերական թափոնների պետական հաշվառումը պետք է ապահովի այնպիսի տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է նշակել արդյունաբերական թափոնների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ:

Միջազգային մասշտաբով այժմ խնդիր է դրված թափոնների դիտարկումների միջոցով ստանալ տեղեկատվություն՝

- տեսակի,

- առաջացման,
- քանակության,
- տարվա ընթացքում գոյացման,
- հեռացման և վճասագերծման մեթոդների,
- օգտագործման,
- հեռացման համար ծախսերի,
- օգտահանման կամ ոչնչացման,
- օգտագործման ստացված եկամուտի,
- գոյացման ծավալների կրծատման միջոցառումների,
- օգտագործման մեթոդների բարելավման,
- շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ:

Մեր հանրապետությունում արդյունաբերական թափոնների վերաբերյալ մոնիթորինգի խնդիրն է՝ ստեղծել հաշվառման նոր ձևեր և հաշվառման մեջ ներառել նոր ցուցանիշներ, որոնց հիման վրա կատարելով բազմակողմանի վերլուծություն, կապելով այն արտադրության արդյունավետության, աշխատանքի որակի բարելավման ցուցանիշների հետ:

#### Այսուսակ 14

Թափոնների քանակի ցուցանիշներն հանրապետության մի շարք բաղաքներում (2005թ.)

Վայրը	Առաջացել են թափոններ			
	Ընդամենը, տ	մեկ բնակչի հաշվով, կգ	մեկ կմ <sup>2</sup> -ու հաշվով, տ	մեկ կազմակեր- պության հաշվով, տ
Երևան	16262,5	14,7	71,6	40,1
Արարատ	3,6	0,2	1,2	1,2
Ալավերդի	163,6	10,0	13,6	23,4
Նորագյան	113,9	1,1	4,2	19,0
Վանաձոր	137,8	1,3	5,5	6,6
Գյումրի	152,5	1,0	3,1	16,9

Այդ խնդիրներն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել դիտարկումների ձևեր, որոնք կարող են ընդգրկել ոչ միայն արդյունաբերական, այլ նաև գյուղատնտեսական և կենցաղային թափոնները:

Թափոնների գոյացման, առկայության, հեռացման և օգտագործման վերաբերյալ դիտարկումների համար մշակվող վիճակագրական ցուցանիշները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

- հիմնվել թափոնների միասնական հաշվառման և վիճակագրության վրա,

- ճշտել թափոնների գոյացման ծավալները և դրանց օգտագործման ուղղությունները,
- հաշվի առնել առանձին արտադրության ճյուղի առանձնահատկությունները,
- ապահովել թափոնների քանակական արտահայտությունը:

Վերոհիշյալ պահանջների և խնդիրների հիման վրա՝ ցուցանիշների համակարգի մշակման ընթացքում պետք է ուսումնասիրել միաժամանակյա հետազոտությունների ընթացքում գոյություն ունեցող հաշվետվությունների ձևերը, հաշվի առնելով դրանց հետագա կատարելագործման անհրաժեշտությունը, թափոնների գոյացման և օգտագործման վերաբերյալ ձեռնարկությունների տարեկան հաշվետվությունների ձևերը:

Ստորև բերվում են արդյունաբերական թափոնների դիտարկման համար ցուցանիշների համակարգերը, որոնք բնութագրվում են բացարձակ և հարաբերական մեջություններով:

### **Արդյունաբերական թափոնների մոնիթորինգի ցուցանիշների համակարգ**

1. Թափոնների ձևավորումը, կազմը և առկայությունը, տ/մ<sup>3</sup>

1.1. Թափոնների ձևավորումը, ընդամենը, տ/մ<sup>3</sup>

ա) այդ թվում արտադրական թափոններ, տ/մ<sup>3</sup>, %

բ) արտադրության պահանջների թափոններ, տ/մ<sup>3</sup>, %

գ) մաքրող կառույցների կողմից հավաքված թափոններ (տարվա սկզբում և վերջում), տ/մ<sup>3</sup>, %

դ) թափոնների արժեքը (Ելակետային հումքի արժեքով և հնարավոր օգտագործման արժեքով), դրամ

2. Կոշտ թափոններով հողի մակերեսի աղտոտումը բնութագրող ցուցանիշներ

2.1. Թափոններով գբաղեցված տարածքներ, հա

այդ թվում՝ արդյունաբերական թափոններով գբաղեցված տարածքներ, հա, %

2.1.1. մասնագիտացված թափոններ, հա, %

2.1.2. բաց թափոններ, հա, %

2.1.3. չկազմակերպված թափոններ (ձորեր, փոսեր, քարհանքեր և այլն), հա, %

2.1.4. դասավորված և վարակագերծված թափոններով գբաղեցված տարածքներ, հա, մ<sup>2</sup>, %

ա) հատուկ փակ տարածքներ (տեղեր), առանձին տարողություններ, տեղավորված տարածքներ, մ<sup>2</sup>,

բ) թափոններով գբաղեցված ոչ հարմար տարածքներ, մ<sup>2</sup>,

գ) բացօթյա տարածքներ, հա,

3. Թափոնների հեռացում, ոչնչացում և օգտահանում, տ/մ<sup>3</sup>,

3.1. Թափոնների տեղափոխում, ընդամենը, տ/մ<sup>3</sup>,  
այդ թվում՝

ա) կատարելագործված թափոններ, տ/մ<sup>3</sup>,

բ) բաց թափոններ, տ/մ<sup>3</sup>,

գ) չկազմակերպված թափոններ, տ/մ<sup>3</sup>,

դ) ջրամբարներ, հանքահորեր և քարահորեր, տ/մ<sup>3</sup>,

ե) աղբանշակման թափված և աղբայրման գործարաններ  
հանձնված, տ/մ<sup>3</sup>

3.2. Այրում (առանց վառելանյութի պահանջի), տ/մ<sup>3</sup>,

3.3 Թափոնների օգտահանում (ձեռնարկության ներսում) տ/մ<sup>3</sup>,  
այդ թվում՝

3.3.1. հիմնական արտադրությունում, տ/մ<sup>3</sup>,

3.3.2. լայն սպառնան արտադրության նյութեր, տ/մ<sup>3</sup>,

3.3.3. վառելանյութի պահանջներով, տ/մ<sup>3</sup>,

3.4. Փոխանցված է օգտահանման և իրացման, տ/մ<sup>3</sup>,  
այդ թվում՝

3.4.1. այլ ձեռնարկություններին ու կազմակերպություններին,  
տ/մ<sup>3</sup>,

3.4.2. հանձնված է վերապատրաստող կազմակերպություն-  
ներին, տ/մ<sup>3</sup>,

3.4.3. օգտագործված թափոնների արժեքը (ելակետային  
հումքի արժեքով և հնարավոր օգտագործման արժեքով), տ/մ<sup>3</sup>,

3.5. Թափոններով աղտոտվածությունից շրջակա միջավայրի պահ-  
պանության համար միջոցառումների արժեքը

4. Արդյունաբերական թափոններով աղտոտումից պահպանության  
ծախսեր, դրամ,

այդ թվում՝

կապիտալ ծախսեր, դրամ,

ընթացիկ ծախսեր, դրամ,

4.1.1. Թափոնների հեռացման և ոչնչացման ծախսեր, դրամ,

4.1.2. Հավաքված և որսացված թափոնների հեռացման և  
ոչնչացման ծախսեր, դրամ,

5. Արդյունաբերական թափոններով հողի մակերեսի աղտոտման դեմ  
պայքարի չափերը և միջոցները

5.1. Ռողերի վերակուլտիվացում, հա,

5.2. Ձեռնարկությունների թիվը, որոնք անցել են սակավ թափոն-  
ներով տեխնոլոգիայի, միավոր

5.3. Կատարելագործված թափատեղերի առկայությունը և տարո-  
ղությունը, միավոր, մ<sup>3</sup>/տարի,

- 5.4. Աղբաայրող և աղբավերամշակող գործարանների առկայությունը և հզորությունը, միավոր, մ<sup>3</sup>/տարի,
- 5.5. Թափոնների վերամշակման ձեռնարկությունների առկայությունը և հզորությունը, միավոր, մ<sup>3</sup>/տարի,
- 5.6. Թափոնների վարակագերծման սարքավորումների առկայությունը, միավոր,
- 5.7. Աղբապահեստների, թափոնատեղերի տարողությունը, տ/ մ<sup>3</sup>,
6. Թափոնների օգտագործման բոնիտման և դրանց վնասակար ազդեցության պակասեցման միջոցառումների արդյունավետությունը
- 6.1. Թափոնների օգտահանման գործակիցը,
- 6.2. Հումքի տնտեսում թափոնների օգտագործման հաշվին, դրամ,
- 6.3. Թափոնների օգտագործումից ստացված արտադրանքի արժեքը, դրամ,
- 6.4. Թափոնների վերամշակումից ստացված արտադրանքի շահութաբերությունը, դրամ,
- 6.5. Թափոնների վերամշակումից և օգտագործումից ստացված արտադրանքի տեսականու ավելացում, միավոր:

## **15.2. Կենցաղային թափոնների մոնիթորինգ և ցուցանիշների համակարգ**

Տարվա ընթացքում մոլորակի բնակչությունը միջավայր է արտանետում մոտ 25 մլրդ տոննա կենցաղային աղբ, որի 50%-ը օրգանական ծագման թափոններ են:

Մեր հանրապետության նայրաքաղաք Երևանում տարեկան 500 հազար տոննա կենցաղային աղբ է գոյանում, որի մի մասը քաղաքից ոչ հեռու այրվում է ու քաղաքի շրջակայքում հակասանիտարական վիճակ ստեղծում:

Այդ թափոնների ծևավորման, տեղափոխման և վնասագերծման գործընթացը պահանջում է դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքում, որը կնպաստի թափոնների հեռացման, վերամշակման և օգտահանման կատարելագործված տեխնոլոգիաների մշակմանը: Դեռևս չկա կոշտ կենցաղային թափոնների դիտարկման և հաշվառման միասնական ցուցանիշների համակարգ:

Կենցաղային թափոնները ծևավորվում են բնակելի թաղանակների, կազմակերպությունների, առևտրային և սննդի ձեռնարկությունների գործունեության արդյունքում: Կենցաղային թափոնների շարքին են դասվում փողոցային աղբը, ջեռուցման կառույցների թափոնները, բնակարանների ընթացիկ վերանորոգումից առաջացած աղբը և այլն:

Թափոնների ընդհանուր գանգվածը հետագա վնասազերծման և օգտահաննան հնարավորությունից ելնելով՝ խնբավորում են տարբեր նկատառումներով:

- Սննդային թափոններ, որոնք հիմնականում ձևավորվում են բնակելի շենքերում, հիվանդանոցներում, հասարակական սննդի կետերում: Այդ թափոններում օրգանական նյութերը շատ արագ քայլայվում են՝ առաջացնելով օդի, ստորգետնյա և մակերեսային ջրերի, հողի աղտոտում:
- Երկրորդական հումք ծառայող նյութեր՝ թուղթ, գործվածքեղեն, մետաղի ջարդոն, ոսկոր, ապակի և այլն, որոնք փոխանցվում են համապատասխան վերամշակող ձեռնարկություններին՝ օգտահաննան կամ վերարտադրության համար:
- Այրվող նյութեր՝ ռետին, պարարտանյութ, թուղթ, լարի կտորներ, կաշի, պոլիէթիլային փաթեթավորման նյութեր և այլն, որոնք ոչնչացվում են միայն այրելու միջոցով:
- Բալաստային նյութեր՝ կենցաղային քարեր, վերամշակման աղբ և այլն, որոնք սովորաբար լցվում են կիրճերը, քարհանքերը, հորատանցքերը, ճահիճները և այլ տարածքներ:

Թափոնների հավաքումը իրականացվում է երկու եղանակով՝ տեսակավորված և համախառն:

***Տեսակավորված*** հավաքման դեպքում սննդային մնացորդները, մետաղի ջարդոնը և այլ թափոններ առանձնացնում են հավաքման առաջին փուլում, դրանց օգտակար հատկությունները լրիվ օգտագործելու համար: Այդ աշխատանքները թիշ են մերենայացված և, հիմնականում, կատարում են ձեռքով:

***Համախառը*** հավաքման եղանակը կիրառում են խոշոր քաղաքներում, բարձր որակի կառուցապատված թաղանասերում, որտեղ տեղադրված են աղբահան խողովակներ:

Մոնիթորինգային դիտարկումներում ճշտվում են թափոնների կուտակման նորմերը, այսինքն, կուտակման միջին այն քանակը, որը ձևավորվում է որոշակի տարածքում, որոշակի ժամանակի ընթացքում (տարի, օր): Այն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q = \rho \cdot m,$$

որտեղ՝

$Q$  - ն թափոնների տարեկան քանակն է, մ<sup>3</sup> կամ տոննա,  
 $\rho$  - ն թափոնների կուտակման նորմն է,  
 $m$  - ը բնակչության թիվը:

**ԿԵՆՏԱՐԱՅԻՆ ԹԱՎՈՆՄԵՐԻ ՄՆՄԻԹՈՐԻՄԱԳԻ ցուցամշների  
համակարգ**

**1. Թափոնների հավաքում**

1.1. Կոչտ կենցաղային թափոնների ձևավորման ընդհանուր քանակ, մ<sup>3</sup>, տ,

այդ թվում՝ ըստ տեսակների

ա) տնային թափոններ, մ<sup>3</sup>, տ, %,

այդ թվում՝ սննդային, մ<sup>3</sup>, տ, %,

երկրորդային հումք, մ<sup>3</sup>, տ, %,

բ) շինարարական աղբ, մ<sup>3</sup>, տ, %,

գ) ջեռուցման թափոններ, մ<sup>3</sup>, տ, %,

դ) առողջարարական և հիգիենիկ-առողջարարական ձեռնարկությունների թափոններ, մ<sup>3</sup>, տ, %,

ե) փողոցային աղբ, մ<sup>3</sup>, տ, %:

Ժամանակի ընթացքում կենցաղային թափոնների կազմը և բաղադրությունը փոփոխվում է, կապված՝ նոր տեխնոլոգիաների և նոր նյութերի հայտ գալու հետ: Զարգացած շատ երկրներում թափոնների մեջ կտրուկ ավելանում են թղթի, փաթեթավորող նյութերի, ապակե տարաների քանակությունը, միևնույն ժամանակ պակասում է սննդային թափոնների քանակությունը:

Թափոնների հավաքումը և տեղափոխումը պահանջում է մեծ կապիտալ ծախսեր: Դրա համար նախատեսվում են մասնագիտացված մեքենաներ:

**2. Թափոնների հեռացում**

2.1. Հատուկ փոխադրամիջոցներով տեղափոխված թափոնների ընդհանուր քանակությունը, մ<sup>3</sup>, տ,

2.2. Տեղափոխման միջին հեռավորությունը, կմ,

**3. Թափոնների հեռացման օբյեկտները**

3.1. թափոնների հեռացման օբյեկտների քանակը, միավոր, մ<sup>3</sup>/տարի, այդ թվում՝

3.1.1. հատուկ ավտոտնտեսություն, միավոր, մ<sup>3</sup>/տարի,

3.1.2. աղբաբարձիչ կայաններ, միավոր, մ<sup>3</sup>/տարի:

4. Կենցաղային թափոնների պահեստավորման և հողային մակերեսից այն հեռացնելու օբյեկտները

4.1. Թափոնների պահեստավորման օբյեկտներ, ընդամենը, միավոր/տարի, այդ թվում՝

ա) բաց և կատարելագործված թափոնատեղեր, միավոր, մ<sup>3</sup>/տարի,

բ) կատարելագործված թափոնատեղեր, միավոր, մ<sup>3</sup>/տարի:

5. Թափոնների կուտակում և ոչնչացում (առանց կատարելագործման)
  - 5.1. Թափոնների դասավորման և ոչնչացման ընդհանուր քանակությունը առանց օգտագործման,  $\text{մ}^3/\text{տարի}, \%$ ,  
այդ թվում՝
    - ա) բաց օդում թափոնների դասավորում,  $\text{մ}^3/\text{տարի}, \%$ ,
    - բ) կատարելագործված պահեստարաններ,  $\text{մ}^3/\text{տարի}, \%$ :
6. Թափոնների վերամշակման օբյեկտներ
  - 6.1. Թափոնների վերամշակման օբյեկտների քանակությունը,  $\text{մ}^3/\text{տարի}$ , այդ թվում՝
    - ա) աղբատեսակավորիչ գործարաններ,  $\text{մ}^3/\text{տարի}$ ,
    - բ) աղբայրող գործարաններ,  $\text{մ}^3/\text{տարի}$ ,
    - դ) աղբավերամշակող գործարաններ,  $\text{մ}^3/\text{տարի}$ ,
  - 6.2. Աղբայրող և աղբավերամշակող գործարանների աշխատանքի արդյունավետությունը, նախագծային հզորություն, %:
7. Թափոնների օգտագործումը
  - 7.1. Մասնակի կամ լրիվ օգտագործվող թափոնների ընդհանուր քանակությունը,  $\text{մ}^3/\text{տարի}$ ,
    - ա) գոլորշի և ջերմություն արտադրելու համար այրված թափոնների քանակը,  $\text{մ}^3/\text{տարի}, \%$ ,
    - բ) աղբավերամշակող գործարաններում վերամշակված աղբի քանակը:
8. Թափոնների վերամշակումից ստացված արտադրանքը
  - 8.1. Օրգանական պարարտանյութերի և կենսավառելիքի արտադրություն, տ/տարի,
  - 8.2. Մոխրի, այրոցքի և բազալտային նյութերի արտադրություն, տ/տարի,
  - 8.3. Երկրորդային վերամշակման համար հումքի արտադրություն, տ/տարի, այդ թվում՝
    - 8.3.1. թուղթ, տ/տարի,
    - 8.3.2. սև մետաղ, տ/տարի,
    - 8.3.3. գունավոր մետաղ, տ/տարի,
    - 8.3.4. թափոն, տ/տարի,
    - 8.3.5. այլ նյութեր, տ/տարի:

# ԳԼՈՒԽ 16

## ՃՐՉԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՍՊՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԳՈՒՄ

Այսօր, առավել քան երբեմ, մարդկության առաջ կանգնած է բնության հանդեպ մոտեցումների վերանայման հարցը, որն անհրաժեշտաբար պետք է ընկած լինի զալիք սեղմողի դաստիարակության և կրթության հիմքում: Մարդ-անհատի, մարդկային հասարակության՝ ազգային և միջազգային զարգացումը պետք է ուղղված լինի մարդու գործունեության և բնության երևույթների ներդաշնակությանը: Ցուրաքանչյուր մարդ պետք է գիտակցի, որ բնության հետ իր ներդաշնակ վերաբերմունքից է կախված թե կենսուրութի գոյությունը, թե իր գոյությունը երկիր մոլորակի վրա:

Մարդ-բնություն փոխհարաբերության մեջ մարդկությունը հասել է այն շեմին, որից հետո պետք է առաջնորդվել միայն բարձր բարոյականությամբ, հակառակ դեպքում՝ կործանումն անխուսափելի է: Դրա համար անհրաժեշտ է ճանաչել բնությունն իր օրինաչափություններով, ծեռք բերել նոր և խորը գիտելիքներ՝ բնության և նրա օրենքների մասին: Այդ նոր արժեքային համակարգը պետք է ուսուցանել մարդուն դեռ վաղ մանկությունից և սերունդը դաստիարակել բնության օրենքներին հանահունց գործելու պատրաստակամությամբ:

Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության վերաբերյալ հասարակության դաստիարակությունը պետք է ընդգրկի մարդու կյանքի ողջ ընթացքը՝ բոլոր տարիքներում, այն պետք է լինի գերակա և առաջնային տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում: Էկոլոգիական գիտելիքները պետք է յուրացնեն հասարակության բոլոր խավերը, անկախ մասնագիտությունից, կրթական մակարդակից, աշխատանքի բնույթից:

Էկոլոգիական կրթության բովանդակության հիմքում դրված են երեք միմյանց հետ կապված մոտեցումներ՝

1. Էկոլոգիական օրենքների, կանոնների, սկզբունքների իմացությունը, մարդ-բնության հանակարգի միասնության գիտակցումը,
2. բնության վերաբերյալ զգացմունքային - գեղագիտական և բարոյական դաստիարակությունը, նրա հանդեպ պատրասխանատվության գիտակցումը,
3. մարդու սոցիալ-տնտեսական գործունեությունը տվյալ դարաշրջանում, որը կապված է էկոլոգիական խնդրի լուծման հետ:

Էկոլոգիական կրթության խնդիրը ոչ միայն որոշակի ծավալով գիտելիքների հանակարգի ձևավորումն է, այլև բնության երևույթների գիտական վերլուծության վերաբերյալ փորձի ծեռք բերումը, հասարա-

կության և բնության փոխհարաբերությունների գիտակցումը և, հատկապես, բնության պահպանության գործում նարդու գործնական օգնության նշանակության գիտակցումը:

Գործողությունների զարգացման հեռանկարները մեծանում են այն դեպքում, երբ սերտ կապ է հաստատվում դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ֆակուլտետների, մասնագետների, գիտնականների հետ, որոնք գիտաարտադրական հետազոտական աշխատանքներ են կատարում այդ ոլորտում:

Բուհի ուսանողը՝ պապա մասնագետը պետք է տեսական գիտելիքների ճեղքբերումից բացի զբաղվի հետազոտական գործունեությամբ, որի ընթացքում սովորի վերլուծել ու հասկանալ ուսումնասիրվող խնդիրների առաջացման պատճառները, հետևանքները և դրանց լուծման ուղիները, դրանց վերաբերյալ կատարել եզրակացություններ և առաջարկություններ:

Մեծ դաստիարակչական նշանակություն ունի էկոլոգիական փորձագիտական զգացմունքային ներգործությունը: Դետազոտական փորձերը ներգործում են նարդու վրա՝ առաջացնելով էկոլոգիական խնդիրների ուսումնասիրման հետաքրքրություն, հատկապես, հայրենի բնության և տարածքի վերաբերյալ, առաջացնելով զգացողություն՝ հարազատ բնության վիճակի առողջացմանն ուղղված հարցերի ճիշտ լուծման վերաբերյալ:


Բնական ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման նպատակով կատարվում է հետազոտություններ և ուսումնասիրություններ: Մոնիթորինգի ընթացքում անմիջական կապ է հաստատվում ուսումնասիրողների և մոնիթորինգի օբյեկտների՝ բնական ռեսուրսների միջև, իսկ փորձերից և դիտարկումներից գիտական նյութ է ստացվում: Այն զարգացնում է մոնիթորինգի գործընթացը, հետաքրքրություն է առաջանում շրջակա միջավայրի պահպանության կարևոր հիմնախնդիրների նկատմամբ:

Բնական ռեսուրսների մոնիթորինգի աշխատանքները զգալի արդյունավետ կարող են լինել այն դեպքում, եթե այն կատարվում է միասնական համակարգված ծրագրով ու մեթոդիկայով, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ:

Դրա համար մշակվում է հայեցակարգ՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ: Տրվում է հետազոտվող տարածըների նկարագրության վերաբերյալ երաշխավորագիր, նրա ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը, քարտեզագրումը, հողի, ջրի, օդային միջավայրի և այլ ռեսուրսների մոնիթորինգի մեթոդները և հետազոտական աշխատանքների տեխնիկան:

Շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի ուսուցման գործում կարևոր է լավ պատկերացում ունենալ երկրակենսահամա-

Կեցության ընդհանուր կառուցվածքի և նրա առանձին բաղադրիչների բովանդակության մասին (սխեմա 1):



### ԵՐԿՐԱԿԵՆՍԱՀԱՏԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

# ԳԼՈՒԽ 17

## ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՀԱՍԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### 17.1. Շրջակա միջավայրի մոնիթորինգի զարգացման ուղղությունները

Շրջակա միջավայրի վիճակի վերահսկողության մոնիթորինգի համակարգի ստեղծման անհրաժեշտությունը շատ զարգացած էրկրներում առաջացել է անցյալ դարի 60-70-ական թվականներին: Դեռևս այդ տարիներից արդեն համաշխարհային մասշտաբով շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրը բավականին տեսանելի էին: Այդ խնդիրներն առանձին պետությունների հշխանություններին ստիպեցին մշակել և ձեռնարկել պետական ու միջազգային օրենսդրական, կազմակերպական, վարչատնտեսական և գիտական բնույթի համալիր միջոցառումներ, ուղղված՝ շրջակա միջավայրի որակական հատկությունների պահպանությանը և վերարտադրությանը: Նման միջոցառումների իրականացման համար վիճակագրական, այնուհետև մոնիթորինգի տեղեկատվության ստեղծման անհրաժեշտություն առաջացավ, որը կարող է հնարավորություն տալ գնահատել շրջակա միջավայրի վիճակը, բացահայտել նրա վրա ազդող գործոնները, որպես բնապահպանական քաղաքականության մշակման ու իրականացման հիմք:

Միջազգային մասշտաբով յուրաքանչյուր երկրում, այդ թվում նաև մեր հանրապետությունում մշակում են բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների մոնիթորինգի մեթոդիկա և հրահանգներ, որոնք պետք է ապահովեն տեղեկատվության համադրելիությունն այդ գործում:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման գործում միջազգային համագործակցությունը կարևոր է՝ համանուրակային (գլոբալ) մոնիթորինգի համակարգ ստեղծու համար, որն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի վիճակի դիտարկումների միջազգային համակարգ: Այն նախատեսված է գրանցելու մարդու գործունեության հետևանքով բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, և դրանից ելնելով կատարել այդ փոփոխությունների վերլուծություն:

Միջազգային մասշտաբով համանուրակային մոնիթորինգի ընթացքում, ըստ ուսումնասիրնան օբյեկտի, բնույթի և դիտարկման միջոցների ընտրության, առանձնացնում են՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական մոնիթորինգներ:

Ֆիզիկական մոնիթորինգ ասելով հասկանում են կենսուրութիւնը և ֆիզիկական վիճակի և միջավայրի ընդհանուր վիճակի գնահատման դիտարկումների համակարգ: Դրան են վերաբերում՝ միջա-

վայր արտանետվող գազանման, հեղուկ և ախնդ թափոնների, շինարարությանը հատկացվող տարածքների, վերականգնվող և չվերականգնվող ռեսուրսների, հողային ու բուսական ծածկոցի, անտառների վիճակի, քաղաքաշինության մակարդակի և կենսուրութի համար անցանկալի այլ գործոնների, երևոյթների վերաբերյալ մոնիթորինգային գործումները:

**Քիմիական մոնիթորինգը** գբաղվում է բնության վրա մարդու երկրաքիմիական ներգործության մասշտաբների և ուժգնության հարցերով, մարդու գործունեության ընթացքում առաջացած և բնական համակարգ թափանցող, չեզոքացման չենթարկվող և կուտակվող քիմիական նյութերի ուսումնասիրությամբ, պատկերացում է տալիս՝ ածխածնի, թթվածնի, ազոտի, ֆոսֆորի և այլ քիմիական հիմնական տարրերի տեղային ու համամոլորակային շրջանառության մասին:

**Կենսաբանական մոնիթորինգը** սերտորեն կապված է նախորդ երկու մոնիթորինգների հետ, և նպատակաւողված է գնահատելու կենսաբանական համակարգի և լանդշաֆտների արտադրողականությունը, բնութագրելու դրանց դիմադրողականությունը, վերլուծելու կենսահամակարգի և բնական համալիրների արձագանքը տեխնածին ներգործությանը: Դրա հիմնական նպատակն է՝ կանխատեսել բնական գործներացների գարգացման ընթացքը մարդածին բարձր ծանրաբեռնվածության պայմաններում:

Ցուրաբանչյուր պետությունում շրջակա միջավայրի մոնիթորինգի նպատակով մշակվում են բնական ռեսուրսների ցուցանիշների համակարգ, որը պետք է համաձայնեցված լինի միջազգային համակարգի ցուցանիշների հետ և պահպանի ցուցանիշների տվյալների հավաքման վերլուծման ու գնահատման միատիպությունը, միաժամանակ հաշվի առնելով տվյալ տարածքի տեղական առանձնահատկությունները:

Ցուրաբանչյուր երկրում շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրներից ելնելով, հիմնականում պետք է դիտարկեն բնական միջավայրի հետևյալ բաղադրիչների ցուցանիշները՝

1. ջրային ռեսուրսների աղտոտումը և այլ բացասական փոփոխությունները,
2. օդի աղտոտումը և դրա հետևանքով առաջացած բացասական երևոյթները,
3. հողերի աղտոտումը և դեգրադացումը, ոչ արդյունավետ օգտագործումը, լանդշաֆտների խախտումը,
4. սննդի և կերի աղտոտիչների ազդեցությունը մարդու և կենդանիների վրա,
5. ընդերքի հանքային և այլ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը,

6. աղմուկի, թթվոցի, էլեկտրամագնիսական դաշտի, ճառագայթման, ջերմության և այլ ֆիզիկական գործոնների վնասակարությունը,
7. կենսոլորտի էկոլոգիական հավասարակշռության խախտումը,
8. արհեստական տարբեր կառույցների, տարրերի հասցրած գեղագիտական վնասները,
9. կառուցապատման և այդ գործունեության ընթացքում գործառնական անհարմարությունը,
10. հողի մակերևույթի և շրջակա միջավայրի այլ բաղադրիչների աղտոտումը կենցաղային թափոնների տեղափոխումից և ոչչացումից,
11. բնության մեջ առաջացած խախտումները:

Այժմ դեռ ոչ մի երկրում շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մոնիթորինգի համակարգը չի հասել այն մակարդակին, որ պարունակի դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, սակայն աստիճանաբար աշխատանքներ են տարվում այդ համակարգը կատարելագործելու համար:

## **17.2. Բնական ռեսուրսների մոնիթորինգ եւ միջազգային համագործակցություն**

Բնական միջավայրի պահպանության վերաբերյալ հետազոտման և դիտարկման հիմնախնդիրներն աստիճանաբար գործնական բնույթ են ստանում: Այդ խնդիրներով զբաղվում են պետության առանձին գերատեսչությունները, նախարարությունները, ձեռնարկությունները և դրանց կազմի մեջ մտնող բազմաթիվ ստորաբաժանումները, գիտական կառույցները և անհատ մասնագետները:

Նորագույն հետազոտությունների արդյունքները ներդրվում են բնական ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման միջոցառումների մշակման գործնական աշխատանքներում, որը պահանջում է շրջակա միջավայրի վերաբերյալ դիտարկումների նոր մոտեցումներ ու կատարելագործումներ:

Բնական միջավայրի միասնական գույքագրումը հանդիսանում է դիտարկումների լավագույն հիմք՝ շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները վերացնելու և թափոնների կուտակման ու վերամշակման միջոցառումներ մշակելու համար:

Բնական միջավայրի դիտարկումների նպատակով կարևոր նշանակություն ունի սահմանային թույլատրելի արտանետումների հիման վրա յուրաքանչյուր աղբյուրի համար թափոնների սահմանային

թույլատրելի նորմերի (ՍԹՆ) որոշումը: Աղտոտող յուրաքանչյուր աղբյուրի կողմից արտանետումների սահմանային թույլատրելի նորմերի հաստատումը պահանջում է օգալի աշխատանքներ: Դրանք կատարվում են որոշակի փուլերով և որոշակի ժամանակամիջոցներում, ցուցանիշները մոտեցնելով հոսքաջրերի և օդային զանգվածների մաքրության նորմերին:

Սահմանային թույլատրելի նորմերի և շրջակա միջավայրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգի հաստատումից հետո, պարբերաբար, որոշակի ժամանակամիջոց ընդունվում է կատարվում են համապատասխան փոփոխություններ: Շարունակվում են աշխատանքները մոնիթորինգի ցուցանիշների համակարգերի ներքո, անընդհատ ընդլայնելով այդ ցուցանիշների համակարգը և կապ հաստատելով մյուս բաժինների ու բնական ռեսուրսների, այլ ոլորտների հետ:

Գյոյություն ունեն «Քաղաքների շրջակա միջավայրի դիտարկումների համակարգի ցուցանիշներ», որոնք մշակվել են՝ ելնելով յուրաքանչյուր քաղաքի շրջակա միջավայրի առանձնահատկություններից, կառուցվածքից և այն գործոններից, որոնք ազդում են բնական բաղադրիչների վրա, դրանով իսկ՝ մարդու վրա:

Քաղաքների շրջակա միջավայրի մոնիթորինգը բնութագրում է մարդու ստեղծած արհեստական շրջակա միջավայրը, նրա ազդեցությունը բնական բաղադրիչների և իր՝ մարդու վրա, մշակված այն միջոցառումները, որոնք ստեղծում են քաղաքային նորմալ շրջակա միջավայր:

Շրջակա միջավայրի մանիթորինգի հետագա խնդիրն է առանձին բաղադրիչ մասերի բնութագրումից հետո տալ անբողջ բնական համակարգի որակական գնահատական: Այդպիսի ընդհանրացված բնութագրում կատարվում է ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ այլ երկրներում: Սակայն, այդպիսի բնութագրում գործում չկա միասնական նոտեցում ոչ միայն բնութագրնան սկզբունքներում, այլ նաև գործնական իրազորման գործում: Այստեղ անհրաժեշտ է համագործակցությունը կերպով մշակել բնական միջավայրի բաղադրիչների քանակական և որակական բնութագրնան ցուցանիշների միասնական համակարգ, դրանց փոխկապվածությունը և ազդեցությունը՝ ինչպես անբողջ շրջակա միջավայրի միասնական համակարգի, այնպես էլ մարդու վրա:

Այժմ մեր հանրապետությունում օգալի աշխատանքներ են կատարում շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում: Վերջին տարիներին ընդունվել են բնական միջավայրի առանձին բաղադրիչների՝ բնական ռեսուրսների մասին «ՀՀ հողային օրենսգիրը» - 2001թ., «ՀՀ բնության պահպանության հիմնական օրենսդրությունը» - 1991թ., «ՀՀ ջրային

օրենսգիրք» - 2002թ., «ՀՀ անտառային օրենսգիրք» - 1994թ., «ՀՀ ընդեղորի օրենսգիրք» - 1992թ., «ՀՀ օրենքը բուսական աշխարհի մասին» - 1999թ., «ՀՀ օրենք կենդանական աշխարհի մասին» - 2000թ. և այլ օրենսդրական ակտեր: Այդ փաստաթղթերում ըստ ճյուղերի հաստատագրված են բնական ռեսուրսներից յուրաքանչյուրի պահպանման, ուսումնասիրման, դիտարկումների և բարելավման միջոցառումների համակարգի ծրագրեր, մշակվում է բնական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և հետագա արդյունավետ օգտագործման ու գնահատման մեթոդական ցուցումներ, հրահանգներ և դիտարկումների համապատասխան ձևեր ու տեղեկագրեր:

Բնապահպանության գործորմ խնդիրի բարդություններից մեկը կապված է բնական միջավայրի և դրա բաղադրիչների բնույթի ու առանձնահատկությունների հետ: Բնության կենդանի և անկենդան բաղադրամասերը պետական սահմաններ չեն ճանաչում: Մի երկրուն աղտոտված ջրերը հոսում են դեպի այլ երկրների տարածքներ: Աղտոտված օդային զանգվածներն անընդհատ տեղաշարժվում են և աղտոտությունը տեղափոխում աղբյուրներից երբեմն հարյուրավոր կիլոմետրեր հեռավորությունների վրա, իսկ միջուկային պայթյունների հետևանքները զգացվում են անգամ տասնյակ հազարավոր կիլոմետրի վրա: Համամոլորակային՝ գլոբալ մասշտաբներ է ընդգրկում նաև կենդանական աշխարհի միջրացիան, կենդանական և բուսական աշխարհների դեգրադացումը և այլն:

Այդ պատճառով էլ բնության պահպանության խնդիրը չի կարող տեղայնանալ որևէ պետության սահմաններում, կամ ունենալ ազգային բնույթ: Այն դարձել է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կարևորագույն խնդիր՝ համընդհանուր, համամոլորակային ընդգրկման համալիր հիմնախնդիր, որի լուծումն անհնար է առանց գիտության բոլոր ուղղությունների, աշխարհի բոլոր պետությունների, բնակչության բոլոր խավերի համաձայնեցված, հետևողական ջանքերի: Եվ այս գործում բացառություններ չեն կարող լինել. Էկոլոգիացման անհրաժեշտություն ունեն կյանքի և մարդու տնտեսական գործունեության բոլոր ոլորտները: Այս գործում իրար հետ համաձայնեցված գործելու պարտավորվածություն ունեն ոչ միայն իրարամերժ առանձին գիտնականներն ու պետական գործիչները, խնբավորումները, այլև անբարյացակամ տրամադրված, անգամ, հակամարտող պետությունները:

Այդ համագործակցությունն իրենից ներկայացնում է օբյեկտիվ անհրաժեշտություն, որն ընդգրկում է գիտական, տեխնիկական, տնտեսական և քաղաքական բնույթի խիստ ընդարձակ բնագավառներ, և որն ըստ էության ինքնին նշանավորում է նոր փուլ պետությունների միջազգային համագործակցության բնագավառում: Այն անբաժանելի է այնպիսի կարևոր միջազգային հիմնախնդիրներից, ինչպիսիք են

համընդիանուր և լրիվ գինաթափունք, խաղաղության խնդիրը և տարրեր սոցիալ-տնտեսական կառուցվածք ունեցող երկրների խաղաղ համագործակցությունը: Ի դեպ, մարդուն շրջապատող միջավայրի մաքրության պահպանությանն ուղղված միջազգային համագործակցությունը հանդիսանում է ազգերի և ժողովուրդների խաղաղ գոյակցության կարևորագույն գործոններից մեկը:

Առանց այն էլ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում միջազգային համագործակցությունը բուն էկոլոգիական իիմնախնդիրից բացի, ունի նաև դրանց հետ կապված օբյեկտիվ բարդություններ՝ ներկայումս դեռևս չպարզաբանված կողմներ, որոնք պահանջում են գիտական ու տեխնիկական լուծումների համատեղ որոնում:

Բնության պահպանության ուղղությամբ միջազգային համագործակցությունը սկիզբ է առել դեռևս անցած դարի առաջին տասնամյակներին: 1913թ. Շվեյցարիայում տեղի ունեցավ այդ հարցին նվիրված առաջին կոնֆերանսը, որին մասնակցում էին ընդամենը 17 երկրներ: Դետագայում տեղի ունեցան համաշխարհային մի շարք հավաքներ և հանդիպումներ: Սակայն, բնապահպանության հարցը լայն և նպատակալաց քննարկվեց 1948թ., երբ ստեղծվեց Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միություն (ԲՊՄՄ) գիտախորհրդատվական միջազգային խոչոր կազմակերպությունը:

Շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ միջազգային համագործակցությունը հիմնականում իրականացվում է Գիտական միությունների միջազգային խորհրդի (ԳՍՄԽ-ԻԿՏՍ) միջոցով: Դա գիտնականների ոչ կառավարական կազմակերպությունները միավորող համաշխարհային խոչոր կենտրոն էր, որի ջանքերը նպատակառուղիված էին գիտահետազոտական գլոբալ ծրագրերի՝ տիեզերական տարածության հետազոտում, Անտարկտիդայի ուսումնասիրություն, համաշխարհային օվկիանոսի հետազոտում, միջազգային երկրաֆիզիկական տարվա, միջազգային կենսաբանական ծրագրի, շրջակա միջավայրի հիմնախնդիրների միջազգային ծրագրի անցկացումը և այլն: Այդ կառույցը 1968-1972թթ., դեկավարել է ակադեմիկոս Վ. Ռ. Դամբարձումյանը, որի հարցադրումով 1970թ., Մադրիդում, քննարկվեց ՍԿՈՊԵ-ի նախնական ծրագիրը՝ 1971-1981թթ. համար: 1974թ. ՍԿՈՊԵ-ն ընդունեց միջնաժամկետ ծրագիր, որտեղ առաջ էին քաշվում մի շարք միջազգային գիտահետազոտական նախագծեր, որոնցից առավել կարևոր էին կենսաերկրաբիմիական ցիկլերը, վերականգնվող բնական ռեսուրսների վրա նարդու ազդեցությունը, մարդկության բնակեցումը և շրջակա միջավայրը, շրջակա միջավայրի էկորունաբանական վիճակը, մաթեմատիկական մոդելավորումը, շրջակա միջավայրի մոնիթորինգը, շրջակա միջավայրի վերաբերյալ հասարակական կարծիքը և վերաբերմունքը:

Այդ նախագծերից կարևորագույնը համարվում է առաջինը՝ նյութերի կենսաերկրաքիմիական շրջանառությունը բնության մեջ, որն ըստ գիտնականների կազմում է կյանքի դինամիկայի եռթյունը: Գիտնականների առջև անհետաձգելի խնդիր է դրվում թափոնները վերադարձնել բնական կենսաբանական շրջանառության հավերժական ոլորտը, որտեղ «ավելորդ արդյունաբերական մնացորդներ» չկան, ամեն ինչ վերամշակվում և մաքրվում է:

Չրջակա միջավայրի պահպանության միջազգային համագործակցության բնագավառում զգալի մասնակցություն է ցուցաբերել նաև Հայաստանը: Բացի ԳՄՄԽ-ի 12-րդ գլխավոր (Երևանյան) ասամբլեայից, մեր հանրապետությունում հրավիրվել են նաև մի շարք միջազգային կոնֆերանսներ, սիմպոզիումներ ու նստաշրջաններ: Դրանցից ամենաշանակալին լեռնային երկրների բնության պահպանության կոմիտեի անդրանիկ նստաշրջանն էր, որը տեղի ունեցավ 1971թ. հունիսի 20-27-ը: Մինչ այդ, 1969թ. վերջերին, Հնդկաստանում տեղի ունեցած Բնության պահպանության միջազգային կազմակերպության 10-րդ կոնգրեսը որոշում ընդունեց ստեղծել լեռնային երկրների բնության պահպանության հատուկ կոմիտե: Նորաստեղծ կոմիտեի նախագահ ընտրվեց պրոֆեսոր Խ.Պ. Սիրիմանյանը, և Երևանն էլ հաստատվեց որպես կոմիտեի աշխատանքային վայր՝ իր շտաբ-բնակարանով:

Սոցիալ-քաղաքական տարրեր կառուցվածք ունեցող երկրների համագործակցության օրինակ էր ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև 1972թ. մայիսի 23-ին կնքված համաձայնագիրը՝ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Համաձայնագիրն ամենից առաջ միջոցառումներ էր նշուն օդային հսկայածավալ ավազանի աղտոտումը կանխելու, ջրերի, այդ թվում համաշխարհային օվկիանոսի մաքրության ապահովման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն էր նվիրվում գյուղատնտեսական արտադրությամբ պայմանավորված զանազան աղտոտումները նվազեցնելու հարցին: Այդ բնագավառում նախատեսվում էր համատեղ հետազոտություններ կատարել կենսոլորտի տարրերի վրա քիմիական պարարտանյութերի, պեստիցիդների բացասական ազդեցության ուսումնասիրության ուղղությամբ: Միջոցառումներ էին նախատեսվում նաև հողերի արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական արտադրության թափոնների հեռացման և վնասազերծման ուղղությամբ:

Յրատապ խնդիր էր համարվում նաև շրջակա միջավայրի աղտոտման կենսաբանական և գենետիկական հետևանքների ուսումնասիրությունը, մարդու, կենդանիների, բուսականության գենետիկական մեխանիզմների վրա արտանետումների թույլատրելի չափի սահմանումը: Կենսոլորտի ապագան, դրա հետ կատարվող փոփոխությունները ճիշտ կանխագուշակելու համար անհրաժեշտ էր պարզել, թե ինչպես են ազդում շրջակա միջավայրի փոփոխությունները մեր մոլո-

դակի կլիմայի վրա. դրանք համընդիանուր ցրտեցո՞ւմ են առաջացնում, թե՝ ընդհակառակը, բարձրացնում են մթնոլորտի ջերմությունը: Նախատեսվում էր նաև համատեղ ուսումնասիրություններ կատարել երկրաշարժերի կանխագուշակման ուղղությամբ: Համաձայնագրում մեծ տեղ էր հատկացվում շրջակա միջավայրի պահպանության իրավական և վարչական կողմերին:

Բնապահպանական միջազգային համագործակցության ամենածավալում միջոցառումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մարդը և կենսոլորտը» ծրագիրն է («Man and Biosphere»): Այն պաշտոնապես ընդունվել է 1970թ., ՅՈՒՆԵՍԿՕ-ի 16-րդ նստաշրջանում: Մեկ տարի անց՝ 1971թ. նոյեմբերին, ՄԱԲ-ի միջազգային համակարգող խորհրդի առաջին նստաշրջանում ընդունվեց ծրագրի ընդհանուր սկզբունքը: Այդ նույն ժամանակ էլ ընդունվեցին միջազգային համագործակցության 13 ամփոփիչ նախագծերը: Երեք տարի հետո, 1974թ. շրջակա միջավայրի պահպանության ուսումնասիրությունների գարգացման առիթով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր կոնֆերացիայի 18-րդ նստաշրջանում ՄԱԲ-ի ծրագրում լրացուցիչ կարգով ընդգրկվել են ևս 14 նախագծեր՝ շրջակա միջավայրի աղտոտման հիմնախնդրի ուղղությամբ:

Ընդհանուր գգերով ծրագիրն իրենից ներկայացնում է հետազոտությունների նոր, համակողմանի մոտեցում, որոնց նպատակն է բարելավել մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունը: ՄԱԲ-ը ձգտում է վերացնել գիտնականների՝ բնագետների, սոցիոլոգների և որոշումներ ընդունող հաճանաժողովների գործունեությանը խոչընդոտող հնացած արգելքները և դրա փոխարեն առաջարկվում է համատեղ ջանքերով, օգտագործելով գիտության ժամանակակից նվաճումները, հասնել մարդու կողմից փոփոխված էկոհամակարգերի կարգավորմանը:

Գիտակազմակերպչական տեսակետից ՄԱԲ-ը փաստորեն հանդիսանում է նախկին միջազգային ծրագրի (ՄԿԾ) շարունակությունը: Ինչպես հայտնի է ՄԿԾ-ն ոչ կառավարական միջազգային կազմակերպություն է և մտնում է ԳՄՄԽ-ի կազմի մեջ: Իսկ ՄԱԲ-ը իրավաբանական իմաստով ոչ թե միջազգային կազմակերպություն է, այլ միջկառավարական ծրագիր և գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հսկողության ներքո: Բացի այդ ՄԱԲ-ի նպատակն էլ եապես տարբերվում է իր նախորդինից: Եթե ՄԿԾ-ն գրավվում էր կենսաբանական ռեսուրսների ուսումնասիրությամբ, կենսամթերատվությամբ, ապա ՄԱԲ-ը հիմնական շեշտը դնում է այն առօրյա հարցերի լուծման վրա, որոնք առաջանում են բնական էկոհամակարգերի վրա մարդու ներգործության հետևանքով:

«Մարդը և կենսոլորտը» ծրագիրը հավանության արժանացավ ՄԿԾ-ի՝ մարդուն շրջապատող միջավայրի պահպանության հարցերին նվիրված կոնֆերանսի կողմից, որը տեղի ունեցավ 1972թ. Ստոկհոլմում: ՄԱԲ-ին ամենօրյա օգնություն է ցույց տալիս ՅՈՒՆԵՊ-ը արտա-

քին միջավարի հիմնախնդրի ՄԱԿ-ի ծրագիրը: Բացի այդ, ներկայումս ծրագրի գծով ուսումնասիրությունների հաջող կատարմամբ շահագործված են ՄԱԿ-ի բազմաթիվ մասնագիտացված հաստատություններ, որոնց ծրագրերի պլանավորմանը և կատարմանը մասնակցում են մի շարք միջազգային գիտական ընկերություններ:

ՄԱԲ-ի ծրագրի մեջ մտնում է կենսոլորտային արգելոցների ստեղծումը: Դրանք կենսոլորտի այս կամ այն բաղադրիչ տարրերի պահպանման հատուկ տեղամասեր են, որոնք կարող են չափանմուշ հանդիսանալ կենսոլորտում կատարվող փոփոխություններն ընթացնելու և պատկերացնելու համար:

ՄԱԿ-ի կոնֆերանսը, որը նվիրված էր շրջակա միջավայրի պահպանության հարցերին, տեղի ունեցավ 1972թ. հունիսի, որն ընդունեց հոչակագիր՝ մարդուն շրջապատող միջավայրի մասին, կազմված 26 կետից: Դրանցից մի քանիսը վերաբերում են կենսոլորտի պահպանության բնագավառում տարբեր երկրների համագործակցության միջազգային իրավական հիմքերին, ինչպես նաև պետությունների պատասխանատվությանը՝ իրենց գործունեության հետևանքով այլ երկրների շրջակա միջավայրին պատճառած վնասների համար: Այդ կոնֆերանսում ընդունվեցին 109 տարբեր հանձնարարականներ այն մասին, թե ինչ է անհրաժեշտ ձեռնարկել միջազգային մասշտաբով շրջակա միջավայրի պահպանման ու բարելավման համար:

1992թ. Ռիոդեժանեյրիում (Բրազիլիա) պետությունների ղեկավարների մակարդակով տեղի ունեցավ «Շրջակա միջավայրը և կայուն զարգացումը» Համաշխարհային խորհրդաժողովը: Այդ խորհրդակցությանը մասնակցում էին 178 երկրներ և երեք տասնյակից ավելի միջատական և միջազգային կազմակերպություններ: Խորհրդաժողովը ընդունեց միջազգային համաձայնություն, հոչակագիր, սկզբունքներ և գործողությունների ծրագիր բնապահպանության միջազգային կայուն զարգացման վերաբերյալ: Այդ գիտաժողովը պարտադրեց մարդկությանը մտածելու հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության հարցերը ներդաշնակորեն լուծելու մասին:

Միջազգային համագործակցության կարևորագույն օղակ է նաև մոնիթորինգի ծառայությունը: Գիտական լեզվով «մոնիթորինգ» նշանակում է «ստուգել, հետևել, հսկել», «նախազգուշացնել»: Եթե ինչ-որ տեղ մարդու գործունեության հետևանքով լուրջ սպառնալիք կախվի շրջակա միջավայրի վրա, մոնիթորինգի ծառայությունը պետք է այդ խախտման հետևանքների մասին նախազգուշացնի, անհապաղ իրազեկ դարձնի հասարակությանը, կազմակերպություններին, պետություններին: Իրականում մոնիթորինգի խնդիրը շատ ավելի բարդ է. անհրաժեշտ է ոչ միայն պասիվ կերպով հետևել կենսոլորտում տեղի ունեցող

փոփոխություններին, այլև սովորել կանխատեսել, կրահել մարդու անխոհեմ միջամտության հետևանքները՝ բնության ընդհանուր գործընթացների խախտման իմաստով։ Եվ որքան ճիշտ լինի այդ հսկողությունը, որքան մանրազնին լինեն ուսումնասիրությունները, այնքան ճշմարտացի և հավաստի կլինեն կանխատեսումները։

1974թ. ՅՈՒՆԵՊ-ը կազմակերպեց մոնթրինգի առաջին միջկառավարական խորհրդակցություն՝ մի շարք երկրների փորձագետների մասնակցությամբ։ Բազմաթիվ տարիների նախապատրաստական աշխատանքներից հետո քննարկվեցին մոնիթորինգի գիտական և գործնական հարցերը, նպատակ ունենալով ստեղծել Շրջակա միջավայրի մոնիթորինգի գլոբալ համակարգ (ԾՄՄԳՅ)։

Մոնիթորինգի գաղափարը նախատեսում է համապարփակ միջազգային համագործակցություն, որին պետք է մասնակցեն աշխարհի բոլոր պետությունները։ Սակայն դա ներկայումս գործնականորեն գրեթե անհնար է իրագործել։ Եվ խնդիրը ոչ միայն պետությունների սոցիալ-տնտեսական տարբեր հայացքներն են, քաղաքական կառուցվածքների տարբերությունը, այլ նաև այն հանգամանքը, որ տնտեսական զարգացման տեսակետից ևս պետությունները տարբեր նակարդակներում են։ Տարբեր են նաև բնակլիմայական պայմանները։ Յուրաքանչյուր երկիր ունի իր տնտեսական և բնակլիմայական առանձնահատկությունները, այս կամ այն տիպի աղյուսումների դեմ պայքարի իր առաջնահերթ խնդիրները, իր գիտատեխնիկական պոտենցիալը, մշակութային և պատմական ավանդույթները։

Այսուամենայնիվ, ներկայում մեծածավալ աշխատանքներ են կատարվում այդ գործը կազմակերպելու ուղղությամբ։ Կատարելագործում են հետազոտությունների մեթոդները, գիտափորձեր են կատարվում աղյուսուման ամենավտանգավոր տիպերը որոշելու ուղղությամբ, մշակվում է դիտակետերի ճիշտ ընտրության մեթոդիկա և այլ։

Գիտնականների և մասնագետների խնդիրն այն է, որ մոնիթորինգի յուրաքանչյուր ազգային ծառայություն ավելի մոտենա ու հարմարվի գլոբալ ցանցի միասնական համակարգին, որպեսզի ազգային համակարգը մի տեսակ նմուշ հանդիսանա գլոբալ մոնիթորինգի համար։ Դասկանալի է, որ այդ խնդիրը լուծելի է միայն ամբողջ աշխարհի գիտնականների ակտիվ համագործակցության դեպքում։

Բնության պահպանության հիմնախնդրին առնչվող բոլոր գործընթացները՝ որպես գիտական դիտարկումներ, ուղղված են շրջակա միջավարի հսկողության և արդյունավետ բնօգտագործման հարցերի լուծմանը։ Այժմ այդ հարցը խիստ արդիական է, այնպես որ, եթե մարդը չի ընթանում մարդու և բնօգտագործման միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների կապը, ապա այն կարող է հանգեցնել էկոլոգիական աղետի։

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Գալստյան Մ.Հ., Մկրտչյան Ա.Լ., Թամոյան Ս.Զ., Հայաստանի կենսաբազմազանությունը և բնության հատուկ պահպանվող տարածքները, Երևան, 2009:
2. Գրիգորյան Կ.Վ. Փիրումյան Գ. և ուրիշներ Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010, 223:
3. Գրիգորյան Գ.Բ., Լեռնային լանդշաֆտների պահպանության հիմունքները, Երևան, «Հայաստան», 1982:
4. Եզեկյան Ա.Ս., Եֆենդյան Պ.Ս., «Հողային կադաստր» ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, Երևան, 2008:
5. Հայրապետյան Է.Ս. Հողագիտություն, Երևան, «Ասողիկ», 2000:
6. Հայրապետյան Է.Ս., Հարությունյան Լ.Վ. և ուրիշ., Շրջակա միջավայրի պահպանություն, Երևան, 2005:
7. Հայրապետյան Է.Ս., Շիրինյան Ա.Վ. Ագրոէկոլոգիա, Երևան, 2003թ.:
8. Հարությունյան Վ., Շրջակա միջավայրի մոնիթորինգ, Երևան, ՀԱՊՀ, 2010:
9. Մելքոնյան Կ.Գ., Ղազարյան Յ.Ղ., Մանուկյան Ռ.Ռ., Գյուղատնտեսական նշանակության հողերի էկոլոգիական արդի վիճակը, հողօգտագործման մակարդակը, կառավարման համակարգի կատարելագործումը և արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում.- Երևան, Հողագիտ., ագրոքիմ. և մելիորաց. Գիտական կենտրոն, 2004:
10. Միրիմանյան Խ.Պ., Բնության պահպանության հիմնական խնդիրները, Երևան, «Հայաստան», 1979:
11. Չիլինգարյան Ա.Ն., Մարդը և բնությունը, Երևան, ՀԳԱՐ, 1976:
12. Агаджанян Н.А., Торнин В.И., Экология человека, ММП, Экоцентр, КРУК, 1994.
13. Ашихимина Т.Я., Экологический мониторинг, М.: Академический Проект, 2006.
14. Буров В.Н., Экологи природопользования, Москва, 2000.
15. Воронкин В.В., Методологические вопросы рациональной оценки природных ресурсов, Москва, Наука, 1974.
16. Израэл Ю.А., Экология и контроль состояния природной среды, Москва, Гидрометеоиздат, 1984.
17. Никитин Д.П., Новиков Ю.В., Окружающая среда и человек, Москва, «Высшая школа», 1980.
18. Овчаренко Ф.А., Мониторинг окружающей среды, Дубна, 2000.
19. Одум Е. Экология, 1968г.

20. Панин О.С., Проблемы антропогенного воздействия на биосферу, 1998.
21. Подколзин О.А., Жихарева М.С. Мониторинг и кадастр природных ресурсов, Ставрополь: СтГАУ, 2012.
22. Порядин А.Ф., Ховански И.Д., Оценка и регулирование качества окружающей природной среды, Учебное пособие для инженера-эколога, Москва, 1996.
23. Статистика окружающей среды, Москва, финансы и статистика, 1981.
24. Степановских А.С., Охрана окружающей среды, М., ЮНИТИНАДА, 2000.
25. Черников В.А., Чекерес А.И. Агроэкология – методология, технология, экономика, М., Колосс, 2004.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

3

## ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ 1

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳ 5

1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԱՍԻՆ 5

1.2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ Նպատակը և խնդիրները 9

ԳԼՈՒԽ 2

ԿԵՆՍՈՂՈՐԾ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 10

2.1. Հասկացություն կենսողորտի մասին 10

2.2. Կենսողորտը մարդու գործունեության միջավայր:

Կենսողորտի էկոլոգիան 12

2.3. Բնական միջավայրի ներկա վիճակը 16

2.4. Բնական միջավայրի աղտոտումը 17

2.5. Բնական միջավայրի որակի նորմավորումը 20

ԳԼՈՒԽ 3

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՐՊԱՍՈՒԹՅՈՒՆ, 22

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԿԱՂԱՍՏՐ 22

3.1. Բնական ռեսուրսների պահպանություն 22

3.2. Բնական ռեսուրսների մոնիթորինգ և կադաստր, դրանց

կապը, խնդիրները և նշանակությունը 24

3.3. Բնական ռեսուրսների մոնիթորինգի ցուցանիշների

համակարգը 27

3.4. Բնական ռեսուրսների ճյուղային կադաստրների վարումը,

դրանց միասնական համակարգի ստեղծումը 29

ԳԼՈՒԽ 4

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ԲԻՈՏԻ) ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ 36

ՍԿՂԲՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

4.1. Կենսահնդիկացման մեթոդները և տեսակները 37

4.2. Կենսաբանական օբյեկտների մոնիթորինգի մեթոդները 40

ԳԼՈՒԽ 5

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 47

<b>ԳԼՈՒԽ 6</b>	
<b>ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ</b>	<b>49</b>
6.1. Մոնիթորինգի օբյեկտների ֆիզիկաշխարհագրական բնուքագիրը	49
6.2. Հետազոտվող տարածքի էկոլոգիական գնահատումը	52
6.3. Բնական ռեսուրսների պահպանության և մոնիթորինգի գործնական աշխատանքների բովանդակությունը	54
<b>ԳԼՈՒԽ 7</b>	
<b>ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆԾԴՐՄԵՐԸ</b>	<b>56</b>
7.1. Հումքային ռեսուրսներ	57
7.2. Սննդային ռեսուրսներ	59
7.3. Էներգետիկ ռեսուրսներ	60
<b>ՍԱՍ ԵՐԿՐՈՐԴ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	
<b>ԳԼՈՒԽ 8</b>	
<b>ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	<b>62</b>
8.1. Հողային ռեսուրսները որպես մոնիթորինգի օբյեկտ	62
8.2. Հողի մոնիթորինգի մեթոդները	64
8.3. Հողերի բերրիության փոփոխության մոնիթորինգ	67
8.4. Հողատարման (էրոզիա) մոնիթորինգ	69
8.5. Հողերի քիմիական աղտոտման մոնիթորինգ	71
8.6. Հողերի աղակալման և ճահճացման մոնիթորինգ	74
8.7. Հողերի վերակուլտիվացում	76
8.8. Հողերի մոնիթորինգի բովանդակությունը	77
8.9. Հողերի մոնիթորինգի կառուցվածքը	81
8.10. Հողերի մոնիթորինգի վարումը	83
8.11. Հողային ռեսուրսների վիճակագրություն	84
8.12. Հողային ֆոնդը և կազմը	86
8.13. Հողերի աղտոտման վերահսկումը և որակի նորմավորումը	91
<b>ԳԼՈՒԽ 9</b>	
<b>ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	<b>94</b>
9.1. Զրի դերը կենսոլորտում և մարդու կյանքում	94

<b>9.2. Զրային ռեսուլսների մոնիթորինգի ցուցանիշները</b>	<b>96</b>
<b>9.3. Բնական ջրերի աղտոտման վերահսկումը և որակի նորմավորումը</b>	<b>104</b>
<b>9.4. Զրային ռեսուլսների մոնիթորինգի մեթոդները</b>	<b>107</b>
<b>9.5. Զրային ռեսուլսների կաղաստրի և մոնիթորինգի էությունը, խնդիրները, նպատակները</b>	<b>112</b>
<b>ԳԼՈՒԽ 10</b>	
<b>ՄԹԱՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՎԻճԱԿԻ ԵՎ ՊԱՐՊԱՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	<b>113</b>
<b>10.1. Մթնոլորտային օդի վիճակը և պահպանությունը</b>	<b>113</b>
<b>10.2. Մթնոլորտային օդի մոնիթորինգի մեթոդները</b>	<b>117</b>
<b>10.3. Մթնոլորտի վիճակի, աղտոտման և պահպանման մոնիթորինգի ցուցանիշները</b>	<b>121</b>
<b>10.4. Մթնոլորտային օդի որակի նորմավորումը</b>	<b>125</b>
<b>ԳԼՈՒԽ 11</b>	
<b>ԲԱՍԿԱՆ ԱԱՎՃԱՖՏՆԵՐԻ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՊԱՍՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ԲՀՊՏ) ՎԻՃԱԿԻ ԵՎ ՊԱՐՊԱՍՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	<b>127</b>
<b>11.1. Լանդշաֆտների, ԲՀՊՏ-ների մոնիթորինգ</b>	<b>127</b>
<b>11.2. Հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի ցուցանիշներ</b>	<b>136</b>
<b>ԳԼՈՒԽ 12</b>	
<b>ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	<b>138</b>
<b>12.1. Անտառային ռեսուլսների վիճակի, օգտագործման և պահպանման մոնիթորինգ</b>	<b>138</b>
<b>12.2. Անտառային ռեսուլսների խմբերը</b>	<b>140</b>
<b>12.3. Անտառային ռեսուլսների առկայության, օգտագործման և պահպանության մոնիթորինգի հիմնական ցուցանիշների համակարգը</b>	<b>141</b>
<b>12.4. Պետական անտառային կաղաստր</b>	<b>144</b>
<b>ԳԼՈՒԽ 13</b>	
<b>ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՐՊԱՍՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ</b>	<b>146</b>
<b>13.1. Բուսականությունը որպես մոնիթորինգի օբյեկտ</b>	<b>146</b>
	<b>189</b>

---

13.2. ՀՀ բուսական ծածկույթի տիպերը և դրանց պահպանության խնդիրները	147
<b>ԳԼՈՒԽ 14</b>	
ԸՆԴԵՐՁԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԻճԱԿԻ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՐՊԱՍՄԱՆ ՍՈՍԻԹՈՐԻՆԳ	157
<b>ԳԼՈՒԽ 15</b>	
ԹԱՓՈԽՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ, ԱՐԿԱՅՈՒԹՅԱՆ, ՂԵՂԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍՈՍԻԹՈՐԻՆԳ	162
15.1. Արդյունաբերական թափոնների մոնիթորինգ և ցուցանիշների համակարգ	162
15.2. Կենցաղային թափոնների մոնիթորինգ և ցուցանիշների համակարգ	168
<b>ԳԼՈՒԽ 16</b>	
ԾՐՁԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՈՍԻԹՈՐԻՆԳԻ ՂԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄ	172
<b>ԳԼՈՒԽ 17</b>	
ԲՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍՈՍԻԹՈՐԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՂԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	175
17.1. Ծրջակա միջավայրի մոնիթորինգի զարգացման ուղղությունները	175
17.2. Բնական ռեսուրսների մոնիթորինգ և միջազգային համագործակցություն	177
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	185

---

Եֆենդյան Պարույր Սերգեյի  
Եզեկյան Ալբերտ Սարգսի  
Թամոյան Սամվել Զանիբեկի  
Վարդանյան Արշակ Միհևայելի

## ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԿԱԴԱՏՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Эфендян Паруйр Сергеевич  
Езекян Альберт Саркисович  
Тамоян Самвел Джанибекович  
Варданян Аршак Михаелович

## МОНИТОРИНГ И КАДАСТР ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

ԵՐԵՎԱՆ 2016

Ստորագրված է տպագրության 02.05.2016թ..  
Թղթի չափը 60x84  $1/_{16}$ , 12,0 տպ. մամուլ, 9,6 հրատ. մամուլ  
**Պատվեր 142:**      **Տպաքանակ 250:**

---

ՀԱՅՀ-ի տպարան, Տերյան 74